



Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

<https://grqaser.org/hy/donate>

Հունական գրականություն, Պատմավեպ, Վեպ, Արձակ

13+

Ռուսերենից թարգմանեց Հայկ Խաչատրյանը

Խարիտոն

Պատմություն Զերեյի և Կալիրոյի սիրո մասին

Խարիտոնի «Պատմություն Զերեյի և Կալիրոյի սիրո մասին» վեպը գրվել է մեր թվականության երկրորդ դարի սկզբներին: Վեպի դեպքերը, սակայն, տեղի են ունեցել մ.թ.ա. հինգերորդ դարի վերջում և չորրորդ դարի սկզբներին: Մի քանի դեմքեր (Հերմոկրատես, Արտաքսերքսես) պատմական անձնավորություններ են, որով այս գիրքը համարվում է եվրոպական գրականության մեջ առաջին «պատմավեպերից» մեկը: Սա պատմական հենքի վրա խարսխված մի գողտրիկ պատմություն է, որն այսօր էլ պահել է իր գեղարվեստական հմայքը: Վեպը, մինչև այժմ Ֆլորենցիայում պահվող 13-րդ կամ 14-րդ դարի ձեռագրի հիման վրա, առաջին անգամ տպագրվել է 1750-ին, ապա ունեցել մի շարք հրատարակություններ և տարածում գտել աշխարհում:

Հայերեն լույս է տեսնում առաջին անգամ: Այս վեպը հին աշխարհից մեզ հասած գրական այն եզակի գործերից է, ուր հիշվում է Հայաստան անունը:

ԳԻՐԸ ԱՌԱՋԻՆ

1

Ես, Խարիտոն աֆրոդիսիացիս¹, Աֆինագորոս ռետորի² դպիրս, կպատմեմ մի սիրո պատմություն, որ եղել է Սիրակուզայում³:

Սիրակուզայի ստրատեգ, աթենացիների նշանավոր հաղթող Հերմոկրատեսը⁴ Կալիրոյ անունով մի դուստր ուներ, հիանալի մի աղջիկ, որով հպարտանում էր ամբողջ Սիցիլիան: Զանգի ոչ թե մարդկային, այլ աստվածային էր նրա գեղեցկությունը, որը ոչ թե նման էր ասենք ծովահարսերի⁵ կամ ինչ-որ լեռնային հավերժահարսերի, այլ իր՝ կույս

Աֆրոդիտեի գեղեցկությանը⁶: Նրա գեղեցկության փառքը տածվում էր ամենուրեք: Եվ փեսացուները՝ իշխանավորներն ու բռնապետների զավակները, նրա մոտ՝ Սիրակուզա էին հավաքվում ոչ միայն Սիցիլիայից, այլև Իտալիայից և Փոքր Ասիայից:

Բայց Էրոտը⁷ ցանկացավ, որ նա ամուսնական կապերով կապվի սեփական ընտրությամբ:

Անդրիագործներն ու պատկերահանները ինչպիսին ներկայացնում էին Աքիլլեսին⁸, Ներևսին⁹, Իպպոլիտին¹⁰ կամ Ալկիվիադեսին¹¹, այդպիսի տեսք ուներ նաև իր գեղեցկությամբ բոլոր սիրակուզցիների մեջ աչքի ընկած պատանի Զերեյը, որի հայրը՝ Արիստոնը, իր դիրքի կարևորությամբ Յերմոկրատեսից հետո Սիրակուզայում գրավում էր երկրորդ տեղը: Արիստոնի և Յերմոկրատեսի միջև գոյություն ուներ քաղաքական հին մրցակցություն: Այնպես որ նրանք պատրաստ էին բարեկամանալ ում հետ որ լիներ, բայց ոչ միմյանց: Սակայն Էրոտը պայքար էր սիրում և զվարճանում էր այնպիսի հաջողություններով, ինչպիսիք լինում են սպասածին հակառակ: Ահա թե ինչ առիթ գտավ նա:

Աֆրոդիտեի ժողովրդական տոնահանդես էր: Եվ համարյա բոլոր կանայք ուղևորվեցին դեպի այն տաճարը, ուր և Կալիոնը, որը մինչ այդ ոչ մի տեղ դեռևս դուրս չէր եկել և որին հոր հրամանով մայրը տանում էր, որպեսզի դուստրը խոնարհվի աստվածուհու առջև: Իսկ աստղի պես փայլող Զերեյը հենց այդ ժամանակ տուն էր վերադառնում մարմամարզական վարժություններից: Նրա լուսափայլ դեմքի վրա, ինչպես ոսկին արծաթի վրա, խաղում էր մարզադպրոցի¹² կարմրությունը: Նեղ նրբանցքի մի շրջադարձում Կալիոնյն ու Զերեյը պատահաբար բախվեցին իրար, քանի որ աստված¹³ դիտավորյալ կազմակերպել էր նրանց հանդիպումը այն նպատակով, որպեսզի նրանք տեսնեն միմյանց: Եվ մի ակնթարթում նրանք երկուսով սիրո զգացումներ փոխանակեցին. գեղեցկությունն այստեղ հանդիպել էր վեհանձնությանը:

Զերեյը, սիրո հարված ստանալով, հազիվ շարժվելով տուն գնաց, նմանվելով կռվում մահացու վիրավորված այն քաջ ռազմիկին, որն ամաչում է վայր ընկնել, բայց այդ վիճակում էլ այլևս չէր կարող ոտքի վրա մնալ: Իսկ աղջիկը ընկնելով Աֆրոդիտեի ոտքերը և համբուրելով, ասաց.

— Տիրակալուհի, իմ ամուսինը դարձրու նրան, որին ինքդ ցույց տվեցիր ինձ:

Վրա հասավ երկուսի համար սարսափելի գիշերը: Կրակը նրանց մեջ բորբոքվում էր ուժգնորեն: Սակայն ավելի շատ տանջվում էր աղջիկը, որ իրեն մատնելու սարսափից ստիպված էր լռել: Իսկ Զերեյը, հպարտ և ազնիվ պատանին, երբ սկսեց նվաղել, որոշեց ծնողներին հայտնել, որ ինքը սիրահարված և չի դիմանա, եթե գլուխ չգա Կալիոնի հետ իր ամուսնությունը:

Հայրը, լսելով այդ խոսքերը, հոգոց հանեց:

— Ուրեմն, այդպես,— ասաց նա Զերեյին,— ես կորցնում եմ քեզ, զավակս: Պարզ է, որ Յերմոկրատեսը, որն ունի այնքան մեծ թվով հարուստ և արքայական փեսացուներ, իր դստերը երբեք չի տա քեզ: Մի էլ փորձիր, այլապես մենք կմնանք ամոթով:

Հայրը շարունակեց համոզել որդուն, իսկ որդին ավելի ուժգին էր տառապում իր ցավով, որ խանգարում էր նրան դուրս գալու նույնիսկ սովորական պարապմունքների: Զերեյին կարոտում էր առանց նրան կարծես թափուր դարձած գիմնազիան¹⁴: Երիտասարդությունը սիրում էր Զերեյին և հարցուփորձով իմացավ նրա հիվանդության պատճառը:

Այդ ժամանակ բոլորին համակեց խղճահարության զգացումը հանդեպ հրաշալի տղայի, որ զոհ էր դարձել իր վեհանձն հոգու տառապանքներին:

Մոտենում էր հերթական ժողովրդական ժողովը: Եվ այնտեղ գնացած ժողովուրդը միայն մի բան էր բացականչում.

— Փառապանձ Յերմոկրատես, մե՞ծ ստորատեգ: Փրկի՛ր Զերեյին: Դա կլինի քո լավագույն ավարը: Քաղաքի բնակչությունն այսօր հանդես է գալիս որպես հարսնախոս միմյանց արժանի փեսացուի և հարսի համար:

Ո՞վ կնկարագրեր ժողովրդական այն ժողովը, որի ամբոխավարը (դեմագոգը¹⁵) Էրոտն էր: Իր հայրենիքը սիրող Յերմոկրատեսը չէր կարող մերժել քաղաքի խնդրանքը: Երբ նա տվեց իր համաձայնությունը, ժողովուրդը դուրս եկավ թատրոնից¹⁶, երիտասարդները գնացին Զերեյի մոտ, իսկ իշխանավորներն ու քաղաքային խորհրդի անդամները ուղևորվեցին Յերմոկրատեսի մոտ: Հարսնատանը մոտեցան սիրակուզցի

կանայք, որոնք պետք է հարսին ուղեկցեին փեսայի մոտ: Եվ ամբողջ քաղաքով մեկ տարածվեցին հարսանեկան երգերը, փողոցները լցվեցին պսակներով ու կանթեղներով¹⁷, տները, բակերը ցողվեցին գինով ու ծաղկանց բույրով: Սիրակուզցիների համար դա ավելի մեծ խնդրության օր էր, քան Հաղթանակի¹⁸ տոնական օրը:

Կատարվածի մասին անտեղյակ, աղջիկը պառկել էր իր մահճակալին, ծածկվել գլխաշորով և լուռ արտասովում էր: Բայց նրա մահճակալին մոտեցավ դայակը և ասաց.

— Վեր կաց, մանկիկս: Բոլորիս ցանկալի օրը եկավ: Քաղաքը եկել է քո ետևից, որպեսզի քեզ տանի փեսացուիդ մոտ:

Եվ պատանու սիրտն ու ծնկները թուլացան¹⁹:

Չէ որ դայակը չասաց, թե ում են կնության տալիս նրան: Հենց այդ ժամանակ էլ նա կորցրեց ձայնը, աչքերը մշուշվեցին, և նա համարյա թե անզգայացավ: Շրջապատողները դա ընդունեցին որպես ամոթանքի արտահայտություն: Բայց սպասուհիները դեռ նոր էին հասցրել զուգել նրան, երբ ծնողները, ամբոխին թողնելով դռների մոտ, փեսացուին տարան սենյակ, աղջկա մոտ: Զերեյը նետվեց դեպի Կալիրոյը և համբուրեց նրան: Իսկ Կալիրոյը, ճանաչելով սիրածին, Նորից պայծառացավ ամբողջովին, ինչպես մարած ճրագն է բոցավառվում, երբ մեջը յուր ես լցնում: Եվ նա ավելի գեղեցիկ դարձավ: Երբ նա դուրս եկավ ժողովրդի առջև, ամբոխը համակվեց այնպիսի հիացմունքով, որ կունենային այն որսորդները, երբ նրանք ամայի վայրում հանդիպեին Արտեմիսին²⁰: Ներկաներից շատերը ծնկաչոք եղան նրա առջև: Կալիրոյը ապշեցրել էր բոլորին, և բոլորը փառաբանում էին Զերեյին: Բանաստեղծներն այդպես էին պատկերում Թետիսի հարսանիքը Պելոն²¹ լեռան վրա: Բայց, ասում են, ինչպես այնտեղ Էրիդան²² էր, այստեղ էլ հայտնվեց նախանձի աստվածը:

2

Հարսնախոսության ժամանակ անհաջողություն կրած փեսացուները վիրավորված զգացին իրենց և զայրացան: Եթե մինչ այդ նրանք միմյանց թշնամիներ էին, ապա այժմ դարձան համախոհներ և, համարելով, թե իրենց վիրավորանք է հասցված, խորհրդի նստեցին: Նախանձը զինվորագրեց նրանց՝ կռվելու Զերեյի հետ:

Առաջինը խոսեց խտալացի մի երիտասարդ, Ռեզի²³ քաղաքի բռնապետի որդին: Նա այսպես ասաց.

— Եթե աղջկա հետ նա չամուսնանար, այլ մեզնից որևէ մեկը, ապա դա չէր վրդովեցնի ինձ, քանզի ինչպես և մարմնամարգական մրցումներում, ճիշտ այդպես էլ այստեղ, մրցողներից պետք է հաղթեր որևէ մեկը: Բայց այստեղ ես չեմ կարող հանդուրժել նման ծաղրը, երբ մեր առաջը կտրեց մի մարդ, որն առանց որևէ դժվարության ամուսնական հաջողության հասավ: Մենք հալումաշ դարձանք աղջկա դռների առջև անքուն հերթափոխություններով, դայակներին ընծաներ ուղարկելուց, քարշ եկանք նրա ստնտուների ու սպասուհիների ետևից: Ինչքան երկար մնացինք մենք ստրկության մեջ: Բայց ամենածանրն այն է, որ սիրո մրցության մեջ մենք ատեցինք միմյանց: Այն ժամանակ, երբ միմյանց հետ արքաներն էին մրցում, նա, այդ անառակ, խղճուկ, ողորմելի մարդը առանց պայքարի տիրացավ հաղթական պսակին: Թող ձեռք բերած հաղթանակը նրա համար դառնա անօգուտ: Եկեք փեսացուի հարսանիքը դարձնենք մահվան հարսանիք:

Բոլորը համաձայնեցին: Առարկեց միայն մեկը՝ Ակրագանտ²⁴ քաղաքի բռնապետը: Այսպես ասաց նա:

— Զերեյի հանդեպ տածած հարգանքից չէ, որ ես խանգարում եմ իրագործելու այդ մտադրությունը: Պետք է մտածել որոշ չափով անվնաս մնալու մասին: Մի մոռացեք, որ Հերմոկրատեսը թույլ հակառակորդ չէ, այնպես որ անհնար է նրա դեմ բաց պայքար մղել: Ավելի լավ է գործել խորամանկորեն: Չէ որ մենք էլ բռնապետի իշխանության ենք հասնում ավելի շատ խարդավանքով, քան ուժով: Ընտրեցեք ինձ Զերեյի դեմ կռվի ստրատեգ, ես խոստանում եմ ամուսնալուծել նրան: Զանգի Զերեյի դեմ ես կզինեմ խանդը, որը, Էրոսից վերցնելով որպես դաշնակից, շատ վնաս կպատճառի: Կալիրոյը

հավասարակշռված է և փոքր-ինչ կասկածը նրա համար անսովոր կլինի: Իսկ Զերեյը, քանի որ կրթվել է գիմնազիայում և գերծ չէ պատանեկան սխալներից, եթե կասկած ունենա սրտում, հեշտությամբ կտառապի պատանեկան խանդով: Իսկ նրանց մոտենալն ու հետևերը գրուցելը դժվար չէ:

Դեռ խոսքը չվերջացրած՝ բոլորի կողմից նրա առաջարկն ընդունվեց միաձայն: Եվ գործը հանձնարարվեց նրան, որպես մի մարդու, որն ընդունակ է ամեն տեսակ խարդավանքի: Եվ ահա նա ձեռնամուխ եղավ իր հետևյալ մտադրության իրագործմանը:

3

Երեկոյան դեմ լուր հասավ, որ Զերեյի հայր Արիստոնը գյուղում ընկել է աստիճաններից և ապրելու քիչ հույս կա: Զերեյը, չնայած սիրում էր հորը, բայց, լսելով այդ մասին, ավելի շատ դառնացավ այն բանի համար, որ միայնակ պիտի գնա: Աղջկանը հետը վերցնել արդեն չէր կարելի²⁵:

Այդ գիշեր ոչ ոք չհամարձակվեց բացահայտ կոմոս²⁶ գնալ: Մարդիկ եկան աննկատ, գողունի և իրենցից հետո գաղտնաբար թողեցին կոմոսի հետքեր՝ պսակներ կախելով շքադռանը, անուշահոտ շաղ տալով, գետնին թափված գինուց դռան առջև կեղտափոս առաջացնելով և գետնին գցած կիսավառ ջահեր:

Առավոտը բացվեց, և, ենթարկվելով ամենքին հատուկ հետաքրքրասիրության զգացումին, յուրաքանչյուր անցորդ կանգ էր առնում տան առջև: Զերեյն էլ շտապեց կնոջ մոտ, քանի որ հայրն այնքան էլ վատ չէր զգում իրեն: Նկատելով դռների առջև հավաքված ամբոխին՝ նա սկզբում զարմացավ: Իսկ երբ իմացավ պատճառը, ապա, կորցնելով իրեն, վազեց տուն և, տեսնելով, որ ննջարանի դուռը դեռևս փակ է, սկսեց աղմուկով ծեծել: Երբ սպասուհին բացեց դուռը, Զերեյը նետվեց դեպի Կալիբոյը, բայց բարկությունից դարձավ ջղագրգիռ, պատռեց իր հագուստը և սկսեց արտասվել: Կալիբոյի այն հարցին, թե ինչ է պատահել, նա մնաց համր, ի վիճակի չլինելով չհավատալու այն բանին, ինչ որ տեսավ, և ուժ չունենալով հավատալու նրան, որին նա չէր ուզում հավատալ: Անելանելի վիճակից նա բռնկվել էր դողոցքով, իսկ նրա կինը, ոչինչ չկասկածելով այն բանից, ինչ տեղի է ունեցել, աղերսում էր, որ Զերեյը բացատրի իր վրդովմունքի պատճառը:

— Լացում եմ իմ բախտը,— ասաց Զերեյը խուլ ձայնով:— Դու ինչքան շուտ մոռացար ինձ:

Եվ կոմոսի համար Զերեյն սկսեց կշտամբել նրան:

Վրդովեցուցիչ զրպարտությունը զայրացրեց սեփական արժանապատվության զգացումով լցված Կալիբոյին՝ ստրատեգի դասերը:

— Հորս տունը ոչ ոք կոմոս չի եկել,— Զերեյին ասաց Կալիբոյ:— Գուցե քո դռներն են կոմոսի սովոր կամ գուցե քո բարեկամներին վշտացնում է քո ամուսնությունը:

Այդպես ասելով, Կալիբոյը երեսը շուռ տվեց Զերեյից, և դեմքը ծածկելով, սկսեց առատ արցունքներ թափել: Բայց սիրահարվածները շուտ են հաշտվում և ամեն տեսակ արդարացումները միմյանցից ընդունում են ուրախությամբ: Զերեյը փոխվեց ու սկսեց շոյել կնոջը, և կինն իսկույն ողջունեց նրա զղջանքը, ու դրանից նրանց սերն ավելի բոցավառվեց: Զերեյի և Կալիբոյի ծնողները իրենց էլ երջանիկ էին համարում, տեսնելով զավակների համերաշխությունը:

4

Իսկ ակրազանտացին, երբ ձախողվեց նրա առաջին խորամանկությունը, ձեռնարկեց նոր, ավելի մեծ խորամանկություն: Ահա թե ինչ մտադրվեց նա:

Նա ուներ մի լեզվանի պարասիտ²⁷, որ կարող էր խոսքի մեջ քաշել ամեն տեսակ զրուցակցի: Ակրազանտացին պատվիրեց նրան սիրահարի դեր խաղալ, և պարասիտն սկսեց սիրահետել Կալիբոյի ավագ սպասուհուն՝ աբրային²⁸, ձգտելով, ինչ էլ որ լիներ, արժանանալ նրա բարեհաճությանը: Սակայն սպասուհի աղջկա սիրտը նվաճեց մեծ դժվարությամբ, թանկ ընծաների միջոցով, սպառնալով ինքնասպան լինել, եթե իր

ցանկությունները չբավարարվեն: Կնոջը կարելի է հեշտությամբ որսալ այն ժամանակ, երբ նա սկսում է մտածել, որ սիրահարվել են իրեն:

Նախապատրաստելով այդ, դրամայի գլխավոր վարպետը գտավ ևս մի ուրիշ դերասան, որն առաջինի համեմատությամբ այնքան հրապուրիչ չէր, բայց շատ ճարպիկ և համոզիչ լեզու ուներ: Նախապես սովորեցնելով նրան, թե ինչ պիտի անել ու ասել, ակրագանտացին ուղարկեց նրան Զերեյի մոտ: Զերեյը չէր ճանաչում եկողին:

Զերեյը անցուղարձ էր անում մարգարայրոցում, երբ այդ մարդը մոտեցավ նրան և ասաց.

— Զերեյ, մի որդի էլ ես ունեի քո հասակին, որը խանդավառված էր քեզնով: Նրա մահից հետո ես քեզ համարում եմ իմ որդին: Քո երջանկությունն, ի դեպ, նաև համայն Սիցիլիայի ընդհանուր բարիքն է: Ժամանակ հատկացրու և դու ինձնից կլսես այնպիսի կարևոր բաներ, որոնք մեծ նշանակություն ունեն քո ամբողջ կյանքի համար:

Այդպիսի խոսքերով գլխահան անելով պատանուն և նրա սիրտը լցնելով հույսով, ահով և հետաքրքրասիրությամբ, այդ ստոր մարդը, որպես պատասխան Զերեյի խնդրանքին, սկսեց դանդաղել, պատճառաբանելով, թե իբր հարմար ժամանակ չէ, որի համար անհրաժեշտ է զրույցը հետաձգել մի առավել պատշաճ պահի: Միաժամանակ Զերեյն սկսեց ավելի պնդել իր ասածը, արդեն նախազգալով ինչ-որ ծանր բան, և ստոր մարդը թեև անցուկ անելով Զերեյին, նրան մի կողմ տարավ, ապա, ունքերը կիտելով, տառապալի տեսք ընդունելով և նույնիսկ մի քիչ էլ արտասվելով, ասաց.

— Զերեյ, ինձ համար հաճելի չէ տխուր բաների մասին քեզ հայտնել, որ վաղուց մտադիր էի հաղորդել քեզ, սակայն չէի համարձակվում: Բայց քանի որ քեզ արդեն ծաղրում են բացեիքաց և քանի որ ամենուրեք արդեն խոսում են այդ սարսափելի բանի մասին, ես այլևս ի վիճակի չեմ լռել: Ծննդյան օրից ես ատել եմ ցոփությունը, իսկ քո հանդեպ տածել եմ բացառիկ համակրանք: Ինչ արած, գիտցիր, որ քո կինը գայթակղվել է, բայց որպեսզի դու համոզվես դրանում, ես պատրաստ եմ օգնել քեզ հանցանքի տեղում բռնելու նաև գայթակղողին:

*Վշտի սև ամպն Աքիլլեսի դեմքը պատեց.
Երկու ափով վերցրեց մոխիրն ու իր գլխի վրա ցանեց,*

Եվ մոխիրով այլանդակեց իր երեսը գեղեցկագեղ²⁹:

Երկար պառկեց նա բերանը բաց, ուժ չունենալով ոչ աչքը բացել, ոչ էլ որևէ բառ ասել: Երբ ուշքի եկավ, ապա թույլ, ոչ իր սովորական ձայնով, ասաց.

— Խնդրում եմ քեզ, շնորհ արա և ինձ ականատես դարձրու ինձ համար ցավալի իմ դժբախտությանը: Այնուամենայնիվ, ցույց տվեք ինձ նրան, որպեսզի դրանով ես ավելի հիմք ունենամ սպանելու ինձ: Կալիրոյին, թեկուզև հանցավոր, ես կիմայեմ:

— Այնպիսի տեսք ընդունիր, թե իբր գյուղ պիտի գնաս,— խորհուրդ տվեց ստոր մարդը,— իսկ խոր գիշերին դարան մտիր քո տանը, և այն ժամանակ դու կտեսնես, թե ինչպես կմոնի անպարկեշտը:

Նրանք որոշեցին այդպես էլ անել:

Զերեյը, որն ուժ չունեի անձամբ տուն գնալու, մեկին ուղարկեց հայտնելու. «Մեկնում եմ գյուղ»: Իսկ դավադիր զրպարտիչը նախապատրաստեց ներկայացումը:

Գիշերը վրա հասնելուն պես Զերեյն սկսեց հսկել, իսկ նա, որին գայթակղել էր Կալիրոյի աբրան, մտավ նրբանցք, խաղալով գողունի գործ բռնող մարդու դեր, բայց իրականում ամեն տեսակ ճիգ էր անում աննկատ չմնալու համար: Նա գանգրահեր էր, փոս ընկած աչքերով, հագել էր նրբակար գիմատի³⁰, գեղեցիկ կոշիկներ, իսկ ձեռքերի վրա փայլում էին խոշոր մատանիները: Նա երկար նայեց չորս կողմը, ապա մոտեցավ դռներին և կամացուկ ծեծեց պայմանական թխկոցով: Սպասուհին, որ ինքն էլ սարսափելի ահի մեջ էր, զգուշորեն բացեց դուռը և, բռնելով նրա ձեռքը, ներս տարավ: Այս տեսարանին ականատես Զերեյը կորցրեց ինքնատիրապետումը և նետվեց, որպեսզի հենց այդտեղ էլ սպանի անպարկեշտին: Ներս մտնող մարդը թաքնվեց դռան ետևում և հենց այդ պահին էլ ետ դարձավ: Իսկ այդ ժամանակ Զերեյի կարոտը քաշող Կալիրոյը, նույնիսկ առանց ճրագը մարելու, հենց այնպես տխուր նստել էր մահճակալի վրա: Ուտնաձայներ լսելով, նա իսկույն հասկացավ, որ ամուսինը վերադարձել է և

ուրախությամբ ընդառաջ վազեց Նրան: Նույնիսկ հանդիմանելու համար ձայնը կորցրած Քերեյը, բարկությամբ լցված, ոտքով հարվածեց իրեն մոտեցող Կալիբոյին: Ստոծանուն տրված ոտքի այդ դիպուկ հարվածի պատճառով աղջիկն ուշագնաց եղավ: Կալիբոյն ընկավ, իսկ սպասուհիները բարձրացրին Նրան և ձեռքերի վրա տարան մահճակալին:

5

Պառկել էր անձայն ու անշունչ Կալիբոյը, շրջապատողներին ներկայանալով ինչպես մահվան տեսարան, իսկ Ասեկոսը դժբախտության լուրը տարածում էր ամբողջ քաղաքում, մինչև ծով բոլոր փողոցներում առաջացնելով լացուկոծ: Ամենուրեք լացի ձայն էր գալիս: Եվ կատարվածը նման էր քաղաքը գրավելուն:

Շարունակելով եփվել իր զայրույթով, Քերեյը փակվեց իր սենյակում և ամբողջ գիշերը տանջահարելով քննեց սպասուհիներին՝ աբրայից սկսելով և Նրանով էլ վերջացնելով: Կրակով ու դանակով տանջահարված սպասուհիներից Քերեյն իմացավ ճշմարտությունը: Այդ ժամանակ նա մեռածի հանդեպ լցվեց խղճահարությամբ և սաստիկ ցանկացավ ինքնասպան լինել: Բայց Նրան ետ պահեց Պոլիքարմոսը, հազվագյուտ նվիրված այնպիսի մի ընկեր, ինչպիսին պատկերել է Զոմերոսը Աքիլլեսի ընկեր Պատրոկլեսին:

Լույսը բացվելուն պես իշխանություններն սկսեցին մարդասպանի դատավարությունը, Զերմոկրատեսի հանդեպ ունեցած հարգանքից շտապելով վճիռ կայացնել: Բայց հրապարակ վազեց նաև ամբողջ ժողովուրդը: Ամեն մեկը իրենն էր գործում: Ամբոխին բորբոքում էին հարսնախոսության ժամանակ անհաջողություն կրած փեսացուները, իսկ ամենից շատ՝ ամբարտավան ակրագանտացին, որն այնպես էր փայլում՝ ասես այնպիսի մի գործ էր արել, որ ոչ ոք չէր կարող սպասել: Բայց դատի ժամանակ էլ տեղի ունեցավ անսովոր մի դեպք, որի նմանը երբեք չէր եղել: Մարդասպանը, մեղադրողից հետո ձայն խնդրելով, ինքն էլ, պաշտպանվելու փոխարեն, իր դեմ ավելի դաժան մի ճառ ասաց և առաջինը քվեարկեց իրեն դատելու համար, մի կողմ թողնելով այն ամենը, ինչի վրա նա իրավունք ուներ հենվել արդարացնելու համար իրեն՝ և զրպարտությունը, և խանդը, և չկանխամտածված իր արարքները: Բոլորին նա խնդրեց.

— Զարկոծեցեք ինձ հրապարակայնորեն, ես արտավորել եմ ժողովրդի պատիվը: Մարդասիրություն արեք և ինձ հանձնեցեք դահճի ձեռքը: Այդպիսի պատժի արժանի կլինեի ես նույնիսկ այն դեպքում, եթե սպանեի Զերմոկրատեսի թերևս մի սպասուհու: Փնտրեցեք պատժի չսված մի եղանակ: Իմ հանցանքն ավելի ծանր է, քան սրբապղծությունն ու հայրասպանությունը: Մի թաղեք ինձ, մի ապականեք հողը, իմ պիղծ մարմինը նետեցեք ծովը:

Լսելով այս խոսքերը, ժողովուրդն սկսեց բուռն արտասվել, և մոռանալով մեռածի մասին, բոլորը լացեցին Նրա համար, ով ողջ է մնացել: Զերմոկրատեսն առաջինն արտահայտվեց ի պաշտպանություն Քերեյի:

— Ես գիտեմ,— ասաց նա,— որ արարքը կատարվել է չկանխամտածված: Ես տեսնում եմ մեր ախոյան չարագործ ոգուն և չեմ պատկերացնում, որ նա ուրախանա երկու միաժամանակյա մահով: Ես չեմ վշտացնի իմ հանգուցյալ դստերը: Ես հաճախ լսել եմ, երբ նա ասում էր, որ Քերեյի կյանքը թանկ արժե իր սեփականից: Փակենք ոչ պիտանի այս դատական նիստը և զբաղվենք թաղման հոգսերով: Զդանդաղենք և անօգուտ ժամանակ սպանելով չթողնենք, որ կերպարանափոխվի մեռածի մարմինը: Թաղենք Կալիբոյին, քանի դեռ նա գեղեցիկ է:

6

Դատավորները Քերեյին պատժից ազատելու վճիռ կայացրին, բայց ինքը՝ Քերեյը չազատեց իրեն պատժից: Նա մահ էր տեսնում և ամեն կերպ փորձում էր վերջ տալ իր կյանքին: Եվ Պոլիքարմոսը, չիմանալով ինչպես փրկել Նրան, ասաց ընկերոջը.

— Դավաճանում ես մեռած կնոջդ: Դու նույնիսկ չես սպասում մինչև Կալիրոյի թաղումը: Նրա դիակը վատահում ես կողմնակի ձեռքերի: Հենց այժմ դու պետք է մտածես թաղման շքեղ ընծաների և հուղարկավորության մասին, որ դու պարտավոր ես կատարել արքայավայել:

Այս խոսքերը համոզեցին Զերեյին, նրա մեջ արթնացնելով ինքնասիրության և հոգատարության զգացումը:

Ո՞վ կարող էր ըստ արժանվույն նկարագրել Կալիրոյի հուղարկավորությունը: Հագած իր պսակաշորը՝ պառկել էր նա ոսկե անկողնում և ավելի վեհասքանչ, ավելի գեղեցիկ էր երևում: Ամենքի կարծիքով նա նման էր քնած Արիադնեին³¹: Անկողնու առջևով առաջինը կուռ շարքերով անցան սիրակուզգի հեծյալները: Նրանց հետևեցին զուլիսները³², որոնք տանում էին Հերմոկրատեսի նվաճած դրոշները: Գուլիսների ետևից քայլեցին խորհրդի անդամները, ապա, որպես Հերմոկրատեսի պահակախումբ, շարժվեց ամբողջապես նիզակներով զինված ամբոխը: Տարան նաև դեռևս հիվանդ Արիստոնին, որը Կալիրոյին բարձրաձայն անվանում էր և իր դուստրը, և իր տիրուհին: Թափորի վերջում սևազգեստ կանայք էին, իսկ նրանց հետևից տանում էին թաղման արքայավայել ընծաները, ոսկի ու արծաթ, Կալիրոյի օծիտը, շքեղ հանդերձներն ու թանկարժեք իրերը: Հերմոկրատեսը շատ նվերներ էր ուղարկել նաև ռազմական ավարից: Ընծաներ էին ուղարկել նույնպես նրա ազգականներն ու բարեկամները: Վերջում Կալիրոյին ուղեկցում էր Զերեյի հարստությունը, հարստություն, որ Զերեյը պատրաստ էր, եթե դա միայն հնարավոր լիներ, ամբողջովին այրել կնոջ հետ: Թաղման անկողինը³³ տանում էին սիրակուզգի էֆեբոսները³⁴, իսկ հետևից ձգվում էր մարդկային ամբոխը, որի լացի մեջ բոլորից բարձր լսվում էր Զերեյի ձայնը:

Հերմոկրատեսի շքեղ հուշարձանը գտնվում էր ծովի մոտ և լողարկողներին տեսանելի էր շատ հեռվից: Այդ հուշարձանը որպես գանձատուն լրացնում էր թաղման ընծաների հոյակապությունը: Բայց այն, ինչ արվեց, հավանաբար ի փառաբանումն մեռյալի, խթան հանդիսացավ ավելի կարևոր դեպքերի:

7

Բանն այն է, որ աշխարհում կար մի ոմն Ֆերոն, ծովային ավարով ապրող մի չարագործ, որն իր շուրջն էր հավաքել մի խումբ ծովահենների, որոնք իրենց, արտաքուստ առևտրական երևացող նավով թաքնվում էին նավահանգիստներում: Պատահաբար հանդիպելով Կալիրոյի հուղարկավորությանը, Ֆերոնի աչքը մնաց ոսկու վրա: Գիշերը նա չկարողացավ աչքը փակել, և, իր անկողնում պառկած, սկսեց ինքն իրեն այսպես դատել. «Չնչին շահի համար ես ինձ վտանգի եմ ենթարկում, կռվելով ծովի դեմ և սպանելով ողջերին այն ժամանակ, երբ հնարավորություն ունեմ հարստանալու մի մեռյալ կնոջով: Իմ օգուտը բաց չեմ թողնի: Այս գործի համար ո՞ւմ վերցնեմ հետս: Լավ մտածիր, Ֆերոն, այդ գործի համար քո իմացածներից ո՞վ է պիտանի: Ֆուրիացի³⁵ Չենոֆանը: Խորամանկ է նա, բայց վախկոտ է: Մեսսենացի³⁶ Մենոնը: Նա քաջ է, բայց դավաճան է»:

Այդպես մտովի մեկ-մեկ մի կողմ դնելով բոլորին, ինչպես խոտանողն է մի կողմ դնում դրամները, շատերին խոտանեց նա, բայց այնուամենայնիվ գտավ, որ մի քանիսը պիտանի են: Եվ վաղ առավոտյան, շտապելով նավահանգիստ, սկսեց փնտրել նրանց: Մի քանիսին նա գտավ ցոփության որջերում, մյուսներին այնպիսի գինետներում, որոնք պատշաճ էին նման զորականներին: Հայտնելով, որ նրանց հետ պետք է քննի մի անհետաձգելի գործ, Ֆերոնը նրանց տարավ նավահանգստից դուրս և սկսեց խոսել այսպես.

— Ես բացել եմ մի գանձ,— ասաց Ֆերոնը նրանց,— որն ինձ հետ կիսելու համար մնացած բոլորի մեջ ես ընտրել եմ միայն ձեզ: Ամենքիդ կիերիքի այդ գանձը, որը ձեռք բերելն այնքան էլ դժվար չէ: Մի գիշերվա մեջ կարող եմք բոլորս հարստանալ: Մենք ունենք այնպիսի գործերի փորձ, որ հիմար մարդիկ զրպարտություն կհամարեն, բայց որը խելացիորեն օգուտ կբերի մեզ:

Հենց այդ պահին կռահելով, որ Ֆերոնը նրանց հրավիրում է կամ ավարառության, կամ գերեզմանի հափշտակության, կամ տաճարի կողոպուտի, ասացին նրան.

— Բավական է համոզես նրանց, ովքեր համաձայն են: Մեզ միայն հայտնի, թե ինչ պիտի անենք և արդյոք իզուր չե՞նք սպանի թանկ ժամանակը:

Եվ Ֆերոնը, շարունակելով իր խոսքը, ասաց.

— Դուք տեսաք մեռյալի ոսկին ու արծաթը: Արդար կլինե՞ր, եթե այդ ոսկին ու արծաթը պատկանեին մեզ՝ ողջերիս: Դրա համար ես որոշել եմ գիշերով բացել գերեզմանը, ապա մի նավակի մեջ դնել բեռը և լողալով այնտեղ, ուր կհասցնի մեզ քամին, վաճառել այն անձանոթ տեղում:

Այդպես էլ որոշեցին:

— Դե ինչ,— ասաց Ֆերոնը,— այժմ զբաղվեք ձեր առօրեական գործերով, իսկ ուշ երեկոյան թող յուրաքանչյուրը նավակի մոտ ափ դուրս գա՝ հետը բերելով որմնադիրի գործիքներ:

8

Մինչ մարդիկ կազմակերպում էին այս բոլորը, Կալիրոյը ապրեց նոր, սարսափելի վերածնունդ: Երբ քաղցի պատճառով կամաց-կամաց արթնացավ ուշագնացությունից, դժվարությամբ շունչ քաշեց, և, նորից կենդանանալով, ձայն տվեց Զերեյին, կարծելով, որ նա քնած է իր կողքին: Բայց քանի որ նրան չպատասխանեցին ոչ ամուսինը, ոչ սպասուհիները, իսկ շուրջը մռայլություն ու կատարյալ ամայություն էր, ջահել աղջկան, որը չէր կարող գիտակցել կատարվածը, պատեց սարսափն ու դողը: Երբ վերջապես նա ուշքի եկավ և շարժեց պսակների ու ժապավենների մեջ, իսկ դրանց դիպչելով փայլեցին ոսկին ու արծաթը, և երբ նա առավ օծանելիքի սուր հոտը, ապա հանկարծ հիշեց և ոտքի հարվածը, և այդ հարվածից իր ընկնելը, և սարսափով հասկացավ, որ ինքը գերեզմանի մեջ է: Այստեղ նրա ուժն այնքան պատեց, որ նա գոռաց. «Ես ո՞ղջ եմ», «օգնեցե՛ք»: Բայց նրա կանչին ոչ մի արձագանք չեղավ: Այդ ժամանակ էլ, կորցնելով փրկության հույսը, նա գլուխը դրեց ծնկներին³⁷ և, լաց լինելով, սկսեց սգալ. «Ինչպի՞սի դժբախտություն: Ոչ մի անազնիվ բան չանելով, ես թաղվել եմ ողջ-ողջ և մեռնում եմ դանդաղ մահով: Ողջերը լացում են ինձ համար: Ո՞վ և ինչպի՞սի լուր կհասցնի ինձ: Անարդար Զերեյ, ես հանդիմանում եմ քեզ ոչ թե նրա համար, որ դու սպանեցիր ինձ, այլ նրա համար, որ դու շտապեցիր հեռացնել ինձ տնից: Դու չպետք է շտապեիր Կալիրոյին թաղել նույնիսկ այն դեպքում, երբ իրոք մեռած էլ լինե՞ր: Իսկ գուցե դու նոր ամուսնության մասի՞ն ես մտածում»:

9

Իր բախտն այսպես էր ողբում Կալիրոյը: Իսկ Ֆերոնը, սպասելով մինչև կեսգիշեր, ծով մտավ և, նավակը հանգիստ թիավարելով, անաղմուկ մոտեցավ գերեզմանին: Նա առաջինը ոտք դրեց ափ և այսպիսի հրահանգ տվեց. չորսին նա ուղարկեց իսկելու այդ կողմերը և պատվիրեց, որ եթե որևէ անցվոր երևա, ապա պետք է աշխատել մոտենալուն պես սպանել նրան, իսկ եթե հնարավոր չէ սպանել, ապա ազդանշան տալ մոտենալու մասին: Իսկ ինքը մյուս չորսի հետ գնաց գերեզման, հրամայելով մյուսներին (նրանք բոլորը տասնմեկն էին) մնալ նավակի մոտ և պատրաստ պահել թիերը, որպեսզի չնախատեսված ինչ-որ բան լինելու դեպքում արագությամբ լողան՝ նավակի մեջ առնելով նրանց, ովքեր կլինեն ափին:

Երբ բերեցին քունզները և երբ ուժեղ հարվածեցին գերեզմանի հուշարձանի պատին, որպեսզի անցք բացեն դեպի գերեզման³⁸, Կալիրոյին միանգամից համակեց և սարսափ, և ուրախություն, և վիշտ, և զարմանք, և հույս, և անվստահություն. «Սա ի՞նչ ձայն է: Արդյոք իմ՝ դժբախտիս համար չի՞ եկել այն ուրվականը, որ սովորաբար գալիս է յուրաքանչյուր մեռյալի մոտ: Իսկ գուցե դա հարված չէ, այլ մեռյալների ձայնը, որոնք ինձ կանչում են իրենց մոտ: Ո՛չ: Ավելի շուտ դրանք թալանողներ են: Ուրեմն իմ՝ դժբախտությանն ավելացավ և դա: Մեռյալի համար հարստությունն անօգուտ է»: Նա շարունակում էր այսպես գուշակել, երբ մի ավազակ գլուխը խոթելով անցքի մեջ սկսեց մի փոքր սողոսկել գերեզմանի մեջ: Կալիրոյը նետվեց դեպի նա, որպեսզի, ծնկի գալով,

աղերսանքով դիմի նրան, բայց վերջինս վախից դուրս նետվեց գերեզմանից և, դողալով, բացականչեց ընկերներին.

— Փախչենք այստեղից: Գերեզմանի հարստությունը պահում է ինչ-որ մի ուրվական, որ արգելում է մեզ ներս մտնել:

Ֆերոնը ծիծաղեց նրա վրա, անվանելով վախկոտ և մեռյալից էլ վատթար մեռյալ: Եվ հրամայեց, որ գերեզման մտնի մեկ ուրիշը: Բայց քանի որ ոչ ոք սիրտ չարեց, ապա, սուրը ձեռքում բռնած, գերեզման իջավ ինքը: Եվ հենց որ Կալիբրոյի առջև փայլեց երկաթը, անմիջապես վախենալով, որ կսպանվի, աղջիկը կպավ մի անկյան և սկսեց այնտեղից թույլ ձայնով աղերսել Ֆերոնին.

— Ով էլ որ դու լինես, խղճա նրան, որին չխղճացին ոչ ամուսինը, ոչ ծնողները: Մի սպանի՛ր փրկածիդ:

Ֆերոնն ավելի հանդուգն դարձավ: Խորաթափանց մարդ լինելով, նա կռահեց ճշմարտությունը: Կանգնել էր, սակայն, և խորհրդածում էր: Սկզբում մտածեց սպանել այդ կնոջը, գտնելով, որ նա կխոչընդոտի իրենց բռնած գործը, բայց շուտով օգուտի գիտակցությունը ստիպեց, որ նա փոխի իր որոշումը: «Թող այդպես լինի,— ինքն իրեն ասաց նա,— այս կինն էլ գերեզմանային հարստության մի մասն է: Այստեղ կա շատ արծաթ, շատ ոսկի, բայց ամենից թանկարժեք բանը այս կնոջ գեղեցկությունն է»: Եվ բռնելով Կալիբրոյի ձեռքից, նա դուրս հանեց նրան գերեզմանից, ապա իր մոտ կանչելով օգնականին, ասաց.

— Ահա այն ուրվականը, որից դու վախեցար: Լա՛վ ավագակ ես, կանանցից ես վախենում: Դե, հսկիր նրան: Ես ուզում եմ նրան վերադարձնել ծնողներին: Եկեք մենք էլ դուրս հանենք գերեզմանի ներսում թաքցրած բարիքը, քանի որ նրա վրա մեռյալն այլևս պահակություն չի անում:

10

Երբ ավարը լցրին նավակի մեջ, Ֆերոնը Կալիբրոյին հսկող ավագակին հրամայեց աղջկա հետ մի կողմ քաշվել, որից հետո այդ առիթով խորհրդակցություն արեց: Արտահայտեցին տարբեր, իրարամերժ կարծիքներ: Նա, ով առաջինը խոսեց, ասաց.

— Համախոհներ, մենք եկանք մի բանի համար, իսկ ճակատագիրը մեզ տվեց ուրիշ, ավելի լավ բան: Օգտվենք դրանից: Չէ որ մենք կարող ենք այնպես վարվել, որ մեր արածը չվնասի մեզ: Ես առաջարկում եմ թաղման նվերները թողնել տեղում, իսկ Կալիբրոյին վերադարձնել իր ամուսնուն և հորը: Նրանց կասենք, որ ձկնորսական մեր գործով ափ հասնելով այս կողմերում, մենք ձայն լսեցինք և մարդասիրությունից դրդված բացեցինք գերեզմանը, որպեսզի ազատենք նրան, ով փակված էր այնտեղ: Եկեք ստիպենք, որ այդ կիրնը երդում անի, թե կհաստատի այս բոլորը: Նա դա կանի ուրախությամբ որպես երախտագիտության նշան հանդես այն բարերար մարդկանց, որոնց պարտական է իր փրկության համար: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպիսի ուրախությամբ կլցնենք մենք Սիցիլիան: Ինչքա՛ն պարզևներ կստանանք: Միաժամանակ մենք մի այնպիսի արարք կանենք, որ մարդկանց աչքին ազնիվ կերևա, աստվածների աչքին՝ սուրբ:

Բայց նա դեռ չէր վերջացրել իր խոսքը, երբ մի ուրիշը հակադրվեց նրան:

— Զո ասածը խելացի չէ, և հիմա ժամանակը չէ, որ նստենք ու փիլիսոփայենք: Գուցե գողացված գերեզմա՞նն է մեզ ազնիվ դարձրել: Մի՞թե մենք պետք է խղճանք նրան, որին սեփական ամուսինը չի խղճացել և սպանել է: Խղճալ նրան այն բանի համար, որ նա մեզ ոչևչով չի վիրավորել: Այո, բայց Կալիբրոյը դաժանորեն կվիրավորի մեզ: Ամենից առաջ, եթե մենք աղջկանը հանձնենք իր ծնողներին, ապա դեռևս անհայտ է, թե նրանք ի՞նչ կարծիք կունենան կատարվածի մասին: Անհավանական է այն առիթը, ըստ որի մենք լողացել ենք դեպի ափ ու հասել գերեզմանին, անհավանական է, որ դա կասկած չհարուցի նրանց մեջ: Ասենք թե այդ կնոջ հարազատները, ի նշան երախտագիտության, ազատեցին մեզ պատժից, այնուամենայնիվ իշխանությունները, դե ինքը՝ ժողովուրդն էլ չի ների գերեզման կողոպտողներին, որոնց փոխադրաբեռը կմերկացնի նրանց: Խնդրեմ, ուրիշ բան կարող եմ ասել: Կնոջ վաճառքը մեզ համար ավելի ձեռնառու է, որովհետև նրա գեղեցկությունը գին ունի: Բայց դա էլ վտանգավոր է մեզ համար: Ոսկին ձայն չունի,

արծաթն էլ չի ասի, թե որտեղից ենք վերցրել իրեն: Ոսկու և արծաթի մասին կարելի է հնարել այս կամ այն բանը: Բայց ո՞վ կարող է թաքցնել այն բեռը, որն ունի աչքեր, ականջներ և լեզու: Դրա հետ մեկտեղ այս աղջիկն էլ այնքան գերմարդկային գեղեցկություն ունի, որ ոչ մի կերպ թաքցնել չես կարող: Կամ պետք է մենք հավատացնենք, որ նա ստրկուհի՞ է: Բայց ո՞վ կհավատա դրան, եթե նայի աղջկան: Եվ այդպես, եկեք այստեղ էլ սպանենք նրան, որպեսզի մեզ հետ քարշ չտանք մեր սեփական մեղադրողին:

Շատերը պաշտպանեցին առաջին առաջարկը, շատերն էլ երկրորդը: Բայց Ֆերոնը քվեարկության չդրեց ոչ մեկը, ոչ էլ մյուսը:

— Դու,—ասաց նա առաջինին,— մեզ քաշում ես վտանգի մեջ, իսկ դու գրկում ես շահույթից: Իմ կարծիքով ավելի լավ է վաճառել կնոջը, քան կորցնել նրան: Չէ որ մինչև վաճառվելը նա լուռումուռն է կմսա վախից, իսկ վաճառքից հետո, երբ մենք այլևս այնտեղ չենք լինի, թող մեղադրի մեզ: Մենք էլ անվտանգ կյանքով չենք ապրում: Բայց մտնենք նավակը: Հեռանանք ափից: Արդեն առավոտ է դառնում:

11

Դուրս գալով բաց ծով, նավակն արագորեն առաջ շարժվեց: Ոչ ալիքները, ոչ քամին չէին խանգարում նավակին, որովհետև նրա մեջ գտնվող մարդիկ որևէ որոշակի տեղ չէին ուղևորվում, և ինչ քամի էլ լիներ, ուր էլ քշեր նավախելը, համընթաց էր նրանց համար: Ֆերոնը քաջալերում էր Կալիբոյին, փորձելով խաբել նրան ամեն տեսակ շինծու բաներով, բայց աղջիկը հասկանում էր իր հետ կատարվածը և զգում էր, որ ինքն ազատվել է ուրիշների համար: Սակայն նա այնպիսի տեսք ընդունեց, թե իբր ոչինչ չի նկատում և հավատում է նրանց: Նա վախենում էր, թե չլինի նրանք սպանեն իրեն, եթե դժգոհի: Հայտնելով, որ ծովի վրա վատ է զգում և ծածկվելով գլխաշորով, նա արտասվելով ինքնիրեն այսպես ասաց. «Հայր իմ, այս նույն ծովում դու աթենական երեք հարյուր նավ ես ջախջախել, իսկ քո սիրելի դստերը հափշտակել է մի մակույկ, և դու ինձ ոչ մի օգնություն ցույց չես տալիս: Օտար երկիր են տանում ինձ, և ես՝ ազատս կդառնամ ստրկուհի: Ի՞նչ լավ բան է, եթե Հերմոկրատեսի դստերը տեր դառնա մի որևէ աթենացի, որը շուկայում կգնի ինձ իր համար: Ավելի լավ կլիներ, եթե ես գերեզմանում պառկած մնայի որպես մեռյալ: Գոնե այդ ժամանակ ինձ հետ կլիներ իմ մասին հոգացող Քերեյը, իսկ այժմ մենք բաժանվել ենք իրարից և այս, և մյուս կյանքում»: Այդպես ողբում էր նա, իսկ ավազակները լողում էին հեռու, շրջանցելով մանր կղզիներն փոքր քաղաքները: Ախր նրանց բեռը աղքատների համար չէր նախատեսված: Նրանք փնտրում էին հարուստ մարդկանց: Նրանք խարխսի ձգեցին Ատտիկայի դիմաց, ցամաքալեզվակի մոտ, որին մերձ գտնվում էր առատ ու զուլալ մի աղբյուր, և ուր տարածվում էր մի գեղեցիկ մարգագետին: Կալիբոյին ուղեկցելով այստեղ, նրանք, հոգալով աղջկա գեղեցկությունը պահպանելու մասին, առաջարկեցին նրան լվացվել ու հանգստանալ ծովային ճանապարհորդությունից հետո: Առանձնացած ավազակներն էլ սկսեցին իրար հետ խորհրդակցել, թե այստեղից հետո ուր պիտի գնան:

— Աթենքը՝ մեծ ու հարուստ քաղաքը, մեզնից մոտիկ է,— ասաց ավազակներից մեկը,— այնտեղ մենք կգտնենք վաճառականներին, հարուստ մարդկանց մի խումբ: Ինչքան մարդ շուկայում լինի, այնքան էլ Աթենքում կգտնենք ուրիշ քաղաքներից եկած³⁹:

Ամենքը, հասկանալի է, համաձայն էին լողալ դեպի Աթենք: Բայց Ֆերոնը վախենում էր աթենական խորամանկությունից:

— Երևի միայն դուք եք, որ ոչինչ չեք լսել, թե որքան բամբասկոտ են աթենացիները: Աթենացի ժողովուրդը շատախոս է և շատ է սիրում դատ ու դատաստանը: Նավահանգստում հազար բանասարկուներ⁴⁰ կսկսեն հարցուփորձ անել մեզ, իմանալու համար, թե ովքեր ենք մենք, որտեղից ենք բերում այդ բեռը, և ստոր մարդկանց մեջ կծնվեն կեղտոտ կասկածանքներ: Իսկ այնտեղ հիմա Արեոպագոսն⁴¹ է և ամեն տեսակ բռնապետներից էլ վատթար արխոնտները⁴²: Աթենացիներից մենք պետք է ավելի վախենանք, քան սիրակուզցիներից: Իոնիան, ահա թե որն է մեզ համար հարմար տեղը: Այնտեղ և Մեծ Ասիայի⁴³ արքայական հարստության աղբյուրն է⁴⁴, այնտեղ մարդիկ էլ

ապրում են շքեղության ու տոնահանդեսների մեջ: Հույս ունեն, որ այնտեղ հիմա կգտնեմ իմ ծանոթներից որևէ մեկին:

Եվ ահա ջրի պաշար վերցնելով ու հենց այդտեղ կանգնած բեռնատար նավերից պարեն առնելով, նրանք լողացին ուղիղ դեպի Միլեթ և չորրորդ օրը մտան քաղաքից ութսուն ստադիա հեռու գտնվող ծովախորշը, որ նրանց համար գերազանց ապաստարան էր:

12

Ֆերոնը հրամայեց նավակից հանել թիերը և կազմակերպել Կալիբրոյի հանգիստը՝ ամեն տեսակ հարմարություններ ստեղծելով նրա համար: Նա այդպես վարվեց ոչ թե մարդասիրությունից դրդված, այլ իր շահը հաշվի առնելով, ոչ թե որպես ավազակ, այլ ավելի շուտ՝ որպես վաճառական: Ինքն էլ շտապեց քաղաք, հետը վերցնելով իր օգնականներից երկուսին: Նա չէր պատրաստվում ոչ հրապարակով վաճառք, ոչ էլ բացահայտ գնորդ գտնել, այլ փորձում էր վաճառքը կազմակերպել գաղտնի ձեռքից-ձեռք: Այդպիսի վաճառքը, սակայն, դուրս եկավ դժվար իրագործելի: Ապրանքը նախատեսված էր ոչ թե շատերի, ոչ թե առաջին հանդիպողի, այլ արքայական հարստություն ունեցող մարդու համար: Բայց Ֆերոնն էլ վախենում էր մոտենալ այդ տեսակ մարդկանց: Գործը ձգձգվում էր, իսկ հետագա քաջքուկի համար Ֆերոնն այլևս համբերություն չուներ:

Գիշերը վրա հասավ, բայց Ֆերոնը չկարողացավ քնել և ինքն իրեն ասաց. «Դու անխոհեմ ես, Ֆերոն: Այս քանի օր է, որ դու արծաթն ու ոսկին թողնում ես ամայի վայրում, կարծես թե քեզից բացի աշխարհում ուրիշ ավազակ չկա: Միթե դու չգիտես, որ ջրերի վրա լողում են նաև ուրիշ ծովահեններ: Իսկ ես իմ ավազակներից եմ վախենում, որոնք կարող են լքել մեզ և լողալ հեռու: Չէ որ դու քո գորախումբն ընտրեցիր ոչ ազնիվ մարդկանցից և ոչ նրա համար, որ հավատարիմ մնան քեզ, այլ ընտրել ես բացահայտ կեղտոտներից: Դե ինչ արած (այդպես եզրակացրեց նա), այժմ ստիպված ես քնել, իսկ լուսադեմին վազիր նավակի մոտ և լքիր ծովում քեզ խանգարող և քեզ համար բացառապես ավելորդ այդ կնոջը, դադարիր հետո քարշ տալ այն բեռը որի վաճառքը կազմակերպելը դժվար է»:

Բայց, քուն մտնելով և երագում փակ դռներ տեսնելով, նա որոշեց այդ օրն էլ մի փոքր սպասել: Տանջվելով այդ մտքերով, ամբողջովին սրտնեղած Ֆերոնը նստել էր խանութում⁴⁵, երբ տեսավ ազատ մարդկանց և ստրուկների ամբոխի կողքով քայլող տխրադեմ, սևագգեստ մի տարեց մարդու: Ֆերոնը ելավ տեղից և (մարդկանց հատուկ է հետաքրքրասիրությունը) դարձավ այն մարդուն ուղեկցողներից մեկին այսպիսի հարցով.

— Ո՞վ է նա:

— Երևում է, որ դու օտարերկրացի ես և եկել ես հեռվից,— պատասխանեց ուղեկցողը,— քանի որ չես ճանաչում իր ծագումով, իր բարեկրթությամբ մնացած բոլոր իոնացիներին⁴⁶ գերազանցող Դիոնիսոսին, մեծ արքայի⁴⁷ բարեկամին:

— Իսկ ինչո՞ւ է նա սևագգեստ:

— Մահացել է կինը, որին նա շատ էր սիրում:

Գտնելով ցանկալի հարուստ մարդուն, Ֆերոնն ավելի մեծ հաստատակամությամբ շարունակեց սկսված զրույցը: Նա արդեն բաց չթողեց իր զրուցակցին:

— Դու այդ մարդու մոտ ի՞նչ ես անում,— հետաքրքրվեց Ֆերոնը:

— Ես վարում եմ նրա ամբողջ տնտեսությունը, բացի այդ իմ խնամքի տակ է գտնվում նրա դուստրը՝ փոքրիկ աղջիկը, որ իր դժբախտ մոր վաղաժամ մահից հետո որբ է մնացել:

— Իսկ ի՞նչ է քո անունը:

— Լեոնա:

— Ինչ լավ է, որ ես հանդիպեցի քեզ, Լեոնա,— բացականչեց Ֆերոնը:— Ես վաճառական եմ և հիմա Իտալիայից եմ գալիս: Ահա թե ինչու ես Իոնիայի մասին ոչինչ էլ չգիտեմ: Սիբարիս⁴⁸ քաղաքի առաջնակարգ հարուստներից մեկը խանդից բռնկված վաճառել է իր գեղեցկուհի արքային, որ գնել էմ ես: Նա օգտավետ կլինի քեզ համար, կափսոսաս, եթե նրան չվերցնես որպես դայակ (նա բավական բարեկիրթ է) տիրոջդ աղջկա համար կամ, գուցե հարմար գտնես նրան ընծայել տիրոջդ: Հասկանալի է, որ քո

շահերն էլ պահանջում են, որ տերդ ստրկուհի ձեռք բերի և ոչ թե խորթ մայր վերցնի դստեր համար:

Լեոնան հաճույքով լսեց այս խոսքերը:

— Մի որևէ աստված քեզ ինձ մոտ է ուղարկել որպես իսկական բարերար,— ասաց նա Ֆերոնին:— Այն, ինչ ես երազում եմ տեսնում, դու ինձ ցուցանում ես հարթման: Բայց արի տուն գնանք և եղիր իմ թանկագին հյուրը: Իսկ թե ինչպես կվարվենք կնոջ հետ, դա կորոշի նրա արտաքինը. մեզ համար հարմար է, թե տնտեսական ապրանք է:

13

Տուն մտնելով, Ֆերոնը հիացավ տան մեծությամբ ու հոյակապությամբ: Բանն այն է, որ այդ տունը նախատեսված էր պարսիկ արքային ընդունելու համար:

Լեոնան խնդրեց Ֆերոնին սպասել, քանի որ նախ և առաջ նա պետք է ամեն ինչ հոգար իր տիրոջ համար: Ապա վերադարձավ և Ֆերոնին ուղեկցեց իր սեփական, շքեղորեն կահավորված շենքը և կարգադրեց սեղան բացել:

Շատ բան տեսած, ցանկացած իրադրության մեջ հիանալիորեն կողմնորոշվող Ֆերոնը սկսեց ուսել և խմել Լեոնայի կենացը, իր պարզասրտությամբ և առավել ևս դյուրահավատ վարվեցողությամբ շահելով Լեոնայի սիրտը: Սեղանի շուրջ նրանք շատ խոսեցին նաև կնոջ մասին, ըստ որում Ֆերոնը գովում էր ոչ այնքան նրա գեղեցկությունը, որքան նրա բնավորությունը, իմանալով, որ պաշտպանության կարիք է զգում այն, ինչ անտեսանելի է: Արտաքինը առանց այն էլ ցույց կտա ինքն իրեն:

— Եվ այդպես, գնանք, ցույց տուր ինձ նրան,— ասաց Լեոնան Ֆերոնին:

— Ախր նա այստեղ չի գտնվում,— պատասխանեց Ֆերոնը,— տելլիններից⁴⁹ խուսափելու համար մենք շրջանցեցինք քաղաքը: Մեր նավը խարխիս է ձգել այստեղից ուլթսուն ստադիա հեռու:

Եվ Ֆերոնը նկարագրեց վայրը:

— Դուք հանգրվանել եք մեր կալվածքի մոտ,— բացականչեց Լեոնան:— Ավելի լավ: Նշանակում է, ինքը՝ ճակատագիրն է ձեզ բերել Դիոնիսոսի մոտ: Գնանք գյուղ, այնտեղ էլ դուք կհանգստանաք ծովային ճամփորդությունից հետո: Նրանցից ոչ հեռու գտնվում է հարուստ կահավորանք ունեցող մեր ամառանոցը⁵⁰:

Գլխի ընկնելով, որ վաճառքն այդպիսով կկատարվի հեշտությամբ՝ ոչ թե շուկայում, այլ մեկուսատեղում, Ֆերոնն էլ ավելի ուրախացավ:

— Ճանապարհվենք վաղն առավոտյան,— ասաց նա Լեոնային,— դու՝ դեպի ամառանոց, իսկ ես՝ դեպի նավը, այնտեղից էլ ես կնոջը կբերեմ քեզ մոտ:

Այդպես պայմանավորվելով իրար հետ և միմյանց ձեռք սեղմելով, նրանք բաժանվեցին:

Երկուսի համար էլ գիշերը երկար թվաց: Երկուսով էլ շտապում էին՝ մեկը վաճառել, մյուսը՝ գնել:

Հաջորդ օրը Լեոնան ծովով հասավ ամառանոց, հետը դրամ վերցնելով, որ պետք է վաճառականին հանձներ, որպես կանխավճար: Ֆերոնն էլ, արդեն վաղուց անհամբերությամբ իրեն սպասող ընկերներին գտավ ափին և պատմելով նրանց գործարքի մասին, սկսեց նախապատրաստել Կալիրոյին:

— Աղջիկս,— այսպես ասաց Ֆերոնը նրան,— սկզբում ես էլ էի ցանկանում քեզ հասցնել քո մերձավորներին, բայց դրան խանգարեց ծովը: Մեզ պահեց հակառակ քամին: Դու գիտես, թե ինչպես եմ ես հոգում քեզ համար: Գլխավորը. մենք պահպանել ենք քո մաքրությունը: Զերեյը քեզ, որ փրկեցինք գերեզմանից, կստանա ոչ թե խայտառակված, այլ ինչպես ամուսնական մահճում: Իսկ այժմ մենք պետք է գնանք Լիկիա⁵¹: Սակայն, ոչ մի կարիք չկա, որ դու էլ տանջվես մեզ հետ: Չէ որ դու դժվարությամբ ես տանում ծովը: Այստեղ ես քեզ կհանձնեմ, հասկանալի է, հավատարիմ բարեկամների, իսկ հետո ետ գալուց կվերցնեմ քեզ և խնամքով կտանեմ Սիրակուզա: Վերցրու քո իրերից որը ցանկանում ես: Դե քո մյուս իրերն էլ մենք կպահենք քեզ համար:

Ֆերոնի այս խոսքերը ստիպեցին, որ Կալիրոյը, չնայած իր խոր վշտին, ծիծաղի մտքում: Ֆերոնը կարծում էր, թե նա բոլորովին հիմար է: Չէ որ աղջիկը գիտեր, որ իրեն

վաճառում են: Նա ձգտում էր ազատվել ավագաններից և մտածում էր, որ այդ վաճառքը իր համար ավելի լավ է նախկին ազատությունից:

— Հայր, շնորհակալություն քեզ, իմ հանդեպ մարդասիրաբար վարվելու համար,— ասաց աղջիկը Ֆերոնին:— Թող աստվածները ձեզ՝ բոլորիդ վարձատրեն ըստ արժանվույն: Բայց թաղման ընծաներից օգտվելը ես նախանշան եմ համարում: Ամեն ինչ պահեցեք ինչպես պետք է, իսկ ինձ էլ հերիք է այն մատակարար, որ կրում էի ես նաև մեռյալ վիճակում:

Ապա, գլուխը շորով ծածկելով, Կալիրոյը ասաց.

— Տար ինձ, Ֆերոն, ուր ուզում ես, ցանկացած տեղն էլ ավելի լավ կլինի քան ծովն ու գերեզմանը:

14

Ամառանոցին մոտենալու ժամանակ Ֆերոնն այսպիսի խորամանկության դիմեց: Վերցնելով Կալիրոյի գլխաշորը և արձակելով նրա մազերը, նա դուռը բացեց և աղջկանն առաջինը հրավիրեց ներս: Եվ Լեոնան, և տանը գտնվող մնացած մարդիկ մնացին զարմացած՝ իրենց առջև անսպասելիորեն տեսնելով աղջկան:

Շատերին թվաց, թե իրենց առջև աստվածուհի է կանգնած: Չէ որ գյուղում լուր էր տարածվել Աֆրոդիտեի հայտնվելու մասին: Համընդհանուր շփոթի մեջ Լեոնային մոտեցավ Կալիրոյի հետևից եկող Ֆերոնը և ասաց.

— Վեր կաց և հոգ տար ընդունելու կնոջը: Սա հենց նա է, որ դու պատրաստվում ես ձեռք բերել:

Հետևեց ընդհանուր հիացական զարմանքը:

Կալիրոյին տարան մի լավագույն սենյակ, պառկեցրին անկողնու վրա, և թողեցին, որ հանգստանա այնտեղ: Վշտից, հոգևածությունից և սարսափից հետո իրոք նա հանգստանալու մեծ կարիք ուներ: Ֆերոնն էլ բռնելով Լեոնայի ձեռքը, ասաց.

— Ես իմ պարտքը կատարեցի ազնվաբար: Հիմա տիրացիր այդ կնոջը: Դու միշտ կմնաս իմ բարեկամը: Գնա քաղաքից գնման կայքագիր բեր և այն ժամանակ դու ինձ կվճարես այնպիսի գին, ինչպիսին ինքդ կդնես:

— Բայց ես էլ նման վստահությամբ դրամը հանձնում եմ քեզ նախքան դու կստորագրես կայքագիրը,— աճապարեց Ֆերոնին պատասխանել Լեոնան, մի կողմից շտապելով Ֆերոնին կապել կանխավճարով, վախենալով, որ Ֆերոնը կարող էր փոխել իր միտքը: Քաղաքում քիչ չեն այն մարդիկ, որոնք կցանկանային գնել կնոջը: Եվ Լեոնան սկսեց Ֆերոնին ստիպել, որ նա նախապես ընդունի այդ նպատակով իր կողմից պատրաստված արձաթի մի տաղանթ⁵², որ, կեղծաբար հրաժարվելուց հետո, վերցրեց Ֆերոնը: Լեոնան փորձեց պահել նրան ճաշին (արդեն ուշ ժամ էր), բայց Ֆերոնը հրաժարվեց:

— Ուզում եմ մինչև երեկո քաղաք հասնել ծովով,— ասաց նա:— Վաղը մենք քեզ կհանդիպենք նավահանգստում:

Այդ ասելով նրանք բաժանվեցին:

Բայց նավակ հասնելով, Ֆերոնը հրաման տվեց ինչքան կարելի է շուտ հանել խարիսխը, քանի դեռ ոչ ոք ոչինչ գլխի չի ընկել: Եվ նրանք փախուստի դիմեցին այն ուղղությամբ, ուր քամին տարավ: Իսկ Կալիրոյը, վերջապես միայնակ մնալով, սկսեց ազատության մեջ լալ իր բախտը: «Ահա իմ երկրորդ գերեզմանը,— ինքն իրեն ասաց նա,— որտեղ փակեց ինձ Ֆերոնը և որն առաջինից ավելի ամայի է: Գուցե այնտեղ իմ գերեզմանին մոտենային հայրս ու մայրս և գուցե իմ գերեզմանի վրա արցունք թափեր Քերեյը: Ես դա կզգայի նույնիսկ մեռած վիճակում: Իսկ այստեղ ո՞ւմ կանչեմ ինձ մոտ: Նախանձ ճակատագիր: Ոչ ցամաքում, ոչ ծովում դու չհագեցար իմ թշվառություններով: Ոչ, սկզբում դու իմ սիրածին դարձրիր ինձ սպանող: Քերեյը, որ իր կյանքում ոչ մի անգամ չէր հարվածել նույնիսկ ստրուկի, ոտքով մահացու հարված հասցրեց ինձ՝ իր ընկերուհուն: Հետո դու ինձ հանձնեցիր կողոպտիչների ձեռքը, գերեզմանից ծով հասցրիր և, որ ավելի սարսափելի է քան ավելոծումը, դարձրիր ծովահենների ավարը: Իսկ փառաբանված գեղեցկությունն եմ ձեռք բերել միայն նրա համար, որ ավագակ Ֆերոնը բարձր գին ստանա ինձ վաճառելով: Ես վաճառվեցի գաղտնաբար, նույնիսկ ինձ

քաղաք չհասցրին, ինչպես դա կանեին, եթե վաճառեին ամեն տեսակ ստրկուհու: Չէ որ դու, ճակատագիր, վախեցար, որ տեսնելով ինձ, մարդիկ գլխի կընկնեին, որ ես ազատ մարդ եմ: Դրա համար էլ ես վաճառվել եմ որպես սպասք, և չգիտեմ ում, արդյոք հույնի՞, բարբարոսի՞, թե՛ նորից ավազակի»: Ձեռքով կրծքին հարվածելով⁵³, Կալիթոյը իր մատանու վրա տեսավ Զերեյի պատկերը⁵⁴ և, համբուրելով, ասաց. «Զերեյ, իրականում դու մեռած ես ինձ համար, բաժանված ինձնից ծովային այդքան մեծ տարածքով: Դու լացում ես, ավստոսում արարքիդ համար և, նստած դատարկ գերեզմանի մոտ, քո հավատարմությունն ես ցույց տալիս գերեզմանին, իսկ ինձ՝ Յերմոկրատեսի դստերը, քո կնոջը, այսօր վաճառեցին»:

Այդպես ողբաց նա, և քունը վրա հասավ դժվարությամբ:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

1

Տեսնես Ֆոկին պատվիրելով ուշադիր լինել Կալիթոյի հանդեպ, Լեոնան նույն գիշերը գնաց Միլեթ, շտապելով տիրոջն ուրախ լուր տալ նոր ստրկուհի գնելու մասին, չկասկածելով, որ դա մեծ սփոփանք կլինի վշտացած Դիոնիսոսի համար: Դիոնիսոսին նա գտավ անկողնում: Չնայած հայրենիքը կարոտում էր նրան, Դիոնիսոսը, տանջվելով իր վշտից, տնից համարյա ոչ մի տեղ դուրս չէր գալիս, ամբողջ ժամանակը անց էր կացնում ննջարանում՝ կարծես թե կինը դեռևս կողքին է: Տեսնելով Լեոնային, Դիոնիսոսն ասաց.

— Դժբախտ կնոջս մահից հետո այս գիշեր առաջին անգամ ես լավ քնեցի: Երազի մեջ ես ամենայն պարզությամբ տեսա հանգուցյալին, բայց առավել գեղեցիկ ու գեղիւրան, քան առաջ, և նա ինձ հետ վարվում էր այնպես, ինչպես հարթմնի: Երազում տեսա, թե իբր դա մեր հարսանիքի առաջին օրն է, և իբր թե որպես հարսի ես նրան իմ տունն եմ ուղեկցում ծովեզրյա իմ տիրույթից, իսկ դու էլ, իբր ինձ համար հիմենետո՞ւ⁵⁵ ես երգում:

Դիոնիսոսը դեռ չէր վերջացրել, երբ Լեոնան բացականչեց.

— Տեր իմ, դու երջանիկ ես և՛ երազում, և՛ արթուն ժամանակ: Այժմ դու կլսես այն, ինչ տեսել ես երազում:

Եվ Լեոնան սկսեց պատմել.

— Վերջերս ինձ մոտ եկավ մի վաճառական, որ, տելոններից վախենալով, խարխսի էր գցել քաղաքի սահմաններից դուրս, քո կալվածքից ոչ հեռու, առաջարկելով գնել հրաշալի գեղեցկություն ունեցող մի կին: Պայմանավորվելով նրա հետ, ես գյուղ գնացի, որտեղ էլ գործն ավարտեցինք: Ես նրան տվեցի մի տաղանդ: Կայքագրի օրինական ստորագրումը տեղի կունենա այստեղ՝ քաղաքում:

Դիոնիսոսին հաճո էր լսել կնոջ գեղեցկության մասին (իրականում նա կնամուլ էր), բայց հաճելի չէր, որ այդ կինը ստրկուհի է: Իր նման կարևոր մարդուն, որ աստիճանով և դաստիարակությամբ առաջինն էր Իոնիայում, զգվանք էր պատճառում աղախնի անկողինը:

— Լեոնա,— ասաց նա,— գեղեցիկ մարդը չի կարող ծագումով ազատ չլինել: Միթե դու բանաստեղծներից չես լսել, որ գեղեցկուհիները աստվածների զավակներն են, առավել ևս նրանք բոլորն էլ ազատների զավակներ են: Զո մեկուսարանում նա քեզ դուր է եկել գյուղական կանանց համեմատությամբ: Բայց քանի որ դու նրան գնել ես, շտապիր հրապարակ⁵⁶, օրենքների գիտակ Ադրաստը⁵⁷ կկազմի կայքագիրը:

Լեոնան ուրախ էր, որ իրեն չեն հավատում: Անակնկալն ավելի ուժգին կապշեցնի տիրոջը: Լեոնան պտտվեց ամբողջ քաղաքը, նայեց բոլոր ճաշասեղանները, Միլեթի բոլոր նավահանգիստները, բայց ոչ մի տեղ չգտավ Ֆերոնին: Նա հարցունքոք արեց նաև վաճառականներին ու մակույկավարներին: Ոչ ոք չէր ճանաչում Ֆերոնին: Լեոնան, կատարյալ տարակուսանքի մեջ, մի թիավոր նավակ վարձեց, նրանով գնաց մինչև հրվանդան, այնտեղից էլ՝ կալվածք: Դե, նա չէր կարող գտնել նրան, ով հեռացել է Միլեթից: Նա դանդաղ վերադարձավ տիրոջ մոտ: Տեսնելով նրա դեմքի տխուր արտահայտությունը, Դիոնիսոսը հարցրեց, թե ինչ տհաճ բան է կատարվել: Եվ Լեոնան պատասխանեց.

— Տեր իմ, ես քո մի տաղանդը քամուն տվեցի:

— Պատահածը կստիպի քեզ այսուհետև զգույշ գործել,— նկատեց Դիոնիսոսը:— Բայց այնուամենայնիվ ի՞նչ է պատահել: Գուցե նոր ստրկուհի՞ն է փախել:

— Փախել է նրան վաճառողը և ոչ թե նա:

— Դե, նշանակում է նա մի գիշատիչ էր, որ քեզ վաճառել է գողացված ստրկուհի և այդ պատճառով էլ ծախել վերջացրել է գաղտնի: Այդ կինն ի՞նչ ասաց քեզ, որտեղացի՞ է ծագումով:

— Կինն Իտալիայից է, սիբարիսցի⁵⁸, որին տերը վաճառել է խանդից բռնկված:

— Որոնիր ու տես, թե այստեղ որևէ սիբարիսցի չի՞ ապրում, իսկ կնոջն առայժմ թող գյուղում մեզ մոտ:

Լեոնան վերադարձավ տիտուր, ափսոսալով չկատարված գործարքի մասին և որոշեց սպասել մի հարմար ժամանակի, երբ կարելի կլինի համոզել տիրոջը կալվածք գնալու: Լեոնան միայն մի հույս ուներ՝ կնոջ արտաքինը:

2

Կալիրոյի մոտ, սենյակ մտան գյուղական կանայք և անմիջապես սկսեցին ծառայել նրան ինչպես իրենց տիրուհու: Իսկ տնտեսի կին Պլանգոնան, որ մի խելացի արարած էր, ասաց նրան.

— Աղջիկս, դու դեռ կարոտում ես ձերոնց: Իսկ այստեղ օտարներին էլ հարազատներ համարիր: Մեր տերը՝ Դիոնիսոսը, լավ բարի մարդ է: Երջանկության աստվածը քեզ ազնիվ տուն է բերել: Դու այստեղ կապրես ինչպես հայրենիքում: Ծովային երկար ճամփորդությունից հետո սրբիր քեզնից լոռատիղմը, դու սպասուհիներ ունես:

Նա Կալիրոյին դժվարությամբ, ուժով տարավ բաղնիք, որտեղ նրան շփեցին քսուքով և խնամքով լվացին: Եվ եթե կանայք զարմացել էին նրա աստվածային դեմքով, քանի դեռ կանգնած էր նա հագնված, ապա առավել մեծ եղավ նրանց հիացմունքը, երբ Կալիրոյը հանվեց, և նրան տեսան ամբողջովին աստվածային ինչպես և դեմքը: Ասես ինչ-որ յուրօրինակ փայլ էր արձակում նրա սպիտակ մարմինը, իսկ մաշկը այնքան նուրբ էր, որ սարսափելի էր դիպչել նրան: Թվում էր, թե եթե մատով կաչես՝ վերք կպատճառես: Շուրջը կամացուկ փսփսում էին.

— Գեղեցկուհի, և այն էլ նշանավոր գեղեցկուհի էր մեր տիրուհին, բայց սրա մոտ նա աղախին կսազեր:

Այդ գովասանքները վշտացրին Կալիրոյին, քանի որ անսքող մարգարեություններ էին անում, թե ինչ է սպասվում իրեն առաջիկայում: Երբ նրան լվացին ու սկսեցին փնջել մազերը, հետո մաքուր հագուստ բերեցին նրա համար, նա ասաց, որ ստրկուհուն պատշաճ չէ այդպիսի հագուստը:

— Ստրկի քիտոն տվեք ինձ,— ասաց նա:— Չէ՞ որ դուք էլ բարձր եք ինձնից⁵⁹:

Նա հագավ ինչ ձեռքն ընկավ, բայց այդ հագուստն էլ սագում էր նրան: Նրա գեղեցկության փայլից հանդերձ ճոխ երևաց:

Կանայք նստեցին նախաճաշի: Նախաճաշից հետո Պլանգոնան Կալիրոյին ասաց.

— Դիմիր Աֆրոդիտեին և երկրպագիր նրան: Այդ աստվածուհին այստեղ փառաբանված է, և ոչ միայն բնակիչները, այլև քաղաքացիներն էլ են այստեղ գալիս ու զոհեր մատուցում նրան: Աստվածուհուն անսում է հատկապես Դիոնիսոսը, որն առանց երկրպագելու երբեք չի անցնի նրա կողքով:

Այստեղ սկսեցին պատմել աստվածուհու հայտնվելու մասին, իսկ մի գեղեցկուհի Կալիրոյին ասաց.

— Եթե դու նայես Աֆրոդիտեին⁶⁰, քեզ կթվա, որ դու քո սեփական պատկերն ես տեսնում:

Այս խոսքերի հետ Կալիրոյի աչքերը լցվեցին արցունքով: Նա մտածում էր իր մասին. «Որպիսի դժբախտություն: Այստեղ էլ դարձյալ Աֆրոդիտե, այն աստվածուհին, որ պատճառ է դարձել իմ բոլոր թշվառություններին: Բայց ես կգնամ նրա մոտ: Կուզենայի հանդիմանել նրան շատ բանի համար:

Աստվածուհու տաճարը մեծ ճանապարհների մոտ էր, մառանցից ոչ հեռու: Խոնարհվելով Աֆրոդիտեի առջև, Կալիրոյն ընկավ նրա ոտքերը և ասաց.

— Դու առաջինն ինձ ցույց տվիր Զերեյին, բայց հիանալի կապով կապելով ինձ Նրան, դու չպահպանեցիր այդ կապը: Մինչդեռ մենք պճնել էինք քեզ⁶¹: Բայց քանի որ այդպիսին էր քո կամքը, ապա մի բան եմ խնդրում: Զերեյից հետո թող ոչ ոք չսիրի ինձ:

Աֆրոդիտեն մերժեց Նրա այդ խնդրանքը: Չէ՛ որ Նա Էրոտի մայրն էր⁶², չէ՛ որ Նա Նոր ամուսնություն էր սարքում Կալիբոյի համար, չնայած մտադիր չէր պահպանել Նաև այդ ամուսնությունը: Իսկ Կալիբոյը, ավագակներից ազատվելուց հետո, սկսեց վերագտնել այն գեղեցկությունը, որ հատուկ էր իրեն: Այնպես, որ գյուղացիները զարմանում էին, տեսնելով, թե օրըստօրե ինչպես է գեղեցկանում Կալիբոյը:

3

Սպասելով հարմար պահի, Լեոնան այսպես խոսեց Դիոնիսոսի հետ:

— Տեր իմ, վաղուց դու չես եղել քո ծովեզրյա կալվածքում, մինչդեռ այնտեղի գործերը ստիպողաբար պահանջում են քո ներկայությունը: Դու պետք է Նայես և հոտը, և ծառատունկը: Դու պետք է այնտեղ շտապես Նաև բերքահավաքի համար: Օգտվիր Նաև պերճանքից այն շենքի, որ կառուցել ենք քո հրամանով: Քո վիշտն էլ այնտեղ թեթև կտանես, զվարճություններն ու կալվածքի կառավարման գործերը կցրեն քեզ: Եթե ցանկանաս որևէ հովվի կամ այգեգործի քաջալերել, ապա կընծայես Նրան քո Նոր ձեռք բերած ստրկուհուն:

Դիոնիսոսը համաձայնեց Լեոնային և մեկնելու որոշակի օր նշանակեց: Եվ հենց որ այդ կարգադրությունը եղավ, կառապաններն սկսեցին անմիջապես պատրաստել կառքերը, ձիապաններն էլ՝ ձիերը, իսկ Նավաստիներն էլ պատրաստեցին Նավերը: Բարեկամներն ու բազմաթիվ ազատներ հրավեր ստացան մասնակցելու այդ ուղևորությանը: Դիոնիսոսը սիրում էր մեծաշուքությունը: Երբ ամեն ինչ պատրաստ էր, Դիոնիսոսը հրաման տվեց, որ ուղեբեռը և ժողովրդի մեծ մասը տանեն ծովով, իսկ կառքերն էլ հետևեն իրեն հենց որ ինքն առաջ անցնի: Շքեղ ուղևորությունն, ասաց Նա, չի պատշաճում վիշտ ունեցող մարդուն: Լուսադեմին, քանի դեռ ժողովուրդը չէր հասցրել նկատել Նրան, Դիոնիսոսը ձի Նստեց: Նրան ուղեկցում էր չորս մարդ, որոնց մեջ էր Լեոնան:

Դիոնիսոսը գյուղ գնաց, իսկ Կալիբոյը այդ գիշեր երազում Աֆրոդիտեին տեսնելով, ցանկացավ Նորից երկրպագել Նրան: Աստվածուհու արձանի առջև կանգնած Կալիբոյը երկրպագում էր, երբ Դիոնիսոսը, իջնելով ձիուց, առաջինը մտավ տաճար: Ունաձայներ լսելով, Կալիբոյը շրջվեց, որին տեսնելով Դիոնիսոսը բացականչեց.

— Աֆրոդիտե, բարեգութ եղիր, և թող քո հայտնությունը բարիք բերի ինձ:

Նա արդեն պատրաստվում էր ծնկի իջնել Նրա առջև, բայց Լեոնան ետ պահեց Նրան, ասելով.

— Տեր իմ, սա Նոր ստրկուհին է: Հանգստացիր: Իսկ դու, կին, մոտեցիր քո տիրոջը:

«Տեր» բառը լսելով, Կալիբոյը աչքերը խոնարհեց և սկսեց առատ արցունքներ թափել: Նրա համար դժվար էր բաժանվել երբեմնի ազատությունից: Բայց Դիոնիսոսը հարվածեց Լեոնային, ասելով.

— Սրբապի՛ղ՝ դժ: Աստվածների հետ խոսում ես ինչպես հասարակ մարդկանց հետ: Դու այդ Նրա՞ն ես անվանում ստրկուհի: Շատ բնական է, որ դու չես գտել Նրա վաճառողին: Մի՞թե դու չես էլ լսել, թե մեզ ինչ է ուսանում Հոմերոսը: Չէ որ...

*Աստվածները օտարներին նմանվելով,
Այլափոխվում ու շրջում են քաղաքներում և գյուղերում,
Եվ տեսնում են թե ո՞վ մարդկանցից անօրեն է և անարդար⁶³:*

— Բավական է ծաղրել ինձ,— Դիոնիսոսին դարձավ Կալիբոյը,— աստվածուհի կոչել Նրան, ով մարդկային երջանկություն էլ չունի:

Երբ Նա խոսեց, Դիոնիսոսին աստվածային թվաց Նաև Նրա ձայնը: Կիթառի հնչյուններին նմանվող Նրա ձայնը հիշեցնում էր երաժշտությունը: Շփոթմունքից այլևս չկարողանալով զրուցել Նրա հետ, սիրո կրակով արդեն բռնված Դիոնիսոսը քաշվեց իր ամառանոցը:

Շուտով քաղաքից տեղ հասավ նաև ուղեբեռը, և պատահածի մասին արագորեն տարածվեցին լուրերը: Բոլորն շտապեցին տեսնել այդ կնոջը, ցույց տալով, թե իբր տաճարն են մտնում, որ Աֆրոդիտին երկրպագեն այնտեղ: Ժողովրդի այդ բազմությունը շփոթեցրեց Կալիբոյին, և նա չիմացավ ինչ անել: Շուրջն ամբողջովին օտարոտի էր: Նա չէր տեսնում նույնիսկ իր ծանոթ Պլանգոնային, որն զբաղված էր տիրոջն ընդունելով: Ժամանակն անցնում էր, բայց ոչ ոք չէր գալիս ամառանոց, քանի որ բոլորն ասես կախարդված մնացել էին տաճարում: Լեոնան, ի դեպ, կռահեց, թե ինչ է պատահել և ուղևորվեց տաճար ու այնտեղից դուրս բերեց Կալիբոյին: Եվ ահա այդտեղ կարելի էր համոզվել, որ աշխարհում թագուհիներ ծնվում են, ինչպես մեղվափեթակի մեղվամայրը: Զանգի ականայից նրա հետևից վճռականապես շարժվեցին բոլոր ներկաները, որոնք Կալիբոյի գեղեցիկության համար ասես տիրուհի էին ընտրել նրան:

4

Կալիբոյը վերադարձավ իր համար սովորական դարձած սենյակը: Սրտի վերջ ստացած Դիոնիսոսը, որ կրթված և անձնփրկության վճռական հրապուրանք ունեցող մարդ էր, փորձեց թաքցնել իր վերքը: Վախենալով նվաստացնել իրեն աղախիկների աչքում, իսկ բարեկամների աչքում էլ ծիծաղելի երևալ, նա ամբողջ երեկո պայքարեց ինքն իր դեմ, կարծելով, թե դա ոչ ոք չի նկատում: Բայց իր երկար լռակյացությամբ նա մատնեց իրեն:

— Թող սա տանեն օտարուհուն,— սեղանից ճաշաբաժին ուղարկելով նրան, ասաց Դիոնիսոսը,— միայն ասա ոչ թե «տիրոջից» է, այլ՝ «Դիոնիսոսից»:

Նա խնջույքը ձգձգեց մինչև ուշ ժամ: Նա գիտեր, որ ինքը չի կարող քնել և ցանկանում էր արթուն մնալ բարեկամների շրջանում: Հյուրերին նա բաց թողեց միայն ուշ գիշերվրա հասնելու ժամանակ: Բայց նրա աչքերին քուն չեկավ: Մտքով նա գտնվում էր Աֆրոդիտի տաճարում, վերհիշում էր բոլոր մանրամասնությունները. և՛ նրա դեմքը, և՛ նրա մազերը, և՛ այն, թե ինչպես շրջվեց նա, ինչպես նայեց իրեն, և՛ նրա ձայնը, և՛ կեցվածքը, և՛ նրա խոսքերը: Դիոնիսոսի սիրտը վառում էին նաև նրա արցունքները:

Այստեղ կարելի էր տեսնել դատողության ու կրքի պայքարը: Կրքով հարբած վեհանձն մարդը փորձում էր հակադրվել կրքին և կրքերի անդունդից մի պահ վեր բարձրանալով, ինքն իրեն ասաց. «Զե՛ս ամաչում, Դիոնիսոս: Դու, որ ամբողջ Իոնիայում ամենաազնիվ մարդու համբավ ես վայելում, որի հետ հարգանքով են վերաբերվում և սատրապները, և արքաները, և քաղաքները, տարվել ես երեխայական ապրումներով: Միայն մի անգամ հանդիպելով այդ կնոջը, դու սիրահարվել ես նրան: Եվ սիրահարվել ես քո սգի ժամանակ, քո թշվառ կնոջ ոգիներից դեռևս չազատված: Դու գյուղ ես եկել նրա համար, որ սգի մեջ հարսանիք՞ըր տոնես: Հարսանիք մի ստրկուհու հետ, որը գուցե ուրիշին է պատկանում: Զե որ դու նրա համար կայքագիր էլ չունես»: Բայց այս առողջ դատողությունների դեմ վիճեց Էրոտը, որը Դիոնիսոսի ողջախոհությունն ընդունեց որպես անձնական վիրավորանք և դրա համար Դիոնիսոսի սրտում կրկնակի ուժով բորբոքեց այն հորդեհը, որ առաջացրել էր սիրային կրքի ժամանակ: Վերջապես ի վիճակի չլինելով այլևս առանձնության մեջ տանել հոգու ներքին պայքարը, Դիոնիսոսը մարդ ուղարկեց Լեոնայի ետևից: Վերջինս գիտեր պատճառը, բայց անգետ ձևացավ: Իբր թե անհանգստացած, նա հարցրեց.

— Դու չե՛ս քնել, տեր իմ: Զլինի՞ դարձյալ քո հոգուն թախիծ է իջել մեռած կնոջդ համար:

— Այո,— պատասխանեց Դիոնիսոսը,— իմ հոգուն թախիծ է իջել, բայց ոչ մեռածի համար: Ես գիտեմ իմ հանդեպ քո բարի տրամադրությունը և քո նվիրվածությունն ինձ, և ես ոչ մի գաղտնիք չունեմ քեզնից: Դու կործանեցիր ինձ, Լեոնա: Դու մեղավոր ես իմ թշվառությունների համար: Դու կրակ մտցրեցիր իմ տունը, կամ, ավելի ճիշտ՝ իմ հոգին: Ինձ շփոթեցնում է նաև այն անհայտությունը, որով սքողված է այդ կինը: Հեքիաթ ես պատմում ինձ թռչող վաճառականի մասին, դու նույնիսկ չգիտես, թե որտեղից է եկել նա և ուր է գնացել: Այդպիսի գեղեցկության տեր ո՞ր մարդը մեկ տաղանդով կվաճառեր նրան, որի գինը հավասար է արքայական հարստության: Դա քեզ ինչ-որ աստված է

խաբել: Լավ մտաբերիր, բանն ինչպե՞ս է եղել, դու ո՞ւմ ես տեսել, ո՞ւմ հետ ես խոսել:
Պատմիր անկեղծորեն: Դու նավ չտեսա՞ր:

— Չեմ տեսել, տեր իմ, բայց նրա մասին լսել եմ:

— Ահավասիկ հենց դա է: Ծովից դուրս է եկել մի հավերժահարս կամ ծովահարսերից մեկը: Լինում են ճակատագրի հրամաններ, որոնք ենթարկեցնում են աստվածներին և ստիպում նրանց շփվել մարդկանց հետ: Այդ մասին մեզ պատմում են բանաստեղծներն ու պատկերահանները:

Դիոնիսոսին հաճո էր համոզել Լեոնային, մեծարելով այդ կնոջը որպես այնպիսին, որը չափազանց բարձր էր մահկանացուների հետ կապվելու համար: Բայց Լեոնան ցանկանալով կռահել իր տիրոջ միտքը, ասաց.

— Տեր իմ, հարցուփորձ չենք անի, թե ով է նա, իսկ եթե ցանկանում ես, ավելի լավ է ես նրան բերեմ քեզ մոտ: Սիրո իշխանության վրա հենվելով մի դառնացրու քեզ անհաջողության մտքերով:

— Դա ես երբեք չեմ անի, նախապես չիմանալով, թե ով է նա և որտեղից,— ասաց Դիոնիսոսը:— Արի, հենց վաղն առավոտյան հարցուփորձով իմանանք նրանից ամբողջ ճշմարտությունը: Բայց որպեսզի ակամայից չկասկածեն մեզ վրա, ես նրան կհրավիրեմ ոչ թե այստեղ, այլ այնտեղ, ուր առաջին անգամ ես տեսել եմ նրան: Թող իմ զրույցը նրա հետ տեղի ունենա Աֆրոդիտեի արձանի առջև:

5

Այդպես էլ նրանք որոշեցին: Եվ հենց հաջորդ օրը Դիոնիսոսը եկավ տաճար իր բարեկամների, ազատների և ամենահավատարիմ ստրուկների ուղեկցությամբ, որպեսզի վկաներ էլ ունենա: Նա ուշադրություն էր դարձրել նաև իր հանդերձին, մի թեթև պճնելով իրեն որպես մի մարդ, որ ժամադրության է գնում սիրածի մոտ: Ի դեպ, նա բնականից էլ գեղեցիկ էր, բարձրահասակ, և աչքի էր ընկնում իր վեհությամբ: Իսկ Լեոնան Կալիբոյի մոտ եկավ հետը վերցնելով Պլանգոնային և Կալիբոյին ծանոթ սպասուհուն:

— Դիոնիսոսը,— ասաց նա Կալիբոյին,— վերին աստիճանի ազնիվ և արդարադատ մարդ է: Այժմ նա գտնվում է տաճարում, և դու, կին, պետք է նրան ասես ճշմարտությունը քո մասին, ով ես դու: Նա չի մերժի քո ոչ մի արդարացի օգնությունը: Միայն նրա հետ խոսիր անկեղծորեն և նրանից ոչինչ մի թաքցրու: Դա ավելի շուտ կտրամադրի քո հանդեպ:

Կալիբոյը, չցանկանալով, բայց և այնպես գնաց, խրախուսվելով այն բանով, որ իրենց զրույցը տեղի կունենա տաճարում: Երբ նա եկավ, ապա ամենքին ավելի մեծ հիացմունք պատեց, քան առաջին անգամ: Դիոնիսոսը նրա առջև կանգնել էր հմայված, առանց բերանը բացելու: Վերջապես երկարատև լռությունից հետո նա դժվարությամբ խոսեց.

— Կին, ինձ վերաբերող ամեն բան քեզ համար պարզ է: Ես Դիոնիսոսն եմ, Միլեթի, թերևս նաև համայն Իոնիայի գլխավոր մարդը, որի բարեպաշտություն ու բարեսրտությունը լայնորեն հայտնի է բոլորին: Արդարացի է, որ դու էլ ասես ճշմարտությունը քո մասին: Զեզ վաճառողները հաստատել են, որ դու սիբարիսցի ես և որ նրանք քեզ գնել են քո տիրուհուց, որը քեզ ծախել է խանդի պատճառով:

Կալիբոյը շառագունեց և, աչքերը խոնարհելով, կամաց խոսեց.

— Ես հիմա առաջին անգամ եմ վաճառվում, իսկ Սիբարիսը չեմ տեսել:

— Ասում էի չէ քեզ, որ նա ստրկուհի չէ,— Լեոնայի կողմը թեքվելով, ասաց Դիոնիսոսը,— կանխագուշակում եմ, որ ծագումով էլ նա ազնվական է: Ասա, կին, ամեն բան և ամենից առաջ ինչպես են կոչում քեզ:

— Կալիբոյ,— հարցին պատասխանեց նա:

Դիոնիսոսին դուր եկավ նաև նրա անունը:

Մնացածի մասին Կալիբոյը լռություն պահպանեց: Բայց քանի որ Դիոնիսոսը շարունակում էր համառորեն հարցնել նրան, Կալիբոյը ասաց.

— Տեր իմ: Խնդրում եմ թույլատրես, որ ես լռություն պահպանեմ իմ ճակատագրի մասին: Այն, ինչ սկզբում կատարվեց ինձ հետ, երազ էր, հեքիաթ: Իսկ հիմա ես այն եմ, ինչ դարձել եմ այժմ՝ օտարուհի ստրկուհի:

Այդպես ասելով, նա փորձում էր թաքցնել արտասուքները, որոնք հոսում էին նրա այտերով: Վերջացավ նրանով, որ արտասվեցին և Դիոնիսոսը, և բոլոր շրջապատողները, իսկ ուրիշին կարող էր նույնիսկ թվալ, թե արտասվում էր նաև ինքը՝ Աֆրոդիտեի արձանը: Հետաքրքրասիրությունից դրդված Դիոնիսոսը էլ ավելի համառ դարձավ:

— Աղաչում եմ քեզ,— դարձավ նա Կալիբոյին,— առաջին շնորհն արա ինձ, Կալիբոյ, պատմիր ինքդ քո մասին: Դու ուրիշին պատմած չես լինի, քանզի մեր խառնվածքների մեջ ինչ-որ հոգեհարազատ բան կա: Մի սարսափիր ոչնչից, եթե նույնիսկ ծանր հանցանք էլ լինես գործած:

Վերջին խոսքերի համար Կալիբոյը վիրավորվեց:

— Մի վիրավորիր ինձ,— ասաց նա,— ես բան չգիտեմ իմ մասին: Բայց քանի որ իմ երբեմնի բարձր ոչ մի վատ վիճակը չի համապատասխանում այժմյան իմ ճակատագրին, ապա ես վախենում եմ, թե խաբեբա կերևամ՝ պատմելով իմ մասին այնպիսի բաներ, որոնք դրանց անտեղյակ մարդկանց մեջ անվստահություն կառաջացնեն, որովհետև անցյալը չի համապատասխանում ներկայիս:

Կնոջ մտածելակերպը հիացրեց Դիոնիսոսին:

— Կարող ես ոչինչ չպատմել,— դարձավ Դիոնիսոսը նրան,— ես առանց այն էլ ամեն ինչ հասկացա: Ասենք, այնուամենայնիվ խոսիր, չնայած դու քո մասին չես կարող պատմել այնպիսի բան, որն իր վեհությամբ հավասարվեր նրան, ինչ այժմ մենք տեսնում ենք մեր աչքի առջև: Զո մասին ցանկացած փայլուն պատմությունը քեզնից ցածր կթվա:

Վերջապես Կալիբոյը դժվարությամբ սկսեց պատմել իր մասին:

— Ես Սիրակուզայի ստրատեգ Հերմոկրատեսի դուստրն եմ:— Ինձ հետ հանկարծակի պատահած դժբախտությունից գիտակցությունս կորցնելուց հետո ծնողներս թաղեցին ինձ Հարստավայել: Թալանչիները բացեցին իմ գերեզմանը: Այնտեղ էլ նրանք գտան ինձ արդեն այն ժամանակ, երբ շնչառությունս տեղն էր եկել, բերեցին այստեղ, և Ֆերոնը ինձ գաղտնի վաճառեց ահա նրան՝ Լեոնային:

Ամեն ինչի մասին հաղորդելով, Կալիբոյը լռության մատնեց միայն Քերեյին:

— Սակայն,— այսպես շարունակեց նա,— աղաչում եմ քեզ, Դիոնիսոս: Չէ որ դու հեղին ես, դու մարդասեր քաղաքի քաղաքացի ես, դու կրթված ես: Մի՛ նմանվիր ավազակներին և ինձ մի գրկիր հայրենիքից ու իմ հարազատներից: Զո հարստության մոտ ինչիդ է պետք մի ավելորդ ստրկուհին: Բայց դու չես կորցնի նաև ինձ համար վճարված գինը, եթե ինձ վերադարձնես հորս: Հերմոկրատեսը գիտե հատուցել երախտագիտությանը: Մենք սքանչանում ենք Ալկինոսով, և նա դուր է գալիս հենց նրա համար, որ խնդրողին նա հասցրել է իր հայրենիքը⁶⁴: Ես էլ քեզ խնդրողն եմ: Ազատիր գերի որբին: Եթե կյանքում ես չկարողանամ պահպանել իմ ազատությունը, ապա այն ժամանակ ես ինձ համար ազատ մահ կընտրեմ:

Լսելով այդ, Դիոնիսոսը հեկեկաց իբր Կալիբոյի համար, բայց իրականում հենց իր համար: Քանզի նա հասկանում էր, որ կրքերին բավականություն տալու հույսը չքանում է:

— Սրտապնդվիր, Կալիբոյ,— ասաց նա,— մի ընկճվիր: Դու կստանաս այն, ինչ խնդրում ես: Թող վկա լինի Աֆրոդիտեն⁶⁵:

6

Կալիբոյը իր սենյակը վերադարձավ հավատացած, որ իր կամքին դեմ իրեն ոչինչ չեն անի: Իսկ Դիոնիսոսը տուն վերադարձավ թախծոտ: Կանչելով Լեոնային և նրա հետ մնալով դեմ-դիմաց, Դիոնիսոսը ասաց նրան.

— Էրոտը ատում է ինձ, և ես ամեն բանում դժբախտ եմ: Կնոջս թաղեցի, նոր ստրկուհին էլ փախչում է ինձնից, միևնույն ես նրան համարում էի Աֆրոդիտեի նվերն ինձ: Երազանքի մեջ ես ինձ համար ավելի երանելի կյանք ստեղծեցի, քան նշանավոր լակեդեմոնացուհու⁶⁶ ամուսին Մենելաոսի կյանքը, որովհետև ես չեմ հանդուրժում, որ այդքան գեղեցիկ լինի նույնիսկ Հեղինեն: Եվ ինչքան համոզվածություն կար նրա

խոսքերում: Այո, իմ կյանքը վերջացած է: Յենց այն օրը, երբ Կալիբրոյը հեռանա այստեղից, ես էլ կհեռանամ կյանքից:

— Ոչ, ուրիշ մի արա,— Դիոնիսոսի այդ խոսքերը լսելով, բացականչեց Լեոնան,— չէ որ դու նրա տերն ես, չէ որ դու նրա վրա իշխանություն ունես, և նա, ուզենա թե չուզենա, կկատարի քո որոշումը: Մի տաղանդ վճարելով ես գնել եմ նրան:

— Գնել: Դու, երի՛ցս դժբախտ, ազատ մարդու ես գնել: Մի՞թե չես լսել, որ համայն Սիցիլիայի ստրատեգ Յերմոկրատեսի անունը դրվագվում է այդ կղզու դրամների վրա, անունը Յերմոկրատեսի, որին հարգում և սիրում է Պարսից արքան, որ ամեն տարի նվերներ է ուղարկում նրա համար, որովհետև Յերմոկրատեսը ծովամարտում ջախջախել է Պարսկաստանի թշնամիներին՝ արենացիներին: Ի՛նչ է, ես պիտի ազատ անձնավորության բռնապետը դառնամ: Ես, Դիոնիսոսս, որ մեծարվել եմ խստագույն բարոյականության համար, ե՛ս պիտի բռնությամբ վիրավորեմ նրան, որին ավագակ ֆերոնն էլ չհանդգնեց վիրավորել:

Այդպես հայտնեց նա Լեոնային և, այնուամենայնիվ, շարունակեց հուսալ, որ կկարողանա հնազանդեցնել Կալիբրոյին: Հույս տաժելը հատուկ է Էրոտի բնությանը: Դիոնիսոսը հավատում էր, որ հոգալով Կալիբրոյի մասին, նա կհասնի իր ցանկացած նպատակին: Նա կանչեց Պլանգոնային և ասաց.

— Դու արդեն բավականաչափ ապացուցել ես ինձ քո ջանասիրությունը: Այդ պատճառով ես քեզ եմ հանձնում ամենակարևոր և իմ ունեցածների մեջ ինձ համար ամենաթանկ բանը՝ մեր հյուրին: Ցանկանում եմ, որ նա ոչ մի բանի, ընդհուպ մինչև շքեղությունը, կարիք չգգա: Համարիր նրան քո տիրուհին, հոգա նրա համար, ծառայիր նրան և աշխատիր նրան կապել մեզ հետ: Ավելի հաճախ գովիր ինձ, նրան ինձ այնպես ներկայացրու, ինչպիսին գիտես ինձ: Տես, հա՛, ինձ չանվանես նրա տերը:

Պլանգոնան հասկացավ հանձնարարությունը: Նա ճարպիկ կին էր և շտապեց զբաղվել այդ գործով, գաղտնաբար դրա հետ կապելով նաև իր անձնական մտադրությունը: Կալիբրոյի մոտ գալով, Պլանգոնան չհայտնեց, որ ինքը հրաման է ստացել հոգալ Կալիբրոյի մասին, այլ սկսեց արժանանալ նրա բարեհաճությանը, ձգտելով վստահություն ձեռք բերել և դառնալ նրա խորհրդատուն:

7

Պատահեց մի այսպիսի դեպք:

Դիոնիսոսը գյուղում իր մնալը ձգձգեց մեկ այս, մեկ այն առիթով, իսկ իրականում՝ նրա համար, որ նա ի վիճակի չէր անջատվել Կալիբրոյից, իսկ նրան իր հետ տանել չէր ուզում: Յենց որ Կալիբրոյին տեսնեն Դիոնիսոսի հետ, իսկույն աղմուկ կբարձրացնեն, նրա գեղեցկությամբ կտարվի ամբողջ Իոնիան, և նրա մասին լուրերը կհասնեն մինչև մեծ արքան:

Մնալով կալվածքում և ավելի ուշադիր զբաղվելով կալվածքի գործերով, մի անգամ, ինչ-որ բանի համար, նա նկատողություն արեց տնտես ֆոկին: Այդ նկատողությունն առանձին հետևանքներ չունեցավ, խոսքից այն կողմ չգնաց: Բայց Պլանգոնան օգտվեց հարմար առիթից և, զգգգելով մազերը, վախեցած վազեց Կալիբրոյի մոտ: Զսվելով նրա ծնկներին⁶⁷, ասաց.

— Տիրուհի, աղաչում եմ քեզ, ազատիր մեզ: Դիոնիսոսը զայրացել է ամուսնուս վրա, իսկ Դիոնիսոսը ի բնե այնքան բռնկվող է, որքան և մարդասեր: Զեզկից բացի ոչ ոք չի կարող պաշտպանել մեզ, իսկ քեզ, եթե դու խնդրես, նա կշտապի ցույց տալ առաջին բարերարությունը:

Կալիբրոյն ամաչում էր գնալ Դիոնիսոսի մոտ, բայց չէր կարող մերժել Պլանգոնայի համառ խնդրանքները, քանի որ նրա առջև պարտավորված էր զգում այն ծառայությունների համար, ինչպիսիք արել է Պլանգոնան: Եվ որպեսզի ապերախտ չերևա, Կալիբրոյը պատասխանեց նրան.

— Բայց չէ որ ես էլ ստրկուհի եմ, և ես էլ ձայնի իրավունք չունեմ: Սակայն քանի որ դու կարծում ես, թե ես կարող եմ ինչ-որ բան անել, ապա պատրաստ եմ քեզ հետ գնալ և աղաչել նրան: Միայն թե գործը հաջողությամբ վերաջանա:

Նրանք ուղևորվեցին, և Պլանգոնան դռների առջև կանգնած մարդուն պատվիրեց տիրոջը հայտնել, որ նրա մոտ է եկել Կալիբրոյը:

Այդ ժամանակ Դիոնիսոսը պառկած էր վշտաբեկ: Նա սկսել էր տկարանալ նաև մարմնապես: Լսելով, որ Կալիբրոյը եկել է իր մոտ, անակնկալից նրա լեզուն կապ ընկավ և ինչ-որ մշուշ պատեց նրա աչքերը: Հագիվիազ ուշքի գալով, նա խոսեց.

— Թող ներս գա:

Մոտենալով Դիոնիսոսին և աչքերը խոնարհելով, Կալիբրոյը սկզբում շառագունեց, բայց հետո, ճիշտ է դժվարությամբ, այնուամենայնիվ ասաց.

— Նրա՝ Պլանգոնայի հանդեպ ես խոր երախտագիտություն եմ տածում: Նա ինձ սիրում է ինչպես հարազատ դստերը: Ահավասիկ, աղաչում եմ քեզ, տեր իմ, մի զայրացիր նրա ամուսնու վրա: Նվիրիր նրան քո բարեգթությունը:

Նա ցանկանում էր շարունակել, բայց սիրտ չարեց:

Դիոնիսոսը հասկացավ Պլանգոնայի ռազմական խորամանկությունը:

— Այո,— ասաց նա,— ես շատ զայրացած եմ, աշխարհում ոչ մի մարդ չի կարող նրանց՝ Ֆոկին ու Պլանգոնային ազատել իրենց ծանր հանցանքների համար արժանի կործանումից, բայց քեզ համար ես սիրով անում եմ այդ բարեգթությունը: Իմացեք, որ դուք փրկվել եք Կալիբրոյի շնորհիվ:

Պլանգոնան ընկավ Դիոնիսոսի ոտքերը, բայց Դիոնիսոսը նրան ասաց.

— Կալիբրոյի ոտքերն ընկեք: Այդ նա է փրկել ձեզ:

Տեսնելով, որ Կալիբրոյը գոհ է, և նկատելով նրա դեմքի ուրախությունը, որ առաջացել է Դիոնիսոսի ներման շնորհիվ, Պլանգոնան Կալիբրոյին ասաց.

— Մեզ համար շնորհակալություն հայտնիր Դիոնիսոսին:

Այս ասելով, Պլանգոնան Կալիբրոյին հրեց դեպի Դիոնիսոսը և Կալիբրոյը, անշնորհք կերպով ծնկի գալով, անզգուշաբար դիպավ Դիոնիսոսի աջ ձեռքին, բայց Դիոնիսոսը, ասես թույլ չտալով, որ նա հասնի մինչև իր ձեռքը, նրան քաշեց դեպի իրեն և համբուրեց, ապա անմիջապես մի կողմ հրեց նրան, որպեսզի Կալիբրոյի մեջ ոչ մի կասկած չառաջանա սարքովի խորամանկության մասին:

8

Կանայք հեռացան: Բայց համբույրը, ինչպես թույն, թափանցեց Դիոնիսոսի հոգու խորքերը, և Դիոնիսոսն այլևս չէր կարող ոչ տեսնել, ոչ լսել: Նա բոլոր կողմերից շրջապատված էր և իր սիրո դեմ ոչ մի միջոց չէր գտնում: Այդպիսի միջոցներ չէին լինի ընծաները, որովհետև Դիոնիսոսը տեսել է այդ կնոջ հպարտ բնավորությունը, անօգուտ կլինեին նաև սպառնալիքները, քանի որ Դիոնիսոսը չէր կասկածում, որ Կալիբրոյն ավելի շուտ կնախընտրեր մահը, քան տեղի կտար բռնությանը: Նա հույսը դնում էր միայն Պլանգոնայի օգնության վրա, որին կանչեց իր մոտ և ասաց.

— Զո առաջին ռազմական խորամանկությունը հաջողվեց, համբույրի համար էլ ես քեզ պարտական եմ: Բայց այդ համբույրը կամ կփրկի, կամ կկործանի ինձ: Խորհրդածիր, թե իմ դաշնակցությամբ որպես կին ինչպես կարող ես հաղթել այդ կնոջը: Գիտցիր, որ հաղթական նվերը կլինի քո ազատությունը⁶⁸ և մի ուրիշ հավելում ևս, որ հավատացած եմ ազատությունից ավելի թանկ է քեզ համար, Դիոնիսոսի կյանքը:

Հրաման ստանալով, Պլանգոնան ամեն կերպ փորձում էր իրագործել այն և դիմում էր տարբեր խորամանկությունների: Կալիբրոյը, սակայն, մնում էր անհաղթելի և շարունակում էր հավատարիմ մնալ միայն Զերեյին: Բայց ճակատագիրը խորամանկությամբ զերազանցեց Կալիբրոյին: Մարդկային հաշվումները ոչ մի արժեք չունեն միայն ճակատագրի առջև: Այդ աստվածը պայքար է սիրում և երբեք չի հուսահատվում: Այն ժամանակ էլ նրան հաջողվեց անսպասելի կամ ավելի ճիշտ ասած՝ անհավանական բան անել: Արժե լսել, թե դա ինչպես եղավ:

Ճակատագիրը մի խարդավանք հղացավ կնոջ անադարտության դեմ: Բանն այն է, որ Զերեյն ու Կալիբրոյը երբ առաջին անգամ սիրո ամուսնական կապի մեջ մտան, երկուսով միմյանց տեսչալու զգացում ապրեցին, իսկ երկուսի հավասար ցանկության ուժը անպտուղ չդարձրեց նրանց փոխադարձ շփումը: Կինը հղիացել էր ուշագնաց լինելուց ոչ շատ առաջ: Բայց հետագայում նրա գլխին եկած փորձանքների ու

թշվառությունների մեջ նա այնքան էլ շուտ չնկատեց իր հղիությունը: Երրորդ ամսից, սակայն, նրա փորն սկսեց մեծանալ, և կանացի գործերում հմուտ Պլանգոնան դա նկատեց բաղնիքում: Այն ժամանակ բազմաթիվ սպասուհիների ներկայությունը ստիպեց, որ նա լռի: Բայց իրիկնադեմին, ժամանցի ժամանակ Պլանգոնան նստեց Կալիբրոյի մոտ՝ մահճակալին և ասաց.

— Իսկ գիտե՞ս, աղջիկս, դու ախր հղի ես:

Կալիբրոյը լաց եղավ: Հեկեկալով և մազերը քրքրելով նա բացականչեց.

— Ճակատագիր, այդ մեկն էլ ավելացրիր իմ դժբախտությանը: Դու ցանկանում ես ստիպել ինձ, որ ես ստրուկ ծնեմ:

Եվ իր փորին խփելով, նա բացականչեց.

— Խեղճ: Նախքան ծնվելդ դու արդեն գերեզմանում ես եղել և հանձնվել ես ավազակների ձեռքը: Ի՞նչ կյանք ես մտնում ստրկի՞, որբի՞, հայրենագուրկի՞: Ի՞նչ հույսով ես քեզ հասունացնեմ իմ մեջ: Մահ ընդունիր մինչև ծնվելդ:

Բայց նրա ձեռքերը բռնեց Պլանգոնան, որ խոստացավ նրան հենց վաղը հեշտությամբ գլուխ բերել վիժումը:

9

Երկու կանայք, միայնակ մնալով, տարվեցին յուրաքանչյուրը իր մտքերով: Պլանգոնան մտածում էր այն մասին, որ այժմ հարմար առիթ է ստեղծվել գլուխ բերելու տիրոջ սիրո գործը: «Քո դաշնակիցը,— այդպես ասաց Պլանգոնան ինքն իրեն,— կլինի Կալիբրոյի փորը: Գտնված է նրան հնազանդեցնելու գրավականը: Կնոջ հավատարմությանը կհաղթի մայրական սերը»: Նա սկսեց ոգևորությամբ կշռադատել առաջիկա գործողությունների ընթացքը: Իսկ Կալիբրոյը մտածում էր ոչնչացնել իր երեխան, ինքն իրեն մտովի այսպես ասելով. «Հերմոկրատեսի թոռանը ես պետք է ծնեմ ստրկության մեջ»: Լույս աշխարհ բերեմ մի երեխա, որի հորը ոչ ոք չի՞ ճանաչում: Ի՞նչ կասեն թեկուզ նախանձ մարդիկ: Կասեն Կալիբրոյը հղիացել է ավազակների որջում: Ոչ, հերիք է, որ զոնե միայն ես եմ դժբախտ: Չարժե, զավակս, մտնել մի այնպիսի խղճուկ կյանք, որից պիտի փախչես, եթե ծնվես էլ: Ազատ, առանց վիշտ տեսնելու հեռացիր այդ կյանքից: Դու չես լսի նաև քո մոր մասին հերյուրանքները»:

Այնուհետև նրան համակեց ստրջանալու զգացումը և խղճաց նրան, ում կրում է իր արգանդում: «Դու մտադիր ես որդեսպա՞ն դառնալ: Սրբապի՞ղծ. Դու հետևում ես Մեդեայի օրինակին⁶⁹: Բայց այդ դեպքում դու սկյութուհուց⁷⁰ էլ վայրագ դուրս կգաս: Չէ որ նա ի դեմս իր ամուսնու՝ տեսնում էր իր թշնամուն, դու էլ ցանկանում ես սպանել Զերեյի զավակին և հուշ էլ չթողնել ձեր փառավոր ամուսնության մասին: Իսկ եթե այդ զավակը տղա՞ լինի: Իսկ եթե նա նման լինի իր հորը: Իսկ եթե նա ավելի երջանիկ լինի, քան ե՞ս: Դու, մայր, պատրաստվում ես սպանել նրան, ով փրկվել է գերեզմանից և ավազակների ձեռքի՞ց: Բայց մի՞թե մենք քիչ բան ենք լսել աստվածների ու արքաների զավակների մասին, որոնք ծնվել են ստրկության մեջ, բայց հետագայում վերագտել են իրենց հայրական արժանապատվությունը: Իսկ Չեթոսն ու Ամփիոնը⁷¹: Իսկ Կյուրոսը⁷²: Ինձ հետ դեպի Սիցիլիա կլողաս և դու, փոքրիկս, այնտեղ կփնտրես հորդ ու պապիդ և կպատմես նրանց միող ճակատագրի մասին: Ինձ օգնելու համար ծովով զորք կգա, և դու, տղաս, երկուսիս կվերադարձես մեր ծնողներին»: Ամբողջ գիշերը նա մտածեց այդ մասին և միայն կարճատև քուն ունեցավ: Իսկ երագում նրան երևաց Զերեյի կերպարանքը՝ ամբողջովին նման իրեն:

Բայց դու հագիր,— հոժար եմ ես,— շքեղագարդ գենքերը իմ⁷³:

Զերեյի կերպարանքը կանգ առավ նրա առջև և նրան. «Իմ կին, քեզ եմ հանձնում որդուս»: Զերեյը պատրաստվում էր շարունակել, բայց Կալիբրոյը, ցանկանալով զրկել նրան, վեր թռավ: Եվ հաշվելով, որ խորհուրդ է ստացել ամուսնուց, Կալիբրոյը որոշեց սնել երեխային:

Իր որոշման մասին հաջորդ օրը Կալիբրոյը հայտնեց Պլանգոնային, երբ վերջինս եկավ նրա մոտ: Եվ Պլանգոնան չհապաղեց շեշտել այդ որոշման սխալը:

— Քեզ չի հաջողվի երեխային կերակրել մեզ մոտ,— ասաց Պլանգոնան,— քեզ սիրահարված մեր տերը քեզ հարգելու և իր օրինավոր խառնվածքի պատճառով չնայած չի բռնանա քո կամքին, բայց խանդից թույլ չի տա, որ դու կերակրես մանկանը: Նրա համար վիրավորական կլինի, որ դու այդպիսի ուշադրություն ես ցուցաբերում բացակայի հանդեպ, այն դեպքում, երբ բանի տեղ չես դնում հենց իրեն, որ կողքիդ է գտնվում: Այդ պատճառով ես կարծում եմ, որ երեխայի համար ավելի լավ է կործանվել լույս աշխարհի գալուց առաջ, քան ծնվելուց հետո: Դու էլ նմանապես այն օգուտը կունենաս, որ կազատվես անտեղի ծննդաբերության և ավելորդ հղիության տառապանքներից: Ես ճշմարտությունն եմ ասում՝ քեզ սիրելու պատճառով:

Կալիբրոյի համար ծանր էր լսել այդ մասին և նա, Պլանգոնայի ոտքերն ընկնելով, աղաչեց գտնել մի որևէ միջոց, որ թույլ կտար կերակրել մանկանը: Պլանգոնան երկար ժամանակ հրաժարվում էր և երկու-երեք օր շարունակ ձգձգում էր իր պատասխանը: Իսկ երբ դրանով Կալիբրոյին ստիպեց, որ նա ավելի ջերմորեն թախանձի, Պլանգոնան արժանացավ Կալիբրոյի առավել մեծ վստահությանը, ապա աղախինը ամենից առաջ երդվեց ոչ ոքի չմատնել իրենց խորամանկությունը, որից հետո, ունքերը կիսելով և ձեռքերը շփելով, ասաց.

— Մեր գործերը, Կալիբրոյ, հաջողվում են համարձակ մտահղացումների շնորհիվ: Ահավասիկ և ես: Համակրելով քեզ, դավաճանում եմ տիրոջս: Գիտցիր, միայն, որ երեխային սպասվում է երկուսից մեկը. կամ ընդմիշտ կործանվել, կամ ծնվել որպես Իոնիայի առաջին հարուստն ու փառապան՝ տոհմի ժառանգորդը: Նա կերջանկացնի նաև քեզ՝ իր մորը: Ընտրիր մեկը կամ մյուսը, որը ցանկանում ես:

— Դե, ո՞վ անմոռություն կանի,— պատասխանեց Կալիբրոյը,— որ որդեսպանությունը նախընտրի երջանկությունից: Միայն, ըստ իս, դու խոսում ես ինչ-որ անհրաժեշտի, անհավանական բանի մասին: Ավելի պարզ խոսիր:

— Պլանգոնան հարցրեց.

— Ի՞նչ ես կարծում, ինչքա՞ն ժամանակ է, որ դու հղի ես:

— Երկու ամիս,— պատասխանեց Կալիբրոյը:

— Այդ ժամկետը կօգնի մեզ, հեշտությամբ կերևա, որ դու Դիոնիսոսից երեխա ես ունեցել յոթ ամսից հետո:

Այս խոսքերը լսելով, Կալիբրոյը բացականչեց.

— Ոչ, այդ դեպքում ավելի լավ է թող կործանվի:

Եվ Պլանգոնան կեղծավորաբար համաձայնեց նրան:

— Ճիշտ ես դատում, Կալիբրոյ,— նախընտրելով վիժումը: Ուրեմն այդպես էլ կանենք: Անշուշտ, դա ավելի անվնաս է, քան տիրոջը խաբելը: Գլխիցդ ընդմիշտ հանիր առաջվա ազատության մասին քո հիշողությունը, մի հուսա նաև, թե հայրենիք կվերադառնաս, հարմարվիր քո այժմյան վիճակին և բարեխղճորեն ստրկուհի դարձիր:

Դեռատի, ազատ տոհմից սերված աղջիկը՝ Կալիբրոյը, որին անծանոթ էին ստրկական կեղծավորությունները, լսում էր Պլանգոնայի խոսքերը՝ ոչինչ չկասկածելով: Բայց Պլանգոնան որքան շատ էր շտապում վիժեցնել, Կալիբրոյն այնքան սաստիկ էր խղճում իր արգանդում գտնվող երեխային:

— Ժամանակ տուր մտածել,— խնդրեց նա:— Չէ որ իմ առջև ծառացած է երկու կարևորագույն բաներից մեկի ընտրությունը՝ կամ առաքինությունը պահպանել, կամ երեխային:

Պլանգոնան նրան կրկին գովեց հենց այն բանի համար, որ Կալիբրոյն առանց մտածելու ընտրություն չի կատարում:

— Իրոք, չէ որ այստեղ մեկը հավասարազոր է մյուսին,— նկատեց Պլանգոնան,— մի կողմից կնոջ հավատարմությունը, մյուս կողմից՝ մայրական սերը: Բայց և այնպես չի կարելի գործը հետաձգել երկար ժամանակով: Համենայ դեպս վաղն անհրաժեշտ է վերջնականապես որոշել, քանի դեռ քո փորը չի մատնել քեզ:

Համաձայնելով, նրանք բաժանվեցին միմյանցից:

Բարձրանալով վերև⁷⁴ և իր հետևից դուռը բանալիով փակելով, Կալիբոյն իր փորին դրեց Քերեյի պատկերը⁷⁵ և այսպես ասաց. «Ահա մենք դարձանք երեք՝ ամուսինը, կինը և երեխան: Եկեք միասին խորհենք մեր ընդհանուր օգուտի մասին: Առաջինն իմ կարծիքը կհայտնեմ ես. ցանկանում եմ Քերեյի կինը մնալ ցմահ: Երկրորդ ամուսին չեմ ճանաչի: Դա ինձ համար ավելի թանկ է, քան ծնողները, հայրենիքը և երեխան: Դե, իսկ դո՞ւ, զավակս: Դու ի՞նչ ես ընտրում քեզ համար: Թույնից մեռնե՞լ նախքան արևի լույսը տեսնելը ու մորդ հետ դուրս շարտվել և գուցե նույնիսկ թաղման տեղի համար մերժում ստանալ, թե՞ կենդանի մնալ և ունենալ երկու նշանավոր հայր՝ մեկը Սիցիլիայում, մյուսը՝ Իոնիայում: Մեծանալուց հետո քո հարազատներն առանց դժվարության կճանաչեն քեզ, քանի որ ես հավատացած եմ, որ դու կծնվես, նմանվելով հորդ: Միլեթյան շրջապատված շուքով, դու նավով կլողաս դեպի Սիցիլիա, և Հերմոկրատեսը ուրախությամբ կստանա իր թոռանը, որը կարող է ստրատեգ լինել: Չավակս, դու իմ առաջարկին հակառակ առաջարկ ես անում, և թույլ չես տա, որ մենք մեռնենք: Հարցնենք նաև քո հորը: Ասենք նա արդեն հայտնել է իր կարծիքը: Չէ որ երագում կանգնելով իմ առջև նա ինքն ինձ ասաց. որդուս ես հանձնում եմ քեզ: Քերեյ, ես վկա եմ բերում, դու ինձ կնության ես ուղարկում Դիոնիսոսին»:

Համաձայնելով ապրել ոչ թե իր, այլ հանուն մանկան, Կալիբոյն այդպիսի մտքերով անցկացրեց այդ օրն ու գիշերը, իսկ առավոտյան նրա մոտ եկավ Պլանգոնան և տխուր նստեց՝ նախապես տառապած տեսք ընդունելով:

Երկուսն էլ երկար ժամանակ լուռ էին:

Վերջապես Պլանգոնան հարցրեց.

— Դու ի՞նչ որոշեցիր: Ի՞նչ պիտի անենք: Այլևս չի կարելի դանդաղել:

Հուզմունքից ու արտասուքից Կալիբոյն ի վաճակի չէր այդ հարցին արագ պատասխանել:

— Իր կամքին դեմ է գուրս գալիս երեխաս,— դժվարությամբ խոսեց նա,— արա այն, ինչ ավելի լավ է: Վախենում եմ միայն, որ Դիոնիսոսը, եթե ես նույնիսկ համաձայնեմ այդ անպատվությանը, գլխիս եկածի համար արհամարհանքով վերաբերվի ինձ հետ, ընդունելով ինձ ոչ թե որպես կին, այլ՝ որպես հարձ, արգելի ինձ կերակրել ուրիշից ծնված երեխային: Իզուր եմ կորցնում իմ պատիվը:

Կալիբոյն չհասցրեց ավարտել իր խոսքը, երբ Պլանգոնան ընդհատեց նրան:

— Այդ մասին ես քեզից առաջ եմ մտածել,— ասաց նա:— Իզուր տեղը չէ, որ ես քեզ ավելի շատ եմ սիրում, քան իմ տիրոջը: Վստահիր Դիոնիսոսի բնավորությանը: Նա ազնիվ է: Բայց և այնպես, ես կստիպեմ, որ Դիոնիսոսը երդում տա ինձ, թեկուզև նա իմ տերն է: Ես ու դու ամեն ինչ պետք է անենք զգուշորեն: Միաժամանակ, աղջիկս, հույսդ դիր ինձ վրա: Բայց քո կողմից որպես դեսպան եմ հանձնարարություն տանում:

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

1

Կալիբոյն կողմից փոխադարձ սիրո չարժանանալով և ի վիճակի չլինելով այլևս ապրել այդպես, Դիոնիսոսը որոշեց իր կյանքին վերջ տալ սովամահությամբ: Կտակի մեջ շարադրելով իր վերջին կամքը, նա թելադրում էր, թե ինչպես թաղեն իրեն: Կալիբոյին նա գրավոր խնդրում էր մոտենալ իրեն՝ թեկուզ մեռյալ լինի:

Պլանգոնան պատրաստվում էր տիրոջ մոտ մոտել, բայց ծառան, որին հրամայված էր ոչ ոքի չընդունել, ներս չթողեց: Լսելով նրանց վեճը դռան ետևում, Դիոնիսոսը հարցրեց, թե այդ ով է եկել իր սիրտը նեղացնելու, և ծառան պատասխանեց, որ Պլանգոնան է:

— Պատե՛հ ժամի չէ ներկայացել նա,— բացականչեց Դիոնիսոսը: Նա այլևս չէր ցանկանում տեսնել որևէ բան, ինչ հիշեցնում էր իր սիրատենչանքը:

— Բայց և այնպես կանչիր,— ասաց նա:

Պլանգոնան բացեց դուռը:

— Տեր իմ,— դիմեց նա Դիոնիսոսին:— Ինչո՞ւ ես դու տանջում քեզ, դառնանում այն բանի համար, թե իբր հաջողություն չունես: Չէ որ Կալիոյը հրավիրում է քեզ ամուսնանալ իր հետ: Հագնվիր, զոհ մատուցիր և դիմավորիր հարսին, որին դու սիրահարված ես:

Անակնկալը ապշեցրեց Դիոնիսոսին: Նրա աչքերը մշուշվեցին, նա բոլորովին ուժաթափ եղավ, դարձավ մեռելագույն: Պլանգոնայի լացուկոծի վրա մարդիկ վազեցին, և մահացած տիրոջ համար ամբողջ տունը լցվեց տխրությամբ: Արցունքներ թափեց նաև Կալիոյը, երբ լսեց պատահածի մասին: Վերջապես քիչ-քիչ ուշքի գալով, Դիոնիսոսը նվաղած ձայնով հարցրեց.

— Աստվածներից ո՞վ է խաբում ինձ, ցանկանալով շեղել ինձ իմ ընտրած ուղուց: Արթուն ժամանա՞կ, թե՞ երագում լսեցի ես այդ մասին: Կալիոյը ցանկանում է ամուսնանալ՝ ինձ հետ, նա, որ չէր ցանկանում նույնիսկ նայեմ իրե՞ն:

— Իզուր տեղը մի տանջիր քեզ և հավատա երջանկությանդ,— Դիոնիսոսին ասաց կողքին կանգնած Պլանգոնան,— ես հո չե՞մ խաբում իմ տիրոջը: Կալիոյն ինձ քեզ մոտ է ուղարկել հարսանիքին վերաբերող հանձնարարությամբ:

— Այդ դեպքում կատարիր նրա հանձնարարությունը,— խոսեց Դիոնիսոսը,— և կրկնիր ինձ նրա սեփական բառերը, առանց որևէ բան պակասեցնելու և որևէ բան ավելացնելու: Վերհիշիր նրա բառերը ճշտությամբ:

— Ես սերում եմ,— ասում է Կալիոյը,— սիցիլիական ամենաճանաչված տոհմից և, չնայած դժբախտության մեջ եմ ընկել, ես շարունակում եմ պահպանել իմ հպարտությունը: Ես զրկվել եմ հայրենիքից, զրկվել եմ ծնողներից, բայց ես չեմ կորցրել իմ վեհանձնությունը: Այդ պատճառով, եթե, իր կրքերին բավարարություն տալու համար, Դիոնիսոսը ցանկանում է ինձ պահել իր մոտ որպես հարձ, ապա ես ավելի շուտ կկախվեմ, քան իմ մարմինը կտամ ստրկական անպատվությանը: Իսկ եթե նա ցանկանում է, որ ես իր օրինական կինը լինեմ, ապա ես էլ ցանկանում եմ մայր դառնալ, որպեսզի շարունակվի Հերմոկրատեսի սերունդը: Թող Դիոնիսոսն էլ մտածի այդ մասին առանց շտապելու, և մտածի ոչ թե մենակ, այլ իր բարեկամների և հարազատների հետ, որպեսզի հետո ոչ ոք նրան չասի. «Դու, այդ ի՞նչ է, մտադիր ես ստրկուհուց ծնված երեխանե՞ր մեծացնել և որոշել ես խայտառակել քո տոհմը»: Եթե նա չի ցանկանում հայր դառնալ, ասում է Կալիոյը, ապա այդ դեպքում թող ամուսին էլ չդառնա:

Այս խոսքերից Դիոնիսոսն էլ ավելի բորբոքվեց: Այն միտքը, որ նա սիրվում է փոխադարձ սիրով, բոցավառվեց նրա սրտում անիրագործելի հույսեր, և, ձեռքերը դեպի երկինք կարկառելով, նա բացականչեց.

— Օ՛, Չևս և Արեգակ: Եթե ես երեխա ունենամ Կալիոյից, ապա Մեծ Արքայից ես ինձ ավելի երջանիկ կհամարեմ: Դե՛, գնանք: Տա՛ր ինձ նրա մոտ, տիրոջդ նվիրված Պլանգոնիոն:

2

Երբ Դիոնիսոսը վազեց վերև, ապա նրա առաջին շարժումը եղավ ընկնել Կալիոյի ոտքերը: Սակայն նա հավաքեց իրեն, նստեց և հանգիստ ձայնով ասաց Կալիոյին.

— Ես եկա երախտագիտություն հայտնել քեզ, Կալիոյ, ինձ փրկելու համար: Ես մտադիր չէի բռնանալ քո կամքին, բայց, մերժում ստանալով քեզնից, ես որոշել էի մեռնել: Դու վերադարձրիր իմ կյանքը: Սակայն, քո հանդեպ տածելով մեծագույն երախտագիտություն, ես, այնուամենայնիվ, հանդիմանում եմ քեզ. դու չէիր հավատում, որ ես կնության կառնեմ քեզ երեխա բերելու համար, համաձայն Հունաստանի օրենքների: Բայց չէ որ, եթե ես չսիրեի քեզ, չէի տեսչա նման ամուսնության մասին: Սակայն, ըստ երևույթին, դու կասկածում էիր ինձ վրա անմտորեն, երևակայելով, թե իբրեւ ազատ կնոջը ստրկուհի կհամարեմ, իսկ Հերմոկրատեսի թոռանը արժանի չեմ գտնի իմ որդին համարելու: Դու ասում ես. «մտածիր»: Ես արդեն մտածել եմ: Եվ դո՞ւ պիտի վախենաս իմ բարեկամներից, դու, որ ինձ համար ամենաթանկն ես աշխարհում: Եվ ո՞վ կհանդգնի ասել, թե ինձ արժանի չի լինի ինձնից ծնված տղան, որի պապն ավելի բարձր է, քան նրա հայրը:

Դիոնիսոսը արտասովորից ձայնով մոտեցավ Կալիբոյին: Եվ Կալիբոյը, շառագունելով, մեղմ համբուրեց նրան:

— Ես հավատում եմ քեզ,— Դիոնիսոս,— ասաց նա,— բայց ես չեմ հավատում իմ բախտին: Չէ որ ճակատագրի պատճառով մի անգամ արդեն քիչ երջանկություն չկորցրի ես, և վախենում եմ, որ նա դեռևս չի հաշտվել ինձ հետ: Այդ պատճառով, թեկուզ դու ազնիվ ու արդար ես, վկա կանչիր աստվածներին ոչ թե քեզ համար, այլ քաղաքացիների և ազգականների համար, որպեսզի այլևս ոչ ոք, իմանալով, որ դու երդվել ես, չկարողանա հետագայում մեկուսի իմ դեմ ելնել որևէ դաժան խորհուրդով: Միայնակ կինը, դրա մեկտեղ նաև օտարուհի լինելը, քիչ բան չի նշանակում:

— Ո՞ր աստվածներին ես ցանկանում, որ երդվեմ,— հարցրեց Դիոնիսոսը,— քանզի, եթե դա հնարավոր լիներ, ես պատրաստ եմ բարձրանալ երկինք և երդումս տանել այնտեղ, ձեռքով դիպչելով իրեն՝ Չևսին:

— Երդվիր ինձ ծովով, որն ինձ հասցրել է քեզ մոտ, Աֆրոդիտեով, որն ինձ ցույց է տվել քեզ, և Էրոտով, որն ինձ կնության է տալիս քեզ,— պատասխանեց Կալիբոյը:

Այդպես էլ որոշեցին և որոշումն իսկույն կատարվեց:

Մերն շտապում էր, թույլ չտալով հետաձգել հարսանիքը: Դժվար է ցանկություններին ուժով ղեկավարելը, բայց դաստիարակված մարդ էր Դիոնիսոսը, թեկուզև գտնվում էր իշխանության տակ այն փոթորկի, որ խեղդում էր նրա հոգին: Այնուամենայնիվ նա փորձում էր դուրս լողալ զգացումներով ողողված անդունդից: Հենց այդ ժամանակ էլ նա զսպեց իրեն հետևյալ նկատառումներով. «Ես մտադիր եմ,— այսպես ասաց ինքն իրեն,— Կալիբոյի հետ ամուսնանալ առանձնության մեջ, ինչպես, հիրավի, մի ինչ-որ ստրկուհու հետ: Բայց ես այդքան էլ անշնորհակալ մարդ չեմ, որ իմ ու նրա ամուսնությունը չնշանավորեմ հարսանիքով: Ամենից առաջ ես այստեղ պիտի ցուցաբերեմ իմ հարգանքը նրա հանդեպ: Դա կապահովագրի ինձ նաև գալիքում: Չէ որ Կայծակից արագ ոչ մի բան չկա: Օդի մեջ նա անարգել սլանում է ցանկացած ճանապարհով և նրա շնորհիվ ոչ մի անսովոր բան չի կարող ծածկվել: Արդեն վազում է նա՝ Սիցիլիանելով նոր պատմություն. «Կալիբոյը ողջ է, գերեզմանի մեջ սողոսկած կողոպտիչները գողացել են նրան և որպես ստրկի վաճառել են Միլեթում»: Կլոդան սիրակուզյան նավերը, նրանց վրա կլինի Հերմոկրատեսը, որն իր դստերը ետ կապահանջի: Ի՞նչ պիտի ասեմ ես նրան: «Կալիբոյին ինձ վաճառել է Ֆերո՛նը»: Որտե՞ղ է կորել Ֆերոնը: Եվ նույնիսկ եթե ինձ հավատան էլ, ապա ինչպես էլ լինի, ես, այնուամենայնիվ, իրոք «ավագակին թաքցնող եմ»: Դատական ճառ պատրաստիր, Դիոնիսոս: Գուցե դու ստիպված լինես այն արտասանել Մեծ Արքայի առջև: Այդ դեպքում ինձ համար ամենահուսալիս կլինի հայտարարել. «Ես լսել էի, չեմ հիշում ինչպես, մի ազատ կնոջ գալու մասին և քաղաքում օրինական կարգով ամուսնացա նրա հետ, որն ինքնակամ կնության եկավ ինձ»: Այդ միջոցով ինձ համար հեշտ կլինի աներոջս համոզել նաև այն, որ ես արժանի եմ Կալիբոյի հետ ամուսնանալու համար: Սիրտ իմ, համբերությամբ տար հարսանիքի մի փոքր ետ ձգված ժամկետը, որպեսզի հետո ավելի հաստատուն լինի խնդության ճաշակումը: Դատարանում իմ վիճակն ամուր կլինի, եթե ես հենվեմ ոչ թե տիրոջ իրավունքի, այլ ամուսնու իրավունքի վրա»:

Այդպես էլ որոշեց նա և, կանչելով Լեոնային, ասաց.

— Մեկնիր քաղաք շքեղ հարսանիք նախապատրաստելու: Թող ցամաքով քշեն հոտերը, իսկ ծովով փոխադրեն գինի և սննդամթերք: Ես մտադիր եմ հյուրասիրել քաղաքի համայնժողովրդին:

Ամեն բան հանգամանորեն կարգադրելով, Դիոնիսոսը հաջորդ օրը ինքը գնաց կառքով, հրամայելով, որ Կալիբոյին էլ, որին դեռևս չէր ցանկանում ցույց տալ ժողովրդին, իրիկնադեմին բազմաթիակավոր նավով բերեն այն տան մոտ, որ կանգնած էր ծովածոցի ափին և կրում էր «Նշանավոր» անունը: Կալիբոյի մասին հոգ տանելու գործը նա հանձնարարեց Պլանգոնային:

Եվ ահա, նախքան կթողներ գյուղը, Կալիբոյն սկզբում երկրպագեց Աֆրոդիտեին: Մտնելով նրա տաճարը և այնտեղից բլուրին մի կողմ հեռացնելուց հետո, նա այսպես ասաց աստվածուհուն.

— Աֆրոդիտե, տիրակալուհի, արդար կլինի՞, որ ես հանդիմանեմ քեզ, թե՞ պետք է շնորհակալություն հայտնեմ: Աղջիկ էի, դու ինձ կապեցիր Քերեյի հետ, իսկ նրանից հետո հիմա ինձ ուղեկցում ես ուրիշի մոտ: Ինձ չէին համոզի երդվել քեզնով ու քո զավակով⁷⁶,

եթե չդավաճաներ ինձ մանկիկս (Կալիբրոյը ցույց տվեց իր փորը): Եվ ինձ համար չեմ երկրպագում քեզ,— այսպես շարունակեց նա,— այլ նրա համար⁷⁷: Գաղտնի պահիր իմ խորամանկությունը, և քանի որ նրա հետ չեմ իր իսկական հայրը, ապա թող ընդունեն նրան որպես Դիոնիսոսի երեխան: Երբ մեծանա, ապա այն ժամանակ կգտնի իսկական հորը:

Երբ սրբավայրից գնաց դեպի ծով, նրա տեսքից նավաստիներին սարսափ պատեց: Նրանց թվաց, թե դեպի իրենց է քայլում ինքը՝ Աֆրոդիտեն, պատրաստվելով նստելու նրանց նավակը: Եվ բոլոր նավաստիները մեկ մարդու պես նրա առջև նետվեցին բերանքսիվայր:

Նավը, թիավարների ջանքերի շնորհիվ, ծովածոցին հասավ ամեն տեսակ խոսքից արագ: Իսկ հաջորդ օրն առավոտվանից բոլոր քաղաքացիները պսակներ հագան: Յուրաքանչյուրը գոհ էր մատուցում ոչ միայն տաճարում, այլև սեփական տան առջև: Հորինվեցին առակներ այն մասին, թե ով է հարսը, ըստ որում, հասարակ ժողովուրդը, Կալիբրոյի գեղեցկության և նրա հետ կապված խորհրդավորության պատճառով, հավատում էր, որ նա ծովից դուրս եկած ծովահար⁷⁸ է կամ կենդանացել է Դիոնիսոսին պատկանող արձաններից մեկը⁷⁹: Այդպես էին զրուցում նավաստիներն իրար հետ: Բոլորը մի ձգտում ունեին՝ նայել Կալիբրոյին: Ժողովուրդը բազմություններով հավաքվել էր Համաձայնության տաճարի մոտ, որտեղ հնամենի սովորությամբ, փեսացուներն ստանում էին իրենց հարսերին: Իր թաղումից հետո Կալիբրոյն առաջին անգամ էր զուգվել: Համաձայնելով ամուսնանալ, հայրենիքին ու արյունակիցներին գտնելու հույսը նա դրել էր իր գեղեցկության վրա: Երբ նա հագավ միլեթյան երկար շրջագգեստը, իսկ գլխին դրեց հարսի պսակը ու դեմքով շրջվեց դեպի ժողովուրդը, ապա բոլորը միաբերան բացականչեցին. «Աֆրոդիտեն ամուսնանում է»: Նրա ոտքերի տակ փռեցին ծիրանագույն հանդերձներ, նրա վրա նետեցին վարդեր ու մանուշակներ և նրա շուրջը լցվեց անուշ բույրով: Ընդհուպ մինչև ծերունիներն ու երեխաները, նույնիսկ նավահանգիստներում, ոչ ոք տանը չէր մնացել, և ժողովուրդը խառնվել էր, մագցելով անգամ կտուրների վրա: Բայց այդ օրն էլ նույն նախանձի աստվածը⁸⁰ վերստին ցուցադրեց իր զայրույթը: Այն մասին, թե հատկապես ինչպես ցուցադրեց նա, ես կպատմեմ քիչ հետո: Նախ ես ցանկանում եմ պատմել այն դեպքերի մասին, որոնք այդ նույն ժամանակ տեղի ունեցան Սիրակուզայում:

3

Կողոպտիչները գերեզմանը ծածկեցին անփութորեն, քանի որ գիշերային ժամին նրանք շտապում էին: Իսկ Զերեյը, հագիվ սպասելով մինչև լուսաբաց, գնաց գերեզմանը հեղելու⁸¹ և պսակներ տանելու պատրվակով, բայց իրականում մտադրվելով սպանել իրեն: Նա ի վիճակի չէր տանել Կալիբրոյին հրաժեշտ տալը և գտնում էր, որ միայն մահը կարող էր օգնել նրան այդ վշտի մեջ: Բայց, մոտենալով գերեզմանին, նա նկատեց, որ քարերը տեղաշարժված են և գերեզմանի մեջ անցք է փորված: Այդ տեսարանից ցնցված, նա ընկավ խորհրդավորության աշխարհը՝ չիմանալով, թե ինչ է տեղի ունեցել այդտեղ, իսկ մինչ այդ Համբավը սիրակուզցիներին հասցրեց անսովոր դեպքի մասին լուրը: Բոլորը վազեցին գերեզմանի մոտ, բայց ոչ ոք չհամարձակվեց ներս մտնել մինչև Հերմոկրատեսը հրաման չտվեց: Գերեզմանի մեջ մտած մարդը ճշգրտորեն հայտնեց ամեն ինչի մասին: Անհավանական թվաց և այն, որ նույնիսկ մեռյալը պառկած չէր գերեզմանում: Այդ ժամանակ գերեզմանի մեջ թռավ ինքը՝ Զերեյը, սաստիկ ցանկանալով մի անգամ էլ նայել Կալիբրոյին՝ թեկուզև մեռած վիճակում: Սակայն, տակնուվրա անելով գերեզմանը, նա էլ չկարողացավ որևէ բան գտնել այնտեղ: Շատերը, չհավատալով, իջան գերեզմանի մեջ, և դրանից հետո բոլորն ընկան տարակուսանքի մեջ: Ներկաներից մի քանիսն ասացին. «Թաղման ընծաները հափշտակված են: Դա կողոպտիչների գործն է: Իսկ մեռյալն ո՞ր է»: Հավաքված բազմության մեջ ամեն տեսակ խոսք ու զրույց սկսվեց: Իսկ Զերեյը, իր հայացքը երկնքին դարձնելով և ձեռքերը վեր կարկառելով, բացականչեց.

— Իմ սիրո մրցակից ո՞ր աստվածն է ինձնից գողացել Կալիբրոյին և, ճակատագրի հզորությանը տեղի տալով, այժմ, հակառակ նրա կամքին, բռնությամբ պահում է իր մոտ: Ահա դրա համար էլ նա հանկարծակի մահացավ, քանզի հիվանդությունն չուներ: Այդպես

Էլ Դիոնիսոսը Թեսսաից խլեց Արիադնէին⁸², և Չևսը տիրացավ Սեմելային⁸³: Իսկ ես չգիտեի Էլ, որ իմ կինն աստվածուհի է և, որ նա բարձր է մեզնից: Բայց նա ինչո՞ւ պիտի այսքան շուտ և այդպիսի առիթով հեռանար մարդկանցից: Թեոսին աստվածուհի էր, բայց մնաց Պելլասի հետ և Նրանից տղա ունեցավ, իսկ ես լքվեցի իմ սիրո ծաղկուն հասակում: Ի՞նչ անեմ: Ի՞նչ կպատահի ինձ՝ դժբախտիս հետ: Սպանե՞մ ինձ: Բայց ո՞ւմ հետ պիտի թաղեն ինձ: Չէ որ իմ թշվառության մեջ միայն այդ հույսն էր մնացել: Թեկուզև չպահպանեցի իմ ու Կալիբոյի մահճակալը, բայց դրա փոխարեն ես Նրա հետ կլինեմ մի գերեզմանում: Տիրուհի⁸⁴, ոգին իմ պաշտպանում եմ քո առջև: Դու ստիպում ես ինձ ապրել: Ես կփնտրեմ քեզ ցամաքում, ծովում և նույնիսկ երկնքում, եթե միայն կարողանայի այնտեղ բարձրանալ:

Քերեյի այդ խոսքերից հետո ժողովուրդը լացուկոծ արեց, և բոլորն սկսեցին արտասվել Կալիբոյի համար՝ ասես նա հենց նոր է մահացել:

Նավերն սկսեցին անմիջապես ջրի մեջ իջեցնել, և շատերը ցանկացան մասնակցել որոնումներին: Սիցիլիայում փնտրում էր ինքը՝ Դերմոկրատեսը, իսկ Լիբիայում՝ Քերեյը⁸⁵: Այլոց ուղարկեցին Իտալիա, իսկ ոմանք Էլ հրաման ստացան լողալով անցնել Իոնիական ծովը⁸⁶: Բայց եթե անգոր Էին մարդկային ջանքերը, ապա ճշմարտության վրա լույս սփռեց ճակատագիրը, առանց որի աշխարհում ոչինչ չի լինում: Յուրաքանչյուրին պարզ է, որ դա արվում է այն բանի հիման վրա, ինչ տեղի է ունեցել:

Ավագակները, Կալիբոյին՝ այդ բեռը, որի հետ դժվար էր հարմարվել, վաճառելուց հետո թողեցին Միլեթը և ճամփա ընկան դեպի Կրետե, մեծ և, ինչպես իրենք Էին լսել, հարուստ կղզին, որտեղ հույս ունեին արագորեն ծախել իրենց ապրանքը: Սակայն Նրանք հանդիպեցին ուժեղ քամու, որը քշեց Նրանց դեպի Իոնական ծովածոցը, ուր Նրանք սկսեցին թափառել բաց ծովում: Երկար օրեր սրբապիղծների վրա թափվում էին կայծակն ու ամպրոպի որոտը: Նախախնամությունը⁸⁷ ցույց էր տալիս այդպես, որ առաջ իրենք բարեհաջող էին լողում Կալիբոյի շնորհիվ: Երբ Նրանք մահվան եզրին էին, մի աստված Նրանց շուտ չազատեց սարսափից և ձգձգեց Նրանց նավաբեկությունը: Հողը չընդունեց սրբապիղծներին, իսկ երկարատև լողարկումը Նրանց հասցրեց պարենի և հատկապես սննդի պակասության: Անարդար հարստությունը ոչ մի օգուտ չբերեց Նրանց և ոսկու մեջ Նրանք մեռնում էին ծարավից: Նրանք ուշացումով գոջացին այն հանցանքը, որի համար կոպտում և կշտամբում էին միմյանց, ասելով. «Չարժեք դա անել»: Նրանք բոլորը մեռնում էին ծարավից, բայց Ֆերոնը այդ պահին Էլ շարունակեց մնալ որպես խարդախ: Կողոպտելով յուրային կողոպտիչ ընկերներին, նա գաղտնաբար գողացավ Նրանց խմելու ջուրը: Նա կարծում էր, թե ինքը վարվում է խորամանկորեն, մինչդեռ դա նախախնամության ձեռքի գործն էր, որն այդ մարդուն պահում էր խոշտանգումների ու տանջանքի համար: Քանզի այդ նույն նավը, որը տանում էր Քերեյին, դիպչելով ծովում թափառող նավակին, սկզբում հեռացավ Նրանից ինչպես ծովահենների նավից, բայց երբ պարզվեց, որ նավակը ոչ ոք չի վարում, այլ աննպատակ քշվում է ալիքների կամքով, ապա նավի վրայից ինչ-որ մեկը գոռաց.

— Նավակում ոչ ոք չկա՝ Վախենալու բան չունենք: Մոտենանք և զննենք այս հրաշք բանը:

Նավավարը համաձայնեց:

Իսկ նավի ներսում, գլուխը վերարկուի տակ ծածկած, հեկեկում էր Քերեյը:

Մոտենալով նավակին, սկզբում նավից սկսեցին կանչել Նրա մեջ գտնվող մարդկանց: Բայց քանի որ ոչ ոք չարձագանքեց, ապա նավից Նրա մեջ իջան և գտան այնտեղ միայն ոսկի և մեռած մարդիկ: Հայտնեցին նավաստիներին: Նավաստիներն ուրախացան: Կարծում էին, թե իրենց բախտը բերել է և ծովում հանդիպել են գանձի: Աղմուկը հասավ Քերեյին, Նրան հայտնեցին պատճառը: Իմանալով, թե բանն ինչ է, Քերեյը ցանկացավ ինքն Էլ տեսնել այդ զարմանք բանը: Բայց երբ ճանաչեց թաղման ընծաները, ապա անմիջապես պատառոտեց իր հագուստները⁸⁸ և բարձր, ականջ ծակող ձայնով բացականչեց.

— Վա՛յ ինձ, Կալիբո՛յ: Չէ որ սրանք քո իրերն են: Ահա այն պսակը, որ ես դրել եմ քեզ վրա: Իսկ ահա սա հայրդ է նվիրել քեզ: Իսկ սա Էլ քեզ ընծայել է մայրդ: Ահա և քո հարսանեկան շրջագգեստը: Նավը դարձել է քո գերեզմանը: Բայց ես քո իրերն եմ տեսնում, իսկ որտե՞ղ ես դու: Թաղման ընծաներին պակասում է միայն մեռյալը:

Այս խոսքերը լսելով, Ֆերոնը մեռյալի պես պառկած մնաց: Իսկապես էլ նա արդեն կիսամեռ էր: Նա երկար մտածեց, թե ինչպես անի, որ ոչ մի ձայն չհանի և բոլորովին չշարժվեց, քանզի պարզ պատկերացնում էր ապագան: Ամեն մարդ, սակայն, բնական է, ցանկանում է ապրել, նույնիսկ ծայրահեղ դժբախտության մեջ նա երբեք չի կորցնում դեպի լավագույնը փոխվելու հույսը, քանի որ մարդկանց արարող աստվածը նրանց մեջ է դրել իր այդ ճարպիկ հնարքը⁸⁹, որպեսզի դրանով խանգարի մարդկանց խուսափելու ծանր կյանքից: Եվ ծարավից տոչորվող Ֆերոնը արտասանեց իր առաջին բառը.— «ջո՛ւր»: Երբ նրան խմելու ջուր տվին և շրջապատեցին ամեն տեսակ հոգատարությամբ, Բերեյը նստեց նրա մոտ և սկսեց հարցուփորձ անել:

— Ովքե՞ր եք դուք և ո՞ւր եք լողում: Եվ որտեղի՞ց են այս իրերը: Եվ ի՞նչ եք արել նրանց տիրոջը:

Ճարպիկ ու խարդախ Ֆերոնի խելքը գլխին էր:

— Ես կրետացի եմ⁹⁰,— պատասխանեց նա,— լողում եմ դեպի Իոնիա: Փնտրում եմ պատերազմ գնացած եղբորս: Շտապ նավահանգիստ հասնելու պատճառով նավն ինձ թողեց Կեֆալենիայում⁹¹, և ես նստեցի իմ կողքով պատահաբար անցնող այս նավակը, բայց անսովոր ուժեղ քամին մեզ քշեց այստեղ, այս ծովը, ուր այնուհետև սկսվեց տևական անքամի եղանակը և որտեղ բոլորը զոհվեցին ծարավից: Միայն ես փրկվեցի իմ բարեպաշտության շնորհիվ⁹²:

Լսելով այդ, Բերեյը հրամայեց նավակը կապել նավից և լողալ ետ, դեպի սիրակուզյան նավահանգիստը:

4

Սակայն նրանց Սիրակուզա գալը իրեն հատուկ արագությամբ նախազգուշացրեց Համբավը, որն այդ ժամանակ աճապարում էր հատկապես հաղորդելու բազում անսպասելի նորություններ: Բոլորը վազեցին ծովափ, որտեղ լավում էին բազմատեսակ զցացումների միաժամանակյա արտահայտություններ: Մեկը լալիս էր, մյուսը՝ զարմանում, երրորդը՝ հարցուփորձ անում, չորրորդը՝ չէր հավատում: Մարդիկ ապշել էին նոր պատմությունն լսելով, իսկ Կալիբոյի մայրը դատեր թաղման ընծաները տեսնելով, բարձր հեկեկաց:

— Բոլոր իրերն էլ ճանաչում եմ,— բացականչեց նա,— միայն դու չկաս, աղջիկս: Ի՞նչ անսովոր կողոպտիչներ են: Պահպանելով հանդերձներն ու ոսկին, նրանք գողացել են դատերս:

Նավահանգիստն արձագանքում էր նրա կանացիական լացուկոծին, որը բողոքով էր լցնում երկիրն ու ծովը:

Բայց Հերմոկրատեսը, որ փորձառու մարդ էր ինչպես պատերազմական, այնպես էլ պետական գործերում, հայտարարեց.

— Պետք է որոնել ոչ թե այստեղ: Պետք է հետաքննություն կատարել օրենքի խստությամբ: Գնանք ժողովրդական ժողովի: Ո՞վ գիտի, գուցե մեզ պետք գան նաև դատավորները:

Նա իր խոսքը դեռ չէր վերջացրել⁹³, երբ թատրոնն արդեն լեփ-լեցուն դարձավ մարդկանցով: Այդ ժողովին մասնակցում էին նաև կանայք: Ժողովուրդը նստել էր հուզված:

Առաջինը ելույթ ունեցավ Բերեյը՝ սև հանդերձով, գունատ ու վշտահար, այնպիսին, ինչպիսի տեսքով նա գնում էր կնոջ հետևից նրա թաղման ժամանակ: Նա չէր ցանկանում բարձրանալ պատվանդանի վրա և, արտասվելով, երկար ժամանակ կանգնած էր ներքևում: Ցանկանում էր խոսել, բայց չէր կարողանում: Իսկ ժողովուրդը ձայն էր տալիս նրան.

— Մի՛ ընկճվիր, խոսի՛ր:

Վերջապես նա բարձրացրեց աչքերը և ասաց.

— Պատշաճ էր, որ հիմա ես ոչ թե ճառով հանդես գայի ժողովրդի առջև, այլ անձնատուր լինեի իմ վշտին: Բայց անհրաժեշտությունն ստիպում է, որ ես խոսեմ, և ապրեմ, քանի դեռ չեմ բացել Կալիբրոյի անհայտանալու հանգամանքները: Այդ նպատակով էլ, այստեղից դուրս գալով, չգիտեմ ինձ համար երջանիկ թե դժբախտ նավարկություն կատարեցի: Խաղաղ եղանակին մենք նկատեցինք դեկը կորցրած մի նավի, որն իր սեփական հողմից ընկղմվում էր խաղաղ ծովում: Չարմանալով, մենք մոտեցանք նրան, և ինձ թվաց, որ ես իմ առջև տեսնում եմ իմ դժբախտ կնոջ թաղումը: Ամեն ինչ իր տեղում էր, բացի իրենից՝ Կալիբրոյից: Նավակում պառկած էին բազմաթիվ մեռած մարդիկ: Բայց նրանք բոլորն էլ օտար էին: Իսկ նրանց մեջ գտանք կիսամեռ մեկին և ահա այդ մարդը⁹⁴: Նրա հանդեպ ամեն տեսակ խնամք տանելով, ես նրան հանձնում եմ ձեզ:

Այդ ժամանակ պետական ստրուկները թատրոն բերեցին կապկաված Ֆերոնին, որին ուղեկցում էին նրան պատշաճ երթով: Նրա հետևից բերում էին մտրակներ, պատժանիվ, կատապելտ⁹⁵, կրակ: Իր գործած սխրանքի համար նախախնամությունը նրան այդպիսի պարգև է տվել:

Երբ Ֆերոնին ներկայացրին իշխանությունների առջև, սկսվեց նրա հարցաքննությունը:

— Ո՞վ ես դու:

— Դմիտրին, — պատասխանեց Ֆերոնը:

— Որտեղացի՞ ես:

— Կրետացի:

— Զեզ ի՞նչ է հայտնի: Խոսի՛ր:

— Եղբորս մոտ գնալու ճանապարհին ես ստիպված էի Իոնիայում իջնել ռազմական նավից, որից հետո նստեցի կողքովս անցնող նավակը: Ես այն ժամանակ կարծում էի, որ նրանք վաճառականներ են, այժմ մտածում եմ, որ նրանք եղել են կողոպտիչներ: Երկար ժամանակ ծովում մնալով, մնացած բոլորը զոհվեցին ջրի պակասի պատճառով, ես էլ, չնայած դժվարությամբ, ողջ մնացի, որովհետև իմ կյանքում ոչ մի հանցանք չեմ կատարել: Սիրակուզցիներ, դուք, որ լայնորեն փառաբանված եք, որպես մարդասեր ժողովուրդ, ավելի դաժան մի լինեք իմ հանդեպ, քան ծովն ու ծարավն էին:

Ֆերոնը խոսում էր խեղճացած: Ժողովուրդը ցավակցում էր նրան: Եվ գուցե Ֆերոնին հաջողվեր համոզել ժողովրդին, և թերևս նա ստանար նաև ճանապարհածախս, եթե Ֆերոնի վրա չզայրանար մի ինչ-որ աստված, որին բարկացրել էր Ֆերոնի անարդար ինքնապաշտպանությունը և որը Կալիբրոյի համար վրեժ էր լուծում նրանից: Կարող էր տեղի ունենալ չլսված բան, քանի որ սիրակուզցիներն արդեն պատրաստ էին հավատալ, թե իբր Ֆերոնը միայնակ ողջ է մնացել իր ազնվության շնորհիվ, այն դեպքում, երբ նա ողջ է մնացել միայն նրա համար, որպեսզի ավելի դաժանորեն պատժվի: Ֆերոնին ճանաչեց ժողովում նստած մի ձկնորս, որ կամացուկ խոսում էր իր հարևանի հետ.

— Այդ մարդուն ես առաջ էլ եմ տեսել: Նա թրև էր գալիս մեր նավահանգստում:

Նրա դիտողությունն արագ տարածվեց ամբոխի մեջ և ինչ-որ մեկը բացականչեց.

— Նա ստում է:

Այդ ժամանակ ամբողջ ժողովուրդը շուռ եկավ ձայնի կողմը, և նրան, ով առաջինը դիտողություն արեց⁹⁶, իշխանությունները հրամայեցին՝ խոսել: Որքան շատ էր Ֆերոնը ժխտում, այնքան ավելի շատ էին հավատում ձկնորսին: Իսկույն կանչեցին դահիճներին, և սրբապիղծի վրա գործադրեցին մտրակները: Ֆերոնը երկար ժամանակ չէր հանձնվում, չնայած կրակով այրեցին ու կտրտեցին նրան, և քիչ մնաց, որ նա հաղթեր տանջանքները: Սակայն մարդկային խիղճն ու ամենագոր ճշմարտությունը շատ բան են նշանակում: Ոչ միանգամից, բայց և այնպես Ֆերոնը վերջապես խոստովանեց և սկսեց պատմել:

— Տեսնելով, թե ինչպես են թաղում հարստությունը, ես ավագակներ հավաքեցի: Մենք բացեցինք գերեզմանը: Մեռյալին գտանք ողջ: Ամեն ինչ մաքուր կողոպտեցինք և թաղման ընծաները դրինք նավակի մեջ: Լողալով հասանք Միլեթ, այնտեղ վաճառեցինք միայն կնոջը, մնացածը տարանք դեպի Կրետե: Իսկ թե մեզ հետ ինչ պատահեց, երբ քամին մեզ քշեց դեպի Իոնիական ծովը, դուք գիտեք:

Ամեն ինչի մասին հայտնելով, նա չիղջեց միայն առնողի անունը:

Ֆերոնի խոսքից հետո բոլորն ուրախություն և միաժամանակ տխրություն զգացին: Ուրախություն՝ նրա համար, որ Կալիբրոյը ողջ է, տխրություն՝ նրա համար, որ նա վաճառված է: Ֆերոնին մահվան դատապարտեցին, բայց Քերեյն սկսեց խնդրել, որ Ֆերոնին այժմ մահապատժի չենթարկեն:

— Թող Ֆերոնն ինձ հետ գա,— ասաց նա,— և ցույց տա նրանց, ովքեր գնել են Կալիբրոյին: Մտեք իմ անելանելի դրության մեջ, դրություն, որն ստիպում է ինձ պաշտպանել նրան, ով վաճառել է իմ կնոջը:

Հերմոկրատեսը ընդդիմացավ այդ առաջարկին, ասելով.

— Ավելի լավ է դժվարացնել որոնումները, քան խախտել օրենքը: Բայց,— այսպես շարունակեց նա,— խնդրում եմ, Սիրակուզայի քաղաքացիներ, ի հիշատակ իմ ստրատեգիայի և իմ տարած հաղթանակների, երախտագիտություն ցուցաբերել, իմ դստեր հանդեպ բարերարություն անելով: Նրա հետևից պատգամավորություն ուղարկեցեք: Եկե՛ք ետ բերե՛ք ազատագարմին:

Խոսքն իր նա դեռ չէր ավարտել, երբ ժողովուրդը բացականչեց.

— Բոլորս կգնանք նրա հետևից:

Պատգամավորության կազմի մեջ կամավոր մտնելու իրենց պատրաստակամության մասին հայտնեցին Խորհուրդի վիթխարի թվով անդամներ: Բայց Հերմոկրատեսը հայտարարեց.

— Ինձ պատվելու համար ես շնորհակալություն եմ հայտնում բոլորին: Սակայն երկու պատգամավոր ժողովրդից և երկուսն էլ Խորհրդից հերիք կլինի: Հինգերորդը, մեզ հետ, կգա Քերեյը:

Այդպիսի որոշում էլ ընդունվեց, որից հետո Հերմոկրատեսը փակեց ժողովրդական ժողովը:

Ժողովրդի մեծ բազմություն էր գնում Ֆերոնի հետևից, երբ նրան տարան: Նրան խաչեցին Կալիբրոյի գերեզմանի առջև: Խաչից նա նայում էր ծովին, որով նա տարավ Հերմոկրատեսի գերված դստերը, որին նույնիսկ գերի չէին տարել աթենացիները:

5

Ամենքը գտնում էին, որ հարկավոր է սպասել նավագնացության բացվելուն և ճանապարհ ընկնել երբ կբացվի գարունը: Չէ որ դեռ ձմեռ էր և Իոնիական ծովով անցնելը բոլորովին անհնար բան էր թվում: Քերեյն էլ շտապում էր և սիրո ազդեցության տակ պատրաստ էր զինել իրեն վստահված նավատորմիդ, որպեսզի ծովով անցնելը թողնի քամու կամքին: Քերեյից և հատկապես Հերմոկրատեսից քաշվելով, չուզեցին դանդաղել և նավարկության պատրաստվեցին նաև պատգամավորները:

Պատգամավորությանը մեծ կշիռ տալու նպատակով սիրակուզցիներն այդ ճանապարհորդությունը ձեռնարկեցին ժողովրդի անունից, պատգամավորության տրամադրության տակ դնելով ստրատեգի այն նշանավոր նավը, որը դեռևս շարունակում էր կրել Հերմոկրատեսի հաղթանակների նշանները: Երբ եկավ նավարկության համար նշանակված օրը, ապա նավահանգիստ վազեցին ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց ու երեխաների բազմություններ: Միախառնվել էին մաղթանքներն ու արցունքները, տրտունջն ու մխիթարանքը, վախն ու քաջությունը, հուսահատությունն ու հույսը: Քերեյի հայր Արիստոնը, որին զառամյալ և հիվանդ լինելու պատճառով բերել էին պատգարակի վրա, գրկեց որդուն և, կախ ընկնելով նրա կրծքից, ասաց նրան արտասվելով.

— Տղաս: Ինչո՞ւ ես թողնում ինձ՝ կիսամեռ ծերունուս: Չէ որ պարզ է, որ ես այլևս քեզ չեմ տեսնի: Մնա թերևս մի քանի օր էլ, որպեսզի ես մեռնեմ քո ձեռքերի վրա: Թաղիր ինձ և գնա:

Իսկ Քերեյի մայրը այսպես ասաց որդուն, բռնելով նրա ծնկները:

— Տղաս, խնդրում եմ ինձ էլ միայնակ մի թող այստեղ, որպես թեթև բեռ գցիր նավի մեջ, քեզ մոտ: Եթե այնպես պատահի, որ իմ քաշը չափազանց ծանր լինի և ավելորդ լինեմ ես, ապա այդ դեպքում նետիր ինձ այն ծովը, որով դու նավարկում ես:

Այս ասելով նա պատառոտեց իր կրծքաշորը և, որդուն ցույց տալով մերկ կուրծքը, ասաց.

*Որոյակ, գեթ սրանից դու պատկառիր և գթա ինձ.
Եթե երբեք ես քո լացին քաղցրատենչիկ հագուրտ տալով,
Ճիճ եմ տվել քեզ կաթոգին⁹⁸:*

Մայրական թախանձանքները կոտրեցին Քերեյի սիրտը, և նա, ցանկանալով մեռնել, ծով նետվեց, որպեսզի խուսափի իրեն սպասելիք ընտրությունից. կամ դադարեցնել Կալիրոյի որոնումները, կամ վշտացնել ծնողներին: Նրա հետևից արագորեն ջուրը նետվեցին նավաստիները և դժվարությամբ բռնեցին նրան: Այդ ժամանակ Զերմուկրատեսը ցրեց ամբոխին, նավավարին, վերջապես, հրամայելով դուրս գալ բաց ծով:

Տեղի ունեցավ մի ուրիշ նույնպես ազնիվ քայլ՝ ի սեր բարեկամության: Քերեյի ընկեր Պոլիքարմոսը այդ պահին թաքնվեց կողմնակի հայացքներից և նույնիսկ այսպես ասաց իր ծնողներին.

— Քերեյն իմ ընկերն է, հասկանալի է, ընկեր է, բայց և այնպես ոչ այնպիսին, որ նրա հետ միասին մահացու վտանգի ենթարկեմ ինձ: Այդ պատճառով երբ նա նավարկի, ես մի կողմ կանցնեմ:

Բայց երբ նավը հեռացավ ափից, Պոլիքարմոսը նավախելից հրաժեշտի ողջույն ուղարկեց ծնողներին, որովհետև նրանք այլևս չէին կարող պահել նրան:

Դուրս գալով նավահանգստից, Քերեյը աչք ածելով բաց ծովին, ասաց.

— Ծով, տա՛ր ինձ այն նույն ճանապարհով, որով դու տարար նաև Կալիրոյին: Զեզ, Պոսեյդոն⁹⁹, խնդրում եմ, որպեսզի կամ նա լինի ինձ հետ, կամ ես չլինեմ այնտեղ առանց նրան: Բանգի եթե հնարավոր չէ, որ ետ ստանամ կնոջս, ապա ես պատրաստ եմ նրա հետ կիսել ստրկությունը:

6

Բարձրացավ համընթաց քամին, և նավն ասես թռչում էր նավակի ուղիղ հետքերով: Ճիշտ այնքան օրում, ինչքան և Կալիրոյը, հասան նրանք Իոնիա և խարիսխ ձգեցին այնտեղ, Դիոնիսոսի կալվածքներին մերձ հենց նույն հրվանդանում: Այն ժամանակ երբ մնացածները, ճանապարհորդությունից հոգնած, ափ դուրս գալով, շտապում էին ուժեր հավաքել, վրաններ խփել և խնջույք պատրաստել, Քերեյն ու Պոլիքարմոսը դուրս եկան երկուսով թափառելու:

— Զիմա մենք ինչպե՞ս գտնենք Կալիրոյին, — հարցրեց Քերեյը: — Ես շատ եմ վախենում, որ Ֆերոնը խաբած լինի մեզ և որ դժբախտ Կալիրոյն արդեն մահացած լինի: Բայց եթե իրոք նա վաճառվել է, ապա Ասիան լայնարձակ է, ո՞վ գիտե, թե հատկապես որտեղ է վաճառվել:

Ման գալով, նրանք հանդիպեցին Աֆրոդիտեի տաճարին և որոշեցին երկրպագել աստվածուհուն: Ընկնելով նրա ոտքերը, Քերեյը բացականչեց.

— Տիրակալուհի, քո տոնին դու առաջինն ինձ ցույց տվեցիր Կալիրոյին, դու էլ հիմա ինձ վերադարձրու նրան, վերադարձրու նրան, որին դու նվիրել ես ինձ:

Եվ, այդ պահին բարձրացնելով աչքերը, նա տեսավ աստվածուհու կողքին դրված Կալիրոյի պատկերը, որ Աֆրոդիտեին էր ընծայել Դիոնիսոսը:

Եվ պատանու սիրտն ու ծնկները թուլացան¹⁰⁰:

Նրա գլուխը պտտվեց և նա ընկավ: Նկատելով այդ, կրտսեր քրմուհին¹⁰¹ ջուր հասցրեց Քերեյին և, ուշքի բերելով, ասաց.

— Սրտապնդիր, տղաս: Աստվածուհին շատ ուրիշների սիրտն էլ է ահ գցել: Նա երևում է մարդկանց, ակնբախտրեն ցույց տալիս իրեն: Բայց դա միշտ դառնում է մեծ երջանկության նախանշան: Տեսնո՞ւմ ես այս ոսկե պատկերը: Նա առաջ ստրկուհի էր, իսկ այժմ Աֆրոդիտեն նրան դարձրել է ամենքիս տիրուհին:

— Ո՞վ է նա,— հարցրեց Զերեյը:

— Նա, տղաս, այս կողմերի տիրուհին է, Իոնիայի առաջին այլ Դիոնիսոսի կինը:

Պոլիքարմոսը, այդ լուրը լսելուց չկորցնելով իր ողջախոհությունը, այլևս չթողեց Զերեյին որևէ բառ արտասանել, այլ բռնեց նրան և դուրս բերեց տաճարից, չցանկանալով, որ ժամանակից շուտ իմանան իրենց մասին, քան նրանք Զերեյի հետ ամեն բան լավ կմտածեին և ամեն ինչի մասին կապյաժանավորվեին միմյանց հետ: Զրմուհիների ներկայությամբ Զերեյը, ինքն իրեն տիրապետելով, ոչ մի բառ չասաց, և միայն անզուսպ արցունքներն էին հոսում նրա աչքերից: Սակայն, հեռանալով տաճարից և միայնակ մնալով, նա փռվեց գետնին, ասելով.

— Օ՛, մարդասեր ծով, ինչո՞ւ դու պահպանեցիր ինձ: Նրա համա՞ր, որ բարեհաջող նավարկումից հետո տեսնե Կալիբոյին ուրիշի կին դարձած: Չէի կարծում, որ դա երբևիցե կարող էր պատահել, եթե նույնիսկ մեռնեի Զերեյը: Հիմա ի՞նչ անեմ ես՝ դժբախտս: Կալիբոյ՛, հույս ունեի քո տիրոջից ձեռք բերել քեզ, և հավատացած էի, որ փրկագնով կհամոզեի նրան, ով գնել է քեզ: Հիմա ես գտա քեզ հարուստ գուլցե, նույնիսկ թագուհի դարձած: Ես ավելի երջանիկ կլինեի, եթե քեզ գտնեի աղքատ: Մոտենամ Դիոնիսոսին և ասեմ նրան՝ «տուր ինձ կնո՞ջս»: Բայց մի՞թե այդպիսի բան կասեն ամուսնացածին, Կալիբոյ, ես չեմ կարող քեզ մոտենալ, եթե նույնիսկ հանդիպեմ քեզ: Ես նույնիսկ իրավունք չունեմ ամենահասարակ բանն անել և, ինչպես ցանկացած քաղաքացու, ողջունել քեզ: Թերևս դա, որպես կնոջս գայթակղեցնողի, ինձ մահ սպառնար:

Այդպես էր բողոքում Զերեյը, իսկ Պոլիքարմոսը մխիթարում էր նրան:

7

Այդ ժամանակ Դիոնիսոսի տնտես Ֆոկը կանգնել էր ռազմականի առջև և վախով նայում էր նրան: Բարեհաճ վերաբերվելով նավաստիներից մեկի հետ, Ֆոկը նրանից իմացավ ճշմարտությունը, իմացավ, թե ինչ մարդիկ են նրանք, որտեղից են ու ինչ նպատակով են եկել, և հասկացավ, որ այդ նավը մեծ դժբախտություն է բերել Դիոնիսոսին, որովհետև Դիոնիսոսը չի ապրի, եթե բաժանվի Կալիբոյից: Նվիրված լինելով տիրոջը, նա ցանկացավ զգուշացնել վտանգի մասին և, հանգցնել, ճիշտ է, ոչ մեծ, միայն Դիոնիսոսի տանն սպառնացող, կրակը: Այդ նպատակով նա ձի նստած սլացավ դեպի բարբարոսների¹⁰² պահակային ամրություններից մեկը և այնտեղ հայտնեց, թե նավահանգստում թաքնվել է թշնամական մի նավ, որ գուլցե նավամատույցին է մոտեցել հետախուզության համար, իսկ գուլցե՝ կողոպուտի նպատակով, և որ այդ նավը գրավելը, նախքան նա կհասնի վնաս պատճառել, կհամապատասխաներ արքայի շահերին: Ֆոկը համոզեց բարբարոսներին և զորական շարքով նրանց տարավ նավի մոտ: Իսկ խոր գիշերին նրանք հարձակվեցին նավի վրա և, կրակ տալով, այրեցին այն, բոլոր մարդկանց էլ, ում բռնեցին, կապկպեցին և իրենց հետ ամրոց տարան:

Գերիների բաժանման ժամանակ Զերեյն ու Պոլիքարմոսը խնդրեցին, որպեսզի իրենց երկուսին վաճառեն միևնույն տիրոջ: Եվ այն մարդը, ում Զերեյն ու Պոլիքարմոսը բաժին ընկան, վաճառեց նրանց Կարիայում¹⁰³: Այնտեղ, քարշ տալով ծանր կալանդները, նրանք աշխատում էին Միհրդատի կավածքում:

Իսկ Կալիբոյը երազում Զերեյին տեսավ կապանքների մեջ, որն ասես ցանկանում էր, բայց չէր կարողանում մոտենալ իրեն:

Կալիբոյը երազում բարձր, սուր ձայնով բացականչեց.

— Զերեյ՛, այստե՛ղ եմ:

Դիոնիսոսն առաջին անգամ լսեց Զերեյի անունը և հարցրեց հուզված կնոջը.

— Այդ ո՞ւմ էիր կանչում դու:

Արցունքները մատնեցին Կալիբոյին: Նա չկարողացավ զսպել իր վիշտը և իր զգացումներին ազատություն տվեց սրտաբաց խոսքով:

— Զերեյը,— Դիոնիսոսին ասաց նա,— իմ ամուսինն է, դժբախտից էլ դժբախտ մի մարդ, որի հետ ամուսնացա ես աղջիկ ժամանակ: Երազում էլ նա հաջողություն չունի, նա իմ աչքին երևաց շղթայված: Բայց,— այսպես շարունակեց Կալիբոյը,— բայց դու, իմ խեղճ մարդ, մեռար ինձ փնտրելով: Զո ճանապարհները նախանշում են քո կործանումը:

Իսկ ես ապրում եմ լիության մեջ և նոր ամուսնուս կողքին քնում եմ ոսկե մահճում: Սակայն, ես շուտով քեզ մոտ կգամ, և եթե կյանքում մենք միմյանց երջանկություն չտվեցինք, ապա մեր մահից հետո մենք կպատկանենք միմյանց:

Լսելով այդ խոսքերը, Դիոնիսոսի մեջ բազմատեսակ մտքեր ծնվեցին: Նա համակվեց նաև խանդով, քանզի տեսնում էր, որ Կալիբոյը շարունակում է սիրել նաև մեռած Զերեյին: Դիոնիսոսը նաև երկյուղում էր, որ Կալիբոյը կարող է սպանել իրեն: Սրտապնդվեց միայն այն գիտակցությամբ, որ Կալիբոյը իր առաջին ամուսնուն համարում է մեռած: Զանի որ Զերեյն այլևս չկա, ապա նշանակում է, որ Կալիբոյը չի լքի իրեն՝ Դիոնիսոսին: Այդ պատճառով ինչքան ուժ ուներ նա սփոփեց կնոջը և հետո շատ օրեր հետևեց նրան, վախենալով, որ Կալիբոյը կարող է մի սարսափելի բան անել իրեն: Բայց Կալիբոյի վիշտը ցրվեց այն հույսով, որ գուցե Զերեյը դեռևս ողջ է և որ նա սուտ երազ է տեսել: Ավելի ուժգին գործեց մայրությունը: Բանն այն է, որ հարսանիքից հետո յոթերորդ ամսում Կալիբոյը տղա ունեցավ, առերևույթ Դիոնիսոսից, բայց իրականում՝ Զերեյից:

Քաղաքը տոնական հանդես սարքեց: Դիոնիսոսի տոհմաճյուղի շարունակության առթիվ Միլեթի քաղաքացիների ցնծությանը միանալու համար բոլոր կողմերից պատգամավորներ եկան: Եվ Դիոնիսոսը կնոջը հանձնեց բոլոր տնտեսական գործերը, տոհմի տիրուհի հռչակելով նրան: Դիոնիսոսը տաճարները լցրեց ընծաներով և իր հաշվին ամբողջ քաղաքը հյուրասիրեց զոհախնջույքներով¹⁰⁴:

8

Վախենալով, թե կարող է իր գաղտնիքը բացվել, և, ցանկանալով իր համար նախապես ապահովել Պլանգոնայի հավատարմությունը, որ հենված էր ոչ միայն նրա հանդեպ անձնական բարեհաճության, այլև իր վիճակի փոփոխության վրա, Կալիբոյը խնդրեց ամուսնուն ստրկությունից ազատել Պլանգոնային՝ միակ մարդուն, որը գիտեր, որ Կալիբոյը հղի է եկել Դիոնիսոսի մոտ:

— Իմ սիրո դործում ծառայությունների համար ես սիրով վարձահատույց կլինեմ Պլանգոնային,— ասաց Դիոնիսոսը:— Բայց մենք լավ չենք վարվի, եթե հարգելով աղախնուն, մեր երախտագիտությունը հայտնենք Աֆրոդիտեին, որի մոտ մենք առաջին անգամ տեսանք միմյանց:

— Ես էլ եմ ուզում այդպես վարվել, և ավելի սաստիկ եմ ցանկանում, քան դու,— պատասխանեց Կալիբոյը,— չէ որ ես ավելի շատ եմ երախտապարտ քան դու: Բայց ես դեռ ծննդկան եմ: Մի քանի օր էլ սպասենք այստեղ և այն ժամանակ հանգիստ կգնանք գյուղ:

Կալիբոյը արագ լավացավ, լցվեց, ամրապնդվեց և փայլեց արդեն ոչ թե աղքկական, այլ կանացի գեղեցկությամբ:

Նրանց գալու առթիվ Ֆոկը գյուղում հարուստ զոհաբերություն սարքեց: Քաղաքից շատ ժողովուրդ էր եկել: Եվ ահա սկսելով հեկատոմբը¹⁰⁵, Դիոնիսոսն ասաց.

— Աֆրոդիտե տիրակալուհի, դու ես իմ բոլոր բարիքների պատճառը: Զեզնից եմ ստացել Կալիբոյին, քեզնից եմ ստացել որդուս, ես ամուսին ու հայր եմ քո շնորհիվ: Ինձ համար բավական կլիներ միայն Կալիբոյը: Նա ինձ համար ավելի սիրելի է, քան ծնողներն ու հայրենիքը, երեխան էլ թանկ է ինձ համար նրանով, որ իր մորն ավելի ամուր է կապել ինձ հետ: Նա ինձ համար Կալիբոյի բարեհաճության գրավականն է իմ հանդեպ: Խնդրում եմ քեզ, տիրակալուհի, ինձ համար պահպանիր Կալիբոյին, իսկ նրա որդուն պահպանիր Կալիբոյի համար:

Դիոնիսոսի խոսքերը բարեպաշտության բացականչություններով հավանության արժանացրեց նրա շուրջը կանգնած ամբողջը, և Դիոնիսոսին նետեցին՝ որը վարդեր, որը մանուշակներ, իսկ շատերն էլ նույնիսկ պսակներ նետեցին, այնպես որ ամբողջ սրբավայրը լցվեց ծաղիկներով:

Դիոնիսոսն իր խնդրանքը արտասանեց բարձրաձայն: Իսկ Կալիբոյը ցանկանում էր Աֆրոդիտեի հետ խոսել միայնակ, նախապես ձեռքերի վրա բռնելով տղային և այնպիսի հիասքանչ տեսք ընդունելով, որպիսին ցայսօր չի նկարել ոչ մի պատկերահան, դեռևս չի կերտել ոչ մի անդրիագործ, չի նկարագրել ոչ մի բանաստեղծ, քանզի նրանցից ոչ ոք չի

ներկայացրել ոչ Աթենասին, ոչ էլ Արտեմիսին՝ մանկանը կրծքին բռնած¹⁰⁶: Դիոնիսոսը, նայելով նրան, հրճվանքից լաց եղավ և լուռ երկրպագեց Նեմեզիդային¹⁰⁷:

Հրամայելով, որ իր հետ մաա միայն Պլանգոնան, Կալիոյը մնացածներին հրավիրեց անցնել ամառանոց: Երբ նրանք հեռացան, ապա, մոտենալով Աֆրոդիտեի արձանին և նրա մեկնած ձեռքին դնելով մանկանը, Կալիոյն ասաց.

— Տիրակալուհի, մանկան համար ես շնորհակալ եմ քեզնից, ինձ համար էլ շնորհակալական խոսք չունեմ քեզ ասելու: Ես շնորհակալ կլինեի քեզ միայն այն ժամանակ, եթե դու Զերեյին պահպանեիր ինձ համար: Ասենք, իմ թանկագին ամուսնու պատկերը դու տվել ես ինձ, Զերեյին դու ամբողջովին չես խլել ինձնից¹⁰⁸: Թող որդին մեր ավելի երջանիկ լինի իր ծնողներից և նմանվի պապին: Թող նա էլ լողա ստրատեգի նավով և թող նրա ծովամարտից հետո շատերն ասեն. «Հերմոկրատեսից հզորը նրա հետնորդն է»: Պապն էլ կիրճվի իր խիզախ ժառանգորդի համար, նույնիսկ մեր մահից հետո կիրճվենք նաև մենք՝ նրա ծնողները: Տիրակալուհի, աղաչում եմ քեզ, այժմվանից հաշտվիր ինձ հետ: Զանգի բավական շատ էին իմ դժբախտությունները: Ե՛վ մեռա, և՛ կենդանացա, եղա և՛ ավազակների մոտ, և՛ աքսորում, և՛ վաճառվեցի որպես ստրուկ: Այդ բոլոր թշվառությունների դիմաց ես միայն մի բան եմ խնդրում քեզնից, իսկ քո միջոցով նաև մյուս բոլոր աստվածներից, պահպանիր իմ որբուկին:

Արցունքները խանգարեցին նրան շարունակելու իր խոսքը:

9

Քիչ ժամանակ անց Կալիոյն իր մոտ կանչեց քրմուհուն: Պառավը գնաց նրա մոտ և ասաց.

— Չավակս. Դու այդ ինչո՞ւ ես լիության մեջ արտասվում: Չէ որ օտարերկրացիներն էլ ինչպես աստվածուհու երկրպագում են քեզ: Ահա վերջերս էլ այստեղ մտան մեր կողմերով անցնող երկու գեղեցիկ երիտասարդներ, և նրանցից մեկը քո պատկերը տեսնելով քիչ մնաց շուկը փչեր: Աֆրոդիտեն այդքան համբավավոր է դարձրել քեզ:

Այդ խոսքերը խոր խոցեցին Կալիոյի սիրտը: Խենթ աչքերը հառելով քրմուհուն, նա բացականչեց.

— Ուլքե՛ր Էին այդ օտարերկրացիները: Որտեղի՞ց Էին նավարկելով եկել: Նրանք ի՞նչ պատմեցին քեզ:

Պառավը վախեցավ և միառժամանակ լուռ կանգնեց նրա առջև: Վերջապես նա խոսեց.

— Ես միայն տեսել եմ նրանց: Ես նրանցից ոչինչ չեմ լսել:

— Իսկ ինչպիսի տեսք ունեին նրանք: Հիշիր նրանց դիմագծերը:

Պառավը նկարագրեց նրանց արտաքինը, նկարագրեց ոչ ստույգ, բայց Կալիոյն, այնուամենայնիվ, կասկածեց ճշմարտությանը: Չէ որ ամեն ոք ներկայացնում է այն այն ամենը, ինչ ձեռնտու է իրեն ներկայացնել: Նայելով Պլանգոնային, Կալիոյը նրան ասաց.

— Գուցե խեղճ Զերեյն է այստեղ եղել իր թափառումների ճանապարհին: Ի՞նչ է պատահել: Նրան կփնտրենք միասին, միայն լուռ մաա:

Դիոնիսոսի մոտ գալով, Կալիոյը պատմեց նրան միայն այն, ինչ լսել էր քրմուհուց, որ սիրույն բնորոշ է հետաքրքրությունը և, որ Դիոնիսոսը ինքը կսկսի պատահածի մասին տեղեկանալ: Հենց այդպես էլ պատահեց: Կնոջ պատմածը Դիոնիսոսի սիրտն անմիջապես լցրեց խանդով: Սակայն նրա կասկածանքները Զերեյից հեռու էին: Նա վախենում էր, որ այստեղ, գյուղում, ծածուկ, որևէ սիրային մտադրություն լինի: Կնոջ գեղեցկությունը նրան դարձրել էր կասկածամիտ և պատրաստ էր ամեն ինչից որոշակիորեն վախենալ: Նա սարսափում էր, թե գուցե որպես իր սիրո մրցակից, երկնքից կիջնի աստվածներից որևէ մեկը: Այդ պատճառով, կանչելով Ֆոկին, սկսեց նրան հարցուփորձ անել:

— Ի՞նչ երիտասարդներ Էին նրանք և որտեղի՞ց Էին եկել: Հարո՞ւստ Էին: Ի՞նչ առիթով Էին նրանք երկրպագում իմ Աֆրոդիտեին: Ո՞վ է նրանց հայտնել Աֆրոդիտեի մասին: Ո՞վ է դա թույլ տվել նրանց:

Ֆոկը թաքցրեց ճշմարտությունը: Եվ այդպես վարվեց ոչ թե Դիոնիսոսից վախենալով, այլ՝ չկասկածելով, որ Կալիոյը, հենց որ տեղեկանա պատահածի մասին,

կկործանի և իրեն, և իր ամբողջ տոհմը: Ու քանի որ նա հավատացրեց, թե ոչ մի ճանապարհորդ էլ չի եկել, ապա Դիոնիսոսը, որին հայտնի չէր ճշմարտությունը, կասկածեց լուրջ, իր դեմ ուղղված դավադրությունը, և գայրացած հրամայեց բերել և մտրակներ, և պատժանիվներ՝ Ֆոկին տանջելու համար: Ըստ որում Դիոնիսոսը կանչեց ոչ միայն Ֆոկին, այլև բոլոր գյուղացիներին, համոզված լինելով, որ ինքն զբաղված է շնացողին փնտրելով: Այդ ժամանակ Ֆոկը, հասկանալով, թե ինչ վտանգավոր վիճակի մեջ է դրել իրեն ինչպես իր խոսքերով, այնպես էլ իր լռությամբ, Դիոնիսոսին ասաց.

— Տեր իմ, ճշմարտությունը ես կասեմ միայն քեզ:

Այդ ժամանակ Դիոնիսոսը մնացած բոլորին հեռացնելով, Ֆոկին ասաց.

— Դե ահա, մենք մենակ ենք մնացել, էլ մի ստիր, այլ ճշմարտությունն ասա ինչքան էլ սարսափելի լինի այն:

— Նրանում ոչ մի վատ բան չկա, տեր իմ,— այսպես պատասխանեց Ֆոկը,— իմ հայտնելիքը մեծ բարօրություն կբերի քեզ: Եթե նրա սկիզբը մի քիչ մռայլ է, ապա դրա համար դու մի՛ տագնապիր և մի՛ վշտանա, այլ մինչև վերջ լսիր ամեն ինչ: Իմ պատմությունը լավ է ավարտվում:

Լսելով այդպիսի նախաբան, Դիոնիսոսն ամբողջովին լսողություն դարձավ:

— Մի ձգձգիր և սկսիր պատմել,— ասաց նա:

Այդ ժամանակ Ֆոկն սկսեց պատմել:

— Սիցիլիայից,— ասաց նա,— այստեղ էր եկել սիրակուզցի պատգամավորներով մի նավ, խնդրելու, որ դու ետ վերադարձնես Կալիբրոյին:

Այդ բառերը լսելով, Դիոնիսոսը մեռելի գույն ստացավ և նրա աչքերը մշուշվեցին: Դիոնիսոսը պատկերացրեց ներկայացած Զերեյին, որ ասես կանգնել է իր առջև և բաժանում է նրան Կալիբրոյից: Դիոնիսոսն ընկավ: Եվ անշարժ մարմինը, և դեմքի գույնը նման էին մեռելի: Իսկ Ֆոկը նրա առջև կանգնած էր անվճռական: Նա չէր ուզում որևէ մեկին օգնության կանչել, չցանկանալով գաղտնիքի վկա ունենալ: Վերջապես նրան հաջողվեց քիչ-քիչ ուշքի բերել իր տիրոջը:

— Մի անհանգստացիր,— հավատացրեց Ֆոկը Դիոնիսոսին,— Զերեյը մահացել է, նավը խորտակվել է, այլևս ոչ մի վտանգ չկա:

Այդ խոսքերը Դիոնիսոսին վերադարձրին դեպի կյանք: Աստիճանաբար ուշքի գալով, նա ամեն ինչի մասին հանգամանորեն հարցուփորձ արեց Ֆոկին, իսկ Ֆոկը պատմեց նրան այն մասին, թե նավաստին ինչպես է հաղորդել իրեն, որտեղից է եկել այդ նավը, ինչ մարդիկ էին նրա վրա և ինչ նպատակով էին նրանք նավարկել: Ֆոկը պատմեց նաև բարբարոսների համար սարքած իր խորամանկության, գիշերային հրդեհի, նավի կործանվելու, սպանվածների և շղթայակապների մասին: Մութ ամպն ասես դուրս եկավ Դիոնիսոսի հոգուց և, Ֆոկին իր գիրկն առնելով, Դիոնիսոսը նրան ասաց.

— Դու իմ բարերարն ես, դու իմ ճշմարիտ պաշտպանն ու գաղտնիքի հավատարիմ պահապանն ես: Զո շնորհիվ ես տիրացա Կալիբրոյին ու որդուս: Ես երբեք չէի հրամայի քեզ՝ սպանել Զերեյին, բայց քանի որ դու արդեն արել ես, չեմ հանդիմանում քեզ: Անօրինականությունը կատարվել է տիրոջ հանդեպ տաժաժ սիրո համար: Միայն մի սխալ ես թույլ տվել, հարցուփորձով չես իմացել՝ Զերեյը մահացածների՞, թե շղթայակապների թվում է: Դու պետք է որոնեիր նրա դիակը: Եվ նա կթաղվեր, և դրանով ավելի կայուն կլինեիր իմ հանգստությունը: Հիմա իմ երջանկության անհոգությունը խանգարում են այդ մարդկանց շղթաները: Մենք նույնիսկ չգիտենք էլ, թե նրանցից ովքեր և որտեղ են վաճառվել:

Ֆոկին հրամայելով ամեն ինչ անկեղծորեն պատմել այդ դեպքի մասին, բայց լռության մատնել երկու բան՝ իր խորամանկության և այն մասին, որ նավով եկածներից մի քանիսը ողջ են մնացել, Դիոնիսոսը մռայլ տեսքով եկավ Կալիբրոյի մոտ: Ապա նա կանչեց գյուղացիներին և սկսեց հարցուփորձ անել նրանց, որպեսզի կինը, իմանալով պատահածի մասին, Զերեյի հանդեպ իր հույսն ավելի շատ կորցնի: Հավաքված գյուղացիները հայտնեցին այն, ինչ իրենք՝ ամենքը գիտեին: Նախանցյալ օրվա գիշերը պարսիկ ավազակները ինչ-որ տեղից հարձակվեցին ծովափի վրա և այրեցին հունական

մի նազ, որ նախորդ օրը խարիսխ էր գցել հրվանդանին մերձ: «Իսկ առավոտյան,— այդպես լրացրին գյուղացիները,— ջրի մեջ մենք նկատեցինք արյան հետքեր և տեսանք ալիքների վրա օրորվող դիակներ»: Կալիբրոյը, լսելով այդ, պատառոտեց իր հագուստը և հարվածելով իր այտերին ու աչքերին, վազեց վերև, հենց այն սենյակը, ուր առաջին անգամ նա մտավ այն ժամանակ, երբ վաճառվել էր: Դիոնիսոսը թույլ տվեց, որ Կալիբրոյն ազատություն տա իր ապրումներին, զգուշանալով կոպիտ չերևալ իր տարածամ այցով: Նա հրամայեց, որ բոլորը հեռանան և Կալիբրոյի մոտ մնա միայն Պլանգոնան, որպեսզի Կալիբրոյը, առ ի դեպ որևէ սարսափելի բան չանի իր հետ: Եվ Կալիբրոյը, օգտվելով շրջապատի լռությունից, նստեց հատակին, գլխին փոշի ածեց¹⁰⁹, և զգգգելով մազերը, սկսեց այսպես ողբալ.

— Զերեյ, ես տեսչում էի կամ քեզնից շուտ մեռնել, կամ մեռնել քեզ հետ միաժամանակ, իսկ այժմ, այնուամենայնիվ, պիտի մեռնեմ քեզնից հետո: Եվ իմ կյանքում ուրիշ էլ ի՞նչ հույս է մնում ինձ: Մինչև հիմա իմ դժբախտությունների մեջ ես մտածում էի. վերջապես կտեսնեմ Զերեյին և կպատմեմ նրան, թե իր պատճառով ինչքան եմ տառապել: Եվ դրանից ես նրա համար ավելի թանկ կդառնամ: Ինչպիսի հրճվանք կապրեր նա՝ տեսնելով իր տղային: Ամեն ինչ ապարդյուն եղավ, և երեխան այժմ դարձավ ավելորդ: Իմ բոլոր մնացած թշվառություններին ավելացավ միայն նրա որբությունը: Վիրավորեցիր ինձ, Աֆրոդիտե: Դու միայնակ տեսար Զերեյին: Նա այդտեղ է եղել, իսկ դու ցույց տվեցիր ինձ նրան: Դու նրա գեղեցիկ մարմինը հանձնեցիր ավազակների ձեռքը: Դու չխղճացիր նրան, որ քեզ համար նավարկում էր ծովով դեպի այստեղ: Ով կերկրպագի քեզ, մի այնպիսի աստվածուհու, որն սպանել է իր իսկ երկրպագողին: Այն սարսափելի գիշերը դու ապավեն չեղար գեղեցիկ երիտասարդին, տեսնելով, թե ինչպես նրան՝ սիրահար մարդուն, սպանում են քո աչքերի առջև: Դու ինձնից խլեցիր իմ հասակակցին, իմ երկրացուն, իմ սիրածին, իմ ամուսնուն: Ինձ տուր գոնե նրա անշունչ մարմինը: Ես գտնում եմ, որ երկուսով՝ ես և Զերեյը լույս աշխարհ ենք եկել որպես դժբախտից էլ դժբախտ մարդիկ: Իսկ նա՞վն ինչով էր մեղավոր: Բարբարոսներն ինչո՞ւ այրեցին այն, որին չէին տիրացել նույնիսկ աթենացիները: Մեր ծնողները, սպասելով մեր վերադարձին, հիմա նստել են ծովափին, և ինչպիսի նազ էլ հեռվում երևա, միմյանց ասում են. «Ահա գալիս է Զերեյը և իր հետ բերում է Կալիբրոյին»: Մեզ համար պատրաստում են մեր ամուսնական անկողինը և զարդարում են մեր ննջարանը, մեզ համար, որ նույնիսկ գերեզման էլ չունենք: Չազդելի ծով, դու Զերեյին Միլեթ բերեցիր մահվան, իսկ ինձ՝ վաճառքի համար:

ԳԻՐԶ ՉՈՐՐՈՐԴ

1

Լալով Զերեյի բախտը, որը դեռևս ողջ էր, Կալիբրոյն այդ գիշեր անցկացրեց հեծեծանքի մեջ: Իսկ երբ մի փոքր քնեց, ապա երագում տեսավ ձեռքներին կրակներ բռնած, վազող բարբարոսների ավազակային ջոկատը, վառվող նավը և իրեն, որ օգնում էր Զերեյին:

Դիոնիսոսը տխրեց, նկատելով, թե ինչպես է գունատվում կինը, և վախեցավ, որ դրանից կարող է տուժել նրա գեղեցկությունը: Բայց հանուն իր սիրո, նա, այնուամենայնիվ, գտավ, որ իրեն ձեռնադուր է, որպեսզի Կալիբրոյը հիմնովին կորցնի առաջին ամուսնու գոյության հավատը: Եվ ահա, ձգտելով ցույց տալ կնոջ հանդեպ իր քնքշանքն ու մեծահոգությունը, այսպես ասաց նրան.

— Կնիկ, առողջացիր և զբաղվիր տառապալի թաղման խնջույքով: Ինչո՞ւ անհնարինի հետևից ընկած, դու բանի տեղ չես դնում անհրաժեշտը: Չէ որ նա քո առջև կանգնել և ասում է քեզ.

Օ՛, թաղիր դու ինձ, ես կմոտեմ օթևանս Աիդայի¹¹⁰:

Չնայած չի գտնվել նրա խեղճ դիակը, բայց չէ որ հույները հնամյա սովորույթ ունեն՝ նույնիսկ անհայտ կորածի հիշատակին էլ գերեզման կանգնեցնել:

Դիոնիսոսը շուտով համոզեց նրան, քանի որ այդ խորհուրդը հաճո էր Կալիբրոյին: Եվ հենց որ ի հայտ եկան Կալիբրոյի հոգսերը, այդպես էլ մեղմացավ նրա վիշտը: Անկողնուց ելնելով, Կալիբրոյն սկսեց դիտել տեղանքը, փնտրելով, թե որտեղ կարելի է դնել հուշադամբանը, և նրան դուր եկավ մի տեղ, որ գտնվում էր Աֆրոդիտեի տաճարի մոտ: Իր սիրո հիշատակը կպահպանեին և այդտեղի բնակիչները: Բայց Դիոնիսոսը Քերեյի հանդեպ խանդի զգացում ապրեց այդպիսի հարևանության համար: Այդ տեղը նա մտքում փայփայում էր իր համար: Բացի այդ, նա ցանկանում էր, որ Կալիբրոյի միտքն զբաղված լինի, դրա համար էլ նա առաջարկեց.

— Կնիկ, արի գնանք քաղաք և այնտեղ, քաղաքի պարիսպների տակ, բաց տեղում, կառուցենք մի բարձր գերեզման:

Որպեսզի այն լավ երևար հեռվից ծովում նավորներին¹¹¹:

Հրաշալի են Միլեթի նավահանգիստները, և այնտեղ հաճախ գալիս են նաև սիրականցիներ, այնպես որ քո համաքաղաքացիները քիչ չեն փառաբանի քեզ:

Կալիբրոյին դուր եկավ այդ խորհուրդը և նա դադարեցրեց իր որոնումները: Քաղաք գալով, Կալիբրոյն սկսեց հուշադամբանի կառուցումը. ծովափնյա մի բարձրադիր մասում: Իր ձևով, իր չափերով, իր շքեղությամբ այդ գերեզմանը ամեն ինչով նման էր Սիրականցայում կանգնեցված Կալիբրոյի գերեզմանին: Եվ ինչպես այն, այնպես էլ սա, երկուսն էլ կենդանի մարդկանց գերեզմաններ էին: Շոալյ ծախսերի և բազմաթիվ բանող ձեռքերի շնորհիվ հուշադամբանի կառուցումն արագորեն ավարտվեց, և այդ ժամանակ Կալիբրոյը մտածեց հուշադամբանի վրա վերակերտել և իր՝ Քերեյի պատկերը: Նախապես նշանակվեց օրը, որի ժամանակ հավաքվեցին ոչ միայն բազմաթիվ միլեթցիներ, այլև ժողովուրդ ժամանեց համարյա թե ամբողջ Իոնիայից: Ներկա եղան նաև այդ ժամանակ Միլեթում գտնվող երկու սատրապ¹¹², Կարիայի¹¹³ սատրապ Միհրդատը և Լիդիայի¹¹⁴ սատրապ Փառնակը: Նրանք եկել էին Դիոնիսոսին իրենց հարգանքը հավաստելու պատրվակով, բայց իրականում ցանկանում էին տեսնել Կալիբրոյին: Չէ որ այդ կնոջ փառքը թնդում էր համայն Ասիայում, և Կալիբրոյի անունը, որ ավելի նշանավոր էր քան Արիստոտելի ու Լեոնարդո¹¹⁵ անունները, հասել էր նաև մինչև Մեծ Արքան: Բայց այդ օրը նրա մասին բոլոր լուրերը նվազ երևացին իրականի հանդեպ: Նա դուրս եկավ սև հանդերձով, հերարձակ¹¹⁶, և, փայլելով իր դեմքի ու հուլանի ուսերի գեղեցկությամբ, ընդհանրապես խամրեցրեց Հոմերոսի բոլոր «լուսաթևիկ» և «գեղանի ոտքերով» գեղեցկուհիներին¹¹⁷: Ոչ ոք ի վիճակի չէր դիմանալ նրա գեղեցկության փայլատակումին: Շատերն, ինչպես արևի փայլից, իրենց աչքերը կտրեցին նրանից, ուրիշներն էլ բերանքսիվայր փռվեցին նրա առջև: Նա տպավորություն թողեց նույնիսկ երեխաների վրա: Իսկ Կարիայի կուսակալ Միհրդատը, ճիշտ այնպես, ինչպես ինչ-որ տեղից պարսատիկից արձակված հանկարծակի հարված ստացած, նրա առջև գետնին ընկավ բերանը բաց: Ծառաները դժվարությամբ բարձրացրին նրան և տարան ձեռքների վրա: Թաղման թափորի մեջ էր նաև Քերեյի պատկերը, որ քանդակվել էր Կալիբրոյի մատանուց: Բայց այդ արձանի վրա, չնայած այն գեղեցիկ էր, Կալիբրոյի ներկայությամբ ոչ ոք չէր նայում: Ամենքի հայացքները իր վրա սևեռել էր տվել միայն Կալիբրոյը:

Ո՞վ կարող է արժանիորեն նկարագրել հանդեսի ավարտը: Երբ թափորը հասավ գերեզմանին, մահիճը տանող մարդիկ գետնին դրին այն, իսկ Կալիբրոյը, մոտեցավ մահիճին և, գրկելով Քերեյին ու համբուրելով արձանը, ասաց.

— Դու առաջինն ինձ թաղեցիր Սիրականցայում, իսկ հիմա Միլեթում ես եմ թաղում քեզ: Մեր դժբախտությունը ոչ միայն մեծ է, այլ՝ անսովոր: Ես ու դու թաղեցինք միմյանց, բայց մեզնից որևէ մեկը թաղվողի աճյուն չունի: Նախանձ ճակատագիր, դու ափսոսացիր մահից հետո մեզ միասին հողին հանձնել և մեռածներիս դատապարտեցիր արքայի:

Ամբոխի մեջ հեծեճանքի ձայներ լսվեցին: Բայց Քերեյին ափսոսացին, ոչ թե նրա համար, որ նա մահացել է, այլ նրա համար, որ բաժանվել է այդպիսի կնոջից:

Կալիբրոյը Միլեթում թաղեց Զերեյին, իսկ շղթայակապ Զերեյը աշխատում էր Կարիայում: Հող փորելը հյուծել էր նրա մարմինը, որովհետև շատ էին տանջել իրեն և հոգնածությունը, և անխնամ մնալը, և շղթաները, բայց ամենից ուժգին՝ սերը: Բայց մեռնելու նրա ցանկությունից ետ էր պահում այն թույլ հույսը, որ, գուցե, երբևիցե նա կտեսնի Կալիբրոյին: Տեսնելով, որ Զերեյն ի վիճակի չէ աշխատել և որ դրա համար նրան ծեծում ու խայտառակ ամոթանք են տալիս, Զերեյի ընկերը, որ գերի էր ընկել նրա հետ միասին վերակացուին ասաց.

— Մեզ մի առանձին տեղամաս հատկացրու, որպեսզի ուրիշ կոծղակիր բանտարկյալների ալարկոտությունը չվերագրես մեզ: Մեր տեղամասը մենք ամեն օր կհանձնենք ինքներս:

Վերակացուն համաձայնեց և տեղամաս հատկացրեց նրանց: Բայց արիական խառնվածքի տեր երիտասարդ Պոլիքարմոսը, որ չէր ստրկագրվել դաժան բռնապետ Էրոտին, սկսեց ինքն անել իրենց համատեղ աշխատանքի համարյա երկու երրորդը, ընկերոջը փրկելու համար հաճույքով իր վրա վերցնելով գործի մեծագույն մասը:

Ահա թե ինչպիսի պայմաններում էին գտնվում նրանք դժվարությամբ վարժվելով իրենց գերությանը: Իսկ սատրապ Միհրդատը այդ ժամանակ վերադարձել էր Կարիա արդեն ոչ այնպիսի տեսքով, ինչպես գնացել էր Միլեթ: Նա վերադարձել էր գունատված ու թուլացած, որովհետև իր հոգում կրում էր ցավատանջ ու այրվող մի վերք: Կալիբրոյին սիրելուց ուժաթափվելով, նա հավանաբար կմեռներ, եթե նրան չպահպաներ հետևյալ դեպքը: Զերեյի հետ բանտարկված մարդկանց (նրանք ընդամենը տասնվեցն էին, որ պահվում էին մուգ հյուղակներում) մի մասը գիշերը փշրելով շղթաները, խեղդամահ արեցին վերակացուին, որից հետո դիմեցին փախուստի: Սակայն նրանց չհաջողվեց փախչել: Նրանց մատնեցին պահակաշները: Բռնվելով, նրանք բոլորն այդ գիշերն անցկացրին առանձին ջանասիրությամբ կռած կալանդների մեջ: Առավոտյան տնտեսը պատահածի մասին զեկուցեց Միհրդատին, իսկ վերջինս, չսելով նրանց արդարացումները և նույնիսկ չնայելով նրանց հրամայեց բոլոր տասնվեցին էլ, որոնք միասին ապրում էին մի շենքում, խաչին գամել: Այդ ժամանակ նրանց դուրս բերեցին ոտքերն ու վզները իրար հետ կապկապած շղթաներով և նրանցից յուրաքանչյուրը տանում էր իր խաչը: Պատժի ենթարկելով այդպիսի տանջանքներով, պատժողները, դրանով որպես ի ցույց մնացածներին վախեցնելու, ավելացրին նաև սարսափի արտաքին պատկերը: Զերեյը, երբ նրան մյուսների հետ տարան պատժելու, ձայն չհանեց, բայց Պոլիքարմոսը, բարձրացնելով իր խաչը, ասաց.

— Օ՛, Կալիբրոյ, ահա թե քո շնորհիվ ինչի ենք ենթարկավում մենք: Դու մեր բոլոր թշվառությունների պատճառն ես:

Լսելով այդ խոսքերը, տնտեսը երևակայեց, թե գոյություն ունի ինչ-որ մի կին, որ մասնակից է բանտարկյալների հանդուգն ձեռնարկին, և, որպեսզի այդ կնոջն էլ պատժեն և հետաքննեն դավադրությունը, նա Պոլիքարմոսին արագորեն առանձնացրեց մյուսներից և բերեց Միհրդատի մոտ: Այդ ժամանակ Միհրդատը միայնակ պառկել էլ իր զբոսայգում, իր աչքերի առջև թախծությամբ վերականգնելով Կալիբրոյի պատկերը, այնպես, ինչպես տեսել էր նրան վշտի մեջ: Ամբողջովին տարված այդ վերհուշով, նա տհաճությամբ ընդունեց իրեն մոտեցող սպասավորին:

— Ի՛նչ ես ձանձրացնում ինձ,— ասաց նա:

— Ակամա ստիպված եմ, տեր իմ,— պատասխանեց սպասավորը,— ես բացել եմ մի մեծ և հանդուգն չարագործության օջախ: Այս անպիտանը¹¹⁸ ճանաչում է մի գարշելի կնոջ, որը մասնակից է եղել իրենց կատարած սպանությանը:

Լսելով այդ խոսքերը, Միհրդատը ունքերը կիտեց և Պոլիքարմոսի վրա ծանր հայացք նետելով, ասաց նրան.

— Ասա հանցակից այն կնոջ անունը, որը մասնակցել է ձեր հանցագործությանը:

Պոլիքարմոսը հավատացրեց, որ ինքն այդպիսի կնոջ չի ճանաչում և որ այդ գործին ինքը նույնիսկ չի մասնակցել:

Պահանջվեցին շղթաները, բերեցին կրակը, պատրաստեցին պատժի գործիքները և, արդեն դիպցնելով Պոլիքարմոսի մարմնին, նրան ասացին.

— Ասա այն կնոջ անունը, որին դու համարում ես քո բոլոր թշվառությունների պատճառը:

— Կալիրոյ,— բացականչեց Պոլիքարմոսը:

Միհրդատը ապշեց այդ անունը լսելով և մտածեց երկու տարբեր կանանց անունների ցավալի զուգադիպության մասին: Նա այլևս չցանկացավ շարունակել ջանադիր որոնումը, վախճնալով, թե կարող է թանկագին անունը վիրավորել անհրաժեշտաբար: Բայց քանի որ և բարեկամները, և ստրուկները ստիպեցին խստագույն հետաքննություն կատարել, ապա Միհրդատը հրամայեց.

— Թող գա Կալիրոյը:

Պոլիքարմոսին սկսեցին ծեծել, հարցնելով նրան, թե ով է այդ կինը և որտեղից կարելի է նրան բերել: Սակայն անելանելի վիճակում էլ գտնվելով, դժբախտն, այնուամենայնիվ, չցանկացավ որևէ մեկին մատնել կեղծ մեղադրանքով:

— Դուք ինչո՞ւ եք անտեղի հուզվում,— ասաց նա,— փնտրելով նրան, ով այստեղ չէ: Ես հիշել եմ սիրակուզցի Կալիրոյին, ստրատեգ Յերմոկրատեսի դստերը:

Լսելով այդ խոսքերը, Միհրդատի արյունը խփեց երեսին, մարմինը պատվեց քրտինքով, իսկ նրա աչքերը լցվեցին արցունքներով, այնպես որ և Պոլիքարմոսը լռեց և բոլոր ներկաները դրանից հետո ընկան տարակուսանքի մեջ: Դժվար ինքնատիրապետումով, վերջապես Միհրդատը հարցրեց Պոլիքարմոսին.

— Ի՞նչն է քեզ կապում այդ Կալիրոյի հետ: Եվ ինչո՞ւ դու մահից առաջ հիշեցիր նրան:

Պոլիքարմոսը պատասխանեց.

— Տեր իմ, դա երկար պատմություն է, իսկ այժմ էլ ինձ համար՝ արդեն անօգուտ: Ես քո գլուխը չեմ տանի իմ անտեղի շատախոսությամբ: Բացի այդ, ես վախճնում եմ, որ եթե սկսեմ հապաղել, ապա իմ առաջը կկտրի ընկերս, իսկ ես ցանկանում եմ միաժամանակ մեռնել նրա հետ:

Շրջապատողների մեջ զայրույթի զգացումը փոխարինվեց կարեկցանքի, բոլորից շատ հուզված էր Միհրդատը:

— Մի վախճնա,— ասաց նա,— քո պատմությունն ինձ համար բեռ չի լինի: Իմ հոգին զգայուն է: Համարձակ ասա ամեն բան և ոչինչ բաց մի թող: Ո՞վ և որտեղացի ես դու: Ինչպե՞ս եկար Կարիա և ինչո՞ւ ես աշխատում շղթայակապ: Դու ինձ պատմիր հատկապես Կալիրոյի մասին և ասա, թե ով է քո ընկերը:

3

Պոլիքարմոսը սկսեց իր պատմությունը.

— Մենք, երկու կալանավորներս, սիրակուզցի ենք: Նա իր հռչակով, հարստությամբ ու գեղեցկությամբ առաջին երիտասարդն է Սիցիլիայում, ես էլ, չնայած աղքատ, նրա ընկերն ու բարեկամն եմ: Թողնելով հայրենիքը, մենք բաժանվել ենք ծնողներից: Ես եկա նրա համար, իսկ նա՝ իր կնոջ, որի անունը Կալիրոյ է, և որը շքեղորեն թաղվել էր, քանի որ նրան մեռած էին կարծում: Բայց նրա գերեզմանը մտած կողոպտիչները նրան գտան ողջ և վաճառեցին Իոնիայում: Այդ գաղտնիքը մեզ բացեց ավագակ Ֆերոնը, որին տանջանքի ենթարկեցին ժողովրդի առջև: Այդ ժամանակ սիրակուզցիների քաղաքը պատգամավորներով մի նավ ուղարկեց փնտրելու կնոջը, և հենց այն գիշերը, երբ մենք խարիսխ էինք գցել, բարբարոսները այրեցին նավը: Մարդկանց մեծ մասին նրանք մորթեցին, իսկ ինձ ու ընկերոջս կապտեցին ու վաճառեցին այստեղ: Մեզ հասած դժբախտությունը ես ու ընկերս տարանք խելացի, բայց մեզ նման շղթայակապներից մի քանիսը, մարդիկ, որոնց մենք չենք ճանաչում, ջարդեցին իրենց շղթաները ու սպանություն կատարեցին, և քո հրամանով մեզ բոլորիս տարան խաչելու: Իմ ընկերը, մեռնելով, չկշտամբեց իր կնոջը, իսկ ես չէի կարող չհիշել և նրան չհամարել մեր թշվառությունների պատճառը, քանի որ մենք հենց նրա համար ենք դուրս եկել Սիրակուզայից:

Պոլիքարմոսը շարունակեց դարձյալ խոսել, երբ Միհրդատը բարձր ձայնով բացականչեց.

— Դու խոսում ես Զերեյի՞ մասին:

— Այո, նրա՞ իմ ընկերոջ մասին,— պատասխանեց Պոլիքարմոսը:— Բայց ես աղաչում եմ քեզ, տեր իմ,— այսպես ավելացրեց նա,— հրամայիր թող դահիճը մեզ խաչի կողք-կողքի:

Պոլիքարմոսի պատմածին արձագանքեցին հեծեծանքներով ու արտասուքներով, իսկ Միհրդատը բոլորին ուղարկեց Զերեյի հետևից, որպեսզի հասցնեն Նրան ետ պահել մահից: Չնայած մարդիկ մնացածներին գտան արդեն սպանված, միայն Զերեյն էր բարձրանում խաչի վրա: Դեռ հեռվից մարդիկ սկսեցին ձայն տալ ով ինչ կարող էր.

— Խնայի՛ր:

— Իջի՛ր:

— Մի՛ գամիր:

— Բա՛ց թող:

Դահիճը կանգ առավ, և Զերեյը, դառնացած սրտով, սկսեց իջնել խաչից: Նա ուրախ կլիներ, որ բաժանվեր այդ ծանր կյանքից և իր դժբախտ սիրուց: Նրան տարան, իսկ Միհրդատն ընդառաջ գնաց, գրկեց Նրան և ասաց.

— Եղբայր իմ և բարեկամ: Զո, ճիշտ է արիական, բայց շատ անտեղի լռությամբ հագիվ էր մնում, որ կործանեիր ինձ, քիչ էր մնում, որ ստիպեիր ինձ անազնիվ արարք կատարել:

Առանց ուշացնելու, Միհրդատը սպասավորներին կարգադրեց Զերեյին ու Պոլիքարմոսին տանել բաղնիք, բուժել Նրանց մարմնի վերքերը, իսկ բաղնիքից հետո հագցնել հունական թանկարժեք քրամիդներ¹¹⁹, ինքն էլ կանչեց ծանոթներին և Զերեյի փրկության համար զոհեր մատուցեց աստվածներին: Սեդանի շուրջը¹²⁰ շատ խմեցին, աշխուժություն էր, ուրախություն և սրտին բավարարություն տվող որևէ բանի պակաս չէր զգացվում: Խնջույքը ձգձգվեց, և գինով ու սիրով հարբած Միհրդատը, դառնալով Զերեյին, ասաց.

— Զերեյ, ես քեզ ափսոսում եմ ոչ թե քո շղթաների և ոչ էլ քո խաչի, այլ Նրա համար, որ դու գրկվել ես այդպիսի կնոջից:

Զերեյը, զարմանալով, բացականչեց.

— Իսկ դու որտե՞ղ ես տեսել իմ Կալիրոյին:

Արդեն ոչ թե քո, այլ միլեթցի Դիոնիսոսի օրինական կնոջը: Նրանք երեխա էլ ունեն:

Զերեյը դրան չդիմացավ: Նա նետվեց դեպի Միհրդատը և, գրկելով Նրա ծնկները, ասաց.

— Թախանձում եմ քեզ, տեր իմ, ետ տուր իմ խաչը: Ստիպելով ինձ ապրել այդպիսի լուր լսելուց հետո, դու ինձ ենթարկում ես ավելի դաժան տանջանքների, քան խաչն է: Դավաճա՛ն Կալիրոյ: Սրբապի՛ղծ կին: Զեզ համար ես ստրկության տրվեցի, հող փորեցի, խաչս տարա, դահիճի ձեռքն ընկա, իսկ դու, երբ ես շղթաների մեջ էի, ապրել ես լիության մեջ ու մարդու գնացել: Դու նաև մայր ես դարձել:

Բոլորն սկսեցին լալ, և խնջույքն ավարտվեց տխուր: Պատահածի համար մեն-մենակ ուրախացել էր Միհրդատը: Նա հույս ուներ, որ իր համար հնարավորություն է բացվում և Կալիրոյի մասին խոսելու և նույնիսկ գործելու հոգուտ Նրան՝ ընկերոջն օգնելու պատրվակով:

— Առայժմ ցրվենք,— ասաց նա,— արդեն վրա է հասնում գիշերը: Իսկ վաղը թարմ գլխով արի միասին մտածենք այդ մասին: Զիչ ժամանակ չի պահանջվի այդ գործը քննելու համար:

Այս ասելով, Միհրդատը ելավ սեդանի մոտից և բաց թողնելով հյուրերին, գնաց հանգստանալու իր սովորական սենյակում: Սիրակուզցի երիտասարդների համար նա հատկացրեց պերճապաճույճ մի շենք և հատուկ սպասավոր դրեց Նրանց մոտ:

4

Ոչ ոքի քունը չբերեց այդ գիշերը: Ամենքի համար այն լցված էր խոհերով: Զերեյը բարկացել էր, Պոլիքարմոսը մխիթարում էր Նրան, իսկ Միհրդատը համակվել էր հաճելի հույսերով՝ մտածելով, որ Զերեյի ու Դիոնիսոսի միջև իր բռնած սպասողական դիրքը, ինչպես Էֆեդրին¹²¹ մարմնամարզական մրցումներում, հենց իրեն թույլ կտա առանց դժվարության, որպես հաղթական մրցանակ ձեռք բերելու Կալիրոյին:

Հաջորդ օրը, Միհրդատի հետ խորհրդակցելիս, Զերեյը ցանկություն հայտնեց անմիջապես ոտքով գնալ Միլեթ և Դիոնիսոսից պահանջել իր կնոջը: «Կալիրոյը,— ասաց նա,— երբ տեսնի իրեն, չի մնա Դիոնիսոսի մոտ»:

— Ինձ համար ինչ, գնա,— այս խոսքերը լսելով նկատեց Միհրդատը,— ես չեմ ուզում ոչ մի ավելորդ օր պահել քեզ՝ երկարացնելով քո բաժանումը կնոջից: Լավ կլիներ եթե դու չթողնեիր Սիցիլիան և դու ու կինդ չապրեիր ձեզ հետ պատահած սարսափները: Բայց քանի որ ճակատագիրը, որը սիրում է ամեն տեսակ անակնկալներ, իր մռայլ դրամայով շրջապատել է ձեզ, ապա հետագա քայլերը պետք է կատարել ավելի զգուշորեն կշռադատելով: Չէ որ դու հիմա ավելի շատ շտապում ես զգացումների ազդեցության տակ, քան դատողության, ամենևին չկանխատեսելով այն, ինչ պարտավոր ես: Միայնակ օտարերկրացիդ ուղևորվում ես մի խոշորագույն քաղաք, որտեղ ինչպիսիք կարևոր դիրք ունեցող հարուստից ցանկանում ես խլել մի կնոջ, որը նրա հետ կապված է բացառիկ ամուր կապով: Ի՞նչ զորության վրա ես դու հենվում: Այնտեղ քեզնից հեռու կլինեն և Հերմոկրատեսը, և քո միակ դաշնակից Միհրդատը, որոնք ավելի շուտ կարող են կարեկցել, քան օգնել քեզ: Վախենում եմ, որ քեզ համար ձախողող լինի նաև ինքը տեղանքը: Այն արդեն մի անգամ քեզ վիշտ է պատճառել: Բայց այն, ինչ դու ապրել ես այն ժամանակ, առաջիկայի համեմատությամբ փաղաքշանք է թվալու քեզ: Դու շղթայակապ էիր, բայց ողջ մնացիր, վաճառվեցիր, բայց՝ ինձ: Իսկ հիմա, հենց որ Դիոնիսոսն իմանա, որ նրա ընտանեկան երջանկության դեմ չարիք ես կյուրծում, ապա այն ժամանակ աստվածներից ոչ մեկը չի կարող փրկել քեզ: Դու կընկնես քո ամենագոր մրցակցի ձեռքը, և, թերևս, ի վիճակի էլ չլինես համոզել նրան, որ դու Զերեյն ես: Եթե նա հանկարծ մտածի, որ դու իրոք Զերեյն ես, ապա դա քեզ կդնի ավելի մեծ վտանգի տակ: Միայն դու ես, որ ծանոթ չես Էրոտի բնությանը: Դու չգիտես, որ այդ աստվածը զվարճանում է խորամանկություններով ու խաբեություններով: Իմ կարծիքով, դու նախ պետք է կնոջդ գրավոր հարցում անես, որպեսզի ստուգես, թե նա դեռևս հիշո՞ւմ է քեզ և ցանկանո՞ւմ է թողնել Դիոնիսոսին թե ոչ:

Ում հետ որ նա ամուսնանա՝ ցանկանում է լիացնել տունը նրա¹²²:

Նամակ գրիր նրան: Թող մի քիչ ջերմանա, ուրախանա, թող փնտրի քեզ, կանչի քեզ: Զո նամակը նրան ուղարկելու համար արդեն ինքս կհոգամ: Գնա և գրիր:

Զերեյն լսեց, բայց միայնակ մնալով, և ցանկանում էր, և չէր կարողանում գրել, քանի որ արցունքներն էլ էին խանգարում նրան, և դողում էին ձեռքերը:

«Կալիրոյ: Եսողջ եմ, և ողջ եմ Միհրդատի՝ իմ, այլև ինչպես համոզված եմ և քո բարերարի շնորհիվ: Ես վաճառվեցի Կարիայում բարբարոսների կողմից, այն բարբարոսների, որոնք այրեցին գեղեցկուհի-Նավը, քո հոր՝ ստրագետի Նավը: Այդ Նավով մեր քաղաքն ինձ պատգամավոր է ուղարկել քո հետևից: Չգիտեմ, թե ինչ է պատահել մնացած քաղաքացիների հետ: Մեզ՝ ինձ ու իմ բարեկամ Պոլիքարմոսին էլ, որ արդեն մահ էր սպառնում, փրկել է իշխանավորի բարեսրտությունը: Ամեն ինչով երջանկացնելով, Միհրդատը խլեց ինձնից իմ երջանկությունը՝ պատմելով ինձ քո ամուսնության մասին: Այդ լինելով՝ ես պատրաստ էի մեռնել, բայց իմ մտքով չէր անցնում, թե հնարավոր է, որ դու ամուսնանաս: Թախանձում եմ քեզ, ուշքի եկ: Այս նամակը ես արցունքներով եմ ողորդում և փակում համբույրներով: Այդ ես եմ, քո Զերեյն, նա, որին աղջիկ ժամանակ դու հանդիպել ես Աֆրոդիտեի տաճարի ճանապարհին, և որի համար դու կորցրել ես քունդ: Հիշիր մեր ննջարանի և այն խորհրդավոր գիշերվա մասին, երբ մենք ճանաչեցինք իրար՝ դու ամուսնուղ, ես՝ կնոջ: Ես խանդում էի քեզ, բայց խանդը հատուկ է սիրող սրտին, և այդ խանդի համար քո առջև ես արդեն հատուցել եմ. վաճառվել եմ, ստրուկ եմ եղել, եղել եմ շղթայակապ: Վրեժ մի լուծիր իմ ոտքի անզգույշ հարվածի համար: Չէ որ ես էլ ոչ մի բանի համար քեզ չեի կշտամբում, երբ քո պատճառով ելա խաչին: Եթե դու ինձ դեռ չես մոռացել, ապա հաշվիր, որ ես չեմ տառապել: Իսկ եթե քո մտքում ուրիշն է, ապա դրանով դու արձակում ես իմ մահվան դատավճիռը»:

Այդ նամակը Միհրդատը հանձնեց իր հավատարիմ մարդուն՝ Գիգինին, որը Կարիայի ամբողջ կալվածքի կառավարիչն էր, և բացեց նրան իր սիրո գաղտնիքը: Կալիրոյին նամակ գրեց նաև ինքը՝ Միհրդատը: Նամակում նա նշեց Կալիրոյի հանդեպ իր դիրքը,

Նրա հանդեպ իր հոգատարությունը, որն արտահայտվել է հանուն Նրա՝ Զերեյին փրկելով: Խորհուրդ տալով Նրան՝ չվիրավորել առաջին ամուսնուն, Նա խոստանում էր, եթե Կալիրոյը համաձայնի, անձամբ գործն այնպես տանել, որպեսզի Նա ու Զերեյը միասին իրար: Գիգինի հետ Միհրդատն ուղարկեց երեք սպասավոր, թանկարժեք ընծաներ և շատ ոսկի: Կասկածանքից հեռու մնալու համար մնացած բոլոր սպասավորներին հայտնեց, որ այդ ամենը Միհրդատը նվեր է ուղարկում Դիոնիսոսին: Նա Գիգինին հրամայեց՝ այդ քաղաքը ժամանելուց հետո մարդկանց թողնել Պրիենում¹²³, իսկ ինքը, որպես իոնացի (Գիգինի մայրենին հունարենն էր), միայնակ հետախուզության գնա Միլեթ, որպեսզի այնուհետև, երբ իր համար Նշի հաջորդ գործողության եղանակը, Պրիենից Նրանց բերի Միլեթ:

Գիգին մեկնեց և ձեռնարկեց հրամանի կատարումը: Բայց ճակատագիրը խթան տալով ավելի կարևոր դեպքերի նախաբանի, բոլորովին այլ վերջաբանի հասցրեց այն, ինչ նախատեսված էր այդ որոշումով: Բանն այն է, որ Գիգինի Միլեթ գնալուց հետո, Նրա կողմից Պրիենում թողնված ստրուկները, մնալով առանց վերակացուի, առատորեն օգտվելով ոսկուց, սկսեցին կերուխում անել: Իսկ այդ փոքրիկ քաղաքում, որ լիքն էր հետաքրքրասեր հոյակերով, օտարերկրացիների շռայլությունը ընդհանուր ուշադրության առարկա դարձավ, և անձանոթների զեխ ապրելակերպը առիթ տվեց կասկածել, որ Նրանք կամ ավազակներ են, կամ էլ՝ ծայրահեղ դեպքում, փախած ստրուկներ: Նրանց մոտ՝ հյուրանոց եկավ ստրատեգը¹²⁴, խուզարկեց և Նրանց մոտ գտավ ոսկի ու թանկարժեք իրեր: Գտնելով, որ և ոսկին, և թանկարժեք իրերը գողացված են, ստրատեգը հարցաքննեց ստրուկներին, ցանկանալով իմանալ, թե ովքեր են Նրանք և որտեղից են ձեռք բերել այդ իրերը, իսկ ստրուկները կտտանքի սպառնալիքի տակ հայտնեցին ճշմարտությունը, ստրատեգին հայտարարելով, թե դրանք նվերներ են, որ Կարիայի կուսակալ Միհրդատը ուղարկել է Դիոնիսոսին: Նրանք ցույց տվեցին Նաև Նամակները: Ստրատեգը չբացեց Նամակները (դրանք մատնակնքված էին), այլ տալով դեմոններին¹²⁵, Նա և Նամակները, և մնացած բաները, ստրուկների հետ միասին, ուղարկեց Դիոնիսոսին, հաշվելով, որ դրանով Նա ծառայություն է մատուցում Նրան:

Դիոնիսոսը հյուրասիրում էր անվանի քաղաքացիներին շքեղ խնջույք էր, երաժշտություն էր լսվում, հնչում էր սրինգը, երբ Դիոնիսոսին մի թուղթ հանձնեցին, որի մեջ գրված էր. «Պրիենի ստրատեգ Բիանտը ողջունում է բարերար Դիոնիսոսին: Ուղարկում եմ Կարիայի կուսակալ Միհրդատի՝ քեզ հասցեագրված Նամակները, ինչպես և ընծաները, որ հափշտակել են Նրա անափտան ստրուկները, որոնց բռնելով, նույնպես ուղարկում եմ քեզ»:

Դիոնիսոսն այդ թուղթը կարդաց խնջույքի բոլոր մասնակիցների համար լսելի ձայնով և հիացավ արքայական նվերներով: Հրամայելով կոտրել մատնակնիքը՝ ծանոթանալու համար Նամակների բովանդակությանը, Դիոնիսոսը տեսավ «Կալիրոյ Զերեյ: Ես ողջ եմ»:

Եվ պատանու սիրտն ու ծնկները թուլացան¹²⁶:

Մշուշը պատեց Նրա աչքերը: Սակայն, ուշագնաց լինելով էլ, Դիոնիսոսը իր ձեռքում ամուր բռնեց Նամակը, վախենալով, թե որևէ մեկը կարող է կարդալ այն: Իրար անցած մարդկանց աղմուկը Նրան ուշքի բերեց, և, գիտակցելով պատահած դժբախտությունը, Նա հրամայեց, որ սպասավորներն իրեն տանեն ուրիշ սենյակ: Նա ցանկանում էր ներանձնանալ:

Խնջույքավորները, որոնց վրա Դիոնիսոսի ուշաթափությունը թողել էր կաթվածահարի տպավորություն, ցրվեցին տխրությամբ: Իսկ Դիոնիսոսը միայնակ մնալով, մի քանի անգամ կարդաց Նամակները: Նա համակվեց խառնաշփոթ զգացումներով՝ և զայրույթով, և վիատությամբ, և վախով, և կասկածանքով: Որ Զերեյը ողջ է, Դիոնիսոսը չէր հավատում, և ընդհանրապես չէր էլ ցանկանում հավատալ դրան, այլ կասկածում էր Միհրդատի կողմից շնացողի խարդախությանը, որը հավանաբար ձգտում էր Զերեյի անունն օգտագործել և մոլորեցնել Կալիրոյին:

Ցերեկով նա խիստ հետևեց, որպեսզի ոչ ոք չմոտենա կնոջը և չհայտնի Կարիայում պատահածի մասին, իսկ ինքն էլ մտածեց իր վրեժը լուծել հետևյալ կերպ: Հենց այդ ժամանակ Միլեթում էր գտնվում Լիդիայի և Իոնիայի կուսակալ Փառնակը, որը արքայի կողմից մերձծովյան մարզերը ուղարկված բոլոր կառավարիչների մեջ համարվում էր ամենաազդեցիկը: Դիոնիսոսը, որ Փառնակի հետ բարեկամական հարաբերության մեջ էր, ներկայացավ նրան և խնդրելով զրուցել առանձին, դեմ-դիմաց, ասաց.

— Տեր իմ, խնդրում եմ պաշտպան լինես և ինձ, և քեզ: Ստորագույն մարդ և քեզ նախանձող Միհրդատը ոտնձգություն է անում իմ ընտանեկան երջանկության դեմ, չնայած նրան, որ կապված է ինձ հետ հյուրասիրության կապերով: Նա իմ կնոջն ուղարկել է գայթակղեցնող նամակ, և նամակի հետ միասին՝ նաև ոսկի:

Եվ Դիոնիսոսն սկսեց Փառնակին կարդալ նամակները և բացատրել նրան Միհրդատի խորամանկությունը: Փառնակը հաճույքով լսեց այդ խոսքերը, գուցե մասամբ էլ նրա համար, որ Միհրդատի հետ քիչ անգամ չէ փոխադարձ բախումներ ունեցել, քանի որ նրանց մարզերը կից էին իրար, բայց ավելի շատ՝ նրա համար, որ Փառնակը սիրահարված էր: Չէ որ ինքը՝ Փառնակն էլ էր վառվում Կալիրոյի սիրով, և հենց այդ պատճառով էր իր ժամանակի մեծ մասը անցկացնում Միլեթում, այնտեղ՝ իր մոտ հյուր կանչելով Դիոնիսոսին՝ կնոջ հետ: Դրա համար էլ Դիոնիսոսին նա խոստացավ անել ամեն բան, ինչ ինքը կարող է, և արքային գրեց հետևյալ գաղտնի նամակը.

«Արքայից-արքա Արտաքսերքսեսին, իր տիրոջը, Լիդիայի և Իոնիայի սատրապ Փառնակը բերկրանք է ցանկանում: Միլեթի Դիոնիսոսը իր նախնիներից սկսած համարվում է քո հավատարիմ ստրուկը, քո տոհմի նախանձախնդիրը: Նա ինձ դառնությամբ բողոքեց, որ Կարիայի կուսակալ Միհրդատը, որի հետ կապված է հյուրընկալության կապերով, գայթակղեցնում է իր կնոջը: Միհրդատը դրանով արատավորում է քո իշխանությունը, իսկ ավելի շատ՝ խանգարում վարելու տերության գործերը: Սատրապի ամեն տեսակ անօրինականությունը արժանի է նախատիևքի, իսկ այդ տեսակ անօրինականության համար՝ առավել ևս: Մանավանդ որ Դիոնիսոսը Իոնիայում մեծ հեղինակություն է վայելում, իսկ նրա կնոջ գեղեցկությունը հայտնի է ամենքին, այնպես որ նրան հասցրած վիրավորանքը չի կարող գաղտնի մնալ»:

Արքան իրեն հասած այդ նամակը կարդաց բարեկամներին, որոնց հետ էլ սկսեց խորհրդակցել այն մասին, թե ինչպես վարվի: Կարծիքները տարբեր էին: Այն մարդիկ, ովքեր նախանձում էին Միհրդատին և ձգտում էին իրենք ստանալ նրա սատրապությունը, գտնում էին, որ անվանի մարդու ընտանեկան երջանկության դեմ ուղղված խարդավանքը չի կարելի մատնել անուշադրության: Ավելի բարյացկամ և Միհրդատին հարգող մարդիկ էլ (իսկ Միհրդատը շատ պաշտպաններ ուներ, որոնց թվում, ի դեպ, բարձր դիրք ունեցողներ) դեմ էին այն բանին, որ մի զրպարտչագրի հիման վրա բռնեն կարևոր մարդուն: Հաշվի առնելով, որ կարծիքները համարյա հավասարապես բաժանվեցին երկու մասի, արքան այդ օրը ոչ մի որոշում չկայացրեց, գործի քննությունը թողնելով մի ուրիշ անգամվա: Բայց երբ վրա հասավ գիշերը, արքայի մեջ մի կողմից նողկանք առաջացավ անառակության դեմ, որ թելադրում էր նրա արքայական աստիճանի արժանապատվությունը, մյուս կողմից՝ նրա մեջ խոսեց ապագայի հանդեպ զգուշության զգացումը: Միհրդատը, այսպես ասաց արքան՝ ինքն իրեն, անհարգալից վերաբերմունքի սկիզբ է դնում: Այդ պատճառով արքան պատրաստվեց Միհրդատին հրավիրել իր մոտ՝ դատի: Մի այլ զգացում էլ տրամադրում էր նրան միաժամանակ կանչել նաև գեղեցկուհուն: Այնիպիսի խորհրդատուներ, ինչպիսիք խավարն ու միայնությունն են, ստիպեցին նրան հիշելու նաև նամակի այդ մասը: Նրան այդ մտքին մղեց նաև Համբավը, որ Կալիրոյին համարում էր գեղեցկագույն կինը համայն Իոնիայում: Արքան Փառնակից դժգոհ էր միայն նրա համար, որ նա իր նամակում չէր հայտնել կնոջ անունը: Բայց քանի որ վիճելի էր մնում այն հարցը, թե չկա մի ուրիշ բան, որ իր հետևից կարողանա վարագուրել դա, ապա որոշեց կանչել նաև Դիոնիսոսի կնոջը: Նա Փառնակին գրեց. «Միլեթի Դիոնիսոսին, իմ ստրուկին, ուղարկիր ինձ մոտ»: Նա դրեց նաև Միհրդատին. «Արի արդարացիր այն մեղադրանքի համար, որ դու իբր ոտնձգություն ես կատարել Դիոնիսոսի ընտանեկան երջանկության դեմ»:

Վախեցած Միհրդատը չէր կարողանում հասկանալ իր վրա բարդած զրպարտության պատճառը, բայց նրա մոտ վերադարձած Գիզինը գեկուցեց, թե ինչ է պատահել իր ստրուկների հետ: Եվ այդ ժամանակ Միհրդատը, իր նամակների համար վախենալով չարախոսությունից և ոյուրաբորբոք արքայից, տրամադրվեց որոշել, որ չգնա Պարսկաստան, այլ գրավի Միլեթը, սպանի ամեն ինչում մեղավոր Դիոնիսոսին և, հափշտակելով Կալիրոյին, անջատվի արքայից: «Ինչո՞ւ շտապեմ իմ ազատությունը հանձնելու տիրակալի ձեռքը.— հարցրեց նա ինքն իրեն:— Գուցե, այստեղ մնալով, դու դեռ կհաղթես: Չէ որ արքան հեռու է այստեղից, իսկ նրա ստրատեգները վատ են: Բայց եթե նույնիսկ արքան, այնուամենայնիվ, քեզ տապալի, ապա դրանից դու չես վնասվի, մինչդեռ դու հավատարիմ կմնաս աշխարհում ամենագեղեցիկ երկու բանի՝ սիրույն և իշխանությանը: Իշխանությունը փառավոր սավան է, իսկ Կալիրոյի հետ մահը՝ քաղցրություն»:

Քանի դեռ Միհրդատը շարունակում է կշռադատել, պատրաստվելով անջատվել արքայից, լուր եկավ, որ Դիոնիսոսը մեկնել է Միլեթից, հետը տանելով Կալիրոյին: Եվ այդ մասին իմանալը Միհրդատի համար ավելի ծանր էր, քան դատարանին ներկայանալու հրաման ստանալը: Միհրդատը լացեց իր բախտը և ապա ասաց ինքն իրեն. «Ինչի՞ վրա եմ հույս դնում, եթե պիտի մնամ այստեղ: Ճակատագիրը բոլոր կողմերից դավաճանում է ինձ: Իսկ եթե ինձ վիճակվի մեռնել, ապա ես, այնուամենայնիվ, իմ առջև նորից կտեսնեմ Կալիրոյին: Դատարանում Զերեյն ու Պոլիքարմոսը կլինեն ոչ միայն իմ պաշտպանները, այլև իմ վկաները: Եվ, հրամայելով, որ իր ամբողջ շքախումբը հետևի իրեն, նա Կարիայից դուրս եկավ կայտառ հոգով, որովհետև նրան թվում էր, թե ինքը ոչ մի մեղք չունի: Նրան ուղեկցեցին ոչ թե արցունքներով, այլ ողջ երթի զոհախնջույքով:

Այդպիսին էր Կարիայից Երոտի ուղարկած մի երթը: Իսկ Իոնիայից Երոտը ուղևորեց մի ուրիշ, ավելի շքեղ երթ, որի գեղեցկությունը է՛լ ավելի փայլուն և է՛լ ավելի արքայական էր: Քանզի կնոջ առջևից վազում էր Համբավը, ամենքին հայտնելով, որ իրենց մոտ է գալիս նա, որի անունը դարձել է նշանավոր, բնության մեծ նվաճումը՝ Կալիրոյը,

Որպես ճկուն Արտեմիդա կամ գեղանի Աֆրոդիտե¹²⁷:

Նրա փառքը մեծարեցին նաև առաջիկա դատի մասին պատմությունները: Ընդառաջ դուրս եկան ամբողջ քաղաքներ, ճանապարհները նեղ դարձան ամեն կողմից ամբոխվող ժողովրդի համար, բայց ամենքին թվում էր, թե այդ կինը գերազանցում է իր մասին տարածվող համբավին:

Դիոնիսոսին անվանում էին երջանիկ, մինչդեռ Դիոնիսոսը տխրում էր: Իր լիակատար բարեբախտությունը սարսափեցնում էր իրեն: Կրթված մարդ լինելով, նա մտածում էր այն մասին, թե ինչքան հեղհեղուկ է Երոտը, որին իզուր չէ, որ բանաստեղծներն ու արձանագործները պատկերում են նետով և վառվող կանթեղով, այսինքն ամենաթեթև և ամենաանկայուն բաներով: Նա վերհիշեց նաև գեղեցիկ կանանց փոփոխամտության մասին հնամենի պատմությունները: Դիոնիսոսին ամեն բան վախեցնում էր: Յուրաքանչյուր տղամարդու մեջ նա մրցակից էր տեսնում, և պատրաստ էր այդպիսին հայտնաբերել ոչ միայն իր հակառակորդի մեջ առաջիկա դատի ժամանակ, այլև հենց իր՝ դատավորի մեջ: Դիոնիսոսը հիմա զոջում էր, որ շտապեց գաղտնի ամբաստանության գնալ Փառնակի մոտ, երբ

հնարավոր էր քնել և թանկագինոյ պահել կողքիդ¹²⁸:

Միլեթում Կալիրոյին պահելը մի բան է, իսկ նրան համայն Ասիայից պաշտպանելը՝ բոլորովին ուրիշ բան:

Իրենց ճանապարհորդության գաղտնիքը, ընդհուպ մինչև նրա ավարտը, Դիոնիսոսը չբացեց կնոջը, չխոստովանեց ճանապարհորդության իսկական պատճառը և մեջտեղ բերեց արքայից ստացած հրավերը, թե իբր արքան ցանկանում է խորհրդակցել նրա հետ Իոնիայի գործերի մասին:

Կալիրոյի համար տխուր էր հունական ծովից այդքան հեռու գնալ: Քանի դեռ նա իր առջև տեսնում էր Միլեթի նավահանգիստը, նրան թվում էր, թե Սիրակուզան էլ մոտիկ է

իրենց: Միլեթում նրա համար մեծ մխիթարանք էր նաև այնտեղ գտնվող Զերեյի գերեզմանը:

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1

Այն մասին, թե, Աֆրոդիտեի գործակցությամբ, որ կազմակերպեց այդ ամուսնությունը, Կալիբրոյն ինչպես ամուսնացավ Զերեյի հետ, գեղեցկագույն կինը՝ գեղեցկագույն տղամարդու հետ, և այն մասին, թե ինչպես կարծեցին, որ նա մահացել է, երբ խանդի ազդեցության տակ Զերեյը հարվածեց նրան, և այն մասին, թե ինչպիսի շքեղությամբ թաղեցին նրան և հետո գերեզմանում նա ինչպես ուշքի եկավ, իսկ կողոպտիչները գիշերով նրան տարան Սիցիլիա և, նավարկելով դեպի Իոնիա, այնտեղ նրան վաճառեցին Դիոնիսոսին, և Զերեյի հանդեպ Կալիբրոյի հավատարմության ու նրա հղիության մասին, որի պատճառով ստիպված էր ամուսնանալ Դիոնիսոսի հետ, և այն մասին, թե ինչպես խոստովանեց Ֆերոնը, իսկ Զերեյը նավով դուրս եկավ իր կնոջը որոնելու, և այն մասին, թե Զերեյն ինչպես գերի ընկավ և Կարիայում վաճառվեց իր ընկերոջ՝ Պոլիքարմոսի հետ, և ինչպես Զերեյին, որին մահ էր սպառնում, Միհրդատը ճանաչեց և սկսեց ջանալ սիրող սրտերը վերադարձնել միմյանց, իսկ Դիոնիսոսն էլ կես ճամփին բռնեց նրա նամակը, բացեց այն և զրպարտեց նրան Փառնակի առջև, իսկ Փառնակը Միհրդատին զրպարտեց արքայի առջև, նաև այն մասին, թե արքան երկուսին ինչպես կանչեց դատի,— այս ամենը շարադրված էր նախորդ պատմություններում: Իսկ այժմ ես կպատմեմ այն մասին, թե ինչ եղավ հետո:

Կալիբրոյը հեշտ տարավ ճանապարհորդությունը մինչև Ասորիք¹²⁹ և Կիլիկիա¹³⁰: Շուրջը նա լսում էր հունարեն խոսք և տեսնում էր ծովը, որը կապում էր նրան Սիրակուզայի հետ: Բայց երբ նա հասավ Եփրատ գետին, որի մյուս կողմում փռված է մեծ մայրցամաքը և սկսվում էին արքայական հողերի ընդարձակ տարածությունները, այնտեղ նրան համակեց հայրենիքի ու մերձավորների կարոտը և նա կորցրեց ետդարձի հույսը: Կանգնելով գետափին և բացի իր հավատարիմ Պլանգոնայից, հրամայելով բոլորին հեռանալ, նա սկսեց խոսել այսպես.

— Նախանձ ճակատագիր, դու կռվելով հետապնդում ես միայնակ մի կնոջ: Դու ինձ ողջ-ողջ գերեզման դրիր և այնտեղից ինձ դուրս հանեցիր ոչ թե խղճալով, այլ որպեսզի հանձնես ինձ ավազակների ձեռքը: Ծովն ու Ֆերոնը աքսորեցին ինձ: Ես, Հերմոկրատեսի դուստրը, ստրկության եմ տրվել և (լավ կլիներ, որ ես ամենևին բարեկամներ չունեսնայի) դարձել սիրո առարկա, քանզի Զերեյի կենդանության օրոք ամուսնացա ուրիշ տղամարդու հետ: Բայց դա էլ քեզ համար քիչ է: Իմ աքսորի սահմանը դու դարձնում ես ոչ թե Իոնիան, որն ինձ համար չնայած օտար, բայց և այնպես հունական երկիր էր, որտեղ մեծ սփոփանք էր այն գիտակցությունը, որ ապրում եմ ծովի ափին: Իսկ այժմ դու աքսորում ես ինձ համար սովոր երկնքի եզրից այն կողմ, և մի ամբողջ աշխարհ է հիմա բաժանում ինձ իմ հայրենիքից: Ինչպես առաջ դու ինձնից խլեցիր Սիրակուզան, այնպես էլ այժմ դու ինձնից խլեցիր Միլեթը: Ինձ տանում են Եփրատից այն կողմ, և ինձ՝ կղզիաբնակ կնոջը փակում են բարբարոս երկրների խորքում, որտեղ արդեն ծով չկա: Ես այլևս չեմ սպասի Սիցիլիայից եկող նավի: Զերեյ, ինձ անջատում են նաև քո գերեզմանից: Բարի ոգի¹³¹, ո՞վ պիտի հեղի քո գերեզմանը¹³²: Բակտրիան և Շոշը¹³³, ահա իմ ապագա տունը և իմ ապագա գերեզմանը: Եփրատ, ինձ վիճակված է միայն մի անգամ անցնել քո ջրերի վրայով: Բայց ինձ սարսափեցնում է ոչ այնքան ճանապարհի հեռավորությունը, որքան վախենում եմ, թե չլինի՞ այնտեղ ինչ-որ մեկն էլ իմ մեջ գեղեցկուհիու տեսնի:

Այս ասելով, նա համբուրեց հողը և, լաստ բարձրանալով, անցավ գետի մյուս ափը:

Իր հետ շատ պաշար էր տանում Դիոնիսոսը, որ ցանկանում էր կնոջ առջև փայլել իր պատրաստած հանդերձների ճոխությամբ: Սակայն, նրանց ճանապարհորդությանը ավելի մեծ փայլ էր տալիս նրանց հանդեպ տեղացի բնակիչների հաճելի վերաբերմունքը, բնակիչներ, որոնք ուղեկցում էին նրանց մի ժողովրդից մյուսին: Մի սատրապի հողից նրանք անցնում էին մյուսին, որի խնամքին հանձնում էր առաջինը: Կալիբրոյի գեղեցկությունը կաշառել էր բոլորին: Բարբարոսներին բորբոքում էր նաև մի ուրիշ բան,

Նրանք հավատացած էին, որ այդ կնոջը մեծ իշխանություն է սպասվում: Այդ պատճառով յուրաքանչյուրն շտապում էր առաջարկել իր հյուրասիրությունը կամ, համենայն դեպս, մատուցել մի ուրիշ որևէ ծառայություն:

2

Այդպես էր ընթանում Նրանց ճանապարհորդությունը: Իսկ Միհրդատը Հայոց աշխարհով¹³³ շարժվում էր Նրանցից արագ, սաստիկ վախենալով արքայի աչքում մեղավոր երևալ նաև այն բանում, որ անցել է այդ կնոջ հետքերով: Սակայն, բացի այդ, նա շտապում էր առաջինը գալ, որպեսզի հասցնի նաև իր գործերը պատրաստել դատի համար: Հասնելով Բաբելոն, որտեղ արքան այն ժամանակ ուներ իր աթոռանիստը, նա առաջին օրը հանգիստ անցկացրեց իր շենքում: Յուրաքանչյուր սատրապ ուներ առանձին, իրեն հատկացված շենքը, որտեղ էլ սատրապը կանգ էր առնում: Իսկ հաջորդ օրը Ներկայանալով արքունիք, նա ողջունեց պարսիկ աստիճանավորներին և ասաց Արտաշեսին՝ Ներքինում, որ ամենակարևոր և ազդեցիկ դեմքն էր արքայի մոտ և որին Միհրդատը նախապես իր հարգանքն էր հավաստել ընծաներով:

— Չեկուցիր արքային, որ Նրա ստորոկ Միհրդատը Ներկայացել է իրեն, որպեսզի վերցնի հույների կողմից իր վրա բարդած զրպարտությունը և որպեսզի երկրպագի Նրան: Զիչ հետո Ներքինին Միհրդատի մոտ մտավ հետևյալ պատասխանով:

— Արքային հաճո է ոչնչով չվիրավորել Միհրդատին, արքան կդատի այն ժամանակ, երբ գա նաև Դիոնիսոսը:

Գլուխ տալով, Միհրդատը հեռացավ, ապա, միայնակ մնալով, իր մոտ կանչեց Զերեյին:

— Ասես կրակի վրա լինեմ,— ասաց Միհրդատը:— Կալիրոյին քեզ վերադարձնելու ցանկությունը ինձ մեղադրանքի առջև է կանգնեցրել: Չէ որ Դիոնիսոսը հաստատում է, թե իբր այն նամակը, որ դու գրել ես կնոջը, գրված է իմ կողմից, և գտնում է, որ այդ նամակով նա ապացուցում է իմ անառակությունը: Բանն այն է, որ Դիոնիսոսը համոզված է, թե դու մեռած ես: Թող այսուհետև էլ նա մնա այդ համոզման ընդհուպ մինչև դատի օրը, որ քո երևալը Նրա առջև անակնկալ լինի: Այն ամենի դիմաց, ինչ արել եմ հանուն քեզ, ահա թե ինչ եմ խնդրում. համբերություն ունեցիր Կալիրոյի հետ առայժմ չհանդիպելու և Կալիրոյի մասին ոչինչ մի տեղեկանա:

Ակամա ենթարկվելով դրան, Զերեյն աշխատեց չմատնել իրեն, բայց արցունքները հոսեցին Նրա այտերով:

— Տեր իմ, ես կկատարեմ հրամանդ,— ասաց նա Միհրդատին և գնաց իր և ընկերոջ՝ Պոլիքարմոսի համար հատկացված սենյակը, որտեղ հատակին ընկնելով, նա պատառոտեց իր քիտոնը և ձեռքերի մեջ առնելով՝

*Վերցրեց մոխիրն ու իր գլխի վրա ցանեց
Եվ մոխիրով այլանդակեց իր երեսը գեղեցկագեղ¹³⁴:*

— Օ՛, Կալիրոյ: Մենք գտնվում ենք կողք-կողքի և չենք տեսնում միմյանց: Դու այդ բանում ամենևին մեղավոր չես: Չէ որ դու չգիտես, որ Զերեյը ողջ է: Իսկ ես, ես սարսափելի հանցագործ եմ: Ինձ հրամայված է չնայել քեզ, և երկչոտորեն կառչելով կյանքին, ահա թե որքան հեռու եմ գնացել, ենթարկվելով բռնապետների պահանջներին: Իսկ դու, եթե որևէ մեկից նման հրաման ստանայիր, կնախընտրեիր հրաժարվել կյանքից:

Պոլիքարմոսը մխիթարեց Զերեյին:

Արդեն Բաբելոնին մոտ էր նաև Դիոնիսոսը: Բայց նախքան Նրա ժամանումը, քաղաքին սկսեց տիրանալ Համբավը, ազդարարելով ամենքին, որ Բաբելոն է գալիս ոչ թե մարդկային, այլ աստվածային գեղեցկությամբ մի կին, որի նման երկրորդն աշխարհում չկա: Բարբարոսներին հատուկ էր կանանց համար խելքից գնալը, այդ պատճառով յուրերով լցվեցին յուրաքանչյուր փողոց ու յուրաքանչյուր տուն: Համբավը հասավ նաև իրեն՝ արքային: Այնպես որ արքան նույնիսկ հարցրեց Ներքինի Արտաշեսին, թե չի՞ եկել միլեթցի կինը:

Դիոնիսոսին արդեն վաղուց էր տանջում իր կնոջ հռչակը, որ անվստահություն էր ներարկում նրա հոգին, իսկ Բաբելոնին մոտենալուց նա ավելի շատ համակվեց այրող տազնապով: Հոգոց հանելով, նա ինքն իրեն ասաց. «Դիոնիսոս, սա քո հայրենի քաղաք Միլեթը չէ: Իսկ դու այնտեղ էլ էիր սարսափում խարդախությունից: Դու կտրի՞ճես, որ չես մտածել ապագայի մասին: Ինչպե՞ս: Կալիբոյին հետո տանում ես Բաբելոն, որտեղ ապրում են բազում Միհրդատներ՝: Նույնիսկ մաքրաբարո Սպարտայում Մենեսոսը չկարողացավ պահպանել Հեղինեին, և բարբարոս-հովիվն այնտեղ իրենով ծածկեց արքային¹³⁵: Շատ պարիսներ կան Պարսկաստանում: Մի՞թե դու վտանգ չես տեսնում: Չե՞ս նկատում, որ վտանգների մեջ ես մտնում: Մեզ ընդառաջ են դուրս գալիս քաղաքները, և սատրապներն են հոգում մեր մասին: Կալիբոյն արդեն պարծենում է, իսկ արքան դեռևս չի էլ տեսել նրան: Կնոջդ պահպանելու քո միակ հույսը նրան թաքցնելն է: Կալիբոյը կպահպանվի միայն այն ժամանակ, երբ հնարավոր լինի նրան թաքցնելը»:

Այս խորհրդածություններով էլ նա ձի նստեց, թողնելով, որ Կալիբոյը գնա ծածկոցավոր արմամաքսի մեջ¹³⁶: Եվ, գուցե այն, ինչ այնքան ցանկանում էր Դիոնիսոսը, հաջողվեց նրան, եթե չպատահեց հետևյալը:

3

Արքայի կնոջ՝ Ստատիրայի մոտ հավաքվել էին անվանի պարսիկներ: Եվ նրանցից ոմանք այսպես ասացին.

— Տիրուհի, մի հույն կին արշավում է մեր հայրենական գեղուհիների վրա, որոնց գեղեցկությունից վաղուց ենք բուլորս հիացել, և այժմ պարսիկ կանանց փառքին կործանման վտանգ է սպառնում: Եկեք մտածենք, թե ինչպես վարվենք, որպեսզի օտարերկրացի կինը չնստմացնի մեզ:

Թագուհին, Համբավին չհավատալով, ծիծաղեց:

— Հույները,— ասաց նա,— աղքատ պարծենկոտներ են, որ հիանում են ամեն տեսակ դատարկ բանով: Կալիբոյի գեղեցկության մասին էլ նրանք խոսում են կատարելապես այնպես, ինչպես Դիոնիսոսին անվանում են հարուստ: Բավական է, որ մեզնից որևէ մեկը դուրս գա և երևա նրա կողքին, աղքատ ստրկուհին ոչնչություն կթվա: Խոնարհվելով թագուհուն և նրա մոքերի համար հիացմունք հայտնելով, ամենքը նախ և առաջ միաձայն բացականչեցին.

— Տիրուհի, եթե միայն դու հնարավորություն ունենայիր ինքդ երևալ մարդկանց մեջ¹³⁷:

Այնուհետև երբ սկսեցին թվել առավել նշանավոր գեղեցկուհիների անունները, ձայները երկուսի բաժանվեցին: Զվեարկությունը կատարվեց ձեռք բարձրացնելու միջոցով, ինչպես թատրոնում¹³⁸, և ընտրությունն ընկավ Չոփիրի դստեր, Մեաքիզի կին Ռոդոգունի վրա, որն անվանի, հանրաճանաչ գեղեցկուհի էր: Ինչ որ Կալիբոյն էր իոնիայի համար, նույնն էլ Ռոդոգունն Ասիայի համար:

Կանայք սկսեցին զուգել Ռոդոգունին: Յուրաքանչյուրը նրան տալիս էր մի որևէ թանկարժեք իր: Թագուհին՝ նրան ապարանջաններ ու մանյակներ տվեց:

Եվ ահա մրցության համար զինվելով այդ թանկարժեք զարդարանքներով, Ռոդոգունը ճամփա ընկավ դիմավորելու Կալիբոյին: Դրա համար նա անձնական պատվակ էլ ուներ, քանի որ նա այն նույն Փառնակի բույրն էր, որը Դիոնիսոսի մասին նամակ էր գրել արքային:

Ամբողջ Բաբելոնը դուրս էր եկել նայելու: Զաղաքի դարպասների մոտ խռնվել էին մարդկանց բազմությունները, իսկ ամենատեսանելի վայրում արքայական շքախմբի ուղեկցությամբ սպասում էր Ռոդոգունը: Ասես մարտահրավեր նետելով, հպարտ կանգնել էր գեղասքան Ռոդոգունը, և ամեն կողմից նայում էին նրան, իրար ասելով.

— Մենք կհաղթենք: Պարսկուհին կնստմացնի օտարերկրացի կնոջը: Թող վերջինս փորձի նրա հետ համեմատվել, և թող այն ժամանակ հույներն իմանան, թե իրենք ինչպիսի պարծենկոտներ են:

Այդտեղ Դիոնիսոսն առաջ անցավ, և քանի որ նրան գեկուցեցին Փառնակի ազգականուհու ներկայության մասին, ապա նա իջավ ձիուց և սիրալիրությամբ մոտեցավ Ռոդոգունին, որը, շառագունելով ասաց.

— Ցանկանում եմ ողջագուրվել քրոջս հետ:

Այս ասելով նա ուղևորվեց դեպի արմամաքսը: Այսպիսով, այլևս հնարավոր չէր, որ Կալիբրոյը մնա թաքնված, և Դիոնիսոսը, շվարած, հոգոց հանելով, դժկամորեն խնդրեց Կալիբրոյին դուրս գալ արմամաքսից: Եվ այդ նույն պահին դեպի Կալիբրոյը ձգվեցին բոլոր ներկաների ոչ միայն հայացքները, այլև հոգիները: Մարդիկ համարյա հրում էին միմյանց: Յուրաքանչյուրը ցանկանում էր հնարավորին չափ մոտենալ և ավելի լավ նայել նրան: Կալիբրոյի դեմքը փայլատակեց, և նրա փայլը իրեն գամեց բոլորի աչքերը, ինչպես իրեն է ձգում պայծառ, խոր գիշերին հանկարծակի բոցավառվող լույսը: Հմայված բարբարոսները խոնարհվում էին նրան, և այլևս ոչ ոք արդեն չէր նկատում Ռոդոգունի ներկայությունը: Ռոդոգունն էլ հասկացավ, որ ինքը պարտվել է: Հնարավորություն չունենալով ետ քաշվել, բայց նաև ցանկանալով, որ հույն կնոջը նայեն, Ռոդոգունը ներս խցկվեց Կալիբրոյի ծածկոցի տակ և հանձնվեց հաղթողին: Ծածկոցավոր արմամաքսը շարունակում էր շարժվել առաջ, իսկ մարդիկ, որոնք այլևս չէին կարող տեսնել Կալիբրոյին, համբուրում էին նրա կառքը:

Արքան, լսելով Դիոնիսոսի ժամանման մասին, ներքինի Արտաշեսին անմիջապես հրամայեց, որ նրան հայտնի. «Հնայած դու մեղադրանք ես ներկայացրել մի մարդու հադեպ, որին մեծ իշխանություն է վստահված, և հարկ էր, որ դու չհապաղեիր, բայց ես ներում եմ քո այդ մեղքը, քանի որ դու եկել ես կնոջդ ուղեկցությամբ: Հիմա ես տոնահադես եմ անում և զբաղված եմ զոհ մատուցելով, իսկ երեսուներորդ օրը, այսօրվանից հաշված, ես կլսեմ դատավեճը»: Դիոնիսոսը գլուխ տվեց և հեռացավ:

4

Դրանից հետո երկու կողմերը պատրաստվեցին դատի, այնպես, ինչպես կպատրաստվեն մեծ պատերազմի: Ըստ որում ժողովրդի մեջ տեղի ունեցավ պառակտում: Բարբարոսների այն մասը, որը պատկանում էր սատրապի շրջանակին, անցավ Միհրդատի կողմը: Իզուր չէ, որ նա սերում էր հին բակտրիական¹³⁹ տոհմից և Կարիայում բնակություն էր հաստատել միայն հետագայում: Իսկ Դիոնիսոսին համակրում էին բնակչության ստորին խավերը, որոնք գտնում էին, որ ոտնձգությունը մի կնոջ հանդեպ (և կարևորը՝ այն էլ ինչպիսի կնոջ) այնպիսի վիրավորանք է, որն ուղղակիորեն օրենքի խախտում էր: Հուզված էր նաև Պարսկաստանի կանանց դասը: Այստեղ էլ համակրանքը երկու մասի էր բաժանված: Այն կանայք, ովքեր մեծ կարծիք ունեին իրենց գեղեցկության մասին, նախանձում էին Կալիբրոյին և ցանկանում, որպեսզի Կալիբրոյը դատարանից դուրս գա խայտառակված, իսկ շարքային կանայք, որոնք նախանձում էին տեղացի գեղեցկուհիներին, ցանկանում էին, որ մեծարվի օտարերկրացի կինը:

Ինչ վերաբերում է երկու հակառակորդներին, ապա ինչպես մեկը, այնպես էլ մյուսը, յուրաքանչյուրն իր հերթին գտնում էր, որ հաղթանակն իր ձեռքում է: Դիոնիսոսը հույսը դնում էր այն նամակի վրա, որ Միհրդատը Զերեյի անունից գրել էր Կալիբրոյին: Դիոնիսոսը ոչ մի կերպ չէր պատկերացնում, որ Զերեյը ողջ է: Իսկ Միհրդատը, որ կարող էր ցույց տալ անձամբ Զերեյին, համոզված էր, որ ինքը չի բռնվի: Ի դեպ, իր մանկավիճիկների միջոցով նախապես տարածել էր՝ ձևացնելով, թե իբր ինքը վախճանում է որպեսզի անակնկալի շնորհիվ ավելի փայլուն արդարանա:

Ոչ պարսիկները, ոչ էլ պարսկուհիները այդ երեսուն օրում իրար հետ ուրիշ ոչ մի բանի մասին չէին խոսում, բացի առաջիկա դատավարությունից, այնպես որ, ճշմարիտն ասած, այդ ժամանակ ամբողջ Բաբելոնը դարձել էր համատարած դատաստանատուն: Նշանակված ժամկետը երկար էր թվում ոչ միայն բոլորի, ոչ միայն կողմնակի մարդկանց, այլև իր՝ արքայի համար: Դեռևս երբեք ոչ մի օլիմպիական մրցության¹⁴⁰, ոչ մի էլևսինյան գիշերվա¹⁴¹ այդպիսի անհամբերությամբ չէին սպասում: Իսկ երբ եկավ դատի նշանակված օրը, արքան նստեց իր գահաթոռին: Արքունիքում կար չափերով ու գեղեցկությամբ հիանալի մի շինություն, որ նախատեսված էր դատավարության համար: Նրա կենտրոնում արքայական գահն էր, որի երկու կողմերին տեղեր կային արքայի մերձավորների՝ իրենց հզորությամբ անվանի կամ անձնական ծառայություններ ունեցող մարդկանց, «պետերի» համար: Գահի շուրջը կանգնում էին լոխագներն ու

տակսիարիտոսները¹⁴² և արքայական ազատանուց առավել կարևոր դեմքեր: Այնպես որ ճիշտ կլիներ այդ հավաքի մասին ասել:

*Աստվածները ոսկեհատակ սրահի մեջ,
Շուրջը Չևսի մեկտեղ բազմած¹⁴³:*

Ներս մտան դատավիճող կողմերը՝ լուռ ու երկյուղած:

Ինչպես Բաբելոն հասնելու վաղ առավոտյան, այնպես էլ հիմա առաջինը մտավ Միհրդատը՝ իր բարեկամների և ազգականների ուղեկցությամբ, տխուր, առանց որևէ շքեղության, կարեկցություն հայցող մեղադրյալի նման: Նրա հետևից մտավ հունական տարագով, միլեթյան կապա¹⁴⁴ հագած Դիոնիսոսը՝ ձեռքում բռնած նամակները: Երբ նրանց ներս բերին, նրանք գլուխ տվեցին: Դրանից հետո արքան հրամայեց հրապարակել նամակները՝ Փառնակի նամակը և այն, որ ինքը՝ արքան է գրել նրան որպես պատասխան, որպեսզի դատավիճող կողմերը իմանան, թե իրենց դեմ հորժն ինչպես է հարուցվել: Արքայի նամակը հրապարակելուն պես հիացմունքի բացականչություններ լսվեցին՝ ի նշան արքայի բարոյական բարձրության և նրա արդարության: Այնուհետև, լռությունից հետո, որպես մեղադրող առաջինը պիտի խոսեր Դիոնիսոսը, և բոլորի հայացքները սևեռված էր նրա վրա: Բայց հայտարարությամբ հանդես եկավ Միհրդատը:

— Տիրակալ, ես չեմ կանխագուշակում իմ պաշտպանական ճառը և գիտեմ կարգուկանոնը: Բայց հարկ է, որ նախքան վեճն սկսելը դատարանում լինեն նրանք, որոնց ներկայությունն անհրաժեշտ է: Որտե՞ղ է այն կինը, որի պատճառով տեղի է ունենում դատը: Զո նամակում դու անհրաժեշտ ես համարել նրա ներկայությունը դատին, հայտնելով, որ նա էլ գա, և նա եկել է: Թող Դիոնիսոսը մեզնից չթաքցնի այս ամբողջ գործի ամենագլխավոր մեղավորին:

Դիոնիսոսը պատասխանեց.

— Դա էլ հատուկ է գայթակղեցնողին: Օտար կնոջը, ամուսնու կամքին հակառակ, դուրս բերել ժողովրդի մեջ, չնայած նրան, որ այդ կինը ոչ մեղադրող է, ոչ էլ մեղադրյալ: Եթե նա գայթակղվեր՝ որպես մեղադրյալ կլիներ դատարանում: Այս դեպքում դու հանցավոր մտադրություն ես ունեցել առանց նրա գիտության, և իմ կինն այստեղ ինձ պետք չէ ոչ որպես վկա, ոչ էլ՝ որպես պաշտպան: Մի՞թե անհրաժեշտ է, որ դատարանին ներկայանա նա, որը դատավեճի հետ ոչ մի առնչություն չունի:

Դատական տեսակետից Դիոնիսոսի խոսքերը ճիշտ էին, սակայն դրանք ոչ ոքի չհամոզեցին, որովհետև բոլորը սաստիկ ցանկանում էին տեսնել Կալիրոյին, և, քանի որ Կալիրոյին կանչելը մնում էր արքայի խղճին, ապա արքային շրջապատողները նրան կանչելու համար առաջ քաշեցին մի պատրվակ՝ այն նամակը, որի մեջ արքան հրավիրում էր Կալիրոյին որպես դատի համար անհրաժեշտ անձ: Ոմանք ասացին.

— Ի՞նչ անմտություն է, Իոնիայից գալ և արդեն լինել Բաբելոնում ու չներկայանալ դատարանի՞ն:

Բայց երբ որոշվեց, որ դատին պետք է ներկա լինի նաև Կալիրոյը, Դիոնիսոսը վախեցավ Կալիրոյին դատարան բերել հանկարծակի, առանց նախազգուշացման, որովհետև մինչ այդ նա Կալիրոյին ոչինչ չէր ասել և իրենց Բաբելոն ճանապարհորդելու պատճառը միշտ թաքցրել էր նրանից: Բնական կլիներ, որ կինը իրեն խաբելու համար, որպես ի լուրմն, կբարկանար Դիոնիսոսի վրա: Այդ պատճառով նա դատը հետաձգեց հաջորդ օրվան:

5

Այդ ժամանակ ժողովը դրանով էլ ավարտվեց:

Դիոնիսոսը, խելացի և կրթված մարդ լինելով, տուն վերադառնալով ամեն ինչի մասին կնոջը պատմեց ուրախ ու հանգիստ, տվյալ դեպքում բավական համոզիչ խոսքերով: Ճիշտ է, նրա պատմածը լսելով, Կալիրոյը չկարողացավ զսպել իր արցունքները և դառնորեն լաց եղավ, երբ Դիոնիսոսը տվեց Զերեյի անունը: Նա զայրացավ նաև դատարանի վրա:

— Միայն այդ մեկն էր պակասում իմ թշվառություններին,— այդպես ասաց նա.— կանգնել դատի առաջ: Ե՛վ մեռա, և՛ թաղվեցի, և՛ գողացվեցի գերեզմանից, և՛ ստրկության տրվեցի, ահավասիկ այժմ էլ դատում են ինձ: Ճակատագիր, քեզ համար քի՞չ էր, որ ինձ կծու զրպարտեցիր Զերեյի առջև: Դիոնիսոսին էլ ստիպեցիր, որ նա կասկածի ինձ շնանալու մեջ: Այն ժամանակ դու ինձ գերեզման ուղարկեցիր զրպարտելով և այժմ էլ զրպարտությամբ ես ուղեկցում ինձ դեպի արքայի դատը: Խաղճ ու ասելիքի առարկա դարձա ես Ասիայում ու Եվրոպայում: Ի՞նչ աչքով պիտի ես նայեմ դատավորին: Ով գիտե, թե ինչ խոսք պիտի լսեմ: Բնությունն ինձ նենգ գեղեցկություն է տվել միայն նրա համար, որ հագենա ինձ վրա բարդած զրպարտություններով: Դատում են Զերմոկրատեսի դստերը, և հայրը չի կարող պաշտպանել դստերը: Ուրիշները դատարան են մտնում ցանկանալով դուր գալ և համակրանք առաջացնել իրենց հանդեպ, ես էլ վախճնում եմ, թե ինչ կլինի, եթե դատավորին նայեմ:

Նման տրտուկներով նա անհանգիստ անցկացրեց այդ ամբողջ օրը: Բայց ավելի շատ, քան Կալիրոյը, անհանգստացած էր Դիոնիսոսը: Իսկ երբ գիշերը վրա հասավ, Կալիրոյը երազում տեսավ իրեն Սիրակուզայում աղջիկ ժամանակ. իբր թե նա մտնում է Աֆրոդիտեի սրբավայրը, և իբր այնտեղից վերադառնալիս հանդիպում է Զերեյին: Նա երազում տեսավ նաև իր հարսանիքի օրը. պսակ կրող քաղաքացիներին և իրեն փեսայի տունն ուղեկցող հորն ու մորը: Կալիրոյը ցանկացավ համբուրել Զերեյին, և այդ ժամանակ էլ արթնացավ:

Կանչելով Պլանգոնային (Դիոնիսոսը վաղ էր արթնացել, որպեսզի հասցնի նախապատրաստվել դատական նիստին) Կալիրոյը պատմեց նրան իր երազը, և Պլանգոնան ասաց.

— Հանգիստ եղիր, տիրուհի: Ուրախացիր: Դու լավ երազ ես տեսել: Զեզկից կթոթափվի ամեն տեսակ հոգս: Աթրոն ժամանակ էլ ամեն ինչ կպատահի այնպես, ինչպես դու տեսար երազում: Գնա արքայական դատարան այնպես, թե իբր Աֆրոդիտեի տաճարն ես գնում: Հոգա քո արտաքինի մասին և վերագտիր քո պսակօրվա գեղեցկությունը:

Այդպես էր խոսում Պլանգոնան, հագցնելով և զարդարելով Կալիրոյին, որն ականա դարձել էր կենսուրախ, ասես նախազգալով, թե ինչ է սպասվում իրեն:

Վաղ առավոտվանից պալատի առջև հրմշտկոց էր, և ժողովուրդը լցվել էր բոլոր փողոցները մինչև պալատի պարիսպները: Բոլորը վազում էին՝ առերևույթ, որպեսզի լսեն դատը, իսկ իրականում որպեսզի տեսնեն Կալիրոյին: Եվ Կալիրոյը այդ ժամանակ իր գեղեցկությամբ այնքան շատ էր գերազանցում մնացած բոլոր կանանց, որ թվում էր, թե գերազանցում է ինքն իրեն: Նա դատարան մտավ այնպես, ինչպես, աստվածային բանաստեղծի¹⁴⁵ արտահայտությամբ, Տրոյայի ծերունիների առջև կանգնել էր Զեդինեն՝

Այնտեղ էին, Պերիամի հետ, Պանթոպոսը, Լամին ու Թիմետոս¹⁴⁶:

Նրա երևալը դիմավորեցին հիացմունքով ու լռությամբ:

Նրանք տեսչում էին քնել Պենելոպի մահճակալի մեջ¹⁴⁷:

Եվ եթե հարկ լիներ, որ Միհրդատը խոսեր առաջինը, ապա նա կհամրանար: Զանգի նրա սիրո վերջին նոր հարված էր հասել, որ ավելի էր այրում, քան առաջվա կիրքը:

Դիոնիսոսն իր ճառն սկսեց այսպես.

— Արքա, ես շնորհակալ եմ այն պատվի համար, որ ցուցանում ես դու ինչպես իմ, այնպես էլ ընդհանրապես ամուսնական կապի նշանակության հանդեպ: Դու անտարբեր չանցար այն չարամտության կողքով, որն իշխանավորի կողմից ուղղված էր մասնավոր մարդու դեմ, այլ կանչեցիր ինձ, որպեսզի ինձ համար դատարանով պատժի ենթարկես անառակությունն ու կամայականությունը և դրանից ետ պահես մյուսներին: Տվյալ հանցանքը կատարած անձնավորությունն է՛լ ավելի մեծ պատժի է արժանացնում իրեն

այն բանի համար, քանզի Միհրդատը չարամտություն է նյութել իմ դեմ ոչ միայն ինձ թշնամի չլինելով, այլ համարվում էր նույնիսկ իմ հյուրն ու բարեկամը, և նա ոտնձգություն է կատարել ոչ թե իմ որևէ ունեցվածքի դեմ, այլ այն բանի դեմ, որն ավելի թանկ է ինձ համար, քան իմ մարմինն ու հոգին, իմ կնոջ դեմ: Եվ դա արել է նա, որը պարտավոր էր, եթե ոչ ինձ՝ իր բարեկամի համար, ապա թերևս քեզ համար, արքա, պաշտպանել ինձ ցանկացած վիրավորանքից, որովհետև դու նրան բարձրագույն իշխանություն ես հանձնել: Իրեն ցուցաբերելով որպես դրան անարժան, նա խայտառակել է այդ իշխանությունը, կամ, ավելի ճիշտ, նա դավաճանել է նրան, ով վստահել է այդ իշխանությունը: Ես ինքս լավ գիտեմ ինչպես Միհրդատի մեքենայությունների, այնպես էլ նրա ուժի և դատաքննությանը պատրաստվելու մասին, և հասկանում եմ, որ ես ու նա նույն վիճակում չենք գտնվում: Այնուամենայնիվ, արքա, ես իմ հույսը դնում եմ քո արդարամտության, ամուսնական կապի նշանակության վրա և բոլորի համար հավասարապես պարտադիր օրենքի վրա, որ պահպանում ես դու: Չէ որ եթե դու Միհրդատին ներեիր, ապա անհամեմատ ավելի լավ կլիներ նրան ամենևին էլ դատի չենթարկել, որովհետև առաջ մարդիկ վախենում էին, որ անառակության համար եթե գործը դատարանին հասնի, ապա իրենց պատիժ է սպասվում: Եվ այժմվանից, եթե Միհրդատը չպատժվի քո կողմից, մարդիկ կդադարեն հարգել դատարանը: Իմ գործը պարզ է, և նրա մասին ես կպատմեմ կարճ: Ես այստեղ ներկա գտնվող Կալիրոյի ամուսինն եմ, իսկ հիմա՝ նաև նրանից ծնված երեխայի հայրը: Ես նրան կնության եմ առել ոչ աղջիկ ժամանակ, այլ մի ուրիշ մարդու հետ ամուսնանալուց հետո, մի մարդու, որի անունը Քերեյ էր, որն արդեն վաղուց է մեռել, և որի համար ես ու Կալիրոյը նույնիսկ հուշադամբան ենք կանգնեցրել: Միհրդատը, այդ ժամանակ գտնվելով Միլեթում և հյուրի իրավունքով տեսնելով կնոջս, հետագայում կատարեց մի հանցանք, որ անվայել էր բարեկամին և այն բարոյական, օրինավոր մարդուն, ինչպիսին ցանկանում ես դու տեսնել ամեն մեկին, ում քաղաքներ ես վստահում: Նա դրսևորեց իրեն որպես անառակ ու բռնավոր մարդ: Գիտենալով, որ այդ կինը բարոյական է և կապված է իր ամուսնուն, և որոշելով, որ ոչ խոսքով, ոչ էլ դրամով չի կարող գայթակղեցնել նրան, Միհրդատը դիմեց խարդախ մի մտադրության, որը, ինչպես նա ենթադրում էր, կընդունվեր լիակատար վստահությամբ: Գործն այնպես պատկերացնելով, թե իբր ողջ է Քերեյը՝ Կալիրոյի առաջին ամուսինը, նա Քերեյի անունից հորինել է մի նամակ և իր ստրուկների միջոցով ուղարկել Կալիրոյին: Բայց ճակատագիրը, ի դեմս քեզ, արժանավոր արքա է կարգել, իսկ մնացած աստվածների նախախնամությունը լույս աշխարհ է հանել նրա նամակը: Պրիենի ստրատեգ Բիանտը ինձ է ուղարկել նրա ստրուկներին, նամակների հետ միասին: Հանցանքի մեջ բռնելով Միհրդատին, ես այդ մասին էլ հայտնեցի Լիդիայի և Իոնիայի սատրապ Փառնակին, իսկ Փառնակը հաղորդեց քեզ: Քո կողմից քննության ենթարկվող գործի մասին ես իմ խոսքն ավարտեցի, և իմ արդար լինելու ապացույցները անհերքելի են: Չէ որ երկուսից մեկը պիտի լինի. կամ Քերեյը ողջ է, կամ Միհրդատը մերկացրել է իր անպարկեշտությունը: Եվ Միհրդատը նույնիսկ չի կարող հաստատել և այն, թե իբր ինքը չգիտեր, որ Քերեյը մեռած է, քանի որ ես ու կինս Քերեյի համար գերեզման ենք կառուցել նրա ներկայությամբ, և նա մեզ հետ մասնակցել է ողբին: Բայց Միհրդատը, երբ նա պատրաստվում է անառակություն անել, կենդանացնում է նաև մեռածներին: Ես իմ խոսքը վերջացնում եմ հրապարակելով այն նամակը, որն այդ մարդը իր ստրուկների միջոցով Կարիայից ուղարկել է Միլեթ: Վերցրու և կարդա¹⁴⁸: «Ես, Քերեյս, ողջ եմ...»: Թող նախ Միհրդատը թա մեկնաբանի, և այն ժամանակ դատարանը կարդարացնի նրան: Արքա, տես, թե այդ անպարկեշտի անամոթությունն ուր է հասել, որ մեղադրում է նույնիսկ մեռածին:

Դիոնիսոսի ճառը բորբոքեց լսողներին և անմիջապես ձայներ նվաճեց: Չայրացած արքան մռայլորեն ծանր հայացք նետեց Միհրդատի վրա:

Սակայն Միհրդատը, ամենևին չափաբեկվելով, ասաց.

— Խնդրում եմ, արքա, չէ որ դու և՛ արդարադատ ես, և՛ մարդասեր, մի մեղադրիր ինձ առաջուց, քանի դեռ չես լսել երկու կողմերի խոսքը, և թող խորամանկորեն իմ դեմ

սարքած կեղծ գրպարտության համար հույնն ավելի մեծ հավատ չներշնչի քեզ, քան ճշմարտությունը: Ես հասկանում եմ, որ այդ կնոջ գեղեցկությունը կշիռ է տալիս ինձ վրա ընկած կասկածանքին: Կալիբրոյին գայթակղեցնելու ցանկությունը ոչ ոքի անսովոր չի թվա: Միաժամանակ ես իմ ամբողջ անցած կյանքն ապրել եմ բարոյական, այժմ էլ առաջին անգամ եմ ենթարկվում այդպիսի գրպարտության: Բայց եթե նույնիսկ ես իրոք լինեի մի անսանձ անառակ, ապա իմ հանադեպ հենց միայն քո վստահությունը՝ այդքան բազում քաղաքների մասին հոգ տանելու հանձնարարությունը, պետք է որ ինձ ուղղեր: Մի՞թե կգտնվի մի այնպիսի անմիտ մարդ, որն այդքան մեծ շնորհը մի վայրկյան փոխեր հաճույքով, և այն էլ՝ ամոթալի հաճույքով: Ի դեպ, եթե իմ խիղճը մաքուր չլիներ, ես հնարավորություն ունեի նույնիսկ այդ գործը հեռացնել ինձնից, Դիոնիսոսն ինձ մեղադրում է ոչ թե օրինական ամուսնությամբ կապված կնոջ պատրվակով, այլ այնպիսի կնոջ, որը վաճառվել է և որին գնել է ինքը: Շնանալու մասին օրենքը ստրկուհիների վրա չի տարածվում: Թող Դիոնիսոսը նախ քեզ տեղեկանք ներկայացնի այդ կնոջն ազատություն տալու մասին, և թող միայն այդ դեպքում նա խոսի ամուսնության մասին: Դու համարձակվում ես¹⁴⁹ քո կինն անվանել Նրան, որին ավագակ Ֆերոնը գողացել է գերեզմանից և քեզ վաճառել մեկ տաղանդո՞վ: «Բայց», Դիոնիսոսն ինձ այսպես է առարկում, «Նրան գնել եմ այն ժամանակ, երբ նա ազատ էր»: Այդ դեպքում, նշանակում է, դու ես Նրան ստրկացրել: Այժմ, սակայն, ես կպաշտպանեմ ինձ քո՝ որպես Կալիբրոյի ամուսնու առջև: Չնայած ամուսնություն համարի, իսկ տրված արժեքը՝ օժիտ: Այսօր սիրակուզցի կնոջը միլեթցի կհամարենք: Գիտցիր, տիրակալ, որ ես չեմ վիրավորել Դիոնիսոսին ոչ որպես ամուսնու, ոչ էլ որպես Կալիբրոյի տիրոջ: Նախ նա մեղադրում է ինձ ոչ թե կատարված, այլ այնպիսի անառակության համար, որը կարող էր միայն կատարվել, և, ի վիճակի չլիներով գործի մասին որևէ բան ասել, դատարկ գրություններ է կարդում մեզ: Իսկ օրենքը պատժում է միայն գործի համար: Դու¹⁵⁰ նամակ ես ներկայացնում, բայց ես կարող եմ պատասխանել քեզ: Ես այդ նամակը չեմ գրել, ձեռագիրն իմը չէ: Կալիբրոյին որոնում է Զերեյը: Զերեյին էլ մեղադրիր շնանալու մեջ: «Այո», կառարկի ինձ Դիոնիսոսը, «բայց Զերեյը մեռած է, և դու կնոջս գայթակղեցրել ես մեռածի անունով»: Դիոնիսոս, դու ինձ դրդում ես այնպիսի քայլի, որն ամենևին էլ օգտավետ չի լինելու քեզ: Ես վկայում եմ, որ քո բարեկամն եմ և քո հյուրը: Ետ վերցրու քո մեղադրանքը: Դա լավ կլինի քեզ համար: Խնդիր արքային, որ քո բողոքը անհետևանք թողնի: Նոր երգ երգիր. «Միհրդատը ինձ ոչնչով չի վիրավորել, ես իզուր եմ բողոքել»: Եթե շարունակես պնդել քոնք, կզոջաս, ինքդ քո դեմ ձայն կտաս: Նախազգուշացնում եմ քեզ, դու կկորցնես Կալիբրոյին: Արքայի աչքում շնացող կերևամ ոչ թե ես, այլ՝ դու:

Այս ասելով Միհրդատը լռեց, և բոլորի հայացքներն ուղղվեցին Դիոնիսոսի վրա: Յուրաքանչյուրը ցանկանում էր իմանալ, թե իրեն տրված երկու հնարավորություններից նա որին նախապատվություն կտա: Կնահանջի՞ մեղադրելուց, թե հաստատականորեն կպնդի իր ասածը: Եվ չնայած ոչ ոք չգիտեր Միհրդատի հանելուկային խոսքերի իմաստը, բոլորը, սակայն, ենթադրում էին, որ Դիոնիսոսի համար պարզ էր: Բայց այդ խոսքերի իմաստը չհասկացավ նաև Դիոնիսոսը, որի մտքով չէր անցնի, թե Զերեյը ողջ է:

— Խոսիր ինչ որ ուզում ես, — ասաց Դիոնիսոսը, — միևնույն է, ոչ մի տեսակ խորամանկությամբ և վստահություն ներշնչող ոչ մի սպառնալիքով դու ինձ չես խաբի: Դիոնիսոսը երբեք գրպարտիչ չի լինի:

Եվ ահա այստեղ, Միհրդատը մարգարեի պես իր ձայնը բարձրացնելով, բացականչեց.

— Երկնային և ստորգետնյա վեհապանձ աստվածներ, օգնեցե՛ք ազնիվ մարդուն, որը հաճախ է երկրպագել ձեզ և զոհաբերություններ արել ձեզ համար: Իմ բարեպաշտության համար վարձահատույց եղեք հիմա, երբ ինձ վրա գրպարտություն են բարդում: Թեկուզև այս դատի համար պարտք տվեք ինձ Զերեյին: Ինձ մոտ եկ, բարի ոգի: Զեզ քո Կալիբրոյն է կանչում: Կանգնիր իմ ու Դիոնիսոսի միջև, արքային ասա, թե մեզնից ով է շնացողը:

Նա դեռ խոսում էր, երբ նրա մոտ դուրս եկավ (նախապես այդպես էին պայմանավորվել) ինքը՝ Զերեյը:

— Զերեյ, դու ո՞րք ես,— տեսնելով նրան, բացականչեց Կալիրոյը և պիտի նետվեր դեպի նա, բայց Դիոնիսոսը, կանգնելով Զերեյի ու Կալիրոյի միջև, պահեց նրան, խանգարելով նրանց գրկախառնությունը:

Ո՞վ կարող էր ճշգրտորեն նկարագրել դատի այդ տեսարանը: Ո՞ր բանաստեղծը կարող էր բեմ դուրս բերել այդքան անսովոր թեմա: Թվում էր, թե գտնվում ես մի թատրոնում, որ լցվել էր բազմատեսակ զգացումներով, որտեղ ամեն ինչ միահյուսվել էր իրար. արցունքներ ու ուրախություն, խղճահարություն և զարմանք, կասկածանք և հույս: Փառաբանում էին Զերեյի երջանկությունը, ուրախացել էին Միհրդատի համար, կարեկցում էին Դիոնիսոսին, տարակուսում էին Կալիրոյի համար:

Խորապես հուզված Կալիրոյը կանգնել էր, լայն բացված աչքերով նայելով միայն Զերեյին, որի տեղը, ինձ թվում էր, կցանկանար լինել ինքը արքան:

Սիրո բոլոր մրցակիցները սովոր են անմիջապես կռվի մտնել միմյանց հետ, իսկ այստեղ մրցակիցներին բորբոքում էր նաև իրենց աչքերի առջև գտնվող հաղթական մրցանակի ներկայությունը, այնպես որ եթե չլիներ հարգանքը արքայի հանդեպ, նրանք իրար դեմ գործի կդնեին նաև ձեռքերը: Գործը սահմանափակվեց խոսքերով: Զերեյն ասաց.

— Ես նրա առաջին ամուսինն եմ:

— Իսկ ես ավելի համավարիմ ամուսին եմ,— առարկեց Դիոնիսոսը:

— Բայց ես ապահարզան չեմ տվել կնոջս:

— Բայց դո՛ւ նրան թաղել ես:

— Տույց տուր ապահարզանը:

— Ես քեզ ցույց կտամ նրա գերեզմանը:

— Կալիրոյին ինձ կնության է տվել նրա հայրը:

— Իսկ ինձ նա ինքն է կնության եկել:

— Դո՛ւ արժանի չես Հերմոկրատեսի դստերը:

— Դո՛ւ ավելի քիչ արժանիք ունես, Միհրդատի շղթայակապ:

— Ես ետ եմ պահանջում Կալիրոյին:

— Իսկ է՛ս նրան բաց չեմ թողնում:

— Դու տիրացել ես ուրիշի կնոջը:

— Իսկ դո՛ւ քո կնոջն ես սպանել:

— Շնացող:

— Մարդասպան:

Իրար հետ այդպես մարտնչեցին նրանք, մնացածները նրանց լսում էին բավականությամբ:

Կալիրոյը կանգնել, արտասովում էր, աչքերը ներքև խոնարհած, Զերեյի հանդեպ տածելով սիրո զգացում, իսկ Դիոնիսոսի հանդեպ՝ հարգանք: Եվ բոլորին դուրս հանելով, արքան իր մերձավորների հետ նստեց խորհրդի, արդեն ոչ թե իրեն փայլուն պաշտպանած Միհրդատի, այլ լուծելու այն հարցը, թե պե՞տք է արդյոք դատական նոր նիստ անել այդ կնոջ համար: Խորհրդի մասնակիցների մի մասը գտավ, որ այդ գործը արքայական դատարանին չի վերաբերում:

— Միհրդատին ներկայացված մեղադրանքը դու լսեցիր, որովհետև նա սատրապ է,— արքային ասացին նրանք,— մնացածները մասնավոր անձեր են:

Սակայն մեծամասնությունը հակառակ խորհուրդ տվեց, նկատի առնելով այն, որ այդ կնոջ հայրը քիչ օգուտ չի տվել արքունիքին, ինչպես նաև այն հանգամանքը, որ արքան պիտի դատ անի այս դեպքում ոչ թե նոր գործի համար, այլ այնպիսի գործի, որը կդառնա քննված գործի մի տեսակ շարունակությունը: Այս խորհուրդը տալով, նրանք չցանկացան ըմբռնել նրա իսկական պատճառը. Կալիրոյի գեղեցկությունից նրան նայողները ի վիճակի չէին կտրել իրենց աչքերը:

Եվ ահա, բոլոր նրանց, ում հեռացրին ժողովից, ետ կանչելով, արքան հայտարարեց.

— Միհրդատին ես բաց եմ թողնում արդարացված: Վաղն ինձնից ընծաներ ստանալուց հետո թող նա գնա իր սատրապությունը: Թող Զերեյն ու Դիոնիսոսն էլ ասեն, թե իրենցից յուրաքանչյուրը ինչ արդար խոսք կարող է ասել այդ կնոջ մասին: Զանգի

պետք է հոգատարություն ցուցաբերել Հերմոկրատեսի դստեր հանդեպ: Հերմոկրատեսը ջախջախել է աթենացիներին, որոնք թշնամի էին և՛ ինձ, և՛ պարսիկներին:

Լսելով այդ որոշումը, Միհրդատը գլուխ տվեց: Մնացածները տարակուսանքի մեջ էին, և արքան, նկատելով նրանց շփոթմունքը, ասաց.

— Ես ձեզ չեմ շտապեցնում և հնարավորություն եմ տալիս, որ դուք դատի ներկայանաք նախապատրաստված: Ես ձեզ հինգ օր ժամանակ եմ տալիս: Առայժմ Կալիրոյի մասին կհոգա Ստատիրան՝ իմ կինը: Ճիշտ չէր լինի, եթե Կալիրոյը, որը պետք է դատավիճի ամուսնու համար, դատարան գա ամուսնու հետ:

Դատարանից ամենքը դուրս եկան տխուր: Ուրախացել էր միայն Միհրդատը: Ընծաներ ստանալով և մի գիշեր էլ Բաբելոնում անցկացնելով, նա առավոտյան առաջվանից էլ փայլուն դեմքով շարժվեց դեպի Կարիա:

9

Ներքինին վերցրեց Կալիրոյին և առանց որևէ նախազգուշացման տարավ նրան թագուհու մոտ: Երբ արքան որևէ մեկին որևէ տեղ է ուղարկում, այդ մասին ոչ ոքի չի զեկուցում:

Ստատիրան, իր առջև հանկարծակի տեսնելով Կալիրոյին, դուրս թռավ մահճից, պատկերացնելով, թե իր մոտ հայտնվել է Աֆրոդիտեն, աստվածուհին, որին իզուր չէ որ նա երկրպագում է առանձին սիրով: Բայց Կալիրոյը գլուխ տվեց նրան, իսկ ներքինին, որ նկատել էր Ստատիրայի երկյուղը, հայտարարեց.

— Սա Կալիրոյն է: Նրան քեզ մոտ է ուղարկել արքան, մինչև դատի օրը նա կմնա քո խնամքի տակ:

Այդ խոսքերն ուրախացրին Ստատիրային: Պատվավոր հանձնարարությունն ստիպեց նրան դեն նետել կանացի խանդը և Կալիրոյին վերաբերվել մեծ բարյացակամությամբ: Ստատիրան հպարտություն էր զգում իրեն վստահված գործի համար և, բռնելով Կալիրոյի ձեռքը, նրան ասաց.

— Հանգստացի՛ր, կին, և մի՛ լա: Արքան բարի մարդ է: Դու կստանաս այն ամուսինը, որին կցանկանաս: Դատից հետո դու ավելի մեծ պատվով կամուսնանաս: Իսկ հիմա գնա, հանգստացի՛ր, ես տեսնում եմ, թե դու ինչքան հոգնած ու հուզված ես:

Ստատիրայի առաջարկը հաճո էր Կալիրոյին: Նա իրոք խաղաղ անկյուն էր փափագում: Եվ ահա, երբ նրան պառկեցրին մահճին և հանգիստ թողեցին, նա ձեռքը տարավ աչքերին և հարցրեց նրանց.

— Դուք ինչպե՞ս տեսաք Քերեյին: Նա իմ Քերեյն էր, թե այստեղ էլ եմ ես մոլորվում: Գուցե նա անդրշիրիմյան մի ուրվակա՞ն էր, որին Միհրդատը կանչեց դատի համար: Չէ՞ որ հավատացնում են, պարսիկների մեջ կախարդներ կան: Բայց նա խոսեց, և նրա խոսքերից երևում էր, որ իրեն ամեն ինչ հայտնի է: Բայց նա ինչպե՞ս ուժ գտավ իր մեջ, որ չնետվեց իմ գիրկը: Մենք բաժանվեցինք նույնիսկ չհամբուրելով իրար:

Մինչև նա խորհրդածում էր այդպես, լսվեցին ոտնաձայներ ու կանացի ձայն: Կանայք թագուհու մոտ էին վազում, հուսալով, որ այժմ նրանք լիակատար հնարավորություն կունենան տեսնելու Կալիրոյին: Բայց Ստատիրան նրանց ասաց.

— Հանգիստ թողնե՛ք նրան: Նա իրեն վատ է զգում, չէ՞ որ մեր տրամադրության տակ չորս օր կա, որի ընթացքում մենք կարող ենք և՛ տեսնել նրան, և՛ լսել, և՛ զրուցել հետը:

Կանայք ցրվեցին դառնացած, իսկ հաջորդ օրը կրկին վերադարձան առավոտվանից, և դա կրկնվեց բոլոր հաջորդ օրերին, այնպես որ արքունիքն ավելի բազմամարդ էր դարձել: Ի դեպ, ինքը՝ արքան էլ էր սկսել հաճախակի այցի գալ կանաց դասին, իհարկե, իբր թեև այցի է գալիս Ստատիրային: Կալիրոյին թանկագին ընծաներ էին ուղարկում, բայց ոչ ոքից նա ոչինչ չէր ընդունում: Նա մշտապես հագնված էր այնպես, որ պատշաճում էր դժբախտության մեջ գտնվող կնոջը՝ սև շրջագգեստ, առանց որևէ թանկարժեք զարդարանքի: Եվ դա նրան ավելի գեղեցիկ էր դարձնում: Իսկ արքայի այն հարցին, թե երկուսից նա որին է նախընտրում ունենալ որպես ամուսին, Կալիրոյը պատասխանելու փոխարեն արտասովեց:

Այդպես էր ապրում Կալիթոյը: Իսկ Դիոնիսոսը, որ բնականից էլ տոկուն էր և միշտ հոգում էր ինքնադաստիարակման մասին, փորձում էր իր վիճակը տանել հաստատակամորեն, չնայած այն բանին, որ անսովոր դեպքը հեշտությամբ կարող էր հավասարակշռությունից բոլորովին հանել նաև ամենաքաջասիրտ մարդուն: Նա այժմ սիրո ավելի շատ զգացում էր ապրում, քան Միլեթում, որովհետև սկզբում ցանկասիրությունից նա սիրահարվեց միայն Կալիթոյի գեղեցկությանը, իսկ հիմա սերը բոցավառվում էր և ուրիշ կողմերով՝ և՛ մտերմությամբ, և՛ հայրության խնդությամբ, և՛ երախտագիտության զգացումով, և՛ խանդով, իսկ ամենից շատ՝ հանկարծակի պատահածով:

10

Այդ պատճառով էլ հաճախ նա հանկարծակի բացականչում էր.

— Սա ի՞նչ մեր օրերի վերակենդանացած Պրոթեզիլափոս է¹⁵¹: Ստորգետնյա ո՞ր աստծու առջև եմ մեղք գործել, որ դարձել եմ մրցակիցը մի մեռած մարդու, որի գերեզմանի տերը ես եմ: Աֆրոդիտե, տիրակալուհի, դու բռնեցիր ինձ դարանում, դու, որի պատվին ես իմ կալվածքում տաճար եմ բարձրացրել և որի համար այնքան հաճախ եմ զոհաբերություններ անում: Դու ինչո՞ւ ինձ ցույց տվեցիր Կալիթոյին, եթե նրան չպիտի պահպանեիր ինձ համար: Դու ինչո՞ւ ինձ հայր դարձրիր, եթե ես նույնիսկ ամուսին չէի:

Լաց լինելով, նա գրկեց իր տղային և ասաց.

— Խեղճ երեխա: Դու երջանիկ լինելու համար չէ, ինչպես սկզբում դա թվում էր ինձ, որ ծնվել ես, այլ ծնվել ես, ինչպես տեսնում եմ հիմա, անժամանակ: Իմ անհաջող սիրուց որպես հիշատակ դու ժառանգություն մնացիր քո մորից: Դու, իհարկե, դեռ մանկիկ ես, բայց և այնպես քո զգացումներից լիովին ծածկված չէ այն, ինչ քո հորը դժբախտ է դարձնում: Բարի չէր մեր ճամփորդությունը: Մենք չպետք է թողնեինք Միլեթը: Բաբելոնը կործանեց մեզ: Առաջին դատավեճը տանուկ տվի: Միհրդատն ինձ մեղադրեց: Բայց ավելի շատ վախենում եմ երկրորդ դատից: Զանգի այդ դատը չնայած ինձ համար այնքան էլ վտանգավոր չէ, քան առաջինը, բայց դատավեճի մեջ մտնելը հուսահատեցնում է ինձ: Իմ սեփական կնոջ համար ես պետք է վիճեմ ուրիշի հետ: Եվ կնոջս խլեցին ինձնից մինչև գործի քննությունը: Բայց ի՞նչն է ավելի ծանր: Չգիտեմ, թե Կալիթոյը մեզնից ում կնախընտրի: Բայց դու, փոքրիկս, դու դա կարող ես իմանալ մորիցդ: Հենց հիմա գնա նրա մոտ և խնդրիր, որ գա հորդ մոտ: Լաց եղիր, համբուրիր նրան և ասա. «Մայրիկ, հայրս սիրում է քեզ»: Միայն ոչ մի բանի համար նրան չհանդիմանես: Դու ինձ ինչ-որ բա՞ն ես ասում, դաստիարակ¹⁵²: Ոչ ոք մեզ չի թողնի արքունիք մտնե՞լ: Օ՛, դաժան բռնակալություն: Փակում են դռները որդու առջև, որին մոր մոտ է ուղարկում հայրը:

Այդպես, ընդհուպ մինչև դատի օրը, Դիոնիսոսը սիրո ու դատողության կռիվ մղեց, իսկ Զերեյը համակված էր անսփոփ վշտով: Նա Պոլիքարմոսին հրամայեց, որ ուղեկցի Միհրդատին որպես իրենց՝ երկուսի ընդհանուր պաշտպանի, ինքն էլ հիվանդ ձևացավ: Եվ մնալով միայնակ, նա օդակ պատրաստեց և, որոշելով զցել վիզը, խոսեց.

— Ավելի լավ կլիներ մեռնելի, երբ բարձրացա խաչին և այնտեղ Կարիայում էլ կեղծ մեղադրանքով կգամվելի որպես շղթայակապ: Չէ որ այն ժամանակ ես կյանքից կբաժանվեի այն խաբված հավատով, թե Կալիթոյը սիրում է ինձ, իսկ հիմա ես կործանում եմ ոչ միայն իմ կյանքը, այլև այն միսթարանքը, որ մահն է տալիս: Կալիթոյը տեսավ ինձ և չմոտեցավ, ինձ չհամբուրեց: Իմ ներկայությամբ նա ամաչեց ուրիշից: Թող նա այլևս ստիպված չլինի աչքերը խոնարհել: Ես վերջ կտամ իմ կյանքին մինչև դատը: Ես չեմ սպասի մինչև նրա ամոթալի ավարտը: Գիտեմ, որ Դիոնիսոսի համար ես թույլ հակառակորդ եմ, ես օտարերկրացի եմ, աղքատ, արդեն կողմնակի մարդ: Զեք, կնիկ, երջանիկ կյանք եմ ցանկանում: Զեք իմ կինն եմ համարում, չնայած դու ուրիշին ես սիրում: Իսկ ես հեռանում եմ քեզնից և քո ամուսնական կյանքում չեմ ձանձրացնի քեզ: Ապրիր հարստության, լիության մեջ և վայելիր Իոնիայի բարիքները: Սիրիր ում ուզում ես: Բայց հիմա, երբ Զերեյը իսկապես պիտի մեռնի, աղաչում եմ քեզ, Կալիթոյ, կատարիր վերջին խնդրանքս: Իմ մահից հետո մոտեցիր դիակիս և, եթե կարող ես, լաց եղիր նրա վրա: Ամմահությունից էլ դա թանկ կլինի ինձ համար: Խոնարհվելով քարի առջև¹⁵³, ասա. և ամուսինս, և երեխաս¹⁵⁴: «Տեսնում եմ, ասա, Զերեյ, հիմա դու իսկապես մահացել ես,

հիմա դու մեռել ես: Իսկ ես պատրաստվում էի արքայական դատարանում քեզ ընտրել որպես ամուսին»: Ես կլսեմ դա, կնիկ, և գուցե հավատամ: Դրանով դու ինձ փառքի կարծանացնես ստորգետնյա աստվածների մոտ:

*Եթե այնտեղ, տանն Չադեսի, մեռյալները անուշ են միշտ,
ես այնտեղ իսկ միշտ պիտ հիշեմ սիրականքեր ընկերոջն իմ¹⁵⁵:*

Իր վշտի մեջ նա համբուրեց պարանի օղակը և, դառնալով այդ օղակին, ասաց.

— Դու օղակ, իմ մխիթարանքն ես, դու իմ պաշտպանն ես: Զո շնորհիվ ես հաղթող եմ մնում: Դու ինձ ավելի ուժգին ես սիրում, քան Կալիրոյը:

Բայց հենց այն պահին, երբ Զերեյը իր վիզը գցեց օղակը, նրա առջև հայտնվեց ընկերը՝ Պոլիքարմոսը, որն այնուհետև այլևս չհեռացավ նրանից, որպես մի անմիտից, որովհետև նրա համոզմունքներն այլևս չէին ներգործում Զերեյի վրա:

Իսկ այդ ժամանակ էլ մոտենում էր դատի նշանակված օրը:

ԳԻՐԶ ՎԵՑԵՐՈՐԴ

1

Նախօրեին, երբ արքան պիտի որոշեր, թե Կալիրոյը Զերեյի՞ կինը պիտի լիներ, թե՝ Դիոնիսոսինը, ամբողջ Բաբելոնը հուզմունքի մեջ էր: Տներում, փողոցներում միմյանց հանդիպելիս՝ ամենքը խոսում էին միայն այդ մասին. «Վաղը Կալիրոյի ամուսնությունն է: Նրանցից ո՞վ կլինի երջանիկը»: Զաղաքում տարբեր կարծիքներ էին հայտնում: Զերեյի կողմնակիցները ասում էին. «Նա եղել է Կալիրոյի առաջին ամուսինը, նա ամուսնացել է նրա հետ, երբ Կալիրոյն աղքիկ էր: Նա սիրահարվել է նրան և նա էլ Զերեյին է սիրել: Կալիրոյի հայրը իր աղջկանը կնության է տվել նրան, և հայրենիքն է թաղել նրան: Զերեյը չի թողել նրան, ոչ էլ լքվել է նրա կողմից»:

«Ինչ վերաբերում է Դիոնիսոսին, ապա նա չի գայթակղել Կալիրոյին, բայց չի էլ ամուսնացել նրա հետ: Ավագակները Կալիրոյին վաճառել են նրան, իսկ ազատ կնոջը գնել չի կարելի»: Դիոնիսոսի կողմնակիցներն էլ դրան առարկում էին այսպես. «Դիոնիսոսը նրան դուրս է բերել ավագակաորջից, որտեղ նրան մահ էր սպառնում: Նրա փրկության համար նա վճարել է մեկ տաղանդ: Նախ փրկել է, իսկ հետո՝ ամուսնացել: Զերեյն էլ, ամուսնանալով նրա հետ, սպանել է նրան: Կալիրոյը պետք է հիշի այդ ամուսնությունը: Այդ վեճում Դիոնիսոսի ակնհայտ առավելությունն է նաև այն, որ նա երեխա ունի Կալիրոյից»:

Այդպես էին դատում տղամարդիկ: Իսկ կանայք ոչ միայն ճարտասանում էին, այլև խորհուրդներով դիմում էին Կալիրոյին, կարծես Կալիրոյը կանգնած է նրանց առջև. «Մի թող այն մարդուն, որի հետ դու ամուսնացել ես աղքիկ ժամանակ: Ընտրիր նրան, ով քո հայրենակիցն է, և այդ ժամանակ կտեսնես հորդ: Այնպես դու օտարության մեջ կապրես որպես արքայական»: Ոմանք էլ ասում էին. «Ընտրիր քո հովանավորին, նրան, ով փրկել է քեզ, և ոչ թե նրան, ով սպանել է քեզ: Իսկ ի՞նչ կպատահի, եթե Զերեյը հանկարծ նորից բարկանա: Այդ ժամանակ նորի՞ց գերեզման պիտի մտնես: Մի դավիր որդուդ: Չարգիր երեխայիդ հորը»:

Ահա թե ինչպիսի գրույցներ էին լսվում: Այնպես որ այդ ժամանակ Բաբելոնն ամբողջությամբ կարելի էր կոչել դատաստանատուն:

Վրա հասավ դատօրվան նախորդող գիշերը, և արքան ու թագուհին միատեսակ մտածումներով չէին հանգստանում իրենց անկողիններում: Թագուհին անհամբերությամբ էր սպասում առավոտվան, որպեսզի, որպես ծանր բեռ, ազատվի իրեն վստահված գրավից: Նրան ճնշում էր այդ կնոջ գեղեցկության նմանությունը իր գեղեցկությանը: Նրա մեջ կասկածանք էին առաջացրել նաև արքայի հաճախակի, անժամանակ, սիրալիր այցելությունները Կալիրոյին: Առաջ արքան հազվադեպ էր այցի գալիս կանանց խավին, իսկ Կալիրոյի հայտնվելուց հետո նա սկսեց մշտապես աչք ածել այնտեղ: Թագուհին հետևում էր նրանց նաև ընդհանուր գրույցների ժամանակ, երբ արքան գաղտուկ հայացքներ էր նետում Կալիրոյին: Թագուհին հետևում էր, երբ արքան

աչքերը հեռացնում էր հրաշալատեսիլից և անգսպոլթամբ նորից հայացքը վերադարձնում նրան: Ստատիրան խնդությամբ էր սպասում առավոտվան, իսկ արքան սպասում էր բոլորովին այլ կերպ: Նա չքնեց ամբողջ գիշերը:

*Պառկում էր մեր մեջքի վրա, մերթ էլ շուռ էր գալիս կողքին
Եվ կամ ընկնում բերանքսիվայր¹⁵⁶*

և մտովի ասում ինքն իրեն. «Սկսվում է դատը: Ինձ հատուկ շտապողականությամբ ես չափազանց կարճ ժամանակով հետաձգեցի դատը: Եվ այդպես, ի՞նչ պիտի անենք վաղ առավոտվանից: Վաղը Կալիբրոյը ընդմիջտ կգնա Միլեթ կամ Սիրակուզա: Իմ խեղճ աչքեր: Միայն մի ժամ է մնում, որ դուք հրապուրվեք այդ հրաշքով, որից հետո իմ ստրուկն ինձնից երջանիկ կլինի: Լավ մտածիր սիրտ իմ, թե ինչ պիտի ձեռնարկես դու: Անկեղծ եղիր: Դու ուրիշ խորհրդատու չունես¹⁵⁷: Սիրող սրտի խորհրդատուն ինքը՝ սերն է¹⁵⁸: Եվ այդպես նախ և առաջ պատասխանիր ինքդ քեզ, ո՞վ ես դու: Կալիբրոյի դատավորն ես, թե մի մարդ, որ սիրահարվել է նրան: Մի խաբիր քեզ, չնայած դու չես ընդունում դա: Դու սիրահարված ես: Դու ավելի պարզորոշ կմերկացնես քեզ, երբ դադարես նրան տեսնելուց: Ինչո՞ւ ես շտապում վիշտ պատճառել ինքդ քեզ: Արևը՝ քո նախնին¹⁵⁹ քեզ համար ընտրել է իր ստեղծած բոլոր գեղեցիկներից ամենագեղեցիկ արարածը, իսկ դու փախչում ես աստվածային այդ պարզևի՛ց: Վերջապես ես ի՞նչ գործ ունեմ իմ խղճուկ ստրուկների՝ Զերեյի և Դիոնիսոսի հետ: Ինչ է, ես՝ մեծ արքա՞ս պիտի, պառավ-խնամախոսուհու նման, զլուխ բերեմ նրանց հարսանիքը: Բայց ես շտապեցի ինձ վրա վերցնել այդ գործի քննությունը, և այդ մասին բոլորը գիտեն: Առանձնապես ես ամաչում եմ Ստատիրայից: Եվ այդպես, մի հրապարակիր քո սերը, բայց մի էլ ավարտիր դատաքննությունը: Կարևոր է, որ դու հնարավորություն ունենաս քո առջև տեսնելու Կալիբրոյին: Հետաձգիր դատական նիստը: Զե որ այդպես վարվելու իրավունք ունի նույնիսկ շարքային դատավորը:

2

Վաղ առավոտվանից սպասավորները արքայական դատարանի շենքը նախապատրաստեցին նիստի համար, իսկ պալատի մոտ ամբոխվում էր ժողովուրդը: Հուզվել էր ամբողջ Բաբելոնը: Եվ ինչպես օլիմպիական մրցումներում¹⁶⁰ կարելի էր տեսնել ստադիոն գնացող մարմնամարզիկների ուղեկցումը, այդպիսի ողջերթ էին սարքում նաև այստեղ: Դիոնիսոսին ուղեկցում էր անվանի պարսիկների բազմությունը, իսկ Զերեյին շրջապատել էր հասարակ ժողովուրդը: Երկու կողմերից լսվում էին հավանության բացականչություններ և ողջերթի հազարավոր մաղթանքներ. «Դու հզոր ես», «Դու կհաղթես»: Իսկ հաղթական պարզևն այստեղ ոչ վայրի ձիթապտուղ էր, ոչ խնձոր, ոչ էլ սոճու պսակ¹⁶¹, այլ հմայիչ մի գեղեցկություն, որի համար տեղին կլինեք եթե վիճեին նաև իրենք՝ աստվածները:

Սակայն արքան կանչեց ներքինի Արտաշեսին, որն աբայի համար ամենակարևոր դեմքն էր, և նրան ասաց.

— Երագում տեսա, որ վեհապանձ աստվածները զոհ են պահանջում ինձնից: Ամենից առաջ ես պետք է կատարեմ բարեպաշտության իմ պարտքը: Համայն Ասիայում ազդարարիր իորեմենիայի¹⁶² երեսուկօրյա տոնակատարություն, որի ժամանակ ձեռնպահ պիտի լինել ամեն տեսակ դատ ու գործից:

Ներքինին ազդարարեց հրամանը, և քաղաքն անմիջապես լցվեց տոնապսակ զոհաբերություններով: Հնչեցին ֆլեյտան, սրինգներ ու երգը: Դռների առջև խուսկն էր ծխում, և ամեն փողոցում խնջույք էր:

Եվ այդպիսով վեր բարձրացավ ճենճոտ ծուխը¹⁶³ դեպի երկինք¹⁶⁴:

Արքան զոհարաններ ուղարկեց շքեղ զոհեր: Այդ ժամանակ էլ նա առաջին անգամ զոհաբերություն արեց Էրոսին, սաստիկ խնդրելով Աֆրոդիտեին, որպեսզի վերջինս իր որդու առջև¹⁶⁵ հովանավորի արքային:

Համընդհանուր խնդրության ժամանակ տխուր էին միայն երեքը՝ Կալիրոյը, Դիոնիսոսը և այս երկուսից էլ շատ՝ Զերեյը Կալիրոյն արքունիքում չէր կարող բացեիքաց հայտնել իր վիշտը: Հալումաշ լինելով, նա ծածուկ հոգոց էր հանում և անիծում տոնակատարությունը: Իսկ Դիոնիսոսը անիծում էր իրեն նրա համար, որ դուրս է եկել Միլեթից:

— Դե տար, դժբախտ մարդ, քո կամավոր վիշտը,— ասում էր նա ինքն իրեն:— Մեղավորը դու ես: Կալիրոյին դու կարող էիր տիրել նաև Զերեյի կենդանության օրոք: Միլեթում դու տեր էիր: Նույնիսկ այն ժամանակ քո ցանկությամբ նամակը չհանձնվեց Կալիրոյին: Այնտեղ ո՞վ տեսավ Կալիրոյին: Այնտեղ ո՞վ մոտեցավ նրան: Դու ինքդ քեզ սրընթաց նետեցիր թշնամիների որջի մեջ: Եվ դու միայն չնետվեցիր: Ոչ, դու քեզ հետ միասին այնտեղ նետեցի և այն գանձը, որը քո կյանքից էլ թանկ է քեզ համար: Նրա պատճառով էլ ամեն կողմից քո դեմ կռիվ սկսվեց: Անմիտ, ինչի՞ մասին ես մտածում դու: Զեզ հետ կդատավիճի Զերեյը, բայց դու քո սիրո ախոյան ես պատրաստել ի դեմս քո տիրոջ¹⁶⁶: Հիմա արքան նույնիսկ երազներ է տեսնում, և աստվածները նրանից պահանջում են այն զոհերը, որ նա կատարում է ամեն օր: Ինչ լկտիությունն է: Հետաձգես դատի ժամանակը, ուրիշի կնոջը պահես տանդ և հետո քեզ կոչես դատավոր:

Այսպես էր տրտնջում Դիոնիսոսը, իսկ Զերեյը, ընդհանրապես ապելուց հրաժարվելով, բերանը բան չէր տալում: Պոլիքարմոսին՝ իր ընկերոջը, որ խանգարեց նրան ինքնասպան լինել, Զերեյն ասաց.

— Դու ընկեր ես համարում քեզ, բայց իմ ամենամեծ թշնամին ես: Դու ինձ պահում ես տառապանքի մեջ և հաճույք ստանում պատժատեսարանից: Եթե դու իմ ընկերը լինեիր, ապա կուրախանայիր, եթե ես ազատվեի դաժան կուռքի ճիրաններից: Դու քանի՞ երջանիկ հարմար պահեր ձախողեցիր: Ինչպիսի երանություն կլիներ ինձ համար, եթե ես Կալիրոյի հետ թաղվեի Սիրակուզայում: Բայց այն ժամանակ էլ դու խանգարեցիր ինձ մեռնելու և անջատեցիր ինձ հրաշալի ուղեկցուից: Գուցե այդ դեպքում նա դուրս չգար գերեզմանից և չցանկանար թողնել ինձ՝ մեռածիս: Իսկ եթե թողներ էլ, ապա ես պառկած կմնայի գերեզմանում, որն այնուամենայնիվ ձեռնտու կլիներ, քանի որ կազատվեի այն ամենից, ինչ հետազայում եկավ իմ գլխին, կազատվեի ստրկության տրվելուց, ավազակների հարձակումից, շղթաներից և նրանից՝ արքայից, որ խաչից էլ ծանր է: Օ՛, գեղեցիկ մահ: Նրանից հետո ես չեի լսի Կալիրոյի երկրորդ ամուսնության մասին: Դատից հետո դու նորից ստիպեցիր ինձ բաց թողնել ինքնասպան լինելու այնպիսի հարմար պահ, երբ տեսա Կալիրոյին և չմոտեցա ու չհամբուրեցի նրան: Ինչպիսի՜ չլսված, ինչպիսի՜ անհավանական բան: Դատում են Կալիրոյին, հարցուկորձ անում, թե նա Զերեյի ամուսինն է: Բայց այդ դատն էլ, որն արդեն միևնույն էր թե ինչով կվերջանար, խանգարեց նախանձի աստվածը: Աստվածներն ինձ ատում են և երազում, և արթուն ժամանակ:

Այս ասելով, նա ձեռքը տարավ դեպի սուրը, բայց նրան բռնեց Պոլիքարմոսը, որն այնուհետև սկսեց նրան պահել համարյա կապած վիճակում:

3

Արքան, կանչելով ներքինուն՝ ամենահավատարիմ մարդուն, սկզբում ամաչեց նրանից, բայց արքայի դեմքի հուզմունքը նկատելով՝ Արտաշեսը հասկացավ, որ նա ցանկանում է ինչ-որ բան ասել և հարցրեց.

— Տիրակալ, դու ինչո՞ւ ես թաքնվում քո ստրուկից, որը նվիրված է քեզ և գիտե լռել: Ինչ-որ դժբախտություն է պատահել: Վախենում եմ, թե ինչ-որ դավադրություն...

— Այո,— պատասխանեց արքան, դավադրություն է, սակայն ոչ թե մարդկանց, այլ աստվածների կողմից: Առաջ Էրոտի ուժի մասին առասպելներից ու քնարերգությունից գիտեի, որ նա իշխում է բոլոր աստվածների, և նույնիսկ իր՝ Չևսի վրա, բայց և այնպես ես թույլ չեի տալիս, որ որևէ մեկն ինձ մոտ հզոր լիներ ինձնից: Բայց ահա ինձ մոտ է եկել այդ աստվածը, իմ հոգուն է կպել մեծ ու հզոր Էրոտը, և, սարսափելի է խոստովանել, նա ինձ իսկապես գերել է:

Այդ ասելով, արքան այնպես սկսեց արցունք թափել, որ չկարողացավ այլևս ոչ մի բառ ասել, և, հենց որ լռեց, Արտաշեսն իսկույն հասկացավ, թե ով է վերջ հասցրել

արքային: Առաջ էլ նա որոշ կասկածանքներ ուներ: Կրակի ծուխը նա նկատել էր նաև առաջ: Իսկ այժմ նրա բոլոր կասկածանքները փարատվեցին, և, հաշվի առնելով Կալիբրոյի ներկայությունը արքունիքում, նրա համար պարզ դարձավ, որ արքան սիրահարվել է ոչ թե մեկ ուրիշին, այլ հենց նրան՝ Կալիբրոյին: Այնուամենայնիվ Արտաշեսն իրեն անհասկացող ձևացրեց և հարցրեց արքային:

— Տիրակալ, ի՞նչ գեղեցկություն կարող է իշխել քո հոֆում, երբ քոնն են աշխարհի բոլոր գեղեցկությունները, և՛ ոսկին, և՛ արծաթը, և՛ հանդերձը, և՛ ձիերը, և՛ քաղաքները, և՛ ժողովուրդները: Աշխարհում հազարավոր գեղեցիկ կանայք կան, բայց արևի տակ ամենագեղեցիկը Ստատիրան է, որին վայելում են միայն դու: Ճիշտ է, սերն անցնում է, երբ այն մատչելի է լինում: Չինի թե երկնքից մի նոր աստվածուհի է իջել կամ ծովից դուրս գալով քեզ մոտ է եկել երկրորդ մի Թետիս¹⁶⁷: Քանզի ես համոզված եմ, որ քեզ հետ ցանկանում են շփվել նաև աստվածները:

Արքան պատասխանեց:

— Այն, որ ասում ես, թե այդ կինը աստվածներից մեկն է, գուցե ճշմարիտ է: Իզուր չէ, որ նա գերմարդկային գեղեցկություն ունի: Միայն նա չի ընդունում, որ ինքն աստվածային է, այլ իրեն համարում է սիրակուզցի հույն: Իսկ դա կրկին ապացուցում է, որ նա խաբում է: Չցանկանալով մերկացնել իրեն, նա իր հայրենին չի կոչել այն քաղաքներից մեկը, որոնք մնում են մեր տերության մեջ, այլ իր մասին տարածել է մի հեքիաթ, խոսելով մի քաղաքի մասին, որ գտնվում է Իոնիական ծովի սահմաններից շատ հեռու: Նա ինձ մոտ է եկել դատի պատրվակով, և այդ ամբողջ ներկայացումը ինքն է հորինել: Բայց ես զարմանում եմ, թե քո առջև Կալիբրոյին տեսնելով, դու ինչպես համարձակվեցիր Ստատիրային անվանել ամենագեղեցիկ կինը: Եվ այդպես, պետք է մտածել, թե ես ինչպես ազատվեմ իմ տառապանքներից: Փնտրիր, թե որտեղ կարելի է մի որևէ դեղ գտնել ինձ համար:

— Արքա, այն դեղը, որ դու փնտրում ես, գտել են ինչպես հույները, այնպես էլ բարբարոսները: Հենց իր՝ սիրո էակից բացի ուրիշ ոչ մի դեղ չկա սիրո դեմ: Այդ մասին է ասում հին խոսքը. «Ցավը ցավ տվողը կբուժի»¹⁶⁸:

Արքան ամաչեց Արտաշեսի խոսքից:

— Ես պետք է ուրիշի կնո՞ջը գայթակղեցնեմ: Այդպիսի բաների մասին դու ինձ մոտ ծպտուն չհասնես: Ես հիշում եմ այն օրերները, որ ես եմ սահմանել, ինչպես և հիշում եմ արդարության մասին, որին հավատարիմ եմ իմ բոլոր առարկների մեջ: Դու ինձ չես մեղադրի անառակության մեջ: Այդ բանում դու ինձ չես բռնի:

Արտաշեսը, երկյուղելով, թե ինչ-որ անգգույշ բան է ասել, իր խոսքը շուռ տվեց գովաբանության:

— Արքա,— ասաց նա,— վսեմ է քո միտքը: Դու մի փորձիր այն միջոցը, որով սիրո ցավից բուժվում են մնացած բոլոր մարդիկ, այլ օգտագործիր ուրիշ, ավելի ուժեղ, արքայական միջոց. պայքարի ինքը քո դեմ: Չէ որ, տիրակալ, միայն դու գորություն ունես աստվածներին հաղթելու: Ինչ արած: Հոգիդ զբաղեցրու ամեն տեսակ գվարճություններով: Քեզ առանձնապես ուրախացնում է որսորդությունը: Ես գիտեմ, որ դու պատրաստ ես օրերով որս անել առանց ուտելու ու խմելու: Իսկ որսորդությամբ զբաղվելն ավելի լավ է, քան արքունիքում ապրելը, ուր այնքան մոտ ես կրակին:

4

Այդ խորհուրդը դուր եկավ, և նշանակվեց փառահեղ որսի օրը:

Կանոնավոր շարքերով գնում էին հեծյալները՝ պարսկական ավագանին և այլ ընտիր զորախմբեր: Ամենքն ուշադրության առարկա էին դարձել, բայց ամենափայլունը ինքը արքան էր: Նա նստել էր մի խոշոր, հոյակապ ձիու վրա, որն ուներ ոսկե սանձ, ոսկե ճակատափոկ ու կրծքապանակ: Նա հագել էր բաբելոնյան գործվածքի ծիրանի պատմունճան, գլխին դրել հակինթագույն խույրը¹⁶⁹: Գոտու մեջ խրել էր ակինակոյը¹⁷⁰, ձեռքին բռնել երկու նիզակ, կողքից կախել չինական թանկարժեք նետ ու աղեղը: Ձիու վրա նա նստել էր հպարտ, ամեն կերպ ձգտելով գեղեցիկ երևալ: Նա ցանկանում էր, որ Կալիբրոյը նկատեր իրեն շքախմբի մեջ և, անցնելով քաղաքով, աչք էր ածում, թե Կալիբրոյը որևէ տեղից չի դիտում շքերթը:

Շուտով սարերը լցվեցին վազող մարդկանց բացականչություններով, շների հաչոցներով և հալածվող գազանների աղմուկով: Այդ ամբողջ հարայիտոցը կարող էր վախեցնել նաև Էրոտին: Դա մի գվարճանք էր, որ միաժամանակ հաճույք էր պատճառում և պայքարի խնդությունը, և սարսափի բավականությունը, և վտանգի հրապույրը: Բայց արքան չէր նկատում ոչ իր նժույգը, որ առաջ էր անցնում բազում հեծյալներից, ոչ գազաններին, որի հետևից այնքան որսորդներ էին ընկել, ինչպես և չէր լսում ոչ մի շան ձայն, չնայած նրանց հաչոցներն այնքան շատ էին, ոչ մարդկանց ձայները, չնայած գոչում էին բոլորը: Նա իր առջև տեսնում էր միայն Կալիրոյին, որ նրա հետ չէր, և լսում էր միայն նրա ձայնը, չնայած Կալիրոյը նրա հետ չի էլ խոսել: Զանգի արքայի հետ որսի էր դուրս եկել նաև Էրոտը, որ, որպես վիճող աստված, իր առջև տեսնելով, ինչպես ինքն էր մտածում, վճռական մի հակառակորդ, նրա դեմ ուղղեց վարպետությունը՝ սկսելով արքայի հոգին բորբոքել իր իսկ դեղով, և, հասնելով իր նպատակին, շնչում էր նրա ականջին, «Կալիրոյն այստեղ ինչպիսի տեսք կունենար բաց սրունքներով¹⁷¹ և մերկ ձեռքերով, շառագունած դեմքով և հուզաբաբախ կրծքով»:

Հիրավի՝

Եվ ինչպես որ աղեղնավոր Արտեմիսը սար է գնում,
Կամ բարձրանում Տայիգետն ու Երիմանթը¹⁷² բարձրալանջիկ,
Եվ հրճվում է վարազներով ու քաջավազ եղնիկներով.¹⁷³

Այդ տեսարանը մտովի պատկերելով իր առջև, արքան դաժանորեն բորբոքեց իրեն¹⁷⁴:

Որսալով արքայի խոսքը, Արտաշեսն ասաց.

— Տիրակալ, դու մոռացել ես, թե ինչ է պատահել: Չէ որ Կալիրոյն ամուսին չունի և դատարանը պիտի որոշի, թե ում հետ պիտի ամուսնանա նա: Այսպիսով, հիշիր, որ դու սիրահարվել ես մի այրու, դրա համար էլ մի վախեցիր այն օրենքներից, որոնք սահմանված են ամուսնության համար, ինչպես և անառակության մասին օրենքներից, ուր, նախ և առաջ, պահանջվում է վիրավորված ամուսնու առկայությունը, և ապա վիրավորողին՝ ի դեմս անառակի:

Արտաշեսի ասածը դուր եկավ արքային: Այն հաճո էր իրեն, և թեանցուկ անելով ներքինում, արքան համբուրեց նրան:

— Արդար է, որ քեզ բոլորից բարձր եմ դասում,— ասաց արքան,— դու ամենանվիրված մարդն ես և իմ բարի պահապանը: Դե, ինչ արած, գնա և ինձ մոտ բեր Կալիրոյին: Հրամայում եմ, որ դու կատարես միայն երկու պայման. մի բեր նրան իր կամքին դեմ, մի բեր բացեփառ: Ես ցանկանում եմ, որպեսզի դու համոզես նրան և ինձ մոտ բերես գաղտնի:

Անմիջապես որսադարձի ազդանշան տրվեց, և բոլորը բռնեցին ետդարձի ճամփան: Արքան արքունիք մտավ հույսերով թեևավորված, խնդությամբ, կարծես բռնել է ամենահրաշալի որսը: Ուրախացել էր նաև Արտաշեսը, որ ենթադրում էր, թե ինքն արքային մեծ ծառայություն է մատուցել, և որ նա այսուհետև իր ձեռքում կպահի արքայական կառքի դեկը, քանի որ իրեն երախտապարտ կլինեն և՛ արքան, և՛ առավել ևս՝ Կալիրոյը: Ինչպես ներքինի, ինչպես ստրուկ, ինչպես բարբարոս, այդ գործը դյուրին էր երևում նրա աչքին: Նրան դեռևս անծանոթ էր հունական ազնիվ հպարտությունը, առանձնապես ողջախոհ, ազնիվ ամուսին Կալիրոյի հպարտությունը:

5

Արտաշեսը, սպասելով հարմար պահի և հետևելով նրան, երբ Կալիրոյը մենակ մնաց, մտավ նրա մոտ և ասաց.

— Կին, ես քեզ ընծա եմ բերում մեծ շնորհների հարստությունը: Չմոռանաս այն բարիքը, որ անում եմ քեզ համար: Ես հավատում եմ քո երախտագիտությանը:

Արտաշեսի խոսքի սկիզբը շատ դուր եկավ Կալիրոյին: Մարդու խառնվածքին հատուկ է պատկերացնել այն, ինչի մասին ինքն է երազում: Այդպես Կալիրոյին հիմա թվաց, որ իրեն տալիս են Զերեյին, և նա շտապեց լսել դա, մտքում խոստանալով բարի

լուրի համար վարձահատույց լինել ներքինում: Արտաշեսն էլ, նախաբանից հետո, իր խոսքն այսպես շարունակեց:

— Կին,—ասաց նա,— դու երջանիկ ես, որ աստվածային գեղեցկության տեր ես: Սակայն, դրանից դու չես շահել ոչ մի փոքրիշատե նշանակալից պատիվ: Ամբողջ աշխարհում հռչակված քո նշանավոր անունը մինչև հիմա չի գտել ոչ ամուսին, ոչ սիրելի, որոնք արժանի լինեն քեզ: Քեզ բաժին են ընկել երկու տղամարդիկ՝ աղքատ կղզիաբնակը և արքայական ստրուկը: Ինչպիսի մեծարում, ինչպիսի փայլ տվեց դա քեզ: Դու տիրո՞ւմ ես որևէ բերրի երկրի: Ինչպիսի՞ թանկարժեք իրեր ունես դու: Ինչպիսի՞ քաղաքների ես իշխում դու: Շա՞տ ստրուկներ են խոնարհվում քո առջև: Ախր քեզնից հարուստ են բաբելոնցի շարքային սպասավորուհիները: Ի դեպ, դու աստվածների կողմից ամենևին էլ մատնված չես եղել անուշադրության: Քո մասին հոգում են աստվածները: Այդ նրանք են քեզ այստեղ բերել դատավեճի պատրվակով, որպեսզի մեծ արքան տեսնի քեզ: Եվ ահա առաջին բարի լուրը քեզ համար. արքային հաճո կլիներ տեսնել քեզ: Ես էլ գովում եմ քեզ նրա մոտ, քո մասին մշտապես հիշեցնում նրան:

Վերջինը հորինեց Արտաշեսը, որովհետև յուրաքանչյուր ստրուկ, խոսելով իր տիրոջ մասին, սիրում է իրեն էլ դնել նրա կողքին, քանի որ հույս է դնում այդտեղից մի բան կորզել իր օգտի համար:

Իսկ այդ խոսքերը լսելը Կալիրոյի համար նույնն էր, ինչ սուրը խրեա սիրտը: Բայց նա ձևացրեց, թե իբր այդ խոսքերի իմաստը չի հասկանում:

— Թող աստվածները սիրալիր լինեն արքայի հանդեպ,— ասաց նա,— և արքան թող սիրալիր լինի քո հանդես այն բանի համար, որ դու խղճում ես դժբախտ մի կնոջ: Ես խնդրանքով դիմում եմ նրան, որպեսզի նա ինձ ավելի շուտ ազատի իմ վշտից՝ ավարտելով դատաքննությունը, որպեսզի ես այլևս չձանձրացնեմ թագուհուն:

Կարծելով, թե ինքն այնքան էլ պարզ չի արտահայտել իր միտքը և որ Կալիրոյը չի հասկացել իրեն, ներքինին սկսեց խոսել առավել բացեփակ.

— Դու երջանիկ ես նրանով, որ քեզ սիրում է ոչ թե մի ստրուկ կամ մի աղքատ, այլ մեծ արքան, որն ի վիճակի է, հօգուտ քեզ, նվիրել քեզ և Միլեթը, և ամբողջ Իոնիան, և Սիցիլիան և ուրիշ առավել նշանավոր երկրներ: Չոհեր մատուցիր աստվածներին, փառաբանիր քո երանությունը, աշխատիր ավելի շատ դուր գալ արքային, և հիշիր իմ մասին, երբ հարուստ դառնաս:

Առաջին վայրկյանին Կալիրոյը պատրաստ էր, եթե դա միայն հնարավոր լիներ, հանել նրա աչքերը, ով կաշառում էր իրեն, սակայն, լինելով դաստիարակված և իր բռնկումներին տիրապետող կին, հիշելով, թե որտեղ է գտնվում ինքը, ով է ինքը և ով է իր հետ զրուցում, նա զսպեց իր բարկությունը և բարբարոսի առջև կեղծավորություն արեց:

— Ես այնպիսի հիմար չեմ, որ ինձ արժանի համարեմ մեծ արքային,— ասաց նա:— Ես հավասար եմ մի պարսիկ սպասավորուհու: Խնդրում եմ, իմ մասին այլևս մի հիշեցրու տիրակալին, որովհետև եթե նա նույնիսկ չի բարկանում հիմա, ապա հետագայում քեզ վրա կգայրանա, մտածելով, որ իրեն՝ ամբողջ աշխարհի տիրոջը, դու հավասարեցրել ես Դիոնիսոսի ստրկուհուն: Բայց ես զարմանում եմ, թե այդքան մեծ խելքով դու այնուամենայնիվ ինչպես չես ըմբռնել արքայի բարությունը և չես հասկանում, որ թշվառ կնոջը նա խղճում է և ոչ թե սիրահարվել է նրան: Սակայն վերջացնենք մեր զրույցը, որպեսզի ինձ ու քեզ չգրպարտեն թագուհու առջև:

Եվ նա վազեց, իսկ ներքինին բերանը բաց մնաց տեղում կանգնած:

Դաստիարակված լինելով անսահման կամայականության պայմաններում, նա չէր պատկերացնում ոչ մի անհնարին բան ոչ միայն արքայի, այլև՝ հենց իր համար:

Լքվելով ու չարժանանալով նույնիսկ նրա պատասխանին, Արտաշեսը հեռացավ ամենաբազմազան զգացումներով՝ գայրանալով Կալիրոյի վրա, տազնապով, արքայից սարսափելով: Նա վախենում էր, որ արքան պարզապես չի հավատա իրեն, թե իբր նա ձախողակ է, բայց և այնպես խոսել է Կալիրոյի հետ: Արքան կմտածի, որ Արտաշեսը մատնել է իր հանձնարարությունը, հայտնելով թագուհուն՝ վերջինիս հաճոյանալու համար: Արտաշեսը վախենում էր նաև, թե Կալիրոյը իր խոսքերը կհասցնի թագուհուն,

և, բարկանալով Արտաշեսի վրա նրա համար, որ նա ոչ միայն ծառայում է արքայի սիրային գործերին, այլև սարքում է դրանք, Ստատիրան կմտադրվի որևէ սարսափելի պատժի ենթարկել նրան: Եվ ներքինին սկսեց ծանրութեթև անել, թե պատահածի մասին ինչպես գեղուցի արքային, որ իր համար առավել անվտանգ լինի: Իսկ Կալիրոյը միայնակ մնալով, այսպես ասաց ինքն իրեն. «Ես նախատեսում էի դա: Դու վկա ես, Եփրատ: Ասում էի չէ՞, որ ես այլևս քո վրայով ետ չեմ դառնա: Դե, մնաս բարյավ, հայր, և դու՝ մայրիկ, մնաս բարյավ, և դու՝ Սիրակուզա՝ իմ հայրենիք: Ես այլևս ձեզ չեմ տեսնի: Հիմա Կալիրոյն իսկապես մահացել է: Ես գերեզմանից դուրս եկա, բայց այստեղից ինձ չի կարող դուրս հանել նույնիսկ ավագակ Ֆերոնը: Օ՛, նենգ գեղեցկություն: Դու իմ բոլոր թշվառությունների պատճառն ես: Զո պատճառով ես սպանվեցի, քո պատճառով տրվեցի ստրկության, քո պատճառով Զերեյից հետո ես ամուսնացա երկրորդ անգամ, քո պատճառով ես բերվեցի Բաբելոն, քո պատճառով էլ կանգնեցի դատարանի առջև: Բայց ինձ համար ամենածանրն այն է, որ արքան սիրահարվել է ինձ: Էլ չեմ խոսում նրա զայրույթի մասին: Բայց ես գտնում եմ, որ ինձ համար ամենասարսափելին թագուհու խանդն է, այն զգացումը, որին չհաղթեց նաև Զերեյը՝ տղամարդն ու հույնը: Ապա ինչ կանի մի կին, այն էլ՝ բարբարոսների իշխանուհին: Դե, Կալիրոյ, Հերմոկրատեսին արժանի մի համարձակ բան վճար: Խեղդիք քեզ: Ասենք, սպասիր: Սա առայժմ դեռ առաջին գրույցն էր և այն էլ գրույց ներքինու միջոցով: Այ, եթե բռնություն գործադրվի, այն ժամանակ կհասնի Զերեյին քո հավատարմությունը ակնհայտորեն ապացուցելու ժամը:

Արքայի մոտ գալով, ներքինին պատահածի մասին ճշմարտությունը թաքցրեց նրանից, պատճառաբանելով թագուհու սահմանած անշեղ ու ջանադիր հետևումը Կալիրոյին, որը խանգարեց, որ նա նույնիսկ մոտենա Կալիրոյին:

— Չէ որ, տիրակալ, այդ դու ես հրամայել ինձ հոգ տանել գաղտնիքը պահելու համար: Եվ դու ճիշտ ես հրամայել: Դու ընդունել ես սրբազան դատավորի տեսք և պարսիկների մեջ բարի համբավ ես վայելում: Իզուր չէ, որ ամենքը գովերգում են քեզ: Իսկ հույները գծում ու բերանբաց մարդիկ են, և նրանք գործը կուռնացնեն: Կալիրոյը որպեսզի պարծենա, թե արքան սիրահարվել է իրեն, իսկ Դիոնիսոսն ու Զերեյը՝ խանդից: Չարժե վշտացնել նաև թագուհուն, որի գեղեցկությունն ամենքի համոզմամբ գերազանցում է նրա փառքը:

Նա իր խոսքին այդպիսի նոր երանգ տվեց, հուսալով, որ արքային կհեռացնի այդ սիրուց, իսկ իրեն էլ կազատագրի ծանրագույն հանձնարարությունից:

7

Մի պահ նրան հաջողվեց համոզել արքային, բայց գիշերը վրա հասնելուց արքան սկսեց նորից տոչորվել: Էրոտը ստիպեց նրան վերհիշել, թե Կալիրոյն ինչպիսի աչքեր ունի և որքան գեղեցիկ է նրա դեմքը, և գովաբանեց նրա մազերը, նրա քայլվածքը, ձայնը և այլն, թե նա ինչպես մտավ դատարան, ինչպես նստեց, ինչպես խոսեց, ինչպես լռեց, ինչպես ամաչեց և ինչպես լաց եղավ: Գիշերվա մեծ մասն անքուն մնալով, երբ մի փոքր քնեց՝ երագում էլ կրկին տեսավ Կալիրոյին: Առավոտյան նա կանչեց ներքինուն և ասաց.

— Գնա և ամբողջ օրը հետևիր, այսպես թե այնպես դու մի հարմար պահ կգտնես թեկուզև ամենակարճ ծածուկ գրույցի համար: Չէ որ եթե ես ցանկանամ իմ կրքերին բավականություն տալ բացահայտ ուժով՝ կօգտագործեմ իմ պահակախումբը:

Գլուխ տալով արքային, ներքինին խոստում տվեց: Ոչ ոք իրավունք չունի առարկել արքայի հրամանը:

Սակայն, գիտենալով, որ Կալիրոյը նրան հարմար պահ չի հատկացնի՝ դիտավորյալ կերպով թագուհուց չբաժանվելով, Արտաշեսը, ցանկանալով սատարել գործին, իր որպես պահապանի մեղքը զցեց թագուհու վրա:

— Տիրակալ, — ասաց նա, — եթե քեզ պատշաճ է, որ դու կանչես Ստատիրային՝ թե իբր ուզում ես նրա հետ ինչ-որ բանի մասին առանձին գրուցել, ապա հենց որ նա դուրս գա՝ Կալիրոյը կլինի իմ տրամադրության տակ:

— Այդպես էլ արա, — պատասխանեց արքան:

Արտաշեսը ներկայացավ թագուհուն և ասաց.

— Տիրակալուհի, քեզ իր մոտ է խնդրում քո ամուսինը:

Լսելով այդ, Ստատիրան խոնարհ գլուխ տվեց և շտապեց արքայի մոտ: Իսկ ներքինին, տեսնելով, որ Կալիրոյը մնաց միայնակ, ձեռքով նշան արեց նրան և սպասավորուհիների բազմությունից անջատվելով, մի կողմ տարավ նրան: Կալիրոյը հասկացավ նրան, գունատվեց և կորցրեց ձայնը, բայց և այնպես հետևեց նրան: Միայնակ մնալով նրա հետ, Արտաշեսը հարցրեց.

— Նկատեցի՞ր, թե արքայի անունը լսելով, թագուհին ինչպես խոնարհվեց ու շտապեց վազել նրա մոտ: Իսկ դու, ստրկուհի, չես էլ հասկանում քո երջանկությունը: Դու դժգոհ ես, որ արքան քեզ իր մոտ է կանչում, չնայած դրա համար նա հնարավորություն ունի հրամայելու: Բայց քո խենթության մասին ես նրան չեմ գեկուցի, ես հարգում եմ քեզ: Ոչ, ես ինքս եմ քեզ համար խոստացել նրան: Այսպիսով քո առջև երկու ճանապարհ կա. կնկարագրեմ և մեկը, և մյուսը: Եթե դու լսես արքային, ապա հրաշալի ընծաներ կստանաս, և ամուսին կընտրես նրան, ում ցանկանաս: Արքան, իհարկե, չի պատրաստվում ամուսնանալ քեզ հետ: Դու նրան ժամանակավոր խնդություն կպատճառես: Իսկ եթե չլսես նրան, ապա կամա թե ակամա ստիպված կլինես քաշել արքայի թշնամիներին բաժին ընկնող այն տառապանքները, որոնցից հնարավոր չէ ազատվել՝ եթե մարդ նույնիսկ նախընտրի մահը:

Զմծիծաղ տալով այդ սպառնալիքին, Կալիրոյն ասաց.

— Ես առաջին անգամ չեմ տառապանքներ ապրում: Ես վարժվել եմ դժվարություններին: Արքան ինչի՞ կարող է ենթարկել ինձ, որ ավելի ծանր լիներ, քան այն, ինչ ես քաշել եմ: Ես թաղվել եմ ողջ-ողջ, իսկ գերեզմանը ցանկացած բանտից էլ նեղ է: Ես ընկել եմ ավազակների ձեռքը: Ամենասարսափելի թշվառությունը ես ապրում եմ հիմա՝ չեմ տեսնում Զերեյին, չնայած նա գտնվում է իմ կողքին:

Այդ խոսքերով նա մատնեց իրեն: Սրաթափանց մարդ լինելով, ներքինին հասկացավ, որ Կալիրոյը սիրում է:

— Օ՛հ,— գոչեց նա,— դու աշխարհի ամենաանմիտ կինն ես: Միհրդատի ստրուկին դու նախընտրում ես արքայից:

Զերեյի հանդեպ անպատկառությունը վիրավորեց Կալիրոյին:

— Մարդ,— ասաց նա,— սրբապղծություն մի արա: Զերեյն ազատ քաղաքացին է այն առաջնակարգ քաղաքի, որին չկարողացան հաղթել նույնիսկ աթենացիները, որոնք Մարաթոնի մոտ և Սալամինում հաղթեցին քո մեծ արքային¹⁷⁵:

Այդպես ասաց նա, առատ արցունքներ թափելով, իսկ ներքինին ավելի համառեց:

— Հապաղելով դու վնասում ես քեզ,— ասաց ներքինին,— դու ուրիշ ի՞նչ կերպ կարող ես շահել դատավորի համակրանքը կամ ինչպե՞ս կարող ես բարելավել քո վիճակը նրա համար, որպեսզի ետ ստանաս ամուսնուդ: Իսկ գուցե Զերեյն էլ այդ մասին չիմանա: Եթե իմանա էլ, նա չի խանդի նրան, ով հզոր է իրենից: Եթե դուր գաս արքային, դու դու առավել թանկ կդառնաս նրա համար:

Վերջին բառերը նա ասաց ոչ թե Կալիրոյի վերաբերյալ, այլ ընդհանրապես արտահայտեց իր համոզմունքը: Բոլոր բարբարոսները երկրպագում են արքային, նրան համարելով կենդանի աստված: Կալիրոյը կիրաժարվեր նույնիսկ իր՝ Չևսի հետ ամուսնանալուց և Զերեյի հետ մեկ օրը չէր փոխի անմահության հետ: Ահա այդպես, ի վիճակի չլինելով որևէ բանի հասնել, ներքինին ասաց Կալիրոյին.

— Կին, ես քեզ մտածելու ժամանակ եմ տալիս: Մի մտածիր միայն քո մասին, այլև՝ Զերեյի, որին սպառնում է դաժան մահով մեռնելու վտանգը: Արքան չի հաշտվի այն մտքի հետ, որ սիրո մեջ ուրիշին նախընտրում են իրենից:

Արտաշեսը հեռացավ, և նրա գրույցի վերջաբանը անհանգստացրեց Կալիրոյին:

Բայց ճակատագիրը, բոլորովին նոր դեպքերի զարգացման առիթ գտնելով, արագորեն փոխեց բոլոր հաշիվներն ու ամեն տեսակ սիրային գրույցները: Արքային գեկույց տվին, որ, զորական մեծ ուժ հավաքելով, նրանից անջատվել է Եգիպտոսը: Հաղորդում էին, որ եգիպտացիները սպանել են արքայական սատրապին և թագավոր ընտրել տեղացիներից մեկին, որն առաջ շաժվելով, անցել է Պելուսիսը¹⁷⁶ և արդեն մտել

Ասորիք ու Փյունիկե, ուր քաղաքներն անգոր են դիմադրել նրան, որովհետև նա նրանց վրա է նետվել ինչպես մոլեգին հոսանք կամ անսպասելի հրդեհի բոց: Այդ համբավը շփոթեցրեց արքային և սարսափի մեջ գցեց պարսիկներին: Հուսալքությամբ համակվեց ամբողջ Բաբելոնը: Այդ ժամանակ լուրեր հնարողներն ու գուշակները սկսեցին խոսել այն մասին, որ արքան մի երազ է տեսել, թե իբր աստվածները գոհ են պահանջում, որ պատերազմ էր նշանակում, բայց միաժամանակ՝ նաև հաղթանակ: Մի խոսքով տեղի էր ունենում և խոսվում այն ամենը, որ ամեն անգամ սովորաբար լինում է անսպասելի ծագած կռվի պայմաններում: Ամբողջ Ասիան մեծ շարժման մեջ էր:

Եվ ահա արքան կանչեց պարսիկ բոլոր մեծատոհմիկներին և առանձին ժողովուրդների առաջնորդներին, որոնց հետ նա սովորաբար զբաղվում էր կարևոր գործերով և սկսեց նրանց հետ քննել ստեղծված վիճակը: Մի մասը մի բան էր խորհուրդ տալիս, մյուսը՝ ուրիշ բան, բայց ամենքը համաձայն էին, որ պետք է շտապել և, եթե հնարավոր է, ոչ մի օր չհետաձգել գործողությունների սկիզբը, երկու պատճառով: Նախ և առաջ՝ թշնամական ուժերի հետագա աճը խանգարելու նպատակով և, երկրորդ՝ որպեսզի բարեկամներին ոգևորեն շուտափույթ օգնությամբ: Դանդաղելու դեպքում, ասացին նրանք, ամեն ինչ հակառակ կլինի: Եթե հապաղես, թշնամիները կմեծամտանան, մտածելով, որ իրենցից վախենում են, իսկ անօգնական մնացած յուրայինները՝ տեղի կտան: Արքայի համար մեծ բարեբախտություն էր համարվում այն հանգամանքը, որ կռիվն սկսվելուց ինքը ոչ թե Բակտրիայում կամ Էկբատանում էր, այլ Բաբելոնում, որը մերձ էր Ասորիքին: Բավական է, որ արքան անցնի Եփրատը, և պառակտիչը կընկնի նրա ձեռքը: Այդ պատճառով որոշվեց առաջ շարժվել արքայի մոտ եղած զորքով և միաժամանակ հրաման ուղարկել բոլոր զորքերին կենտրոնանալու Եփրատ գետի մոտ: Պարսիկները կռվի են պատրաստվում արտակարգ արագությամբ, քանի որ դեռևս Պարսից առաջին արքա Կյուրոսի ժամանակներից որոշված էր, թե որ ժողովուրդը ինչպիսի և ինչ թվով հեծելազոր պիտի դուրս բերի կռվի ժամանակ, ինչ տեսակ և ինչքան հետևակ, ինչպիսի նետածիգներ, քանի հասարակ կառք և քանի դրեպանեփորային¹⁷⁷, որտեղից ու քանի փիղ և յուրաքանչյուրն ինչքան փող: Չորքին անհրաժեշտ ամեն բանով հանդերձավորելն ու պարենավորելը նրանցից խլում է այնքան ժամանակ, ինչքան պահանջվում է մի առանձին մարդու հանդերձավորման ու պարենավորման համար:

9

Կռվի լուրն ստանալու հիմադրորդ օրը արքան դուրս եկավ Բաբելոնից, ուղեկցությամբ բոլոր նրանց, ովքեր, ընդհանուր կարգադրության համաձայն, կռվի համար պիտանի տարիք ունեին: Այդ թվում Բաբելոնից դուրս եկավ նաև Դիոնիսոսը: Չէ որ նա իոնիացի էր, իսկ պարսկական հպատակներից ոչ ոք չէր կարող մնալ: Նա գինվել էր հիանալի գեղեցիկ և իր մոտ եղած մարդկանցից կազմել էր ամենևին էլ ոչ աննշան մի զորախումբ: Նա տեղ էր բռնել բանակի առավել աչքի ընկնող զորամասի առաջավոր մասում: Պարզ էր, որ փառասեր մարդը, որի աչքին քաջությունը երկրորդական չէր, որը ամենագեղեցիկ և արժեքավոր բանն է այդ կարգի մարդկանց համար, նա պատրաստ էր գործել ցանկացած արիությունը: Բացի այդ, Դիոնիսոսն այդ ժամանակ մի թույլ հույս էլ ուներ, որ եթե կռվում ինքն օգտավետ լինի, ապա իր քաջության համար որպես պարգև, առանց դատարանի, արքայից կստանա իր կնոջը:

Թագուհին չէր ցանկանում հետը վերցնել Կալիրոյին, այդ պատճառով էլ նա արքային չհիշեցրեց նրա մասին և չտեղեկացավ, թե արքան օտարերկրացի կնոջ մասին ինչ հրաման կտա: Կալիրոյի մասին լռությամբ անցավ նաև Արտաշեսը, իբր թե արքայի առջև ծառացած ռազմական վտանգի պայմաններում չհամարձակվելով հիշեցնել նրա սիրային չարաճճիության մասին, բայց իրականում ուրախանալով, որ հնարավորություն է ստեղծվել ազատվել Կալիրոյից, ինչպես մի վայրենի գազանից: Թերևս, նա նույնիսկ գոհ էր և խնդություն էր գգում կռվի համար, որ կտրեց արքայի ցանկասիրության ճանապարհը:

Արքան, սակայն, չէր մոռացել Կալիրոյին: Ոչ, հենց այդ աննկարագրելի իրարանցման ժամանակ նրա հոգում բռնկեց Կալիրոյի գեղեցկության մասին վերհուշը: Նա միայն

ամաչում էր խոսել Կալիթոյի մասին: Արքան վախճնում էր, որ այդպիսի կռվի ժամանակ կանացիական թուլանքի մասին խորհելը կատարելապես երեխայություն կլիներ իր կողմից: Չնայած փոթորկվում էր ցանկությամբ, Կալիթոյի մասին նա ոչինչ չասաց ոչ իրեն՝ Ստատիրային, ոչ Նույնիսկ Ներքինուն, որին նվիրել էր իր սիրո գաղտնիքը, այլ մտածեց ահա թե ինչ:

Պարսից արքաների, ինչպես և անվանի պարսիկների մոտ սովորություն կա, որ արշավի գնալիս հետները վերցնում են և կանանց, և երեխաներին, և ոսկի, և արծաթ, և հանդերձ, և ներքինիներին, և պատանդներին, և շներին, և սնունդ, և թանկարժեք իրեր, և ամեն շքեղ բան: Եվ ահա իր մոտ կանչելով այդ բոլոր գործերը վարող ծառային, արքան սկզբում նրա հետ հանգամանորեն խոսեց մյուս հարցերի մասին, յուրաքանչյուրի համար տալով համապատասխան կարգադրագիր, իսկ այնուհետև, ամենից հետո, հիշեցրեց նրան Կալիթոյի մասին, պահպանելով դեմքի անտարբեր հայացքը, ասես նրա հետ ոչ մի գործ չուներ:

— Թող այդ օտարերկրացի կինն էլ,— ասաց նա,— որի դատավարությունը ես վերցրել եմ ինձ վրա, Նույնպես հետևի մնացած կանանց:

Բաբելոնից առանց խնդության դուրս չեկավ նաև Կալիթոյը: Նա հույս ուներ, որ արշավի կուղևորվի նաև Զերեյը: «Պատերազմն իր հետ շատ գաղտնիքներ է տանում,— մտածեց Կալիթոյն իր մասին,— նա հուսադրում է դժբախտներին: Եթե հաշտությունը շուտ կնքվի, ապա այն ժամանակ, գուցե, ավարտվի նաև դատավարությունը»:

ԳԻՐՔ ՅՈԹԵՐՈՐԴ

1

Երբ արքայի հետ բոլորը մեկնեցին եգիպտացիների դեմ կռվելու, Զերեյին ոչ ոք ոչ մի հրաման չտվեց: Չէ որ նա արքայի հպատակ չէր: Այդ ժամանակ նա միակ ազատ մարդն էր Բաբելոնում: Զերեյն ուրախացել էր՝ հուսալով, որ քաղաքում կմնա նաև Կալիթոյը: Հանդիպում որոնելով կնոջ հետ, նա հենց հաջորդ օրը մոտեցավ արքունիքին, բայց երբ տեսավ, որ պալատը փակ է և դռների մոտ կանգնած են բազմաթիվ պահակներ, նա սկսեց պտտվել ամբողջ քաղաքում, իր ընկերոջը՝ Պոլիքարմոսին, անընդհատ հարցնում էր խենթի նման.

— Ո՞րտեղ է Կալիթոյը: Ի՞նչ է պատահել նրան: Դե՞ հո չէր կարող պատահել, որ նա էլ գնար արշավի:

Զգտնելով Կալիթոյին, նա սկսեց որոնել Դիոնիսոսին՝ իր ախոյանին: Երբ մոտեցավ նրա տանը, ապա, ասես պատահաբար, այնտեղից նրա դեմ դուրս եկավ ինչ-որ մի մարդ և ասաց այն, ինչ սովորեցրել էին իրեն: Բանն այն է, որ ցանկանալով ստիպել Զերեյին, որպեսզի նա կորցնի Կալիթոյի հետ ամուսնության բոլոր հույսերը և այլևս չսպասի դատաքննությանը, Դիոնիսոսը մտածել էր հետևյալ խորամանկությունը: Կռվի գնալով, նա թողել էր մի մարդ, որը պետք է Զերեյին հայտներ, թե պարսից արքան, որին դաշնակիցներ էին հարկավոր, Դիոնիսոսին ուղարկել է զորք հավաքելու եգիպտացու դեմ և քանի որ Դիոնիսոսը ազնվորեն և փութաջանությամբ է կատարել իր հանձնարարությունը, արքան Կալիթոյին տվել է նրան:

Զերեյն իսկույն հավատաց դրան: Դժբախտության մեջ գտնվող մարդը հեշտությամբ է հավատում խաբեությանը:

Պատահուտելով հագուստը և գզգզելով մազերը, Զերեյը խփում էր կրծքին և բացականչում.

— Ինձ համար ամայի դարձավ նաև դավաճան Բաբելոնը, խարդախ հյուրընկալը: Օ՛, որպիսի՛ հոյակապ դատավոր, ուրիշի կնոջ անառակացնող: Հարսանի՞ք կռվի ժամանակ: Իսկ ես էլ դատի համար ճառ եմ պատրաստել, չկասկածելով, որ իմ ճառը հաջող կստացվի: Դրա հետ մեկտեղ ես դատապարտվել եմ հեռակա, և Դիոնիսոսը լռությամբ հաղթել է ինձ: Բայց նրա հաղթանակը ապարդյուն կլինի նրա համար: Կալիթոյը չի տանի անջատումը, երբ ողջ է Զերեյը, չնայած Դիոնիսոսին առաջ հաջողվել է նրան խաբել իմ կարծեցյալ մահով: Սակայն ինչո՞ւ եմ դանդաղում: Ես ինչո՞ւ չեմ ինձ սպանում և արյուն

թափում դատավորի դռանը: Թող պարսիկներն ու մարերն իմանան, թե արքան ինչպես է ավարտել այս դատը:

Տեսնելով, որ անհնար է մխիթարել Զերեյին՝ նրան հասած դժբախտության համար և հասկանալով, որ Զերեյը ողջ չի մնա, Պոլիքարմոսը այսպես ասաց նրան.

— Սիրելիս: Իր ժամանակին իմ համոզումներով ես խանգարել եմ, որ դու մեռնես, իսկ այժմ գտնում եմ, որ քո որոշումն իրավացի էր: Հիմա ես ամենևին մտադիր չեմ խանգարել քեզ իրագործելու քո ցանկությունը, ինքս էլ պատրաստ եմ մեռնել քեզ հետ: Մտածենք միայն մեռնելու միջոցի մասին, ծանրութեթև անենք, թե որն է ավելի լավ: Այն միջոցը, որ մտածել ես դու, չնայած, իհարկե, ապագայում որոշ չափով կշտամբայից ու ամոթալի կլինի արքայի համար, բայց մեծ պատիժ չի լինի՝ համեմատությամբ այն բանի, որ տառապել ենք նրա պատճառով: Մինչդեռ, քանի որ մենք որոշել ենք մեռնել, մեր մահը մենք պետք է օգտագործենք բռնապետից վրեժ լուծելու համար: Մենք մեզ լավ կզգանք, եթե նրան հասցրած մեր վիրավորանքով իրապես ստիպենք նրան, զղջալու և եթե գալիք սերունդներին պանծալի մի պատմություն ավանդենք այն մասին, թե ինչպես մեծ արքայի կողմից վիրավորված երկու հույներ իրենք էլ վիրավորանքին վիրավորանքով պատասխանեցին և մեռան տղամարդու պես:

— Բայց,— բացականչեց Զերեյը,— մենք, միայնակ աղքատ օտարերկրացիներս, ինչպիսի՞ վիրավորանք կարող ենք պատճառել այսքան մեծ ու բազում երկրների տիրակալին, որն ունի այն զորական ուժը, ինչպիսին տեսանք ես և դու: Նրա անձը պահպանում են կրկնակի պահապաններով, և եթե նույնիսկ մեզ հաջողվի նրան շրջապատողներից որևէ մեկին սպանել կամ հրդեհել նրան պատկանող որևէ բան, ապա այդ դեպքում էլ նա ոչ մի վիրավորանք չի զգա:

— Զո ասածը,— պատասխանեց Պոլիքարմոսը,— ճիշտ կլիներ, եթե կռիվ չլիներ: Իսկ հիմա, ինչպես լսում ենք, Եգիպտոսն ընկել է, Փյունիկեն գրավված է, իսկ Ասորիքն ամայանում է ասպատակություններից: Կռիվն արքային կոփավորի ավելի շուտ, քան նա կհասնի Եփրատին: Այսպիսով, ես ու դու միայնակ չենք: Մենք ունենք այնքան դաշնակիցներ, որքան Եգիպտոսը տանում է իր հետևից և ունենք ճիշտ այդքան էլ զենք, այդքան էլ փող, այդքան էլ նավ: Որպեսզի վրեժ լուծենք քեզ համար, օգուվենք օտարի ուժից:

Նա իր խոսքը դեռ չէր վերջացրել¹⁷⁸,

երբ Զերեյը գոչեց.

— Շտապենք: Գնա՛նք: Կռվում ես արդարորեն կհատուցեմ դատավորին:

2

Շուտով զինվելով, նրանք ճամփա ընկան արքային հասնելու, ձևացնելով, թե իբր ցանկանում են մասնակցել նրա արշավանքին: Նրանք հույս ունեին, որ այդ պատրվակով անվնաս կանցնեն Եփրատը: Նրանք բանակը գտան գետի ափին և, խառնվելով վերջապահ զորամասերին, առաջ շարժվեցին նրանց հետ: Երբ հասան Ասորիք, ապա փախան Եգիպտացու մոտ: Պահակները կանգնեցրին և սկսեցին հարցուփորձ անել, թե ովքեր են նրանք, և որովհետև նրանց հագին դեսպանի հագուստ չկար, սկսեցին կասկածել, թե նրանք լուտեսներ են: Նրանք այստեղ կընկնեին շատ վտանգավոր վիճակի մեջ, եթե պատահաբար այդտեղ չգտնվեր մի հույն, որը հասկացավ նրանց ասածը: Զերեյն ու Պոլիքարմոսը խնդրեցին, որ իրենց տանեն արքայի մոտ, որի համար իրենք շատ օգտավետ բան են տանում: Եվ երբ նրանց տարան արքայի մոտ, Զերեյն արքային ասաց.

— Մենք հույներ ենք, սիրակուզցիներ, եվպատրիդներ¹⁷⁹: Իսկ սա իմ ընկերն է, որն ինձ համար Բաբելոն է եկել, որտեղ զնացել էի նաև ես իմ կնոջ՝ Հերմոկրատեսի դստեր համար: Գուցե դու լսե՛լ ես նաև Հերմոկրատեսի մասին, որ ծովամարտում հաղթել է աթենացիներին:

Ի պատասխան դրան, Եգիպտացին հաստատապես շարժեց գլուխը: Զանգի չկար մի ժողովուրդ, որը չիմանար Սիցիլիական կռվում աթենացիների պարտության մասին:

— Մենք Արտաքսերքսեսի բռնության զոհեր ենք:

Եվ Քերեյն ու Պոլիքարմոսը ամեն ինչի մասին պատմեցին եգիպտացուն:

— Մենք մեզ քո ձեռքը հանձնելով,— ասացին նրանք եգիպտացուն,— ի դեմս մեզ՝ մենք քեզ ենք հանձնում քո հավատարիմ բարեկամներին, որոնց քաջության են մղում երկու առավել գործուն ուժեր՝ մեռնելու փափագը և վրիժառության փափագը: Իմ դժբախտության ծանրության տակ ես հիմա մեռած կլինեի, բայց ես ողջ եմ մնացել միայն նրա համար, որպեսզի վիշտ պատճառեմ իմ թշնամուն:

*Բայց չեմ կորչի ես անվաստակ ու վեհ փառքին անմասնակից,
Պիտ կատարեմ վսեմ մի գործ, որ սերունդներն էլ իմանան*¹⁸⁰:

Լսելով այդ, եգիպտացին ուրախացավ և, սեղմելով Քերեյի ձեռքը, ասաց.

— Երիտասարդ, դու ժամանակին ինձ մոտ եկար, և ինձ, և քեզ ձեռնտու ժամանակին:

Նա իսկույն հրամայեց գեղք տալ Քերեյին ու Պոլիքարմոսին և տանել նրանց գորավրան: Շուտով նա Քերեյին դարձրեց իր սեղանի հյուրը, ապա նաև իր խորհրդատուն, տեսնելով նրա քաջությունը և ողջախոհությունը, բացի այդ, նաև՝ ազնվությունը, քանի որ բնականից լավ մարդ լինելով, Քերեյը ստացել էր նաև հոգատար դաստիարակություն:

Գլխավոր դրդիչ պատճառը, որ ստիպում էր Քերեյին աչքի ընկնել, նրա ցանկությունն էր արքային ցույց տալ, որ ինքը ոչ թե ոչնչություն է, այլ հարգանքի արժանի մարդ:

Մի խոշոր գործում էլ նա իսկույն դրսևորեց իրեն:

Եգիպտացուն ամեն ինչ հեշտ էր հաջողվում: Մի հարձակումով նա տիրացավ Կելեսիրիային¹⁸¹ և նրան ենթարկվեց Փյունիկեն, բացառությամբ Տիրի¹⁸²: Տիրոցները ռազմիկ ժողովուրդ էին և չցանկացան կորցնել քաջությամբ ձեռք բերած իրենց փառքը: Նրանք նաև վախենում էին խայտառակել Հերակլին՝ իրենց գլխավոր աստծուն, որին, համարյա միակին էին նվիրել նրանք իրենց քաղաքը: Նրանք հենվում էին նաև տեղանքի հուսալի պայմանների վրա: Նրանց քաղաքը ծովի մեջ էր և ցամաքին միանում էր մի նեղ պարանոցով, որը քաղաքը դարձնում էր համարյա կղզի: Տիրը հիշեցնում էր մի նավ, որը խարխուս է ձգել ափին և կամրջակ մեկնել դեպի երկիրը: Այդ պատճառով տիրոցների համար դժվար չէր բոլոր կողմերով անջրպետվել կռվից: Բավական էր միայն, որ նրանք փակեին դարպասը և, շրջապատված ծովով, անմատչելի կդառնային ցամաքային զորքի համար: Իսկ ծովի կողմից նավերի հարձակումներից նրանք պաշտպանվում էին ամուր պարիսպներով, և ինչպես դռներն են փակում տան մուտքը, այնպես էլ նավահանգիստներն էին փակում Տիրի մուտքը:

3

Ահավասիկ, հակառակորդը գրավել էր չորս կողմը, և միայն տիրոցներն էին արհամարհում եգիպտացուն, շարունակելով Պարսից աշխարհի հետ պահպանել բարեկամական հավատարմությունը: Դրա համար բարկացած եգիպտացին խորհրդի նստեց և այդ ժամանակ էլ առաջին անգամ նիստի հրավիրեց նաև Քերեյին:

— Դաշնակիցներ,— հավաքվածներին այդպես դիմեց եգիպտացին,— դաշնակիցներ, քանզի չեմ կարող իմ բարեկամներին ստրուկներ անվանել: Դուք տեսնում եք անելանելի վիճակը: Ինչպես նավը, որին բռնում է հակառակ քամին, այդպես էլ մեր արագ առաջընթացում մեզ է բռնել համառ Տիրը: Իսկ շտապում է, ինչպես լսում ենք, նաև արքան¹⁸³: Եվ այդպես, ի՞նչ անենք մենք: Տիրը ոչ կարող ենք գրավել, ոչ էլ՝ շրջանցել: Պատի պես նա կանգնել է մեր առջև մեզվից շրջափակելով համայն Ասիան, և ես այն համոզման եմ, որ մենք պետք է, ինչքան կարելի է, շատ հեռանանք այստեղից, նախքան պարսկական ուժերը կմիանան տիրոցներին: Թշնամու հողում մեզ սպառնում է բռնվելու վտանգը: Բայց Պելուսիսը¹⁸⁴ ամրացված է: Այնտեղ¹⁸⁵ մեզ համար սարսափելի չի լինի ոչ տիրոցների, ոչ մարերի¹⁸⁶, ոչ էլ աշխարհում որևէ մեկի արշավանքը: Այնտեղ փռված են անմատչելի ավազուտները, նեղ է այնտեղ տանող ճանապարհը, այնտեղ մեր ծովն է և եգիպտացիներին բարեհաճ Նեղոսը:

Այդ ճառին հետևեց ընդհանուր, սպասողական լռությունը: Հուսահատությունը համակեց բոլորին: Միայն Քերեյը համարձակվեց խոսել:

— Օ՛, արքա: Չէ որ մեր իսկական արքան դու ես և ոչ թե պարսիկը, աշխարհի ամենանողկալի այդ անպիտանը: Չէ որ աստվածների կամքով մենք հաղթում ենք: Եվ մենք կտիրենք ոչ միայն Տիրին, այլև Բաբելոնին: Կռվում շատ դժվարություններ են լինում, որոնց առջև չի կարելի հուսահատվել, և որոնք հաղթահարելու համար պետք է միշտ աչքի առաջ ունենալ բարի հույսը: Իսկ այդ տիրոջներին, որոնք հիմա ծիծաղում են մեզ վրա, ես զինաթափ արած ու շղթայակապ կբերեմ քեզ մոտ: Եթե չես հավատում, ապա նահանջիր, նախապես սպանելով ինձ որպես զոհ, որովհետև քանի ես ողջ եմ, փախուստի չեմ դիմի: Իսկ եթե դու ցանկանում ես անպայման փախչել, ապա մի քիչ մարդ թող ինձ հետ, ովքեր կամավոր կցանկանան մնալ:

*Կմնանք ես և Պոլիքարմոսը ու կկռվենք,
Քանզի աստված է մեզ բերել¹⁸⁷:*

Յուրաքանչյուրն սկսեց ամաչել Քերեյի կարծիքին չմիանալուց: Իսկ արքան, հիանալով նրա քաջությամբ, թողեց, որ նա զորքից ընտրի ինչքան մարդ ուզում է, ինչքան պետք է իրեն: Եվ Քերեյն ընտրեց, բայց ոչ անմիջապես: Մտնելով ռազմիկների շարքերը և նույնը հրամայելով անել նաև Պոլիքարմոսին, նա նախ սկսեց փնտրել, թե զորքում հույներ չկա՞ն և, իսկապես, վարձկանների մեջ քիչ չգտնվեցին այդպիսիք: Նրանցից էլ Քերեյն ընտրեց լավեղենմոնացիներին, կորնթացիներին և ուրիշ պելոպոնեսացիների: Նա գտավ նաև շուրջ քսան սիցիլիացիների: Այսպիսով, կազմելով երեք հարյուր մարդուց բաղկացած իր ջոկատը, նա այսպես ելույթ ունեցավ նրանց առջև:

— Քաղաքացի հույներ,— ասաց նա,— արքան ինձ իրավունք է տվել զորքից ընտրելու լավագույն մարտիկներին, և ես ընտրել եմ ձեզ: Չէ որ ես ինքս էլ հույն եմ, սիրակուզցի, դորիացի: Բայց մյուսների մոտ դուք պետք է աչքի ընկնեք ոչ միայն ձեր ազնվատոհմությամբ, այլև՝ քաջությամբ: Թող ձեզնից ոչ ոք չվախենա այն գործից, որին մղում եմ ես: Այն մեզ համար հեշտ իրագործելի կլինի ոչ այնքան իրական դժվարությամբ, որքան դժվար կլինի առերևույթ: Թերմոպիլոսի մոտ հույները՝ ճիշտ այնքան մարդկանցով, ինչքան մենք ենք, դիմակայեցին Քսերքսեսին¹⁸⁸: Իսկ տիրոջները հինգ հարյուր բյուր¹⁸⁹ չեն: Նրանք փոքրաթիվ են և պարծենկոտ, որ գոռոզության արդյունք է, և ողջամիտ հպարտություն չունեն: Թող իմանան նրանք, թե հույները որքան են գերազանցում փյունիկեցիներին: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես չեմ ձգտում հրամանատարության և պատրաստ եմ հետևել ցանկացած մարդուն, ով մտադիր լինի ստանձնել ղեկավարությունը: Ես կհնազանդվեմ այդ մարդուն, քանի որ ես թանկ եմ գնահատում ոչ թե իմ անձնական, այլ մեր ընդհանուր փառքը:

Ամենքը գոչեցին:

— Դո՛ւ էլ կլինես ստրատեգը:

— Ձեր ցանկությամբ դառնում եմ ձեր ստատեգը,— ասաց Քերեյը:— Դուք ինձ հանձնեցիք ղեկավարությունը: Կաշխատեմ ամեն ինչում վարվել այնպես, որպեսզի, ընտրելով ինձ, դուք ստիպված չլինեք զոջալ իմ հանդեպ ունեցած բարեհաճության և վստահության համար: Բայց դուք, որ հիմա էլ աստվածների օգնությամբ փառք եք վաստակել և արժանացել շրջապատողների ուշադրության, դաշնակից զորքերի մեջ կլինեք ամենահարուստը և ձեր քաջության համար գալիքում կպահպանեք ձեր անմահ անունը: Ինչպես բոլորն են երգում Միլթիադոսի¹⁹⁰ ռազմիկներին և Լեոնիդոսի ջոկատի երեք հարյուր մարտիկներին, այդպիսի բարեհաճությամբ էլ կմեծարեն նաև Քերեյի ջոկատը:

Նա շարունակեց էլի խոսել, երբ բոլորը գոչեցին՝ «առաջնորդի՛ր» և նետվեցին դեպի զենքերը:

Չինելով նրանց հոյակապ գեներալգրահով, շարք կազմած նրանց տարավ արքայական վրանը, որոնց տեսնելով եգիպտացին հիացավ, պատկերացնելով, որ իր առջև ուրիշ, իրեն անծանոթ մարտիկներ են, և մեծ նվերներ խոստացավ նրան:

— Մենք հավատում ենք նվերներին: Բայց մարտի համար պատրաստ պահիր մի ուրիշ զորք, որով, սակայն, դու Տիրին չմոտենաս, մինչև մենք չտիրենք նրան և չկանչենք ձեզ՝ բարձրանալով պարիսպների վրա:

— Թող այդպես էլ անեն աստվածները,— ի պատասխան դրան, ասաց արքան:

Քերեյն իր ռազմիկներին դեպի Տիր տարավ խիտ շարքերով, այնպես որ թվում էր, թե նրանք չափազանց քիչ են: Իսկապես.

*Այդպես ահա տեգ-նիզակը նիզակին էր սեղմված ընդհուպ,
Ասպարները՝ ասպարներին, վահանները՝ վահաններին,
Սեղմված էին մարդը մարդուն¹⁹¹:*

Թշնամին սկզբում նույնպես չնկատեց նրանց: Իսկ երբ մոտեցան, ապա, տեսնելով նրանց, քաղաքի պարիսպների վրա կանգնած մարդիկ իմաց տվին քաղաքի ներսում գտնվողներին, և, պատրաստ էին նրանց ընդունել ամեն ինչի, բայց ոչ՝ թշնամու տեղ: Դե, ո՞վ կարող էր սպասել, որ այդ փոքրաթիվ ջոկատը գնում է մի հզոր քաղաքի դեմ, որտեղ մոտք գործել չէր համարձակվել նույնիսկ եգիպտացիների ամբողջ բանակը: Երբ նրանք արդեն ընդհուպ մոտեցան պարիսպներին, սկսեցին հարցնել, թե ովքեր են նրանք և ինչ են ուզում: Եվ Քերեյը պատասխանեց.

— Հույն վարձկաններ ենք, որ եգիպտացուց չենք ստացել մեր վարձը և ավելացրած դրան՝ մի կերպ փրկվել ենք նրա ձեռքից: Մենք եկել ենք ձեզ մոտ, ցանկանալով ձեզ հետ միասին վրեժ լուծել մեր ընդհանուր թշնամուց:

Այս խոսքերը հաղորդվեցին քաղաքի ներսում գտնվողներին, և, բացելով դարպասները, քաղաքից դուրս եկավ ստրատեգը՝ մի փոքրիկ ջոկատի ուղեկցությամբ: Նա առաջինն ընկավ Քերեյի հարվածից: Քերեյն այնուհետև հարձակվեց մյուսների վրա:

*Եվ կոտորեց նա աջ ու ձախ:
Բարձրացավ ճիչ և հառաչանք¹⁹²:*

Սպանում էին միմյանց, մեկը մյուսին: Ռազմիկները հիշեցնում էին այն առյուծներին, որոնք հարձակվել են անպաշտպան հոտի վրա: Ամբողջ քաղաքում լաց ու հառաչանք էր լսվում: Քչերը տեսան, թե ինչ է պատահել, բայց բոլորն ընկան խուճապի մեջ: Իրար հրմշտելով դարպասներից դուրս էին գալիս ժողովրդի խռնված բազմությունները, որոնք աշխատում էին տեսնել պատահածը: Եվ դա էլ հիմնականում կործանեց տիրոջներին: Ներսում գտնվողները փորձում էին դուրս գալ քաղաքից, իսկ դարպասներից դուրս եկածները ընկնում էին սրերի ու նիզակների հարվածներից և ետ, դեպի քաղաք էին վազում, նեղվածքից բախվում դուրս եկողներին և դրանով դյուրացնում իրենց հարվածի տակ դնելը: Խուճապ-խուճապ թափված դիակների պատճառով հնարավոր չէր նույնիսկ փակել դարպասները:

Այս աննկարագրելի իրարանցման մեջ իր սառնասրտությունը պահպանում էր միայն Քերեյը: Ուժով ճեղքելով ու ներս մտնելով դարպասներից, նա բարձրացավ տասներորդ պարիսպի վրա և սկսեց այնտեղից ազդանշան տալ: Եգիպտացին հասավ ամեն տեսակ խոսքից արագ և Տիրը գրավեց:

Բայց այն ժամանակ, երբ բոլորը տոնում էին Տիրի գրավումը, միայն Քերեյը գոհ չմատուցեց և պսակ չհագավ¹⁹³: «Կալիրոյ, ինչո՞ւ տոնեմ ես հաղթանակը, երբ դու չես տեսնում այս ցնծությունը: Մեր ամուսնական այն զիշերից հետո ես երբեք պսակ չեմ կրի: Եթե դու ողջ չես, ապա ինձ համար սրբապղծություն կլիներ ուրախանալ, իսկ եթե դու ողջ ես, ապա մի՞թե ես կարող եմ նույնիսկ այսպիսի օրը տոնական խնդությամբ համակվել, սեղանի մոտ նստելով քեզնից անջատ»:

Իսկ Պարսից արքան, անցնելով Եփրատը, շտապում էր որքան կարելի է շուտ հանդիպել հակառակորդին, քանի որ, իմանալով Տիրի գրավման մասին, սկսեց վախենալ նաև Սիրիայի, ինչպես և ամբողջ Ասորիքի համար, և հաշվի առնելով, որ իր առջև կանգնած հակառակորդը հավասարազոր է իրեն: Այդ պատճառով նա որոշեց այնուհետև

առաջ շարժվել թեթև, առանց ծանրաշարժ շքախմբերի, որոնք խանգարում էին արագ գնացքը, և, հետևաբար, առաջին շարժումը մարտական մասը, նա տարեց զինվորներին, գանձերը, հանդերձները և արքայական թանկարժեք իրերը թողեց թագուհու հետ: Երբ կռիվը իր ճանապարհին իրարանցումով ու տագնապով լցրեց ամեն տեղ և հասավ մինչև Եփրատն ընկած քաղաքները, այդ ժամանակ արքային ավելի հուսալի թվացին նրանք, ում թողել է ինքը, տանելով նրանց Արադ կղզին:

5

Արադ կղզին, որի վրա կանգնած էր Աֆրոդիտեի հնամյա տաճարը, ցամաքից հեռու է երեսուն ստադիա¹⁹⁴: Ինչպես սեփական տանը, կանայք ապրում էին այնտեղ բոլորովին ապահով: Կալիրոյը տեսնելով Աֆրոդիտեի արձանը, մոտեցավ նրան և իր արտասուքներով հանդիմանեց աստվածուհուն: Վերջապես նա հանգիստ ասաց.

— Ահա և ընդարձակ Սիցիլիայի փոխարեն Արադ կղզյակը, որի վրա ես ոչ մի մտերիմ չունեմ: Բավ է, տիրակալուհի, դեռ երկա՞ր պիտի կռվես իմ դեմ: Եթե ընդհանրապես ես վիրավորել եմ քեզ, ապա արդեն դու վրեժխնդիր ես եղել ինձնից, իսկ եթե քեզ զայրացրել է իմ չարաբաստիկ գեղեցկությունը, ապա այն նաև դարձել է իմ կործանման պատճառը: Իմ թշվառությունների մեջ միայն մի բան էր պակասում՝ պատերազմի փորձությունը, բայց ահա ես ենթարկվում եմ նաև դրան, և այժմյան իմ թշվառությունների համեմատությամբ սիրալիր է թվում նույնիսկ Բաբելոնը: Այնտեղ Զերեյը մոտիկ էր գտնվում: Իսկ հիմա նա, իհարկե, մահացել է: Նա չէր կարող տանել իմ մեկնումը: Եվ ոչ ոք չկա, որից տեղեկանայի, թե ինչ է պատահել նրան: Այնտեղ ինձ շրջապատողները ամենքն էլ օտար են, ամենքն էլ բարբարոս, մարդիկ, որոնք կամ նախանձում են ինձ, կամ ատում: Իսկ նրանք, ովքեր սիրում են ինձ, ինձ համար ավելի վատթար են, քան նրանք, ովքեր ատում են ինձ: Ասա ինձ, տիրակալուհի, ո՞րք է Զերեյը:

Այս ասելով, նա հեռացավ արձանից, երբ նրա դեմ ելավ Ռոդոգունը, Չոպիրոսի դուստրը՝ Մեհաբիզի կինը, որը հոր և ամուսնու կողմով պատկանում էր Պարսից անվանի տոհմի, այն նույն Ռոդոգունը՝ պարսկուհին, որ առաջինը դիմավորեց Կալիրոյին, երբ վերջինս Բաբելոն մտավ:

Իսկ եգիպտացին հենց որ լսեց, որ ցամաքում ու ծովում կռվի պատրաստ արքան¹⁹⁵ մոտիկ է գտնվում, անմիջապես կանչեց Զերեյին և ասաց.

— Մինչև այժմ ես չեմ հասցրել շնորհակալություն հայտնել քեզ քո առաջին հաջողության համար: Չէ որ Տիրը ես քեզնից ստացա: Եկ, խնդրում եմ, հետագայում բաց չթողնենք այն շնորհները, ինչպիսիք մեզ համար պատրաստ են և որոնց մասնակից պիտի դարձնեմ քեզ: Եգիպտոսն ինձ բավական է: Ասորիքը կլինի քո տիրույթը: Սակայն, արի խելք-խելքի տանք, թե ինչպես վարվենք: Պատերազմը ծավալվում է ցամաքում ու ծովում, և ես թույլ եմ տալիս, որ դու որոշես, թե որի՞ ղեկավարությունն ես նախընտրում՝ ցամաքային ուժերի՞նք, թե ծովայինը: Ի դեպ, ես կարծում եմ, որ դու սովոր ես ծովին: Չէ որ դուք՝ սիրակուզցիներդ, ծովամարտում հաղթել եք նույնիսկ աթենացիներին, այժմ դու պետք է մրցես պարսիկների հետ, որոնց հաղթել են աթենացիները¹⁹⁶: Իսկ սիցիլիականի համեմատությամբ եգիպտական նավերը, որոնք կգտնվեն քո տրամադրության տակ, և ավելի հզոր են, և ավելի բազմաթիվ: Ծովում դու օրինակ վերցրու քո աներոջը՝ Յերմոկրատեսին:

Զերեյը պատասխանեց.

— Ինձ համար հաճելի է ցանկացած մարտը, իսկ պաշտպանելով քեզ, ես միաժամանակ ընդունում եմ, որ կռվում եմ արքայի դեմ, որն ինձ համար այնքան ատելի է: Միայն նավերի հետ միասին տուր ինձ իմ երեք հարյուր մարտիկներին:

— Վերցրու նրանց,— ասաց եգիպտացին, ուրիշներին էլ վերցրու ինչքան ցանկանում ես:

Եվ անմիջապես խոսքը գործ դարձավ: Կարիքն ստիպում էր շտապել:

Եգիպտացին, ցամաքային զորքերի գլուխ անցած, գնաց դիմավորելու թշնամուն, իսկ Զերեյը նշանակվեց ծովակալ¹⁹⁷: Ցամաքային զորքերում այդ լուրն սկզբում ընդունվեց վիատությամբ: Ափսոսում էին, որ Զերեյն իրենց հետ չէ: Արդեն սիրում էին նրան և նրա ղեկավարության հետ բարի հույսեր էին կապում: Նավատորմիղն, ընդհակառակը,

թևավորվեց հույսերով և հպարտությամբ լցվեց այն զգացումից, որ ինքն ունի լավագույն և քաջասիրտ պետ: Յուրաքանչյուրը երագում էր որևէ մեծ բանի մասին. և տրիերարքոսները¹⁹⁸, և նավավարները, և նավաստիները, և զինվորները նույնանման ձգտում ունեին իրենց ջանասիրությամբ առաջինը երևալ Զերեյի աչքում:

Եվ ցամաքում և ծովում մարտերն սկսվեցին միևնույն օրը: Եգիպտացիների հետևակը երկար, շատ երկար դիմագրավեց մարերի և պարսիկների գրոհները, բայց թվով գերազանցող հակառակորդի առջև տեղի տվեց, և պարսկական հեծելազորը, արքայի գլխավորությամբ, սկսեց հետապնդել: Եգիպտացին աշխատում էր փրկվել Պելուսիսում, իսկ պարսիկը ցանկանում էր բռնել նրան: Եվ գուցե եգիպտացուն հաջողվեր անցնել, եթե Դիոնիսոսը մի զարմանալի բան չաներ: Փայլուն մարտնչելով և ճակատամարտի ժամանակ ու մշտապես արքային մոտիկ գտնվելով, որպեսզի երևա նրա աչքին, Դիոնիսոսն առաջինն ստիպեց նահանջելու իր առջև գտնվող թշնամու ջոկատներին, իսկ այնուհետև, երբ սկսվեց եգիպտացիների՝ առանց կանգառի, օրերով ու գիշերներով շարունակվող նահանջը, նա նկատելով, որ արքան գոհ չէ դրանով, ասաց.

— Մի վշտանա, տիրակալ: Ես չեմ թողնի, որ եգիպտացին փախչի մեզնից, եթե դու ինձ ընտիր հեծյալներ տաս:

Արքան համաձայնեց և նրան տվեց հինգ հազար ընտիր հեծյալներից կազմված մի ջոկատ: Այդ ջոկատն ստանալով, Դիոնիսոսը նրա հետ մեկ օրում երկու անգում կատարեց և, գիշերով անսպասելիորեն հարձակվելով եգիպտացու վրա, շատերին գերեց, իսկ ավելի մեծ թվով մարդկանց էլ սպանեց: Եգիպտացին, երբ նրան ողջ գերի վերցրին, սպանեց ինքն իրեն, և նրա գլուխը Դիոնիսոսը բերեց արքային: Տեսնելով եգիպտացու գլուխը, արքան Դիոնիսոսին ասաց.

— Զեզ մոցնում եմ իմ տոհմի երախտավորների ցուցակի մեջ և անում եմ քեզ համար ամենաթանկ նվերը, որին ձգտում ես ամենից շատ. Կալիրոյին կնության եմ տալիս քեզ: Պատերազմը որոշեց դատավեճը: Զո քաջության համար դու շահել ես հաղթական լավագույն պարգևը:

6

Դիոնիսոսը գլուխ տվեց արքային և, աներկբայորեն համոզվելով, որ ինքն այժմ հաստատապես դարձել է Կալիրոյի ամուսինը, իրեն աստված պատկերացրեց:

Ցամաքում այդպես էր: Իսկ ծովում Զերեյն այնպիսի հաղթանակ տարավ, որից հետո թշնամու նավատորմն այլևս չփորձեց նրա հետ կռվել: Չընդունելով եգիպտական նավերի հարվածը և ընդհանրապես նրանց հետ մարտի չմտնելով, պարսկական նավերն անմիջապես փախուստի դիմեցին, իսկ ափ նետվածներն էլ՝ մարդկանցով գերի ընկան Զերեյին: Ծովը լցվեց մարական նավերի բեկորներով: Բայց Պարսից արքան չգիտեր ծովամարտում յուրայինների պարտության մասին, իսկ Զերեյն էլ տեղյակ չէր ցամաքում եգիպտացիների պարտության մասին, և երկուսով յուրաքանչյուրն իրեն հաղթող էր համարում ինչպես ցամաքում, այնպես էլ ծովում:

Այն օրը, երբ նա ծովամարտ տվեց, Զերեյն իր նավատորմից բերեց Արադի մոտ և, տիրակալի առջև պատասխանատվությունից վախենալով, հրամայեց, որ նավերը, լողարկելով, պահակեն կղզու շուրջը:

Չինվորները ներքիններին, սպասավորուհիներին և մնացած մանր-մուկ մարդկանց քշեցին քաղաքի հրապարակ: Հրապարակն ընդարձակ էր, բայց կղզում այնքան մեծ թվով ժողովուրդ էր կիսվել, որ մարդիկ քնում էին ոչ միայն ոտքի վրա¹⁹⁹, այլև՝ բաց երկնքի տակ: Չինվորները կարևոր մարդկանց տարան Հրապարակին մերձ շենքը, որ սովորաբար ծառայում էր որպես իշխանությունների նստավայր: Այդտեղ կանայք նստել էին հատակին, թագուհու շուրջը, առանց կրակ վառելու²⁰⁰ և առանց ուտելիքի ձեռք տալու: Նրանք համոզված էին, որ արքան գերի է ընկել, որ պարսիկների գործը տապալվել է, և ամենուրեք հաղթել է եգիպտացին:

Արադի վրա իջած գիշերը և ուրախալի էր, և ծանր: Եգիպտացիներն ուրախացել էին կռվից և պարսկական ստրկությունից ազատվելու համար, իսկ պարսիկ գերիներն սպասում էին շղթաների, կախաղանի օղակների, ծաղրուծանակի, մահվան կամ, լավագույն դեպքում, ստրկության: Ստատիրան արտասվում էր իր գլուխը դրած Կալիրոյի

ծնկների վրա: Որպես կրթված հույն կին, Կալիբոյը, որը լավ գիտեր, թե ինչ է վիշտը, կարողանում էր ավելի լավ, քան ուրիշները, հանգստացնել թագուհուն:

Եվ պատահեց հետևյալը: Եգիպտացի մի զինվոր, որին հանձնարարված էր շենքում գտնվող մարդկանց պահակությունը, իմանալով, որ այդտեղ է տեղավորված նաև թագուհին, և, ակնածելով արքայական տոհմանդամից, որ հատուկ էր յուրաքանչյուր բարբարոսի, չհամարձակվելով մոտենալ նրան, կանգ առավ փակ դռան ետև և ասաց.

— Մի անհանգստանա, տիրակալուհի: Ծովակալը դեռևս չգիտե, որ այստեղ, մյուս կանանց հետ, բանտարկված ես նաև դու, բայց երբ նա իմանա այդ մասին, ապա մարդասիրաբար կհոգա քեզ համար: Չէ որ նա ոչ միայն քաջ է, այլև՝ բարի²⁰¹: Նա²⁰² քեզ²⁰³ կդարձնի իր կինը: Նա սիրահարկոտ է:

Կալիբոյը, լսելով այդ, բարձրաձայն հեկեկաց և սկսեց զգգգել իր մազերը, բացակասելով.

— Հիմա ես իսկապես գերի եմ: Ավելի լավ է ինձ սպանեն, քան այդպիսի բաներ հայտնեն: Ես չեմ հանդուրժի ամուսնությունը: Ես մահ եմ բաղձում: Թող ջարդեն ինձ, թող դադեն: Ես այստեղից չեմ շարժվի: Ես կմեռնեմ այստեղ: Իսկ եթե, ինչպես դու ես ասում, ստրատեգը մարդասեր է, ապա թող նա ինձ մի բարություն անի. թող այստեղ էլ սպանի ինձ:

Չինվորը կրկնեց իր խնդրանքը, բայց Կալիբոյը տեղից չբարձրացավ, այլ, գլուխը շորով ծածկելով, շարունակեց պառկած մնալ նրա առջև: Եգիպտացին մտածում էր, չիմանալով ինչ անել: Ուժ գործադրել նա չէր համարձակվում, բայց ի վիճակի էլ չէր համոզել: Դրա համար էլ նա ետ դարձավ Զերեյի մոտ և տխրադեմ մոտեցավ նրան:

— Դե, էլ ի՞նչ է եղել,— հարցրեց Զերեյը ռազմիկի դեմքին նայելով:— Կողոպտում են ավարի լավագույն մասը: Դե, դա նրանց վրա էժան չի նստի:

— Տեր իմ, ոչ մի վատ բան չի եղել,— պատասխանեց եգիպտացին,— միայն այն կինը, որին ես գտել եմ այնտեղ, ինչպես կանացի հանդերձով մարտական շարքում կանգնած, հրաժարվում է գալ, և, հատակին պառկած, մահ է ցանկանում ու խնդրում որպեսզի իրեն սուր տան:

Զերեյը բարձր ծիծաղեց.

— Դու անշնորհք մարդ ես,— ասաց նա:— Դու, ի՞նչ է, չգիտե՞ս, թե ինչպես են համոզում կանանց, փաղաքշանքով, խոստումներով, հատկապես այն ժամանակ, երբ կնոջը թվում է, թե սիրահարված են իրեն: Իսկ դու, երևի, բռնության ես դիմել կամ կոպտե՞լ նրան:

— Ոչ, տեր իմ,— առարկեց եգիպտացին,— այն ամենը, ինչ դու ասում ես, ես կատարել եմ, թերևս, բարձր մակարդակով: Ես նույնիսկ նրան սուտ ասացի քո անունից, հավատացնելով, որ դու կնության կառնես նրան: Իսկ նա առանձնապես դրա համար էլ բռնվեց զայրույթով:

— Ես ինչքան հրապուրիչ պիտի լինեմ, ինչպե՞ս կսիրեն ինձ, եթե նույնիսկ ինձ չտեսած, նա ասելությունից երես է թեքել ինձնից: Այդ կնոջ հպարտությունը, սակայն, նման է վեհանձնության: Թող նրա դեմ բռնություն չգործադրեն: Թողեք նա իրեն պահի այնպես, ինչպես ցանկանում է: Ես պարտավոր եմ հարգել ողջախոհությունը: Գուցե նա էլ լաց է լինում իր ամուսնու համար:

ԳԻՐԶ ՈՒԹԵՐՈՐԴ

1

Այն մասին, թե, ենթադրելով, որ Կալիբոյը տրված է Դիոնիսոսին, Զերեյն ինչպես անցավ եգիպտացու կողմը, որպեսզի վրեժ լուծի արքայից, և ինչպես, նշանակվելով ծովակալ ու ծովի վրա հաղթելով նա տիրացավ Արադին, որտեղ արքան տարել էր իր կնոջն ու իր ամբողջ շքախումբը, նաև Կալիբոյին, պատմեցինք նախորդ գրքում:

Ճակատագիրը սարքել էր ոչ միայն զարմանալի, այլև տանջալից մի գործ: Նա ցանկանում էր, որպեսզի Զերեյը, չիմանալով, որ իր ձեռքում է գտնվում Կալիբոյը, և ուրիշների կանանց նստեցնելով իր նավերը, կղզու վրա թողներ միայն իր սեփական կնոջը, և այնտեղ թողներ նաև ոչ թե որպես Դիոնիսոսի հարս, որպես քնած Արիադեն²⁰⁴,

այլ որպես ավար իր թշնամիների համար: Բայց Աֆրոդիտեի կողմից ընդունվել էր մի ուրիշ իմաստուն որոշում, քանի որ նա պատրաստվում էր հաշտվել Քերեյի հետ, որի վրա ժամանակին դաժանորեն զայրացել էր իր չարաբաստիկ խանդով, երբ նրանից ստանալով գեղասքանչ պարգևը²⁰⁵, ինչպիսին նրանից չի ստացել նույնիսկ Ալեքսանդր Պարիսը²⁰⁶, Քերեյը այդ բարությանը պատասխանել է վիրավորանքով: Բայց քանի որ Արևմուտքից Արևելք թափառումների ժամանակ ապրած անթիվ-անհամար տառապանքների գնով, նա լավ է արդարացրել իրեն Էրոտի առջև, Աֆրոդիտեն խղճաց և ցանկացավ նորից միավորել հրաշալի զույգը, որին մի ժամանակ միավորել էր ամուսնական բեռով, հետո պտտեցրել աշխարհում, քշելով նրանց ցամաքում և ծովում: Եվ ես կարծում եմ, որ ընթերցողներին հաճո կլինի այս պատմության վերջաբանը, որը կազատի նրանց այն դեպքերի մռայլությունից, որոնք նկարագրվել են նախորդ մասերում: Վերջաբանում խոսք կգնա արդեն ոչ թե ավազակության, ստրկության, դատավեճի, մարտերի, ինքնասպանության, կռիվների կամ գերիների, այլ սիրո և օրինական ամուսնության մասին: Եվ այդպես, ես կպատմեմ այն մասին, թե աստվածուհին²⁰⁷ ինչ կերպ բացահայտեց ճշմարտությունը և իրար ինչպես ցույց տվեց նրանց, ովքեր անտեղյակ էին միմյանցից:

Գիշեր էր, իսկ կղզու վրա դեռ շատ գերիներ էին մնացել, և, որպեսզի ճանապարհ ընկնելու գործը կազմակերպի, Քերեյը, հոգնած, վեր կացավ անկողնուց:

Հրապարակով անցնելիս եգիպտացի զինվորը նրան ասաց.

— Այն կինը, որը, որոշելով ինքնասպան լինել, չի ցանկանում գետնից բարձրանալ, գտնվում է ահա այստեղ: Գուցե, տեր իմ, հաջողվի քեզ ստիպելու, որ նա բարձրանա տեղից: Իսկապես, դու ինչո՞ւ պիտի կորցնես ավարի լավագույն մասը:

Այդ խոսքերը գրավեցին նաև Պոլիքարմոսի ուշադրությունը, որը ձգտում էր, եթե դա միայն հնարավոր լիներ, նոր սիրով շեղել Քերեյին Կալիբոյի կարոտը քաշելուց:

— Քերեյ,— ասաց Պոլիքարմոսը,— ներս մտնենք:

Քերեյը ոտք դրեց շեմին և տեսավ հատակին պառկած և շորով ծածկված կնոջը, որի իրանը և շնչառությունը տազնապով լցրին նրա սիրտը և անմիջապես ուշադրություն գրավեցին: Քերեյն, իհարկե, կճանաչեր նրան, եթե հաստատ համոզված չլիներ, որ Դիոնիսոսը նրանից խել է Կալիբոյին: Չգուշորեն մոտենալով պառկածին, նա ասաց.

— Սրտապանդիր, կին: Ով էլ որ դու լինես, մենք չենք բռնանա քո կամքին: Դու կամուսնանաս նրա հետ, ում հետ ցանկանաս:

Նա դեռ չէր հասցրել վերջացնել, երբ Կալիբոյը, ճանաչելով նրա ձայնը, բացեց իր դեմքը, և նրանք երկուսով միաժամանակ բացականչեցին.

— Քերեյ:

— Կալիբոյ:

Գրկախառնվելով, նրանք ընկան անզգա: Անակնկալից խոսելու ընդունակությունը սկզբում կորցրեց նաև Պոլիքարմոսը, և երկար ժամանակ պահանաջվեց, մինչ որ, վերջապես, նա բացականչեց.

— Վեր կացե՛ք: Դուք նորից միասին եք: Աստվածները կատարեցին ձեր թախանձանքը: Մի մոռացե՛ք, սակայն, որ դուք ոչ թե հայրենիքում եք, այլ թշնամական երկրում և որ նախ հարկավոր է ամեն ինչ կարգի գցել, որպեսզի ոչ ոք այլևս ձեզ չանջատի իրարից:

Այս բառերը Պոլիքարմոսը ասաց բարձրագույն, իսկ նրանք, ասես խոր ջրհորի մեջ, հազիվ լսեցին նրա ձայնը, որ իրենց էր հասնում կարծես ինչ-որ վերևից: Նրանք շուտ ուշքի չեկան, իսկ հետո, տեսնելով միմյանց և համբուրվելով, նորից նվազեցին: Նրանց հետ նույնը կրկնվեց և երկրորդ անգամ, և երրորդ, և ամեն անգամ նրանք միաձայն ասում էին միմյանց.

— Դու ինձ հետ ես, Կալիբոյ, մի՞թե իսկապես դու Կալիբոյն ես, մի՞թե իսկապես դու Քերեյն ես:

Համբավը վազեց ու հայտնեց այն մասին, որ ծովակալը գտել է իր կնոջը, և չկար մի զինվոր, որ չթողներ իր վրանը, մի նավաստի, որ չթողներ իր նավը, մի դռնապան, որ չթողներ իր տունը: Մարդիկ վազում էին ամեն կողմից և ամենքն ասում էին.

— Բախտավոր կին, ի՞նչ հրաշալի ամուսին գտավ:

Բայց երբ Կալիբոյը երևաց նրանց առջև, ապա դադարեցին Քերեյի պատվին գովասանքները և բոլորի հայացքները սևեռվեցին նրան, կարծես թե իրենց առջև միայն

Նա էր կանգնած: Կալիբրոյը հպարտությամբ քայլեց՝ մի կողմից Զերեյի, մյուս կողմից Պոլիքարմոսի ուղեկցությամբ: Նրանց վրա էին նետում ծաղիկներ, գլխներին դնում պսակներ, իսկ նրանց ոտքերի տակ ցողում էին գինի և անուշաբույր: Այն, ինչ ամենահաճելին է լինում և կռվի ժամանակ, և խաղաղ ժամանակ, համատեղվել են այստեղ. հաղթության հանդեսը և հարսանիքը:

Գիշեր ու ցերեկ մշտապես զբաղված լինելով գործով, Զերեյն ընտելացել էր քնել նավի վրա: Բայց այստեղ նա բոլոր գործերը հանձնեց Պոլիքարմոսին, իսկ ինքը, նույնիսկ սպասելով, որ գիշերը վրա հասնի, գնաց արքայական ննջասենյակը: Յուրաքանչյուր քաղաքում մեծ արքայի համար հատկացվում էր լավագույն տունը: Ննջասենյակում դրված էր ոսկեգոծ մահճակալը՝ Բաբելոնում գործված ծիրանեգույն ծածկոցով: Եվ ով կարող է նկարագրել այն գիշերը, որի ընթացքում այնքան պատմություններ կային, այնքան արցունքներ և այնքան համբույրներ. Կալիբրոյը առաջինն սկսեց պատմել այն մասին, թե ինչպես է կենդանացել գերեզմանում, Ֆերոնն ինչպես է տարել նրան, ինչպես է նավարկել և ինչպես է վաճառվել: Լսելով, Զերեյը մինչ այդ արտասվում էր: Բայց երբ Կալիբրոյն իր պատմությամբ հասավ մինչև Միլեթ, հուզվեց և լռեց, իսկ Զերեյի մոտ արթնացավ բնական խանդը: Երեխայի մասին պատմությունը, սակայն, հանգստացրեց նրան: Ի դեպ, նախքան սկզբից մինչև վերջ լսելը, Զերեյը Կալիբրոյին հարցրեց.

— Ասա ինձ, դու ինչպե՞ս ընկար Արադ: Դու որտե՞ղ թողեցիր Դիոնիսոսին և ինչ է պատահել քո և արքայի միջև:

Կալիբրոյն անմիջապես երգվեց նրան, որ դատից հետո նա այդպես էլ Դիոնիսոսին չի տեսել: Ինչ վերաբերում է արքային, ապա, չնայած արքան սիրահարվել էր նրան, բայց նրանց միջև շփում չի եղել, և նրանց հարաբերությունները չեն հասել նույնիսկ մինչև համբույրը:

— Ուրեմն, ես ինչքան անարդար ու բռնկվող եմ,— բացականչեց Զերեյը:— Ես ինչքան սարսափելի վնաս եմ պատճառել արքային, որը քո առջև ոչնչով մեղավոր չէ: Չէ որ քեզից իմ անջատումը ստիպել է ինձ անցնել թշնամու կողմը: Ի դեպ, ես քեզ ամոթով չեմ արել: Եվ ցամաքում, և ծովում ես հաղթանակներ եմ տարել:

Եվ Զերեյը պատմեց ամեն բան, իր հաջողություններով պարծենալով նրա առջև: Երբ բավական լաց եղան ու գրուցեցին, ապա, գրկախառնվելով, նրանք

Յին մահճակալում հիշեցին կարգն ամուսնության²⁰⁸:

2

Դեռևս գիշերով, լողարկելով Արադ հասավ եգիպտացի մի մարդ և, դուրս գալով նավակից, սկսեց անհամբերությամբ հարցնել, թե որտեղ է Զերեյը: Երբ նրան բերեցին Պոլիքարմոսի մոտ, նա հայտարարեց, որ իր գաղտնիքը, Զերեյից բացի, ոչ ոքի հայտնել չի կարող, և այն գործը, որի համար նա եկել է, հետաձգել չի կարելի: Պոլիքարմոսը երկար ժամանակ չէր թողնում եգիպտացուն մոտենալ Զերեյի մոտ, չցանկանալով անժամանակ անհանգստացնել նրան: Բայց քանի որ եկողը շտապեցնում էր, ապա Պոլիքարմոսը կիսաբաց արեց ննջասենյակի դուռը և գեկուցեց բանբերի մասին: Զերեյը, ինչպես ազնիվ ստրատեգ, Պոլիքարմոսին ասաց.

— Կանչիր: Կռիվը չի հանդուրժում քաշքշուկը:

Դեռևս խավար էր, երբ եգիպտացին, հենց որ նրան ներս բերին, մահճակալին մոտենալով, ասաց.

— Գիտցիր, որ Պարսից արքան սպասել է եգիպտացուն և որ իր գործի մի մասը ուղարկելով եգիպտոս, այնտեղի գործերը կարգավորելու համար, նա՝ մյուս մասը բերում է այստեղ և համարյա թե արդեն այստեղ է: Լուր ստանալով Արադի գրավման մասին, արքան ափսոսում է իր հարստությունը, որ նա ամբողջությամբ թողել է այստեղ, և առանձնապես տազնապ է ապրում իր կնոջ՝ Ստատիրայի պատճառով:

Լսելով այդ, Զերեյը վեր թռավ մահճակալից, բայց Կալիբրոյը բռնեց նրան և ասաց.

— Ո՛ր ես շտապում, դեռևս անելիքը չկշռադատած: Չէ որ եթե դու հայտարարես պատահածը, ապա ամենքը կդադարեն հաշվի նստել քեզ հետ, և դու առիթ կտաս, որ քո

դեմ մեծ կռիվ սկսվի: Իսկ գերի ընկնելով, մենք ավելի ծանր վիճակի մեջ կընկնենք, քան այն, ինչի մեջ գտնվում էինք առաջ:

Քերեյն իսկույն ընդունեց խորհուրդը և ննջարանից դուրս եկավ արդեն մի խորամանկ բան հղացած:

Նա հավաքեց ժողովրդին և, բռնելով եգիպտացու ձեռքը, հայտարարեց.

— Քաղաքացիներ: Արքային մենք հաղթել ենք նաև մեր ցամաքային գործով: Այս մարդը իր նամակով լավ լուր է բերել մեզ եգիպտացուց: Մենք պետք է, որքան կարելի է շուտ, գնանք այնտեղ, ուր նա հրամայում է: Չինվեցեք և ամենքդ բարձրացեք նավերի վրա:

Հենց որ նա այդ ասաց, փողհարը նավի վրա ելնելու կանչ տվեց: Գերիները, ավարի հետ միասին, բեռնվել էին դեռևս նախօրեին, և, ծանրաշարժ անպետք բաներից բացի, կղզու վրա ոչ մի բան չէր մնացել: Սկսեցին արձակել նավաճոպանները և բարձրացնել խարիսխները, և ծովածոցը լցվեց իրարանցումով ու ճիչերով: Ամեն մեկն զբաղված էր մի գործով: Քերեյը այցելեց նավերը, տրիերարքոսների հետ գաղտնի պայմանավորվելով ուղղություն վերցնել դեպի Կիպրոս²⁰⁹, նկատի առնելով, որ անհրաժեշտ է տիրել առայժմ անպաշտպան մնացած այդ կղզուն:

Համընթաց քամու շնորհիվ, հաջորդ օրը նրանք մոտեցան Պաթոսին²¹⁰, որի վրա գտնվում էր Աֆրոդիտեի ճարը: Նավահանգստում նավերի խարիսխ գցելուց հետո, Քերեյը, նախքան կթողներ, որ որևէ մեկը նավից ափ իջներ, բանբերներ ուղարկեց քաղաք՝ նրա բնակիչներին առաջարկելով խաղաղություն և հաշտության պայմաններ: Երբ կղզու վրա նրանք ընդունեցին Քերեյի պայմանները, նա հանեց ամբողջ զորքը և ընծաներով պատվեց Աֆրոդիտեին: Բազմաթիվ կենդանիներ զոհաբերելով, նա հյուրասիրեց զորքին: Ընդ որում, քրմերը (նրանք միաժամանակ նաև գուշակներ էին) խորհրդածելով առաջիկայի մասին, Քերեյին հայտնեցին, որ զոհերը տվել են բարեհաջող նախանշաններ²¹¹: Այդ ժամանակ, սրտապնդվելով տրիերարքոսներին և այն եգիպտացիներին, որոնց նվիրվածությանը քաջատեղյակ էր, նա ասաց հետևյալը.

— Քաղաքացիներ, դաշնակիցներ և բարեկամներ, մեծ հաջողությունների ընկերներ: Ձեզ հետ և խաղաղությունն է ինձ համար ուրախալի, և սարսափելի չէ պատերազմը: Մենք փորձով հասկացանք, որ ծովին տիրացանք մեր միաբանության շնորհիվ: Այժմ հասել է մեզ համար այն ծանր ժամը, երբ պետք է հաստատապես խորհենք զալիքի մասին: Դե, իմացեք, որ մարտում սպանվել է եգիպտացին, որ ամբողջ ցամաքում իշխում է արքան և որ մենք գտնվում ենք թշնամու քթի տակ: Եվ այդպես, որևէ մեկը խորհուրդ չի՞ տալիս գնալ արքայի մոտ և մեզ հանձնելու նրա ձեռքը:

Ամմիջապես լսվեցին բացականչություններ այն մասին, որ ավելի լավ է ուրիշ բան անել, ինչ էլ որ լինի, քան թե այդ մեկը:

— Սակայն որտե՞ղ ուղևորվենք մենք: Չէ որ չորս կողմում թշնամիներ են, և նույնիսկ ծովի վրա չի կարելի այլևս հույս դնել, քանի որ հակառակորդը իշխում է ցամաքին: Մենք հո չենք կարող թևեր առնել ու թռչել:

Դրանից հետո տիրեց լռություն: Ապա առաջինը որոշեց խոսել մի լակեդեմոնացի²¹², Բրասիադոսի²¹³ ազգականը, որ այդ ժամանակ աքսորվել էր Սպարտայից իր համար ստեղծված դաժան հանգամանքների պատճառով:

— Ինչո՞ւ ենք որոնում, թե ուր փախչենք արքայից,— ասաց նա:— Մենք և՛ նավեր ունենք, և՛ ծով, և ինչպես մեկը, այնպես էլ մյուսը մեզ կտանեն Սիցիլիա և Սիրակուզա, որտեղ մեզ համար սարսափելի չեն լինի ոչ միայն պարսիկները, այլև իրենք՝ աթենացիները:

Ամենքը հավանություն տվին նրա ասածին, և միայն Քերեյը, մեջտեղ բերելով երկար նավարկությունը, ձևացրեց, թե իբր նա չի միանում մյուսների կարծիքներին: Իրականում նա ձգտում էր ստուգելու, թե կայո՞ւն է նրանց ընդունած որոշումը: Եվ, ի պատասխան նրանց համառ պահանջին և ամմիջապես նավարկելու նրանց պատրաստակամությանը, Քերեյն ասաց.

— Քաղաքացի հույներ: Ձեր որոշումը գեղեցիկ է, ես շնորհակալ եմ իմ հանդեպ ունեցած ձեր վերաբերմունքի և ձեր հավատարմության համար: Եթե աստվածները օգնեն ձեզ, ապա ես թույլ չեմ տա, որ հետո դուք ստիպված լինեք զղջալ: Ինչ վերաբերում է եգիպտացիներին, ապա չարժե, որ մենք բռնությամբ նրանց ենթարկեցնենք մեզ, նրանք շատ են, և մեծ մասը կին ու երեխաներ ունի, որոնցից անջատվելը նրանց համար հեշտ

չի լինի: Այդ պատճառով շտապեցեք մտնել նրանց շարքերը և նրանցից յուրաքանչյուրին առանձին հարցուվոր՝ արեք, որպեսզի վերցնենք միայն նրանց, ովքեր ցանկանում են նավարկել մեզ հետ:

3

Նրա հրամանը կատարվեց:

Իսկ Կալիրոյը, թեանցուկ անելով Քերեյին՝ և մի կողմ քաշելով նրան, հարցրեց.

— Քերեյ, դու մտադիր ես ի՞նչ անել: Դու և Ստատիրային ես տանում Սիրակուզա, և գեղեցկուհի Ռոդոգունի՞ն:

Քերեյի դեմքը կարմրեց.

— Տանում եմ,— ասաց նա,— տանում եմ ոչ թե ինձ համար, այլ՝ քեզ համար որպես սպասավորուհիներ:

Կալիրոյը բացականչեց.

— Աստվածները չեն ների ինձ մի այնպիսի հիմարություն, եթե ես Ասիայի թագուհուն ինձ մոտ պահեմ որպես ստրկուհու: Բացի այդ, ես նրա հետ կապված եմ հյուրնկալական կապերով: Իսկ եթե դու ցանկանում ես գոհացնել ինձ, ապա Ստատիրային ուղարկիր արքային: Չէ որ այդ նա է իր պահպանության տակ առել ինձ և պահել քեզ համար, ինչպես կպահեր հարազատ եղբոր կնոջը:

— Աշխարհում չկա մի բան, որ դու ցանկանաս ու ես չկատարեմ,— ասաց Քերեյը,— և Ստատիրայի, և ամբողջ ռազմավարի, և ամենից առաջ՝ իմ հոգու տերը դու ես:

Կալիրոյն ուրախացավ և համբուրեց նրան: Եվ անմիջապես հրամայեց սպասավորուհիներին, որ իրեն տանեն Ստատիրայի մոտ: Իսկ այդ ժամանակ Ստատիրան, նշանավոր պարսկուհիների հետ, գտնվում էր նավի բանտախցում և պատահածի մասին ոչինչ չգիտեր: Նա չգիտեր նաև, որ Կալիրոյը գտել է Քերեյին: Ստատիրան շրջապատված էր ամուր պահակությամբ, և ոչ ոքի չէր թույլատրվում ոչ մոտենալ նրան, ոչ տեսնել, ոչ էլ հաղորդել որևէ բան այն մասին, ինչ կատարվում էր: Երբ տրիերարքոսի պատվավոր ուղեկցությամբ Կալիրոյը նավ մտավ, ապա բոլորը հիացան նրան տեսնելով: Ամեն կողմից մարդիկ խառնիխուռն վազում էին և շշուկով ասում միմյանց. «Նավի վրա երևաց ծովակալի կինը»:

Ստատիրայի կրծքից դուրս թռավ մի խոր ու բարձր հառաչանք, և նա հեկեկալով, ասաց.

— Օ՛, ճակատագիր: Դու դիտավորյալ ինձ պահել ես այսօրվա համար, որպեսզի իմ թագուհուս գլխին տիրուհի դնես: Գուցե այդ իմ տիրուհի՞ն է եկել նայելու, թե ինչպիսի ստրկուհի է ստացել ինքը:

Այս ասելով, նա բարձրացրեց լացի ձայնը: Նա հասկացավ այնժամ, թե ազատածին մարդու համար ինչ է նշանակում գերի ընկնելը:

Բայց մի աստված արագորեն փոխեց ամեն բան: Կալիրոյը մոտ վազեց Ստատիրային, գրկեց նրան, ասելով.

— Ողջ լեր, թագուհի: Չէ որ դու թագուհի ես և միշտ էլ թագուհի կմնաս: Դու ընկել ես ոչ թե թշնամիների, այլ՝ նրա ձեռքը, որը սիրալիր է քո հանդեպ և որին դու բարերարություն ես արել: Իմ Քերեյը ծովակալ է: Ինձ նրան վերադարձնելու չափից ավելի դանդաղումը Քերեյի հոգին լցրեց արքայի դեմ զայրույթով, որի համար էլ նա դարձավ եգիպտական ծովակալ: Բայց հիմա նա զայրույթ չունի, արքայի հետ հաշտվել է և նա արդեն այլևս թշնամի չէ ձեզ: Վեր կաց, սիրելիս, և մեկնիր ուրախությամբ: Դու էլ ես ստացիր քո ամուսնուն: Չէ որ արքան ողջ է, և Քերեյը քեզ ուղարկում է նրան: Ելիր և դու, Ռոդոգուն, պարսկուհիների մեջ իմ առաջին ընկերուհի, և մեկնիր ամուսնուդ մոտ: Գնացեք և դուք՝ մյուսներդ, ում թագուհին ցանկանում է վերցնել հետը, և մի մոռացեք Կալիրոյին: Այդպիսի խոսքեր լսելով, Ստատիրան հիացավ ու չգիտեր՝ հավատա՞լ թե չհավատա՞լ: Սակայն, իմանալով Կալիրոյի բնավորությունը, նա բնավ չէր մտածի, որ Կալիրոյը մեծ դժբախտության ժամանակ կարող էր կեղծավորություն անել:

Ժամանակը, սակայն, ստիպում էր շտապել:

Եգիպտացիների մեջ գտնվում էր մի ոմն Դմիտրի, արքային ծանոթ մի իմաստասեր, որ տարեց մարդ էր և մնացած եգիպտացիներից զանազանվում էր և կրթությամբ, և բարոյական հատկանիշներով: Նրան էլ Զերեյը կանչեց և ասաց.

— Ես ցանկանում էի քեզ վերցնել հետս, բայց ստիպված եմ մի կարևոր հանձնարարություն տալ քեզ: Զո միջոցով ես մեծ արքային եմ ուղարկում թագուհուն: Դա էլ քեզ առանձին արժեք կտա նրա աչքին, և նրան կհաշտեցնի նաև մնացած եգիպտացիների²¹⁴ հետ:

Ու, այս ասելով, Զերեյը Դմիտրիին նշանակեց նրանց արքային վերադարձնող նավի ստրատեգ:

Բոլորը ցանկանում էին գնալ Զերեյի հետ: Բոլորը պատրաստ էին նրա համար զոհել և երեխաներին, և հայրենիքը, սակայն, Զերեյը, հաշվի առնելով, որ իրենք պետք է կտրեն-անցնեն Իոնիական ծովը, ընտրեց միայն ամենամեծ ու լավագույն քսան նավ և նստեցրեց իր հետ եղած բոլոր հույներին, իսկ եգիպտացիներից ու փյունիկեցիներից միայն նրանց, ում տոկոսնությանը ծանոթ էր: Իրենց կամքով Զերեյի նավերը բարձրացան նաև ոչ քիչ կիպրացիներ²¹⁵: Բոլոր մնացածներին Զերեյն ուղարկեց իրենց տները, յուրաքանչյուրին բաժին հանելով ավարից, որպեսզի նրանք ուրախությամբ վերադառնան իրենց մերձավորների մոտ և արժանանան հարգանքի: Եվ ինչի մասին էլ ով որևէ բան խնդրեր, Զերեյը ոչ ոքի ոչինչ չէր մերժում:

Կալիբոյն էլ Ստատիրային հանձնեց նրա բոլոր արքայական զարդարանքները, սակայն թագուհին հրաժարվեց ընդունել:

— Դրանք կրիր ու դրանցով զուգվիր ինքդ,— ասաց նա Կալիբոյին,— արքայական հանդերձը պատշաճում է այնպիսի մարմնի, ինչպիսին քոնն է: Դու պետք է դա վերցնես մորդ սփոփելու և քո հայրական աստվածներին ընծայաբերելու համար: Իսկ ես դրանից ավելի շատ հանդերձ եմ թողել Բաբելոնում: Թող աստվածները պահպանեն քեզ, թող նրան քբարեհաջող դարձնեն քո նավարկությունը, և թող նրանք երբեք չանջատեն քեզ Զերեյից: Դու ամեն բանում ինձ հետ ազնվորեն ես վարվել: Դու ցուցանեցիր վեհանձն, քո գեղեցկությանն արժանի բնավորություն: Ի դեմս քեզ՝ արքան ինձ հիանալի գրավ էր հանձնել:

4

Ռ՛վ կարող է նկարագրել այն օրը, որի ընթացքում տեղի ունեցան այդքան այլազան դեպքեր, երբ մարդիկ թախանձում էին ու համոզում, ուրախանում էին և վշտանում, միմյանց հանձնարարություններ էին տալիս և նամակ գրում տուն:

Զերեյն էլ արքային գրեց հետևյալ նամակը.

«Դու պատրաստվում էիր քննել մեր դատավեճը, իսկ ես արդեն շահել եմ այն ամենաանաչառ դատավորի առջև: Չէ որ այն խնդրում, թե ում կողմն է հզոր և ումը՝ թույլ, ամենալավ դատավորի դեր է կատարում պատերազմը: Պատերազմը ինձ վերադարձրեց Կալիբոյին, և պատերազմից ոչ միայն ես ստացա իմ կնոջը, այլև՝ դու: Սակայն ես չեմ նմանվում քեզ քո դանդաղկոտությամբ, այլ արագորեն, նույնիսկ նրա համար առանց քո խնդրանքի, քեզ եմ տալիս անաղարտ և գերության ժամանակ էլ թագուհի մնացած Ստատիրային: Ի դեպ, գիտցիր, որ ոչ թե ես, այլ Կալիբոյն է քեզ ուղարկում այդ նվերը, որի համար ես ու Կալիբոյը խնդրում ենք, որ քո շնորհակալությունը լինի եգիպտացիների հետ հաշտվելը: Չէ որ մնացած բոլոր մարդկանցից շատ համբերությունն ամենից շատ պատշաճում է արքային: Իսկ այդ եգիպտացիներից դու կստանաս առաջնակարգ և քեզ նվիրված զինվորներ: Փոխարեն հետևելու ինձ որպես իմ ընկերները, նրանք նախընտրեցին մնալ քեզ հետ»:

Այդպես գրեց Զերեյը: Բայց Կալիբոյն էլ իր երախտագիտական պարտքը համարեց նամակ գրել Դիոնիսոսին: Միայն այդ մեկը նա կատարեց Զերեյից գաղտնի, իմանալով նրա խանդոտ բնավորությունը, Կալիբոյն աշխատեց դա անել գաղտուն: Վերցնելով գրակալը²¹⁶, ահա թե ինչ գրեց նա.

«Կալիբոյը ողջույն է հղում Դիոնիսոսին, իր բարերարին: Չէ որ դու ազատեցիր ինձ և ավազակներից, և ստրկությունից: Խնդրում եմ, մի զայրացիր ինձ վրա: Չէ որ ես հոգով

քեզ հետ եմ հանում իմ ու քո տղայի, որին պահելն ու մեզ արժանի դաստիարակելը ես կտակում եմ քեզ: Մի փորձիր խորթ մոր ձեռք տալ նրան: Դու ոչ միայն տղա, այլև աղջիկ ունես: Երկու երեխան հերիք է քեզ: Երբ մեր տղան մեծանա, նրան ամուսնացրու քոռջ հետ, իսկ մեր տղային ուղարկիր Սիրակուզա, որպեսզի նա տեսնի նաև իր պապին: Պլանգոնա: Գրկում եմ քեզ: Այդ ես գրում եմ սեփական ձեռքով: Ողջ լեր, սիրելիդ Դիոնիսոսի, և հիշիր քո Կալիոնյի մասին»:

Մատնակնքելով, Կալիոնյը նամակը թաքցրեց ծոցում և, երբ, վերջապես, եկավ նավարկելու պահը ու բոլորը ելան նավերի վրա, նա թևանցուկ արեց Ստատիրային և նրան ինքը ուղեկցեց դեպի նավ: Դմիտրիոն նավի վրա արքայական վրան էր սարքել, պատելով այն բաբելոնյան ոսկեկար ծիրանագույն գործվածքով: Հարգալից գլուխ տալով Ստատիրային, Կալիոնյն ասաց.

— Ողջ լեր, Ստատիրա, հիշիր ինձ և հաճախակի նամակ գրիր Սիրակուզա: Չէ որ արքայի համար ոչ մի դժվար բան չկա²¹⁷: Իսկ ես իմ հայրենական տանը, հունական աստվածների առջև, կշարունակեմ պահպանել երախտագիտական իմ զգացումը քո հանդեպ: Ես քեզ եմ հանձնում իմ երեխային, որը դուր է եկել նաև քեզ: Նրան համարիք քեզ տրված իմ գրավը:

Այդպես ասելով, նա առատ արտասուքներ թափեց, որը ստիպեց, որ հեկեկան նաև մյուս կանայք: Իսկ նավը թողնելիս, Կալիոնյը աննկատ թեքվեց Ստատիրայի կողմը և, կարմրելով, նրան տվեց նամակը:

— Այս նամակը,— ասաց նա,— հանձնիր դժբախտ Դիոնիսոսին, որին ես վստահում եմ քեզ ու արքային: Մխիթարեցեք նրան: Վախենում եմ, որ ինձնից բաժանվելու պատճառով հանկարծ նա ինքնասպան չլինի:

Կանայք դեռ կշարունակեին երկար և խոսել, և արտասվել, և համբուրվել, եթե նավավարները մեկնելու նշան չտային:

Կալիոնյը, սակայն, իր նավը բարձրանալուց առաջ, խոնարհվեց Աֆրոդիտեի առջև:

— Շնորհակալություն քեզ, տիրակալուհի,— ասաց նա,— այժմ կատարվող ամեն բանի համար, դու արդեն հաշտվել ես ինձ հետ: Թույլ տուր, որ ես տեսնեմ նաև Սիրակուզան: Իմ ու նրա միջև ընկած է հրաշալի ծովը, և ինձ սպասում են սահմուկեցուցիչ ջրանդուկները: Բայց նրանք սարսափելի չեն ինձ համար, եթե միայն նավարկության ժամանակ դու ինձ հետ լինես:

Ոչ մի եզիպտացի Դմիտրիի նավը չբարձրացավ առանց նախապես հրաժեշտ տալու Զերեյին և չհամբուրելու նրա գլուխն ու ձեռքը: Ահա թե նա ինչպես էր սիրելի դարձել բոլորի համար: Զերեյն այդ նավերին²¹⁸ թույլ տվեց առաջինը դուրս գալ բաց ծով, և ջրային հեռուներից լսվում էին բարի մաղթանքներով ուղեկցվող ողջույնները:

5

Նրանք լողում էին, իսկ մեծ արքան, ջախջախելով հակառակորդի ուժերը, զբաղված էր մարդ ուղարկելով Եգիպտոս՝ հանձնարարություն տալով, որ հաստատապես կարգավարվեն այնտեղի գործերը: Իսկ ինքը շտապում էր Արադ՝ կնոջ մոտ: Եվ ահա, երբ գտնվում էր Զիոսի²¹⁹ ու Տիրի միջև, և հաղթանակի առթիվ գոհացողական գոհաբերություն էր կատարում Հերակլին, նրան հաղորդեցին. «Արադը կողոպտված է, ամայացած և նրա վրա եղած ամեն բան տարվում է Եգիպտական նավերով»: Կնոջ կործանվելու մասին լուրն, իհարկե, մեծ վիշտ պատճառեց արքային, և արքայի հետ լաց եղան նաև անվանի պարսիկները:

Լացում էր արտաքուստ Ստատիրայի համար, բայց հոգում լացն էր սեփական վշտի²²⁰:

Լացում էին՝ որն իր կնոջ, որն իր քոռջ, որն իր դստեր, ամեն մեկն իր որևէ մերձավորի համար:

Հայտնի չէր, թե թշնամին, Արադից դուրս գալով, դեպի ուր է նավարկել:

Իսկ հաջորդ օրը ծովի վրա երևացին ափին մոտեցող եգիպտական նավերը:

Ճշմարտությունը մնում էր ծածկված, և մարդիկ նավերին նայում էին տարակուսած: Առանձնապես հանելուկային թվաց Դմիտրիի նավի վրա բարձրացված արքայական

դրոշը, որը բարձրացնում են միայն այն ժամանակ, երբ նավի վրա է լինում արքան: Դա տազնապ հարուցեց, ստիպելով կասկածել, որ նավարկում են թշնամիները: Անմիջապես վազեցին զեկուցելու Արտաքսերքսեսին. «Թերևս ի հայտ գա եգիպտական ևս մի ինչ-որ նոր արքա»: Արտաքսերքսեսը թռավ գահից և շտապեց ծովի մոտ, բայց ցամաքային իր բոլոր զորքերը մարտի պատրաստ պահեց նավահանգստի մոտ: Արդեն արկվել էին աղեղները և, նետերը կարձակվելն, եթե Դմիտրիոս, գլխի ընկնելով, թե ինչ է պատահել, այդ մասին չզեկուցեր թագուհուն: Ստատիրան դուրս եկավ վրանից և երևաց ժողովրդին, և զինվորներն իսկույն մի կողմ նետեցին զենքերը ու գլուխ տվին նրան: Արքան չհամբերեց և, նախքան նավի ճոպանները կերկարեին դեպի ափ, առաջինը ցատկեց նավի վրա, գրկեց կնոջը և, ուրախության արտասուքներ թափելով, բացականչեց.

— Իմ թանկագին կին, այդ ո՞ր աստվածը քեզ վերադարձրեց ինձ: Եվ մեկը, և մյուսը անհավանական են թվում. թագուհու կորուստը, և հանդիպումը նրան: Բայց ես քեզ ցամաքի վրա եմ թողել, իսկ ետ եմ ստանում ծովից:

Ստատիրան նրան պատասխանեց.

— Ես Կալիրոյի նվերն եմ քեզ:

Այդ անունը լսելով, արքան հին վերքի վրա նոր հարված զգաց, և նայելով ներքինի Արտաշեսին, ասաց նրան.

— Տար ինձ Կալիրոյի մոտ: Ես ցանկանում եմ իմ երախտագիտությունը հայտնել նրան:

— Դու ամեն ինչ կիմանաս ինձնից,— արքային հայտնեց Ստատիրան:

Այս ասելով, նրանք ուղևորվեցին դեպի պալատ: Այնտեղ, հրամայելով, որ ամենքը հեռանան և մնա միայն ներքինին, Ստատիրան պատմեց այն մասին, թե ինչ է եղել Արադում, ինչ է պատահել Կիպրոսում, և վերջում արքային հանձնեց Քերեյի նամակը: Մինչ նամակը կարդալը, հազար բան անցավ արքայի մտքով: Եվ զայրացավ թանկագին մարդկանց գերելու համար, և զոջաց, որ պատճառ է դարձել, որպեսզի Քերեյն անցնի թշնամու կողմը...²²¹ որ Կալիրոյին այլևս չի տեսնի: Բայց ամենից ուժեղ նրա հոգում խոսում էր նախանձի զգացումը: «Քերեյը երանություն է ապրում, նա ինձնից երջանիկ է»,— կրկնում էր նա ինքն իրեն:

Երբ նրանք բավական հագեցան միմյանց պատմելով, Ստատիրան նկատեց.

— Արքա, սփոփիր Դիոնիսոսին: Չէ որ այդ մասին քեզ խնդրում է Կալիրոյը:

Այդ ժամանակ շրջվելով դեպի ներքինին, Արտաքսերքսեսը ասաց.

— Թող գա Դիոնիսոսը:

Եվ Դիոնիսոսը, հույսերով թևավորված, եկավ փոփոխ: Չէ որ նա ոչինչ չգիտեր այն մասին, թե ինչ է պատահել Քերեյի հետ և, կարծելով, թե մյուս կանանց հետ եկել է նաև Կալիրոյը, մտածում էր, որ արքան իրեն կանչում է, որպեսզի իրեն տա կնոջը որպես նվեր ռազմական քաջագործության համար: Երբ Դիոնիսոսը մտավ, արքան սկզբից մինչև վերջ պատմեց նրան բոլոր դեպքերի մասին: Եվ հատկապես այդ պահին էլ Դիոնիսոսը ցուցանեց և իր խելքը, և իր նուրբ դաստիարակությունը: Այլապես ո՞վ չէր ցնցվի, եթե կայծակը հարվածեր նրան: Իսկ Դիոնիսոսի համար, որ այնուամենայնիվ պահում էր հոգու հանգստությունը, ամպրոպի հարվածից էլ ծանր էր լսել այն մասին, որ Քերեյը Կալիրոյին տանում է Սիրակուզա: Նրան վտանգավոր էր թվում գերի դառնալ վշտին, քանի որ փրկվել էր թագուհին:

— Դիոնիսոս,— ասաց Արտաքսերքսեսը,— եթե կարողանայի, ես քեզ կտայի Կալիրոյին: Զո սերն ու հավատարմությունը իմ հանդեպ կդառնար լիակատար: Սակայն քանի որ դա անհնար է ինձ համար, ապա ես տալիս եմ քեզ ամբողջ Իոնիայի կառավարումը և քո անունը մտցնում «արքայական տան առաջին երախտավորների ցուցակում»²²²:

Դիոնիսոսը գլուխ տալով արքային և շնորհակալություն հայտնելով նրան, շտապեց հեռանալ, որպեսզի ազատություն տա իր արցունքներին: Երբ նա դուրս էր գնում, Ստատիրան թաքուն նրան հանձնեց նամակը:

Վերադառնալով, Դիոնիսոսը փակվեց տանը: Ճանաչելով Կալիրոյի ձեռագիրը, նա առաջին հերթին համբուրեց նամակը, ապա, բացելով, սեղմեց իր կրծքին, կարծես թե այն Կալիրոյը լիներ: Նա նամակը երկար սեղմեց իր կրծքին, արցունքների պատճառով ի վիճակի չլինելով սկսել նրա ընթերցումը: Վերջապես, լաց լինելուց հետո, նա սկսեց

կարդալ նամակը՝ նախ և առաջ համբուրելով Կալիրոյի անունը: Կարդալով «Դիոնիսոսին, իմ բարերարին» բառերը, նա մտովի ասաց. «Ավաղ, արդեն ոչ ամուսնուն»:
«Ուրախասաւ», «բայց ինչպե՞ս կարող եմ ուրախասաւ, քեզից հեռու լինելով»: «Չէ՛ որ դու իմ բարերարն ես»: «Բայց քեզ համար ես առանձնապէս ի՞նչ եմ արել»: Բայց նամակի այն մասը, ուր Կալիրոյն արդարանում էր նրա առջև, Դիոնիսոսին ուրախություն պատճառեց, և այդ բառերը նա կարդաց մի քանի անգամ: Այդ մասում Կալիրոյն ակնարկում էր, որ ինքը Դիոնիսոսին թողել է հակառակ իր կամքի: Այդքան թեթևամիտ է սիրո զգացումը, և Էրոտի համար այնքան էլ դժվար չէ համոզել սիրահարվածին, որ նա էլ սիրվում է: Դիոնիսոսը նայեց իր երեխային և

ճոճելով ձեռքի վրա,²²³

մտածեց. «Չավակս, մի օր էլ դու կհեռանաս ինձնից ու կգնաս մորդ մոտ: Ի դեպ, նա ինքն էլ այդպէս է պատվիրում: Իսկ ես, ինձ հետ պատահածի համար մեղավորս, կշարունակեմ ապրել միայնակ: Իմ անտեղի խանդը կործանեց ինձ, և դու էլ, Բաբելոն, կործանեցիր ինձ»:

Այս ասելով, նա սկսեց փոփոխ պատրաստվել Իոնիա վերադառնալու, հուսալով, որ իր համար մեծ մխիթարանք կլինի երկար ճանապարհը, բազմաթիվ քաղաքների կառավարման գործը, Կալիրոյի դիմապատկերները, որոնք մնացել են իր մոտ՝ Միլեթում:

6

Այս ժամանակ, երբ դա կատարվում էր Ասիայում, Քերեյը բարեհաջող նավարկեց մինչև Սիցիլիա: Նա միշտ գտնվում էր նավախելի վրա, և, իր խոշոր նավերով, շարժվում էր բաց ծովով, վախենալով, որ նորից կարող է ենթարկվել դաժան աստծու հարվածին²²⁴: Իսկ երբ Սիրակուզան երևաց, նա տրիերարքոսներին հրաման տվեց՝ զարդարել նավերը և շարժվել մի ընդհանուր շարքով: Պարզ ու անքամի եղանակ էր²²⁵: Քաղաքում, երբ նկատեցին նավերը, իրար հարց տվին. «Որտեղի՞ց են գալիս այս նավերը, գուցե Ատտիկայի՞ց: Եկեք զեկուցենք Յերմոկրատեսին»: Եվ անմիջապէս զեկուցեցին նրան: «Մտածիր, թե ինչ անենք: Չփակե՛նք նավահանգիստը: Չենք էլ կարող բաց ծովում ընդառաջ դուրս գալ նրանց: Չէ որ մենք չգիտենք, թե սրանց հետևում ավելի մեծ ուժեր չկա՞ն, և մեր առջև միայն առաջապահ ջրկատին չէ՞նք տեսնում»:

Յերմոկրատեսը հրապարակից նետվեց ծովի մոտ և նավերին ընդառաջ ուղարկեց թիակավոր մի նավ, որի վրա եղած մարդը մոտեցավ նրանց և սկսեց հարցուփորձ անել, թե ովքեր են նրանք:

Քերեյը մի եզիպտացու հրամայեց պատասխանել.

— Մենք վաճառականներ ենք, գալիս ենք Եգիպտոսից այնպիսի բեռով, որը կուրախացնի սիրակուզցիներին:

— Միայն բոլորդ միանգամից նավահանգիստ մի մտեք,— ասաց թիակավոր նավի վրայի մարդը,— նախքան մենք կհամոզվենք, որ դուք ճիշտ եք ասում: Ես վաճառականական նավ չեմ տեսնում, այլ տեսնում եմ մեծ նավեր, որոնք ասես վերադառնում են պատերազմից: Այնպէս որ նավերի մեծ մասը թող մնա ծովում, նավահանգստից հեռու, իսկ նավահանգիստ թող մտնի միայն մի նավ:

Այդպէս էլ արեցին:

Եվ ահա առաջինը նավահանգիստ մտավ Քերեյի նավը, որի վրա սարքված էր մի վրան՝ ծածկված բաբելոնյան գործվածքով: Երբ նավը կանգ առավ առափնյակում, ամբողջ նավահանգիստը լցվել էր մարդկանցով: Ընդհանրապէս ամբոխին հատուկ է հետաքրքրասիրությունը, իսկ այստեղ ժողովուրդը հավաքվելու համար մի առանձին առիթ էլ ուներ: Ժողովուրդը նայում էր վրանին և մտածում, որ նրա տակ ոչ թե մարդիկ են ծածկված, այլ թանկարժեք ապրանքներ: Յուրաքանչյուրն իր ենթադրությունն էր հայտնում: Ամեն մեկը պատրաստ էր ասել խելքին փչածը, բայց միայն ոչ այն, ինչ իրականում կար: Չէ որ, համոզված լինելով, թե Քերեյը մեռած է, նրանցից ոչ ոքի մտքով չէր անցնում, որ այդ նա է վերադարձել՝ այն էլ այդպիսի շքեղությամբ շրջապատված: Քերեյի ծնողները նույնիսկ դուրս չեկան տնից, նման վիշտ էր ապրում նաև

Հերմոկրատեսը, չնայած, իրոք, նա զբաղվում էր պետական գործերով: Նա այդ ժամանակ էլ նավահանգստում կանգնել էր աննկատ: Ամենքը, իրենց աչքերը վրանին հառած, խճճվել էին ենթադրությունների մեջ, երբ հանկարծ վրանի վարագույրը բացվեց, և մարդկանց աչքի առջև երևացին ոսկյա մահիճի մեջ պառկած ծիրանագույն հանդերձով Կալիրոյը և կողքին նստած Քերեյը՝ ստրատեգի հագուստով: Երբեք ոչ մի որոտ այնպես չի շանթահարել լսողությունը, ոչ մի կայծակ այնպես չի կուրացրել աչքը, ոսկու գանձ գտած մարդու կրծքից երբեք դուրս չի թռել այնպիսի բարձր ճիչ, ինչպես այդ ժամանակ դուրս թռավ ամբոխի կրծքից՝ անսպասելիորեն տեսնելով այդ աննկարագրելի տեսարանը: Հերմոկրատեսը նետվեց դեպի վրանը և, գրկելով դստերը, բացականչեց.

— Դու ո՞րք ես, զավակս, թե՞ ես այժմ էլ եմ սխալվում:

— Ես ողջ եմ, հայր, հիմա, իրոք, ողջ եմ, որովհետև իմ առջև քեզ ողջ եմ տեսնում:

Բոլորն արտասպեցին ուրախությունից:

Մինչ այդ մնացած նավերով ափ հասավ նաև Պոլիքարմոսը: Կիպրոսից այս ամբողջ նավատորմիդ վստահված էր Պոլիքարմոսին, քանի որ Քերեյը, Կալիրոյից բացի, ժամանակ չունեի որևէ բանով զբաղվելու: Նավահանգիստը արագորեն լցվեց նավերով, ներկայացնելով հենց այն տեսարանը, որ ուներ ատտիկյան ծովամարտից հետո²²⁶: Սիրակուզցիների ստրատեգի ղեկավարությամբ տարած ճակատամարտից հետո նավերը առափնյակ մտան այդպիսի պսակներով զարդարված, և ափին կանգնած մարդիկ ողջույնի այդպիսի ճիչեր էին լսում ծովից, և միաժամանակ՝ ծովում գտնվողները լսում էին ափում կանգնածների ազնիվ բացականչությունները, զովասանքները և փոխադարձ, անընդհատ լսվող երջանկության մաղթանքները: Մինչ այդ պատգարակի վրա բերեցին նաև Քերեյի հորը, որը հանկարծակի ուրախությունից կորցրել էր գիտակցությունը: Աշխատելով ողջունել Քերեյին, նրա շուրջը խտացան Էֆերոսի²²⁷ և մարգարայրոցի ընկերները, իսկ Կալիրոյի շուրջը՝ կանայք: Նրանք գտան, որ Կալիրոյն ավելի է գեղեցկացել և որ, նայելով նրան, հիմա, իրոք, յուրաքանչյուրը կասի, որ իր առջև տեսնում է ծովային ջրերից դուրս եկած Աֆրոդիտեին²²⁸: Իսկ Քերեյը մոտեցավ Հերմոկրատեսին և նրա կողքին կանգնած իր հորը ու ասաց նրանց.

— Ընդունեցեք մեծ արքայի հարստությունը:

Եվ Քերեյն անմիջապես հրամայեց բռնաթափել անսահման քանակությամբ արծաթն ու ոսկին, իսկ հետո նա սիրակուզցիներին ցույց տվեց և փողոսը, և սաթը, և հանդերձները, և փայտյա թանկարժեք իրերը, և մեծ արքայի մահճակալը, և նրա ճաշասեղանը, և նրա ներքինիներին, և պատանդներին, այնպես որ այժմ ոչ թե ատտիկյան աղքատությամբ է լցվել քաղաքը, ինչպես դա եղել է այն ժամանակ՝ սիցիլիական կռվից հետո, այլ՝ պարսկական ռազմավարով, ընդ որում ամենազարմանալին այն էր, որ լցվել է խաղաղ օրերին:

7

«Քնանք ժողովրդական ժողովի», միանգամից աղմկեց ամբոխը: Ամենքը սաստիկ ցանկանում էին և տեսնել վերադարձած Քերեյին ու Կալիրոյին, և լսել նրանց: Եվ ամեն տեսակ խոսքից արագ թատրոնը լցվեց²²⁹ և տղամարդկանցով, և կանանցով: Երբ ժողովի առջև ելույթ ունեցավ մեն-մենակ Քերեյը, ապա և բոլոր կանայք, և բոլոր տղամարդիկ բացականչեցին.

— Հրավիրի՛ր Կալիրոյին:

Հերմոկրատեսը, որ ցանկանում էր այդ բանում էլ գոհացնել ժողովրդին, իր դստերը բերեց ժողովի: Եվ ահա, իր հայացքը սկզբում դեպի երկինք ուղղելով, ժողովուրդն ամենից առաջ սկսեց փառաբանել աստվածներին, ավելի ջերմորեն շնորհակալ լինելով նրանց այսօրվա, քան հաղթանակի օրվա համար²³⁰, ապա տղամարդիկ սկսեցին կանանցից անջատ գովաբանել Քերեյին, իսկ կանայք տղամարդկանցից անջատ՝ Կալիրոյին, հետո և տղամարդիկ և կանայք սկսեցին միասին երկուսի գովքն անել, որ Քերեյին ու Կալիրոյին հաճելի լինի:

Ծովային ճանապարհորդությունից և հուզմունքից հոգնած Կալիրոյին, հայրենիքին ողջունելուց հետո, դուրս տարան թատրոնից, բայց ժողովուրդը պահեց Քերեյին, ցանկանալով լսել նրա պատմությունն այն ամենի մասին, ինչ տեղի է ունեցել նրանց հետ

օտարության մեջ: Եվ Զերեյն իր պատմությունն սկսեց վերջին դեպքերից, քանի որ չէր ցանկանում սկզբում իրենց հետ պատահածի մասին տխրալեցուն հաղորդումներով վիշտ պատճառել ժողովրդին: Սակայն ժողովուրդը պնդեց իրենը.

- Մենք պատասխանի ենք սպասում:
- Սկսիր ամենասկզբից:
- Ամեն ինչի մասին պատմիր մեզ:
- Ոչինչ բաց մի թող:

Զերեյը տատանվեց: Իրենց հետ հակառակ բանականությանը պատահած շատ բաների մասին պատմելն անհարմար էր: Բայց Զերմուկրատեսը նրան ասաց.

— Մի շվարիր, տղաս, չնայած դու ստիպված կլինես խոսել նաև մեզ համար վշտալի ու դառը բաների մասին: Չէ որ այդ ամենը դժգոհանում է փայլուն վերջաբանի առջև, իսկ խոսքը կհաստ թողնելը, որ հենց լռակյացության հետևանք է, առաջ է բերում ինչ-որ ավելի ծանր բան, թաքցրած կասկածանք: Զո խոսքն ուղղված է հայրենիքին ու ծնողներին, որոնք հավասարապես սիրում են երկուսիդ: Ինչ կա որ, արդեն քաղաքն էլ գիտե քո պատմության առաջին մասը: Չէ որ նա ինքն է ամուսնացրել քեզ: Մենք բոլորս նույնպես գիտենք փեսացուների դավադրության մասին, որոնք արթնացրել են քո մեջ մոլար խանդը, որի պատճառով էլ դու քո կնոջը չարաբաստիկ հարված հասցրիր: Մենք գիտենք նաև այն մասին, թե ինչպես էին կարծում, որ նա մահացել է, գիտենք, թե ինչպիսի շքեղությամբ նա թաղվեց, և ինչպես, սպանության համար դատի տրվելով, դու ինքդ քեզ համար արձակեցիր մահվան դատավճիռ՝ ցանկանալով մեռնել կնոջդ հետ, իսկ ժողովուրդն արդարացրեց քեզ՝ կատարվածը համարելով դժբախտ պատահար: Դրան հաջորդող դեպքի վերաբերյալ մենք տեղեկացանք, որ ավագակ Ֆերոնը գիշերով գերեզմանը քանդելով, այնտեղ Կալիրոյին գտել է ողջ և որ, նստեցնելով նրան իր ավագակային նավակը, որտեղ նա տեղավորել է նաև Կալիրոյի հետ գտնվող թաղման ընծաները, նա վաճառել է Իոնիայում, և որ դու, գնալով կնոջդ որոնելու, իրեն՝ Կալիրոյին չգտար, բայց, ծովում հանդիպելով ծովահենային նավին, դու մնացած բոլոր ավագակներին գտար այնտեղ ծարավից մեռած և միայն ողջ Ֆերոնին բերեցիր ժողովրդական ժողովին և որ նա, տանջաքննությունից հետո, գամվեց խաչին, ժողովուրդն էլ Կալիրոյի հետևից մի նավ ուղարկեց պատգամավորներով, որոնց հետ, որպես կամավոր, ուղեկցելով քեզ, նավարկեց նաև քո բարեկամ Պոլիքարմոսը: Դու մեզ պատմիր այն մասին, թե ինչ պատահեց հետո, երբ դու դուրս եկար այստեղից:

Եվ Զերեյը իր պատմությունը շարունակելով այդտեղից, սկսեց պատմել այսպես.

— Բարեհաջող անցնելով Իոնիական ծովը, մենք հասանք կալվածքը միլեթի մի քաղաքացու, որի անունը Դիոնիսոս էր, և որը իր հարստությամբ, իր տոհմով, իր փառքով աչքի էր ընկնում բոլոր իոնիացիների մեջ: Այդ նա էր Կալիրոյին գնել մեկ տաղանդով: Մի վախեցեք: Կալիրոյը ստրկուհի չդարձավ: Դիոնիսոսը իր ստրկուհուն անմիջապես հռչակեց տիրուհի, և սիրահարվելով նրան, չհանդգնեց բռնություն գործադրել վեհանձն կնոջ հանդեպ: Նա ի վիճակի չեղավ նաև Սիրակուզա վերադարձնել նրան, ում վրա սիրահարված էր: Երբ Կալիրոյը նկատեց, որ ինձնից հոգի է, ապա, ձգտելով ձեզ համար պահպանել ձեր քաղաքացուն, ստիպված էր ամուսնանալ Դիոնիսոսի հետ և խորամանկորեն կարգավորեց երեխայի ծնունդը՝ նպատակ ունենալով ստիպելու Դիոնիսոսին, որպեսզի նա հավատա, թե իբր երեխան իրենից է և երեխային տա պատշաճ դաստիարակություն: Սիրակուզցիներ, չէ՞ որ ձեզ համար է դաստիարակվում նա՝ Միլեթի հարուստ քաղաքացին, մի կարևոր մարդու հարկի տակ, մարդ, որ ինչպես և նա, պատկանում է հունական նշանավոր մի տոհմի: Նախանձից չխանգարենք նրան դառնալու վիթխարի հարստության ժառանգորդ:

Այդ մասին, հասկանալի է, ես ուշ իմացա: Այդ ժամանակ, կանգ առնելով կալվածքի առափնյակում, ես տարվեցի ազնիվ հույսերով հենց որ այնտեղ տաճարում տեսա Կալիրոյի պատկերը: Իսկ գիշերը փոյուզիացի ավագակները, հարձակվելով ծովափի վրա, այրեցին մեր նավը, սպանեցին մարդկանց մեծ մասին, իսկ ինձ ու Պոլիքարմոսին էլ կապեցին և վաճառեցին Կարիայում:

Այս խոսքերը լսելով, ժողովուրդն սկսեց բուռն արտասվել, և Զերեյն ասաց.

— Թույլ տվեք հետագա դեպքի մասին չպատմել, քանի որ այն նախորդից մոայլ է: Բայց ժողովուրդը բացակասեց.

— Պատմիր ամեն ինչ:

Եվ Զերեյն այսպես շարունակեց.

— Լինելով ստրուկները Կարիայի կառավարիչ Միհրդատի, մի մարդու, որ գնել էր մեզ, նա հրամայեց, որ մենք հող փորենք շղթայակապ վիճակում: Երբ մի քանի շղթայակիրներ սպանեցին բանտապանին, ապա Միհրդատը հրամայեց, որ մեզ բոլորիս գամեն խաչին: Ինձ տարան խաչելու, բայց Պոլիքարմոսը, տանջաքննության սպանալիքի տակ, տվեց իմ անունը, և Միհրդատը վերհիշեց այդ անունը, քանի որ Միլեթում հյուրընկալական կապերով լինելով Դիոնիսոսի հետ, նա այնտեղ մասնակցել է Զերեյի թաղմանը: Բան նայն է, որ լսելով նավի և նրա վրա հարձակված ավազակների մասին, Կալիրոյը, մտածելով, որ ես էլ սպանվել եմ, ինձ համար կառուցել էր մի շքեղ հուշադամբան: Եվ ահա, Միհրդատը կարգադրեց փութով իջեցնել ինձ խաչից, որտեղ ես բոլորովին մոտ էի իմ վախճանին, և ինձ դարձնել իր ամենահավատարիմ մարդկանցից մեկը: Օժանդակելով, որ Կալիրոյը վերադարձվի ինձ, նա ստիպեց ինձ նամակ գրելու նրան, բայց Միհրդատի սպասավորները, որոնց հանձնարարված էր տեղ հասցնել նամակը, անփույթ գտնվեցին, իսկ նամակն էլ ընկավ հենց իր՝ Դիոնիսոսի ձեռքը: Բայց և այնպես Դիոնիսոսը չհավատաց, որ ես ողջ եմ, այլ մտածեց, որ դա Միհրդատն է խորամանկորեն գայթակղում Կալիրոյին: Նա անմիջապես արքային ուղարկեց մի ամբաստանագիր, որի մեջ Դիոնիսոսը մեղադրում էր Միհրդատին գայթակղության մեջ: Իսկ արքան ընդունեց այդ բողոքը և բոլորին կանչեց իր մոտ՝ դատի: Այդպես էլ մենք ուղևորվեցինք դեպի Բաբելոն: Դիոնիսոսը, որ կնոջը տարել էր հետը, ստիպեց, որ համայն Ասիան հիանա Կալիրոյով: Իսկ ինձ Բաբելոն տարավ Միհրդատը: Երբ հասանք Բաբելոն, ապա այնտեղ, արքայի առջև մեր դատը երկարեց: Արքան իսկույն արդարացրեց Միհրդատին: Բայց Կալիրոյի համար իմ ու Դիոնիսոսի վեճը արքան հետաձգեց, այդ ժամանակամիջոցում Կալիրոյին հանձնելով թագուհի Ստատիրայի խնամքին: Պատկերացնո՞ւմ եք դուք, քաղաքացիներդ Սիրակուզայի, թե, կնոջիցս անջատված լինելով, քանի անգամ եմ ես մահվան վճիռ ընդունել: Դե, ասենք, ես կմեռնեի, եթե միայն ամեն անգամ ինձ չփրկեր Պոլիքարմոսը՝ աշխարհում ամենահավատարիմ իմ բարեկամը: Չէ որ Կալիրոյի հանդեպ սիրո սաստիկ զգացում ապրող արքան դատի մասին չէր էլ մտածում: Բայց նա Կալիրոյին չթեքեց իր կողմը և չպատվազրկեց նրան: Եվ հենց այդ ժամանակ էլ Եգիպտոսն անջատվեց արքայից, որի պատճառով սկսվեց մի ծանր պատերազմ, որն, ի դեպ մեծ շնորհի դարձավ ինձ համար: Թագուհին Կալիրոյին հետը պատերազմ տարավ, իսկ ես էլ, մի մարդուց, որն ինձ ասաց, թե իբր Կալիրոյին հանձնել են Դիոնիսոսին, սուտ լուր ստանալով, ցանկացա վրեժ լուծել արքայից և, անցնելով Եգիպտացու կողմը, մեծ սխրագործություններ կատարեցի: Ես անձամբ գրավեցի անմատչելի Տիրը, և, նշանակվելով ծովակալի պաշտոնին, մեծ արքային հաղթեցի ծովամարտում ու գրավեցի Արադը, ուր արքան թաքցրել էր թագուհուն և այն հարստությունը, որ դուք տեսաք: Ես կարող էի նույնիսկ Եգիպտացուն դարձնել ամբողջ Ասիայի տերը, եթե նա, որ կռվում էր ինձնից անջատ, չսպանվեր: Եվ, վերջապես, ես մեծ արքային դարձրի մեր բարեկամը, վերադարձնելով նրան իր կնոջը և անվանի պարսիկներին՝ նրանց մայրերին, նրանց քույրերին, նրանց կանանց ու նրանց դուստրերին: Իսկ այստեղ ես ձեզ մոտ բերեցի քաջարի հույներին և եգիպտացի կամավորներին: Իոնիայից այստեղ կլողա նավերի ևս մի ջոկատ, որը ձեզ մոտ կբերի Զերմոկրատեսի թոռանը:

Բոլոր կողմերից այս խոսքերին արձագանքեցին բարի ցանկություններով, իսկ Զերեյը, հանգստացնելով նրանց:

— Մենք երկուսով՝ ես և Կալիրոյը, ձեր առջև շնորհակալություն ենք հայտնում մեր բարեկամ Պոլիքարմոսին, որ մեր հանդեպ ցույց տվեց և իր բարեհաճությունը, և ամենաանկեղծ հավատարմությունը, և, եթե դուք համաձայն եք, եկեք իմ քրոջը կնության տանք նրան, և որպես օժիտ նա կստանա ռազմավարի մի մասը:

Ժողովուրդը դրան պատասխանեց հավանության բացա-կանչություններով:

— Պոլիքարմոս, ժողովուրդը շնորհակալություն է հայտնում քեզ, ազնիվ քաղաքացուդ և հավատարիմ բարեկամիդ: Դու այնպես երջանկացրիր հայրենիքը, ինչպես արժանի էին դրան Յերմկրատեսն ու Քերեյը:

Դրանից հետո Քերեյը նոր առաջարկություն արեց.

— Բացի այդ, խնդրում եմ ձեզ, հունական այդ երեք հարյուրյակին՝ իմ քաջարի ջոկատին, Սիրակուզայի քաղաքացիություն տալ:

Եվ ժողովուրդը վերստին բացականչեց.

— Նրանք արժանի են լինելու մեր համաքաղաքացիները: Այս առաջարկը քվեարկել ձեռք բարձրացնելով:

Որոշումը գրանցվեց և, ժողովրդական ժողովում անմիջապես տեղ գրավելով, նրանք դարձան քաղաքացիների մի մասը: Նրանցից յուրաքանչյուրին Քերեյը մի տաղանդ նվիրեց, Յերմկրատեսն էլ հրամայեց հողագործի աշխատանք տալ եգիպտացիներին:

Եվ մինչ ժողովուրդը գտնվում էր թատրոնում, Կալիբոյը, Նախքան կմտներ իր տունը, ուղևորվեց դեպի Աֆրոդիտեի տաճարը: Այնտեղ Նա գրկեց աստվածուհու ոտքերը և, դեմքը սեղմելով նրանց, համբուրեց դրանք և արձակելով իր մազերը, խոսեց այսպես.

— Շնորհակալություն քեզ, Աֆրոդիտե: Դու նորից թույլ տվեցիր, որ Քերեյին ես տեսնեմ Սիրակուզայում, որտեղ քո կամքով նրան տեսել եմ աղջիկ ժամանակ: Տիրակալուհի, ես չեմ տրտնջա իմ ապրած տառապանքների համար: Դրանք ինձ վիճակված էին ճակատագրով: Թախանձում եմ քեզ, երբեք ինձ մի անջատիր Քերեյից, այլ պարզև տուր, որ մենք երջանիկ ապրենք միասին և մեռնենք միասին:

Ես այսքան գրեցի Կալիբոյի մասին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱՖՐՈԴԻՍԻԱՑԻՍ — այսինքն Աֆրոդիսիա քաղաքի բնակիչ: Խոսքը Կիպրոս կղզու վրա գտնվող Աֆրոդիսիա, կամ, որ նույնպես հավանական է, փոքրասիական Աֆրոդիսիադա քաղաքի մասին է:

2. ՌԵՏՈՐ — այսինքն՝ իրավապաշտպան: Աֆինագորոսը, որի գրագիրը կամ այլ կերպ ասած՝ դպիրն է եղել Խարիտոնը, մի շարք ուսումնասիրողների կարծիքով ոչ թե երևակայական, այլ պատմական դեմք է:

3. ՍԻՐԱԿՈՒԶԱ — հունական հարուստ քաղաք Իտալիայի հարավում, Սիցիլիա կղզու վրա, մ.թ.ա. 5-րդ դարում սիցիլիական բոլոր քաղաքներից ամենահզորը:

4. ՅԵՐՄՈԿՐԱՏԵՍ — մ.թ.ա. 5-րդ դարի վերջի պատմական խոշոր գործիչ: Պելոպոնեսյան կռվի ժամանակ լինելով սիրակուզյան հանրապետական բանակի ստրատեգ, այսինքն գլխավոր հրամանատար, մ.թ.ա. 413 թվականին Յերմկրատեսը ծովամարտում նշանավոր հաղթանակ տարավ աթենացիների դեմ, Սիրակուզայի մոտ գլխովին ջարդելով մինչև այդ անհաղթահարելի համարվող աթենական ռազմական նավատորմիդը:

5. ԾՈՎԱՅԱՐՍ — այդպես էին կոչվում ծովային հավերժահարսերը, ի տարբերություն լեռնային ու անտառային, ինչպես և աղբյուրների, գետակների ու գետերի հավերժահարսերի:

6. ԿՈՒՅՍ ԱՖՐՈԴԻՏԵԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ — այլ կերպ ասած Կալիբոյի գեղեցկությունը նման էր սիրո աստվածուհի Աֆրոդիտեի դեռատի տարիքի գեղեցկությանը, երբ Աֆրոդիտեն ինքն էլ դեռևս աղջիկ էր:

7. ԷՐՈՏ (հռոմեացիների մոտ՝ Ամուր) — սիրո աստված, Աֆրոդիտեի կրտսեր տղան:

8. ԱՔԻԼԼԵՍ — Իլիականի գլխավոր հերոսը:

9. ՆԵՐԵՎՍ — իր գեղեցկությամբ փառաբանված հունական դյուցազուններից մեկը, որ զոհվեց Տրոյայի պարիսպների տակ («Այդ Ներեսը Իլիոն եկած դանայական զորքերի մեջ գեղեցկագույնն էր իսկապես՝ Պելիսածին (այսինքն Աքիլլեսի) քաջից հետո», տես «Իլիական», երգ երկրորդ, 673-674-րդ տողեր): Ի դեպ, վեպի հեղինակը, իր հերոսների հոգեվիճակները սրելու համար, հաճախ է դիմում Յոմերոսին: Թարգմանիչը Յոմերոսին պատկանող այդ կարգի մեջբերումները կատարել է հայերեն թարգմանությունից (տես՝ Յոմերոս, «Իլիական», թարգմանություն Յամագասյա Յամբարձումյանի, Երևան, 1955 թ. և «Ոդիսական», թարգմանություն Սիմոն Գրքաշարյանի, Երևան, 1957 թ.):

10. ԻՊՊՈԼԻՏ — արժեքական դիցաբանական արքա Թեսեոսի որդին:
11. ԱԼԿԻՎԱԴԵՍ — մ.թ.ա. 5-րդ դարի երկրորդ կեսում ռազմական ու պետական գործիչ Աթենքում, որ երիտասարդ տարիներին աչքի էր ընկել իր գեղեցկությամբ:
12. ՄԱՐԶԱԴՊՐՈՑ — այդպես էին կոչվում մարմնամարզական դպրոցները:
13. ԱՍՏՎԱԾ — այսինքն՝ Էրոտը:
14. ԳԻՄՆԱԶԻԱ — հին Հունաստանում այսպես էին կոչվում մարզական դպրոցները, որտեղ մերկ երիտասարդները մարմնամարզական տարբեր վարժություններ էին կատարում: Գիմնազիա հունարեն գիմնոս բառից է, որ նշանակում է մերկ:
15. ՈՐԻ ԱՍԲՈՒՆԱՎԱՐԸ (ԴԵՄԱԳՈԳԸ) ԵՐՈՏՆ ԵՐ — այլ կերպ ասած՝ ժողովը ղեկավարում էր սիրո աստված Էրոտը: Դեմագոգ տերմինը կազմված է հունարեն դեմոս (ժողովուրդ) և ագոգ (ղեկավարել) արմատներից: Այսպիսով դեմագոգ բառացի նշանակում է ժողովրդավար, ամբոխավար:
16. ԺՈՂՈՎՈՒՐԸ ԴՈՒՐՍ ԵՎԱԿ ԹԱՏՐՈՆԻՑ — Հնում թատրոնը եղել է նաև ժողովրդական ժողովավայր:
17. ՓՈՂՈՑՆԵՐԸ ԼՅՎԵՑԻՆ ՊՍԱԿՆԵՐՈՎ ՈՒ ԿԱՆԹԵՂՆԵՐՈՎ — թարմ ծաղկեպսակներն ու հրավառ կանթեղները համարվել են հին ժամանակների հարսանեկան հանդեսների անհրաժեշտ պարագաները:
18. ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԸ — հեղինակը նկատի ունի պատմական այն նշանավոր հաղթանակը, երբ մ.թ.ա. 413-ին Հերմոկրատեսը ջախջախեց հունական նավատորմիդը:
19. ԵՎ ՊԱՏԱՆՈՒ ՍԻՐՏՆ ՈՒ ԾՆԿՆԵՐԸ ԹՈՒԼԱՑԱՆ — տող «Իլիական»-ից (տես՝ «Իլիական», երգ քսանմեկերորդ, 115-րդ տող):
20. ԱՐՏԵՄԻՍ — Լուսնի, հետագայում՝ որսորդության աստվածուհին հունական դիցարանում:
21. ԹԵՏԻՍԻ ՀԱՐՍԱՆԻԸ ՊԵԼՈՆ ԼԵՌԱՆ ՎՐԱ — Թեսիսը հունական դիցարանի ծովային աստվածուհին է, ամենագեղեցիկ և ամենահզոր ծովահարսը, որին աստվածներն ամուսնացրել էին մահկանացու, Թեսալիայի արքա Պելոնի հետ: Այդ ամուսնությունից է ծնվել Աքիլլեսը՝ Տրոյական պատերազմի մասին ասքի գլխավոր հերոսը:
22. ԵՐԻԴԱ (բառացի՝ գծողություն) — երկպառակության աստվածուհին: Ըստ հնագույն դիցաբանության, աստվածները Թեսիսի հարսանիքին չհրավիրեցին Էրիդային, որի պատճառով Էրիդան վիրավորվեց և, որպես պատիժ, ճարպկությամբ հարսանեկան խնջույքի Նստած աստվածների ու աստվածուհիների մեջ նետեց «կռվախնձորը»: Խնձորի վրա Էրիդան գրել էր. «ամենագեղեցիկին»: Հերան, Աթենասն ու Աֆրոդիտեն իսկույն սկսեցին վիճել, թե իրենցից ո՞ւմ է հասնում խնձորը, իսկ Նրանց վեճը խթան հանդիսացավ հետագա դեպքերի, որոնք ավարտվեցին Տրոյայի դաժան ու արյունահեղ կռվով:
23. ՌԵԳԻ — հունական քաղաք հարավային Իտալիայում:
24. ԱԿՐԱԳԱՆՏ — այժմ Զիրջենտի, հունական մեծ քաղաք Սիցիլիայի հարավարևմտյան ափին:
25. ԱՂԶԱՆԸ ՀԵՏԸ ՎԵՐՑՆԵԼ ԱՐԴԵՆ ԶԵՐ ԿԱՐԵԼԻ — Կալիբդոն այդ ժամանակ արդեն հղի էր:
26. ԿՈՄՈՍ — այսպես է կոչվել սիրած աղջկա տան մոտ երիտասարդների ուրախ երթը, որի ժամանակ երգում էին կիթառի նվագակցությամբ: Անձանոթ մարդկանց կողմից Կալիբդոնի տան մոտ, ամուսնու բացակայության ժամանակ, գիշերային կոմոս սարքելը, իհարկե, սովոր էր ձգում երիտասարդ կնոջ անվան վրա: Դա հեշտությամբ կարող էր խանդ ու կասկած ծնել Զերեյի սրտում, որը և հաշվի էին առել կոմոսի տեսարան սարքողները, որոնց ղեկավարում էր Ակրագանտի բռնապետը:
27. ՊԱՐԱՍԻՏ (բառացի՝ սեղանակից) — այսպես էին կոչվում հասարակության չաշխատող հատվածին պատկանող, հաճախ բավական կրթված, բայց բաց ընկած, անգործ մարդիկ, որոնք որպես ապրուստի միջոց իրենց ժամանակը անց էին կացնում հարուստների հետ ճաշելով և որպես վարձատրություն հարուստներին զբաղեցնում էին հաճելի զրույցներով: Նրանք պատրաստ էին կատարելու իրենց տերերի ցանկացած, նույնիսկ կասկածելի բնույթի, հանձնարարությունները:
28. ԱԲՐԱ — այսպես էին կոչում երիտասարդ սպասավորուհուն:

29. ՎՇՏԻ ՍԵՎ ԱՄՊՆ ԱՔԻԼԼԵՍԻ ԴԵՄՔԸ ՊԱՏԵՑ.

ԵՐԿՈՒ ԱՓՈՎ ՎԵՐՑՐԵՑ ՄՈՒԽԻՐՆ ՈՒ ԻՐ ԳԼԽԻ ՎՐԱ ՑԱՆԵՑ

ԵՎ ՄՈՒԽԻՐՈՎ ԱՅԼԱՆԴԱԿԵՑ ԻՐ ԵՐԵՍԸ ԳԵՂԵՑԿԱԳԵՂ:

(տես՝ «Իլիական», երգ տասնութերորդ, 22-24-րդ տողեր): Այսպես էր ողբում Աքիլլեսը իր ընկերոջ՝ Պատրոկլեսի մահը:

30. ԳԻՄԱՏԻ — վերարկու, որ հագնում էին հին հույները:

31. ՆԱ ՆՄԱՆ ԵՐ ԶՆԱԾ ԱՐԻԱԴՆԵԻՆ — Կրետեի արքա Մինոսի դուստր Արիադեն, որը փրկեց Թեսևսին, երբ վերջինս սպանեց Կրետեի լաբիրինթոսի հրեշ բնակիչ Մինոտավրոսին: Լաբիրինթոս մտնելուց առաջ Արիադեն Թեսևսին տվեց մի կծիկ թել, պատվիրելով, որ կծիկի ծայրը կապի լաբիրինթոսի դռանը, որպեսզի ետ դարձին չմոլորվի: Թեսևսը մտավ լաբիրինթոս, սպանեց հրեշին և կծիկը կծկելով դուրս եկավ այնտեղից: Այսպիսով Արիադենի կծիկը դարձավ Թեսևսի ուղեկիցը: Պատկերավոր խոսքում Արիադենի կծիկ արտահայտությունը նշանակում է դժվարին վիճակից դուրս գալու միջոց: Այնուհետև Թեսևսը Արիադենին նստեցրեց իր նավը և նրան տարավ Ատտիկա, բայց ճանապարհին, մի կղզու մոտ կանգառում, Արիադենն քնով անցավ ծովափին: Թեսևսը թողեց նրան և միայնակ նավարկեց հեռու: Բայց լքվածին մոտեցավ Դիոնիսոսը և, գայթակղվելով Արիադենի գեղեցկությամբ, կնության առավ նրան: Զնած Արիադենի պատկերը եղել է հույն արվեստագետների, հատկապես քանդակագործների սիրած թեմաներից:

32. ԳՈՊԼԻՏՆԵՐ — ծանրագին հետևակ:

33. ԹԱՂՄԱՆ ԱՆԿՈՂԻՆԸ — այդ ժամանակաշրջանում մեռածին թաղում էին ոչ թե դագաղում, այլ թաղման անկողնում:

34. ԷՖԵՐՈՍ — այսպես էին կոչվում տասնութից-քսան տարեկան պատանիները, որոնք բնիկ քաղաքացիության կազմի մեջ էին մտնում և, պատրաստվելով ռազմական գործի, մասնակցում էին երիտասարդների պետական ռազմաուսումնական կազմակերպությանը:

35. ՖՈՒՐԻԱՑԻ — Ֆուրիա քաղաքի բնակիչ: Ֆուրիան հունական քաղաք էր Իտալիայի հարավում:

36. ՄԵՍՍԵՆԱՑԻ — Մեսսենա քաղաքի բնակիչ: Մեսսենան կամ Մեսսինան (նաև՝ Մեսսանան) հունական քաղաք էր Սիցիլիայի հյուսիսարևելյան մասում, Մեսսինյան նեղուցի սիցիլիական ափին:

37. ՆԱ ԳԼՈՒԽԸ ԴՐԵՑ ԾՆԿՆԵՐԻՆ — խոր վշտի արտահայտություն հնագույն ժամանակներում:

38. ՈՐՊԵՍԶԻ ԱՆՑԶ ԲԱՑԵՆ ԴԵՊԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ — այդ ժամանակներում հարուստ մարդկանց գերեզմանները նման էին ստորգետնյա փոքրիկ սենյակների:

39. ԱՅԼԶԱՆ ԷԼ ԱԹԵՆԶՈՒՄ ԿԳՏԵՆԸ ՈՒՐԻՇ ԶԱՂԱՔՆԵՐԻՑ ԵՎԱԾ — այլ կերպ ասած Աթենքը միշտ էլ լիքն էր լինում ուրիշ քաղաքներից եկած հարուստ մարդկանցով:

40. ԲԱՆՍԱՐԿՈՒՆԵՐ — Աթենքում բանսարկուներ էին կոչվում նրանք, ովքեր նենգասպառնալիքի (շանտաժի) էին ենթարկում հունական ուրիշ քաղաքներից եկած վաճառականներին, որոնք, Աթենքի օրենքներին ծանոթ չլինելով, հաճախ խախտում էին կարգուկանոնը: Նկատելով օրենքի այս կամ այն խախտումը, բանսարկուներն սկսում էին սպառնալ, թե կմատնեն խախտողներին: Վերջիններս նրանցից ազատվում էին միայն կաշառք տալով:

41. ԱՐԵՈՊԱԳՈՍ — գերագույն դատաստանատուն Աթենքում:

42. ԱՐԽՈՆՏՆԵՐ — Աթենքի բարձրագույն իշխանությունները:

43. ՄԵԾ ԱՍԻԱ — այսինքն ընդարձակ Պարսկաստանը:

44. ԱՐՔԱՅԱԿԱՆ ՅԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԱՐՔՅՈՒՐՆ Է — խոսքը Պարսկաստանի մասին է:

45. ՆՍՏԵԼ ԵՐ ԽԱՆՈՒԹՈՒՄ — այդ ժամանակվա կրպակ-խանութները նաև գինետներ էին:

46. ԻՈՆԱՑԻՆԵՐ — այդպես էին կոչվում տնտեսական ու քաղաքական տեսակետից առավել առաջավոր հունական ցեղերը, որոնք ապրում էին Փոքր Ասիայի արևմտյան ափին և մերձակա կղզիների վրա: Յենց Իոնիայում, և ոչ թե հին աշխարհի որևէ այլ մասում, ավելի վաղ կատարվեց հին տնտեսական կացութաձևից նորի անցումը և

այստեղ էր, որ ձևավորվեց Հունաստանի կլասիկական ժամանակաշրջանի բնորոշ քաղաքային տնտեսության համակարգը: Իոնիայում ծնունդ առել հունական փիլիսոփայությունը, այնտեղ է կատարվել գրական արձակի առաջին քայլերը, զարգացել քնարերգությունը, կատարելագործվել կերպարվեստը, արձանագործի վարպետությունը:

Իոնիայի մշակութային կյանքում առաջատար դեր էր խաղում Միլեթը:

47. ՄԵԾ ԱՐՔԱ — այսինքն Պարսից արքան:

48. ՍԻԲԱՐԻՍ — քաղաք Իտալիայի հարավում:

49. ՏԵԼՈՆԵՐ — մաքսատուրք հավաքողներ:

50. ԱՄԱՌԱՆՈՑ — քաղաքից դուրս, սեփական կալվածքում գտնվող Դիոնիսոսի տունը:

51. ԼԻԿԻԱ — հունաբնակ մարզ Փոքր Ասիայի հարավային մասում, որն այդ ժամանակ մտնում էր Պարսից տերության կազմի մեջ:

52. ՏԱՂԱՆԴ — դրամի միավոր, այդ ժամանակների համար զգալի գումար, որի ստույգ արժեքն այժմ դժվար է որոշել: Մ.թ.ա. 6-րդ և 5-րդ դարերում ատտիկյան մեկ արծաթե տաղանդը հավասար էր մոտավորապես 1500—2000 ռուբլու (ոսկով):

53. ՁԵՌՔՈՎ ԿՐԾՔԻՆ ՀԱՐՎԱԾԵԼՈՎ — խոր վիշտն այդպես էին արտահայտում հին հույները:

54. ՄԱՏԱՆՈՒ ՎՐԱ ՏԵՍԱՎ ԶԵՐԵՅԻ ՊԱՏԿԵՐԸ — մատանուն հազցված էր Զերեյի պատկերով փորաքանդակը:

55. ՀԻՄԵՆԵՈՍ — կամ հարսանեկան երգ՝ նվիրված ամուսնական կապի աստված Հիմենեոսին:

56. ՇՏԱՊԻՐ ՀՐԱՊԱՐԱՎ — այդ ժամանակ քաղաքների հրապարակներում էին գտնում նոտարները:

57. ԱՂՐԱՍ — Դիոնիսոսը տալիս է իրեն ծանոթ նոտարի անունը:

58. ՍԻԲԱՐԻՍՑԻ — այսինքն Սիբարիս քաղաքի բնակիչ:

59. ՉԷ ՈՐ ԴՈՒՔ ԷԼ ԲԱՐՁՐ ԵՔ ԻՆՁՆԻՑ — Կալիբոյին ծառայող կանայք ստրկուհիներ չէին, այլ տեղացի ազատ գեղջկուհիներ:

60. ԵԹԵ ԴՈՒ ՆԱՅԵՍ ԱՖՐՈՂԻՏԵԻՆ — այսինքն Աֆրոդիտեի արձանին, որ դրված էր նրա անունը կրող տաճարում:

61. ՄԻՆՉԴԵՐՈՒ ՄԵՆՔ ՊՃՆԵԼ ԷԻՆՔ ԶԵՉ — Կալիբոյը նկատի ունի այն պսակները, ժապավենները և մյուս ընծաները, որոնցով ինքն ու Զերեյը զարդարել են Աֆրոդիտեի պաշտամունքի արձանը:

62. ՉԷ ՈՐ ՆԱ ԷՐՈՏԻ ՄԱՅՐՆ ԷՐ — այսինքն դյուրափոփոխ, անկայուն սիրո աստվածը:

63. ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՕՏԱՐՆԵՐԻՆ ՆՄԱՆՎԵԼՈՎ, ԱՅԼԱՓՈԽՎՈՒՄ ՈՒ ՇՐՋՈՒՄ ԵՆ ԶԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՈՒ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ, ԵՎ ՏԵՄՆՈՒՄ ԵՆ, ԹԵ ՈՎ ՄԱՐԴՎԱՆՑԻՑ ԱՆՕՐԵՆ Է ԵՎ ԱՆԱՐՂԱՐ:

(Տես՝ «Ողիսական», երգ տասնյոթերորդ, 486-488-րդ տողեր):

64. ԽՆԴՐՈՂԻՆ ՆԱ ՀԱՍՑՐԵԼ ԷՐ ԻՐ ՀԱՅՐԵՆԻԺԸ — անպաշտպան Ողիսասին, որին փոթորիկը կղզի էր դուրս բերել, Ալկինոս արքան կախարդական նավով վերադարձրեց իր հայրենիքը:

65. ԹՈՂ ՎԿԱ ԼԻՆԻ ԱՖՐՈՂԻՏԵՆ — Դիոնիսոսը նկատի ունի Աֆրոդիտեի արձանը, որի առջև տեղի էր ունենում իր ու Կալիբոյի գրույցը:

66. ԼԱԿԵԴԵՄՈՆԱՑՈՒՅԻ — այսինքն Մենելոսի կին Հեղինեի, որ ծագումով Սպարտայից էր, կամ, այլ կերպ ասած՝ Լակեդեմոնայից:

67. ԶՍՎԵԼՈՎ ՆՐԱ ՇՆՎՆԵՐԻՆ — սաստիկ խնդրանքի արտահայտություն հնագույն ժամանակներում:

68. ԳԻՏՑԻՐ, ՈՐ ՀԱՂԹԱՎԱՆ ՆՎԵՐԸ ԿԼԻՆԻ ԶՈ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆԸ — Ֆոկը և Պլանգոնան ստրուկներ էին: Դիոնիսոսը խոստանում էր Պլանգոնային ազատել ստրկությունից, եթե նա հաջողությամբ կատարի տրված հանձնարարությունը:

69. ԴՈՒ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՍ ՄԵԴԵԱՅԻ ՕՐԻՆԱԿԻՆ — Եվրիպիդեսի «Մեդեա» ողբերգության հերոսուհուն՝ դժբախտ որդեսպանին:

70. ՍՎՅՈՒԹՈՒՅԻ — այսինքն Մեդեայի, որ ծագումով Կոլխիդայից էր: Այն ժամանակներում Կովկասը, այդ թվում և Կոլխիդան, համարում էին Սկյութիա:

71. ԻՍԿ ԶԵԹՈՍՆ ՈՒ ԱՄՓԻՈՆԸ — Չեթոսն ու Ամփիոնը երկվորյակ եղբայրներ էին, Չևս աստծու և մահկանացու Անտիոպեի որդիները: Անտիոպեն, որ Չևսի հետ սիրային գաղտնի կապի մեջ էր և գաղտնի էր պահել իր հղիությունը, երկվորյակ երեխաներ ունենալուց հետո Կիթերոնի լեռներում լքում է նրանց: Հովիվները գտնում են երեխաներին և պահում-մեծացնում: Մինչ այդ Անտիոպեն, որ որպես ստրկուհի ընկել էր դաժան Դիրկեի ձեռքը, փախչում է լեռները և գտնում իր տղաներին՝ Չեթոսին ու Ամփիոնին: Վերջիններս սպանում են Դիրկեին և իրենց մորը վերադարձնում հայրենիք:

72. ԻՍԿ ԿՅՈՒՐՈՒՄԸ — ըստ ավանդության, պարսից ապագա արքա Նորածին Կյուրոսին խլում են մորից: Կյուրոսի պապ Աժդահակը, որ ցանկանում էր սպանել թոռանը, Նորածինին հանձնում է հովվի ձեռքը և հրամայում, որ նրան նետի անանցանելի անտառը: Բայց հովիվը, խղճալով երեխային, տուն է տանում նրան և պահում ինչպես հարազատ որդու: Երբ Կյուրոսը մեծանում է, Աժդահակը, որ արդեն զոջացել էր իր արածի համար, պատահաբար ճանաչում է թոռանը: Հետագայում Կյուրոսը դառնում է Պարսից հզոր թագավորության հիմնադիրը:

73. ԲԱՅՑ ԴՈՒ ՀԱԳԻՐ, — ՀՈԺԱՐ ԵՄ ԵՍ, — ՇԵՆԱԶԱՐԴ ԶԵՆԶԵՐԸ ԻՄ — (տես՝ «Իլիական», երբ տասնվեցերորդ, 64-րդ տող): Աքիլլեսը երագում տեսնում է Հեկտորի կողմից սպանված Պատրոկլեսի ուրվականը:

74. ԲԱՐՁՐԱՆԱԼՈՎ ՎԵՐԵՎ — Հին Հունաստանում կանանց սենյակները սովորաբար գտնվում էին երկրորդ հարկում:

75. ԿԱԼԻՐՈՅՆ ԻՐ ՓՈՐԻՆ ԴՐԵՑ ԶԵՐԵՅԻ ՊԱՏԿԵՐԸ — այսինքն՝ Կալիբոյը փորին դրեց իր մատանին, որի վրա փորագրված էր Զերեյի պատկերը:

76. ԻՆՁ ՉԷԻՆ ՀԱՍՈՉԻ ԵՐԴՎԵԼ ԶԵՉՆՈՎ ՈՒ ԶՈ ՉԱՎԱԿՈՎ — «քո զավակով» ասելով Կալիբոյը նկատի ունի Էրոտին՝ Աֆրոդիտեի որդուն:

77. ԵՎ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԵՄ ԵՐԿՐՊԱԳՈՒՄ ԶԵՉ, ԱՅԼ ՆՐԱ ՀԱՄԱՐ — այսինքն իր՝ Կալիբոյի ապագա երեխայի համար:

75. ԾՈՎԻՑ ԴՈՒՐՍ ԵՎԱԾ ԾՈՎԱՅԱՐՍ Է — այսինքն՝ ծովային հավերժահարս:

79. ԿԱՄ ԿԵՆԴԱՆԱՑԵԼ Է ԴԻՈՆԻՍՈՍԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՁԱՆՆԵՐԻՑ ՄԵՎԸ — արձանը ժողովուրդը հավատում էր, որ հեթանոս ժամանակներում հրաշքով կարող է կենդանանալ, իջնել պատվանդանից և քայլել:

80. ՆԱԽԱՆՁԻ ԱՍՏՎԱԾԸ — այսինքն՝ ճակատագրի կամ դիավաճքի աստվածը, որ հունարեն կոչվում է Տյուխե, հռոմեացիների մոտ՝ Ֆորտունա:

81. ԳԵՐԵՉՄԱՆ ՀԵՂԵԼ — մեռածի հիշատակը հարգելու հնագույն սովորույթ է. գերեզմանի վրա հեղում էին ջրի, կաթի և մեղրի խառնուրդ:

82. ԱՐԻԱՂՆԵ — տես՝ 31-րդ ծանոթագրությունը:

83. ՍԵՄԵԼԱ — Թեբեի արքա Կազմոսի դուստր Սեմելան սիրային կապ է ունեցել Չևս աստծու հետ: Այդ սիրո արդյունքն էր Դիոնիսոս աստծու ծնունդը:

84. ՏԻՐՈՒՀԻ — Զերեյը մտովի դիմում է Կալիբոյին, որին նա մեռած է համարում:

85. ԼԻԲԻԱ — հույները Լիբիա են կոչել Աֆրիկայի հյուսիսային ծովափնյա մասը:

86. ԻՈՆԱԿԱՆ ԾՈՎ — այդպես էր կոչվում Ադրիատիկ ծովի հարավային մասը, որը Հունաստանը բաժանում էր Իտալիայից ու Սիցիլիայից:

87. ՆԱԽԱՆԱՍՏՈՒԹՅՈՒՆ — հունարեն՝ Պրոնոյյա: Մարդկանց մասին աստվածների հոգատարության բանաստեղծական անձնավորում:

88. ՊԱՏԱՌՈՏԵՑ ԻՐ ՀԱԳՈՒՍՆԵՐԸ — խոր վշտի արտահայտություն:

89. ՃԱՐՊԻԿ ՀՆԱՐԶԸ — այսինքն մարդկանց հաճախ խաբող «հույսը»:

90. ԿՐԵՏԱՑԻ — այսինքն Կրետե կղզու բնակիչ:

91. ԿԵՖԱԼԵՆԻԱ — այժմ՝ Կորթոս, հունական կղզի Բալկանյան թերակղզու արևմտյան ծովափի մոտ:

92. ՄԻԱՅՆ ԵՍ ՓՐԿՎԵՑԻ ԻՄ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԻՎ — ըստ հին հույների հավատալիքների, ծովում նավը կարող է խորտակվել այն ժամանակ, եթե նրա տախտակամածի վրա մեղք կամ հանցանք ունեցող ուղևոր լինի: Իսկ փոթորիկի ժամանակ փրկվում էր միայն մաքուր հոգու տեր մարդը:

93. ՆԱ ԻՐ ԽՈՍԶԸ ԴԵՌ ՉԷՐ ՎԵՐՁԱՑՐԵԼ — հնագույն, հոմերոսյան Էպոսին պատկանող արտահայտություն, որ մշտապես հանդիպում ենք ինչպես «Իլիականում», այնպես էլ «Ոդիսականում»:

94. ԱՅԱ ԱՅԴ ՄԱՐԴԸ — Ֆերոնը:
95. ԿԱՏԱՊԵԼՏ — տանջահարելու գործիք:
96. ՈՎ ԱՌԱՋԻՆԸ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՑ — այսինքն՝ ձկնորսը:
97. ՈՐԸ ԴԵՌԵՎԱՍ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՐ ԿՐԵԼ ՅԵՐՄՈԿԱՐԱՏԵՍԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ — այսինքն՝ այն նավը, որով Յերմոկրատեսը հաղթել է արեւնացիներին:
98. ՈՐԴՅԱԿ, ԳԵԹ ՍՐԱՆԻՑ ԴՈՒ ՊԱՏԿԱՌԻՐ ԵՎ ԳԹԱ ԻՆՁ, ԵԹԵ ԵՐԲԵՔ ԵՍ ԶՈ ԼԱՑԻՆ ԶԱՂՏՐԱՏԵՆՉԻԿ ՅԱԳՈՒՐԴ ՏԱԼՈՎ, ԾԻԾ ԵՄ ՏՎԵԼ ԶԵՉ ԿԱԹՈԳԻՆ: (տես՝ «Իլիական», երգ քսաներկուերորդ, 82-84-րդ տողեր):
- Սրանք Յեկտորի մոր խոսքերն են, որով նա խնդրում է որդուն՝ մարտի մեջ չմտնել հզոր Աքիլլեսի հետ:
99. ՊՈՍԵՅԴՈՆ — Յին հույների ծովի գերագույն աստվածը: Հռոմեացիների մոտ կոչվում էր Նեպտուն:
100. ԵՎ ՊԱՏԱՆՈՒ ՍԻՐՏՆ ՈՒ ԾՆԿՆԵՐԸ ԹՈՒԼԱՑԱՆ — տես՝ 19-րդ ծանոթագրությունը:
101. ԿՐՏՍԵՐ ԶՐՄՈՒՅԻ — հեթանոսական տաճարներում սպասավորում էին նաև կանայք:
102. ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐ — հին հույներն ու իտալացիները այսպես էին կոչում ամեն տեսակ օտարերկրացու:
103. ԿԱՐԻԱ — մարզ Փոքրասիական թերակղզու հարավ-արևմտյան մասում:
104. ՉՈՅԱԽՆՉՈՒՅՔՆԵՐ — խնջույք, որի մեջ հիմնականում մտնում էր աստվածների պատվին զոհաբերած կենդանիների մսից պատրաստված ճաշերը:
105. ՅԵԿԱՏՈՒՐ — բառացի՝ հարյուր կով: Այդպես էին կոչվում այն զոհաբերությունները, որի ժամանակ մորթում էին մեծ թվով անասուններ:
106. ԶԱՆԶԻ ՆՐԱՆՑԻՑ ՈՉ ՈՋ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ՈՉ ԱԹԵՆԱՍԻՆ, ՈՉ ԷԼ ԱՐՏԵՄԻՍԻՆ՝ ՄԱՆԿԱՆԸ ԿՐԾՔԻՆ ԲՈՆԱԾ — և Աթենասը, և Արտեմիսը եղել են կույս աստվածուհիներ, որոնց խորթ էր մայրական զգացումը:
107. ՆԵՄԵՉԻՂԱ — վրիժառության աստվածուհի, որը մարդկանց պատժում էր չափազանց մեծ կամ ոչ արժանի հաջողությունների համար:
108. ԶԵՐԵՅԻՆ ԴՈՒ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՉԵՍ ԽԼԵԼ ԻՆՁՆԻՑ — Կալիբդոն նկատի ունի, որ ինքը Զերեյից երեխա է ունեցել:
109. ԳԼԽԻՆ ՓՈՇԻ ԱԾԵՑ — մերձավորի մահվան առթիվ խոր վշտի արտահայտություն: Այդ սովորության հետքերը եղել են նաև հայերի մեջ, որից հայերենում մնացել է «հողը գլխիս» խոսքը:
110. Օ՝ ԹԱՂԻՐ ԴՈՒ ԻՆՁ, ԵՍ ԿՍՏՆԵՄ ՕԹԵՎԱՆՆ ԱԻՂԱՅԻ — տես՝ «Իլիական», երգ քսաներեքերորդ, 41-րդ տող: Այսպես է ասում մեռած Պատրոկլեսի ուրվականը քնած Աքիլլեսին:
111. ՈՐՊԵՍՉԻ ԱՅՆ ԼԱՎ ԵՐԵՎԱՐ ՅԵՐՎԻՑ՝ ԾՈՎՈՒՄ ՆԱՎՈՂՆԵՐԻՆ — տես՝ «Ոդիսական», երգ քսանչորսերորդ, 83-րդ տող: Աքայացիք Աքիլլեսի դամբարանը կառուցում են Յելեսպոնտոսի մի բարձրադիր վայրում:
112. ՍԱՏՐԱՊ (կամ փոխարքա) — այդպես էին կոչվում Պարսից տերության մարզերի կառավարիչները:
113. ԿԱՐԻԱ — տես՝ 103-րդ ծանոթագրությունը:
114. ԼԻԴԻԱ — մարզ Փոքր Ասիայում, որ սահմանակից էր Կարիային:
115. ԱՐԻԱՂՆԵ ՈՒ ԼԵՂԱ — երկու գեղեցկուհիներ հունական դիցաբանության մեջ: Արիադենին սիրում էր Ատտիկայի հերոս Թեսևսը, իսկ Լեդային՝ Չևսը: Չևսից ու Լեդայից ծնվեց նշանավոր գեղեցկուհի Յեդիսեն:
116. ՅԵՐԱՐՁԱԿ — սպի արտահայտություն:
117. ԽԱՄՐԵՑՐԵՑ ՅՈՄԵՐՈՍԻ ԲՈԼՈՐ «ԼՈՒՍԱԹԵՎԻԿ» ԵՎ «ԳԵՂԱՆԻ ՈՏՔԵՐՈՎ» ԳԵՂԵՑԿՈՒՅԻՆԵՐԻՆ — «լուռաթևիկ» և «գեղանի ոտքեր» պատկերները Հոմերոսը սովորաբար օգտագործում է գեղեցիկ աստվածուհիներին նկարագրելիս:
118. ԱՅՍ ԱՆՊԻՏԱՆԸ — այսինքն՝ Պոլիքարմոսը:
119. ԶՂԱՄԻՐ — մի տեսակ վերարկու:
120. ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋ — այսինքն՝ զոհախնջույքի:

121. ԷՖԵԴՐ — Հին Հունաստանում, երբ երկու մարմնամարզիկ մրցում էին միմյանց հետ (օրինակ՝ բռնցքամարտի ժամանակ), մրցումների մասնակիցների թիվը կենտ էր լինում (երեք, հինգ և այլն): Այդ կենտ, «ավելորդ» մարմնամարզիկը կոչվում էր Էֆեդր, որ բառացի նշանակում է դարան մտած: Էֆեդրը պարտավոր էր սպասել զույգի մրցման ավարտին և պայքարի մեջ մտնել նրա հետ, ով հաղթող է դուրս եկել այդ զույգից: Բնական է, որ իր ուժերը չծախսած Էֆեդրը առավելություն ուներ արդեն հոգնած իր հակառակորդի հանդեպ:

122. ՈՒՄ ՀԵՏ ՈՐ ՆԱ ԱՄՈՒՄՆԱՆԱ՝ ՑԱՆԿԱՆՈՒՄ Ե ԼԻԱՑՆԵԼ ՏՈՒՆԸ ՆՐԱ — տես՝ «Ողիսական», երգ տասնիինգերորդ, 21-րդ տող: Կնոջ հեղհեղուկ բնավորության մասին այսպես է ասել աստվածուհի Աթենասը:

123. ՊՐԻԵՆ — հունական քաղաք Կարիայում:

124. ՍՏՐԱՏԵԳ — քաղաքի դատական բարձրագույն պաշտոնյա:

125. ԴԵՄՈՍՆԵՐ — պետական ստրուկներ, որոնք հունական քաղաքներում հաճախ կատարում էին ցածրաստիճան ոստիկանների պարտականություններ:

126. ԵՎ ՊԱՏԱՆՈՒ ՍԻՐՏՆ ՈՒ ԾՆԿՆԵՐԸ ԹՈՒԼԱՑԱՆ — տես՝ 19-րդ ծանոթագրությունը:

127. ՈՐՊԵՍ ԺԿՈՒՆ ԱՐՏԵՄԻՂԱ ԿԱՄ ԳԵՂԱՆԻ ԱՖՐՈՂԻՏԵ — տես՝ «Ողիսական», երգ տասնյոթերորդ, 37-րդ տող: Խոսքը Ողիսևսի կնոջ՝ Պենելոպեի մասին է:

128. ՀՆԱՐԱՎՈՐ ԷՐ ԸՆԵԼ ԵՎ ԹԱՆԿԱԳԻՆԴ ՊԱՅԵԼ ԿՈՂԶԻԴ — բանաստեղծական այս տողը պատկանում է նոր ատտիկյան շրջանի մի կատակերգության, որի հեղինակն առայժմ հայտնի չէ:

129. ԱՍՈՐԻՔ — երկիր, որ գտնվում էր Կիլիկիայի և Միջագետքի միջև, Փոքր Ասիայի սահմաններից դուրս:

130. ԿԻԼԻԿԻԱ — ծովափնյա մարզ Փոքրասիական թերակղզու հարավ-արևելյան մասում:

131. ԲԱՐԻ ՈԳԻ — ըստ հին հավատալիքների, մահից հետո մեռած մարդը բարի ոգի էր դառնում ողջ մնացած ազգակիցների կամ նրանց համար, ում սիրում էր:

132. ՈՎ ՊԻՏԻ ՀԵՂԻ ԶՈ ԳԵՐԵԶՄԱՆԸ — տես՝ 81-րդ ծանոթագրությունը:

133. ԲԱԿՏՐԻԱ ԵՎ ՇՈՇ — երկու կարևոր քաղաքներ Ասիայի խորքում, Շոշը՝ Տիգրիս գետից արևելք, իսկ Բակտրիան՝ Փոքր Ասիայից ավելի հեռու, այժմյան Ամու-Դարյա գետից հարավ:

133ա. ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ — բնագրում Արմենիա (Հայաստան): Դարաշրջանի բներանգը պահպանելու համար մենք թարգմանեցինք Հայոց աշխարհ: Հայերս մեր երկիրը հնում կոչել ենք Հայք կամ Հայոց աշխարհ: Հայաստան անվանումը գործածական է դարձել հետագայում: Սակայն երկու անվանումներն էլ (Հայք կամ Հայոց աշխարհ և Հայաստան) որևէ սահմանաբաժան չունեն: Մովսես Խորենացին գրում է Հայք կամ Հայոց աշխարհ, 7-րդ դարի «Աշխարհացույց»-ը՝ նույնպես: Ազաթանգեղոսի, Փավստոս Բյուզանդի և Եղիշեի մոտ հանդիպում ենք Հայաստան ձևին:

134. ՎԵՐՑՐԵՑ ՄՈՒՆԻՐՆ ՈՒ ԻՐ ԳԼԽԻ ՎՐԱ ՑԱՆԵՑ

ԵՎ ՄՈՒՆԻՐՈՎ ԱՅԼԱՆՂԱԿԵՑ ԻՐ ԵՐԵՍԸ ԳԵՂԵՑԿԱԳԵՂ — տես՝ «Իլիական», երգ տասնութերորդ, 23-24-րդ տողեր: Որպես վշտի արտահայտություն այդպես է վարվել Աքիլլեսը Պատրոկլեսի մահվան բոլոր լսելուց հետո:

135. ԵՎ ԲԱՐԲԱՐՈՍ-ՀՈՎԻՎՆ ԱՅՆՏԵՂ ԻՐԵՆՈՎ ԾԱԾԿԵՑ ԱՐՔԱՅԻՆ — բարբարոս-հովիվ ասելով նկատի ունի Տրոյայի արքայազն Պարիսին, որն Իդա լեռան արոտավայրերում որպես հովիվ պահում էր հոր՝ Տրոյայի արքայի հոտը: Պարիսի հետ Տրոյա էր փախել Պարիսով հրապուրված Հեղինեն՝ Սպարտայի արքա Մենելոսի կինը: Վեպի հեղինակը ցանկանում է ցույց տալ, որ ամուսնուն դավաճանում են նույնիսկ Սպարտայում, որ հին աշխարհում հայտնի էր իր խստաբարո բարքերով:

136. ԱՐՄԱՄԱՔՍ — այսպես էր կոչվում պարսկական ծածկոցավոր կառքը:

137. ՏԻՐՈՒՀԻ, ԵԹԵ ՄԻԱՅՆ ԴՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱՅԻՐ ԻՆՔԴ ԵՐԵՎԱԼ ՄԱՐԴԱՆՑ ՄԵՋ — երկրի օրենքների համաձայն, Պարսից թագուհին չպետք է երևար ժողովրդի առջև:

138. ԶՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎԵՑ ԶԵՌՔ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ, ԻՆՉՊԵՍ ԹԱՏՐՈՆՈՒՄ — վեպի հեղինակը կատակով նշում է, որ գեղեցկության

առաջնությունը որոշելու համար քվեարկություն է կատարվել ձեռք բարձրացնելու միջոցով, ճիշտ այնպես, ինչպես դա արվում էր մեծ ժողովներում, որոնք սովորաբար տեղի էին ունենում թատրոնների շենքերում:

139. ԲԱԿՏՐԱԿԱՆ — կենտրոնական Ասիայում պարսկական կարևոր սատրապություններից մեկը, որի գլխավոր քաղաքն էր Բակտրիան: Այս սատրապությունը, որ տարածվում էր Պարապամիսի (այժմ՝ Յինդուկուշ) լեռնաճյուղերի մոտ, մի երկիր էր, որտեղ ավելի հզոր էր հին պարսկական ազնվազարմ դասը:

140. ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ — մրցություն, որ տեղի էր ունենում չորս տարին մեկ Պելոպոնեսում, Հունաստանի հարավում, Օլիմպիոս քաղաքում: Դա նշանավոր մարզական մրցություն էր, որ դիտելու համար բազմաթիվ հանդիսականներ էին գալիս հունական աշխարհի բոլոր կողմերից:

141. ԷԼԵԿՍԻՆՅԱՆ ԳԻՇԵՐ — Դեմետր, Պերսեփոն և Դիոնիսոս աստվածների պատվին պաշտամունքային ծես, որ կատարվում էր ամեն տարի Ատտիկայում, Աթենքից ոչ հեռու գտնվող ծովափնյա Էլևսինա փոքրիկ քաղաքում: Այդ ծեսը կոչվում էր Էլևսինյան սրբազան գիշեր, որի ժամանակ հանդիսավոր երթեր և զոհախնջույքներ էին սարքում:

142. ԼՈՒՆԱԳՆԵՐՆ ՈՒ ՏԱԿՍԻԱՐԻՆՈՄՆԵՐԸ — տարբեր զորամիավորումների հրամանատարներ:

143. ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՈՍԿԵՀԱՏԱԿ ՍՐԱՀԻ ՄԵՋ, ՇՈՒՐՋԸ ՉԵՎՍԻ ՄԵԿՏԵՂ ԲԱՉՄԱԾ — տես՝ «Իլիական», երգ չորրորդ, 1-2-րդ տողեր:

144. ՄԻԼԵԹՅԱՆ ԿԱՊԱ — վերարկուի նման հագուստ:

145. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ — Հոմերոսը:

146. ԱՅՆՏԵՂ ԷԻՆ, ՊԵՐԻԱՄԻ ՀԵՏ, ՊԱՆԹՈՊՈՍԸ, ԼԱՄԲՆ ՈՒ ԹԻՄԵՏՆ — տես՝ «Իլիական», երգ երրորդ, 146-րդ տող: Տրոյա քաղաքի ամրոցային աշտարակին նստած ծերունիները հիանում էին Հեղինեով, որը նույնպես աշտարակ էր բարձրացել, որպեսզի այնտեղից տեսնի ճակատամարտը:

147. ՆՐԱՆՔ ՏԵՆՉՈՒՄ ԷԻՆ ԶՆԵԼ ՊԵՆԵԼՈՊԻ ՍԱՀԻՃԻ ՄԵՋ — տես՝ «Ոդիսական», երգ առաջին, 367-րդ տող: Մտնելով դահլիճ, իր ամուսնու մոտ, Պենելոպեն իր գեղեցկությամբ ստիպեց, որ դահլիճում նստածներից յուրաքանչյուրը երազեր այն մասին, թե ինչ երջանկություն կլինեի եթե ինքը լիներ Պենելոպեի ամուսինը:

148. ՎԵՐՑՐՈՒ ԵՎ ԿԱՐԴԱ — Դիոնիսոսի խոսքն ուղղված էր այն պաշտոնյային, որի պարտականությունն էր հրապարակել գրավոր փաստաթղթերը:

149. ԴՈՒ ՀԱՄԱՐՁԱԿՎՈՒՄ ԵՍ — այս խոսքը Միհրդատը ուղղում է Դիոնիսոսին:

150. ԴՈՒ — այսինքն՝ Դիոնիսոսը:

151. ՊՐՈԹԵՉԻԼԱՎՈՍ — Տրոյայական պատերազմի հերոսներից, որն առաջինն է սպանվել, երբ հույները դուրս եկան Փոքրասիական ափը: Նրա երիտասարդ կինը՝ Լավոդամեն, որ ամուսնացել էր կռվի նախօրեին, հուսահատության մեջ ընկավ, երբ լսեց ամուսնու մահվան լուրը և Նրա հեծկտանքի ձայնը հասավ մեռածին: Մեռած Պրոթեզիլավոսը վեր կացավ գերեզմանից, եկավ Լավոդամեի մոտ և մխիթարեց կնոջը:

152. ԴԱՍՏԻԱՐԱԿ — հունարեն՝ պետագոգ, այլ կերպ ասած՝ դայակ, այսինքն այն սպասավորը (ստրուկը), որ հարուստ ընտանիքներում հետևում էր երեխաներին (տղաներին):

153. ԽՈՆԱՐՀՎԵԼՈՎ ՔԱՐԻ ԱՌՋԵՎ — այսինքն՝ գերեզմանաքարի:

154. ԵՎ ԱՍՈՒՄԻՆՍ, ԵՎ ԵՐԵՆԱՍ — բնագրի այս հատվածում կիսատ տեղ կա, որի պատճառով այս բառերի իմաստը դեռևս պարզ չէ:

155. ԵԹԵ ԱՅՆՏԵՂ, ՏԱՆՆ ՀԱԴԵՍԻ, ՄԵՌՅԱԼՆԵՐԸ ԱՆՀՈՒՇ ԵՆ ՄԻՇՏ, ԵՍ ԱՅՆՏԵՂ ԻՍԿ ՄԻՇՏ ՊԻՏ ՀԻՇԵՄ ՍԻՐԱՆՎԵՐ ԸՆԿԵՐՈՋՆ ԻՄ — տես՝ «Իլիական», երգ քսաներկուերորդ, 389-390-րդ տողեր: Դա Աքիլլեսն է ասում, մտովի դառնալով իր մեռած ընկերոջը՝ Պատրոկլեսին: Քերեյը ցանկանում է ասել. թող մահից հետո մոռացումս իշխի, բայց քո հիշատակը, Կալիթոյ, ես կպահպանեմ նաև մյուս աշխարհում:

156. ՊԱՌԿՈՒՄ ԷՐ ՄԵՐԹ ՄԵՋԵԻ ՎՐԱ, ՄԵՐԹ ԷԼ ՇՈՒՐ ԷՐ ԳԱԼԻՍ ԿՈՂՔԻՆ ԵՎ ԿԱՍ ԸՆԿՆՈՒՄ ԲԵՐԱՆՔՍԻՎԱՅՐ — տես՝ «Իլիական», երգ քսանչորսերորդ, 10-11-րդ տողեր:

157. ԴՈՒ ՈՒՐԻՇ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՉՈՒՆԵՍ — արքան դիմում է ինքն իրեն, խորհուրդ փնտրելով իր հոգու խորքում, իսկ հոգին ասես նրան պատասխանում է. «Արքա, միթե չես հասկանում, որ դու սիրահարված ես», այդպիսին էր պատասխանի իմաստը:

158. ՍԻՐՈՂ ՍՐՏԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ ԻՆՔԸ՝ ՍԵՐՆ Է — բնագրում բառացի «ինքը Էրոտն է», կամ այլ կերպ ասած՝ «ինքը՝ սիրո աստվածը»:

159. ԱՐԵՎԸ՝ ԶՈ ՆԱԽՆԻՆ — ըստ արևապաշտ պարսիկների հավատքի, Արևը եղել է Պարսից արքաների աստվածային նախնին:

160. ԻՆՉՊԵՍ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՍՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ — Նշանավոր մրցումներ, որոնք կրկնվում էին չորս տարին մեկ, Օլիմպիոս (Հունաստանի հարավում) քաղաքում: Այդ մրցումների մեջ մտնում էին ձիակառքերի վազքը, ըմբշամարտը, ցատկը և մարզական այլ ձևեր:

161. ԻՍԿ ՀԱՂԹԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆ ԱՅՍՏԵՂ ՈՉ ՎԱՅՐԻ ՁԻԹԱՊՏՈՒՂ ԷՐ, ՈՉ ԽՆՁՈՐ, ՈՉ ԷԼ ՍՈՃՈՒ ՊՍԱԿ — հնում տարբեր հաղթությունների համար տարբեր պարգևներ էին ստանում, այդ թվում՝ և վայրի ձիթապտուղ, և խնձոր, և սոճու պսակ:

162. ԻՐՐԵՄԵՆԻԱ — հունարեն՝ հերոմենիա, բառացի նշանակում է սրբազան ամիս:

163. ՃԵՆՃՈՏ ԾՈՒԽ — հաճելի հոտ, որ ունենում է աստվածների պատվին մորթված անասունի ճարպոտ միսը կրակի վրա:

164. ԵՎ ԱՅԴՊԻՍՈՎ ՎԵՐ ԲԱՐՁՐԱՑԱԿ ՃԵՆՃՈՏ ԾՈՒԽԸ ԴԵՊԻ ԵՐԿԻՆԸ — տես՝ «Իլիական», երգ առաջին, 319-րդ տող: Ապոլլոն աստծու բարկությունը մեղմելու համար աքեյացիները զոհաբերություն են կատարում, որ պատկերավոր է նկարագրում Հոմերոսը:

165. ԻՐ ՈՐԴՈՒ ԱՌՋԵՎ — այսինքն Էրոտի առջև:

166. Ի ԴԵՄՍ ԶՈ ՏԻՐՈՋ — այսինքն՝ Արտաքսերքսեսի:

167. ԹԵՏԻՍ — Իլիականի գլխավոր հերոս Աքիլլեսի մայրը: Հզոր ծովահարս Թետիսը հունական առասպելներում պատկերվել է որպես ամենագեղեցիկներից, իսկ բարոյական կողմից՝ ամենախստաբարո աստվածուհիներից մեկը:

168. «ՑԱՎԸ ՑԱՎ ՏՎՈՂԸ ԿԲՈՒԺԻ» — հունական հին առած:

169. ԽՈՒՅՐ — թագ, թագ խորհրդանշող գլխարկ:

170. ԱԿԻՆԱԿՈՅ — պարսկական կեռ սուր:

171. ԲԱՑ ՍՐՈՒՆՔՆԵՐՈՎ — հույն կանայք քայլելու ժամանակ, հատկապես անտառում որս անելիս կամ ձիով գնալիս, իրենց շորի ծայրերը բարձրացնում էին սրունքներից վեր: Հին արվեստում սովորաբար վերև ձգած քիտոնով է պատկերվել Նաև Արտեմիս «որսորդուհին»:

172. ՏԱՅԻԳԵՏ ԵՎ ԵՐԻՄԱՆԹ — լեռներ Հունաստանի հարավում՝ Պելոպոնեսում:

173. ԵՎ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԱՂԵՂՆԱԿՈՐ ԱՐՏԵՄԻՍԸ ՍԱՐ Է ԳՆՈՒՄ,

ԿԱՍ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ՏԱՅԻԳԵՏՆ ՈՒ ԵՐԻՄԱՆԹԸ ԲԱՐՁՐԱԼԱՆՁԻԿ ԵՎ ՀՐՃՎՈՒՄ Է ՎԱՐԱՉՆԵՐՈՎ ՈՒ ԶԱՋԱՎԱՉ ԵՂՆԻԿՆԵՐՈՎ — տես՝ «Ոդիսական», երգ վեցերորդ, 103-105-րդ տողեր:

174. ՎԵՊԻ ԱՅՍ ՀԱՏՎԱԾՈՒՄ բնագիրը բացթողում ունի:

175. ՈՐՈՆՔ ՄԱՐԱԹՈՆԻ ՄՈՏ ԵՎ ՍԱԼԱՄԻՆՈՒՄ ՀԱՂԹԵՑԻՆ ԶՈ ՄԵԾ ԱՐՔԱՅԻՆ — մ. թ. ա. 490 թվականին, Մարաթոնի մոտ ցամաքային ճակատամարտում և մ. թ. ա. 480 թվականին, Սալամինի մոտ ծովամարտում արենացիները ջախջախել են Արտաքսերքսեսի նախնիներին՝ Պարսից Դարեհ և Զսերքսես արքաներին:

176. ՊԵԼՈՒՄԻՍ — քաղաք Նեղոսի ստորին ավազանում:

177. ԴՐԵՊԱՆԵՓՈՐԱՅԻՆ — ռազմականքի տեսակ: Դրեպանոն հունարեն նշանակում է մանգաղ: Դրեպանեփորային կոչվող կառքերը կռվի ժամանակ սրընթաց անցնում էին հակառակորդի շարքերի մոտով, և կառքերի մեջ նստած զորականները իրենց մանգաղանման զենքերով հարվածում էին թշնամու առաջապահ զինվորներին:

178. ՆԱ ԻՐ ԽՈՍՔԸ ԴԵՐ ՉԷՐ ՎԵՐՋԱՑՐԵԼ — տես՝ 93-րդ ծանոթագրությունը:

179. ԵՎՊԱՏՐԻՂՆԵՐ — Հունական քաղաքներում եվպատրիդներ էին կոչվում այն քաղաքացիները, որոնք պատկանում էին տեղական բնիկ տոհմերին:

180. ԲԱՅՑ ԶԵՄ ԿՈՐՉԻ ԵՍ ԱՆՎԱՍՏԱԿ ՈՒ ՎԵՐ ՓԱՌՔԻՆ ԱՆՄԱՍՆԱԿԻՑ, ՊԻՏ ԿԱՏԱՐԵՄ ՎՍԵՄ ՄԻ ԳՈՐԾ, ՈՐ ՍԵՐՈՒՆՂՆԵՐՆ ԷԼ ԻՄԱՆԱՆ — տես՝ «Իլիական», երգ

քասներկուերորդ, 304-305-րդ տողերը: Հեկտորի խոսքերը Աքիլլեսի հետ մահացու մենամարտից առաջ:

181. ԿԵԼԵՍԻՐԻՎ — բառացի՝ խոր Ասորիք, Ստորին Ասորիքը:

182. ՏԻՐ — նշանավոր քաղաք Փյունիկեում (այժմյան Լիբանանի Նույանուն քաղաքը):

183. ԱՐՔԱՆ — այսինքն՝ Պարսից արքա Արտաքսերքսեսը:

184. ՊԵԼՈՒՍԻՍ — տես՝ 176-րդ ծանոթագրությունը:

185. ԱՅՆՏԵՂ — այսինքն՝ Եգիպտոսում:

186. ՄԱՐԵՐ — պարսիկներին նաև այդպես էին կոչում:

187. ԿՄԱՆՔ ԵՍ ԵՎ ՊՈԼԻՔԱՐՄՈՍԸ ՈՒ ԿԿՈՎԵՆՔ,

ՔԱՆԶԻ ԱՍՏՎԱԾ Ե ՄԵԶ ԲԵՐԵԼ — վեպի հեղինակն այստեղ շրջափոխել է

Դիոմեդեսի բառերը («Կմասնք ես և Սեթենալն ու կկռվենք մինչև հասնենք մենք Իլիոնի կործանումին, քանզի աստված է մեզ բերել», տես «Իլիական», երգ իններորդ, 48-49-րդ տողեր): Ագամեմոնը՝ հունական դաշնակից զորքերի հրամանատարը, չկարողանալով գրավել Տրոյան, հուսահատված, առաջնորդների խորհրդակցության ժամանակ փոքրոգաբար առաջարկում է փախչել, պատճառաբանելով, թե իրենք չեն կարող գրավել Տրոյան: Դիոմեդեսը, այդ առաջարկից զայրացած, ասում է, որ ինքն ու իր ընկեր Սեթենալը կման և կշարունակեն կռիվը:

188. ԴԻՄԱԿԱՅԵՑԻՆ ԸՍԵՐԸՍԵՍԻՆ — Զերեյը հիշում է մ.թ.ա. 490 թվականի հույն պարսկական պատերազմի սկզբի պատմությունից ռազմական այն նշանավոր դրվագը, երբ Սպարտայի արքա Լեոնիդոսը, երեք հարյուր սպարտացիների գլուխ անցած, արիաբար պաշտպանեց Թերեմոպիլոսի լեռնանցքը և հերոսական մահով զոհվեց ամբողջ ջոկատով մինչև վերջին ռազմիկը ընկնելով մարտի մեջ:

189. ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԲՅՈՒՐ — այսինքն՝ հինգ միլիոն: Դա Զսերքսեսի վիթխարի բանակի զորականների պայմանական թիվն էր:

190. ՄԻԼԹԻԱԴՈՍ — մ.թ.ա. 490 թվականին, Ատտիկայում, Մարաթոնի մոտ պարսիկների դեմ հույների ճակատամարտի գլխավոր հերոսը:

191. ԱՅԴՊԵՍ ԱՅԱ ՏԵԳ-ՆԻԶԱԿԸ ՆԻԶԱԿԻՆ ԷՐ ՍԵՂՄՎԱԾ ԸՆԴՅՈՒՊ,

ԱՍՊԱՐՆԵՐԸ՝ ԱՍՊԱՐՆԵՐԻՆ, ՎԱՅԱՆՆԵՐԸ՝ ՎԱՅԱՆՆԵՐԻՆ,

ՍԵՂՄՎԱԾ ԷԻՆ ՄԱՐԴԸ ՄԱՐԴՈՒՆ — տես՝ «Իլիական», երգ տասներեքերորդ, 130-132-րդ տողեր:

192. ԵՎ ԿՈՏՈՐԵՑ ՆԱ ԱՋ ՈՒ ՁԱԽ

ԲԱՐՁՐԱՑԱԿ ՃԻԶ ԵՎ ՀԱՌԱՉԱՆՔ — տես՝ «Իլիական», երգ տասներորդ, 484-485-րդ տողեր:

193. ՊՍԱԿ ԶՅԱԳԱԿ — այսինքն՝ չմասնացեց հանդիսավոր խնջույքին, որի ժամանակ, հունական սովորությամբ թարմ ծաղիկներից սարքած պսակ էին հագնում:

194. ՍՏԱԴԻՎ — երկարության չափ, մոտ 200 մետր:

195. ԱՐՔԱՆ — այսինքն՝ Արտաքսերքսեսը:

196. ՈՐՈՆՑ ՀԱՂԹԵԼ ԵՆ ԱԹԵՆԱՑԻՆԵՐԸ — եգիպտացին նկատի ունի մ.թ.ա. 480 թվականի աթենացիների հաղթությունը, երբ Ատտիկայի արևմտյան ափի և Սալամին կղզու միջև ընկած Նեղուցում հունական նավատորմիղը, որին ղեկավարում էր Թեմիստոկլեսը, ծովամարտում ջախջախեց Կյուրոս արքայի պարսկական նավատորմիղը:

197. ԾՈՎԱԿԱԼ — հունարեն՝ նավարքոս: Հայերեն ծովակալ բառը լրիվ համարժեք է հունարեն նավարքոս բառին:

198. ՏՐԻԵՐԱՐՔՈՍ — կամ նավի պետ, այսինքն ռազմանավի կապիտան:

199. ՄԱՐԴԻԿ ԸՆՈՒՄ ԷԻՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՈՏՔԻ ՎՐԱ — ուղքի վրա արտահայտությունը բնագրում նշանակում է նախասրահ կամ ծածկված սյունաշար: Ցերեկները մարդիկ այդ նախասրահներն էին մտնում արևի ճառագայթներից պաշտպանվելու համար:

200. ԱՌԱՆՑ ԿՐԱԿ ՎԱՌԵԼՈՒ — այսինքն կրակի վրա ոչինչ չէին պատրաստում, ոչ տապակում էին, ոչ եփում:

201. ԱՅԼԵՎ ԲԱՐԻ — բացթողում բնագրում:

202. ՆԱ — այսինքն՝ Զերեյը, ծովակալը:

203. ԶԵԶ — այսինքն՝ Կալիբրոյը:
204. ՈՐՊԵՍ ԶՆԱԾ ԱՐԻԱՂՆԵ — տես՝ 31-րդ ծանոթագրությունը:
205. ԳԵՂԱՍԶԱՆՉ ՊԱՐԳԵՎ — այսինքն՝ Կալիբրոյին:
206. ԱԼԵԶԱՆԴՐ ՊԱՐԻՍ — Տրոյայի արքայազն Պարիսը, կամ այլ կերպ՝ Ալեքսանդրը, Յդիկենին ստացել է Աֆրոդիտեի ձեռքից:
207. ԱՍՏՎԱԾՈՒՅԻՆ — այսինքն՝ Աֆրոդիտեն:
208. ՀԻՆ ՄԱՅՃԱԿԱԼՈՒՄ ՀԻՇԵՑԻՆ ԿԱՐԳՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ — տես՝ «Ողիսական», երգ քսաներեքերորդ, 296-րդ տող:
209. ԿԻՊՐՈՍ — կղզի Միջերկրական ծովում:
210. ՊԱԹՈՍ — Կիպրոս կղզու գլխավոր քաղաքը, որի վրա հնում գտնվում էր Աֆրոդիտեի նշանավոր սրբավայրը:
211. ՆԱԽԱՆՇԱՆ (կամ նշան) — հնում քրմերը գուշակություններ էին կատարում մորթված անասունի փորոտիքի վրա:
212. ԼԱԿԵԴԵՄՈՆԱՑԻ — այսինքն սպարտացի:
213. ԲՐԱՍԻԱԴՈՍ — լակեդեմոնացիների նշանավոր զորավարը, Պելոպոնեսյան կռիվների ժամանակաշրջանի ռազմական ականավոր գործիչ, որ զոհվել է մ.թ.ա. 422-ին, աթենացիների դեմ ճակատամարտելիս:
214. ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐ — բնագրում այս բառը չկա, ենթադրվում է, որ պետք է եգիպտացիներ լինի:
215. ԿԻՊՐԱՑԻՆԵՐ — Կիպրոսի բնակիչներ, որոնք հիմնականում հույներ էին:
216. ԳՐԱԿԱԼ — գրելու հարմարանք:
217. ԶԵ ՈՐ ԱՐԶԱՅԻ ՀԱՄԱՐ ՈՉ ՄԻ ԴԺՎԱՐ ԲԱՆ ԶԿԱ — այլ կերպ ասած՝ արքայի համար դժվար չէր Կալիբրոյին հասցեագրված նամակ ուղարկել Սիրակուզա որևէ մեկի ձեռքով: Հին աշխարհը չուներ կապի (փոստի) կազմակերպված բնույթը:
218. ԱՅԴ ՆԱԿԵՐԻՆ — այսինքն Դմիտրիի եգիպտական նավատորմիդին:
219. ԸԻՈՍ — հունական կղզի Փոքրիկ Ասիայի արևմտյան ափին մերձ:
220. ԼԱՅՈՒՄ ԵՐ ԱՐՏԱԶՈՒՄՍ ՍՏԱՏԻՐԱՅԻ ՀԱՄԱՐ, ԲԱՅՑ ՀՈԳՈՒՄ ԼԱՅՆ ԵՐ ՍԵՓԱԿԱՆ ՎՇՏԻ — պատկերում է լացի հին սովորույթը, վեպի հեղինակը շրջափոխել է Պատրոկլեսի մահվան առթիվ կանանց ողբը. «Անհուն վիշտն է պատել հոգիս, սիրտս տխուր է, դառնավեր», տես «Իլիական», երգ տասնիններորդ, 302-րդ տող:
221. Ձեռագրի այս հատվածում բացթողում կա:
222. ԸՈ ԱՆՈՒՆԸ ՍՏՆՈՒՄ ԵՄ «ԱՐԶԱՅԱԿԱՆ ՏԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԱԽՏԱԿՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ» — գուցե ցրվածության պատճառով խարիտոնն այստեղ կրկնում է այն, ինչի մասին արդեն խոսվել է յոթերորդ գրքում:
223. ԵՎ ՃՈՃԵԼՈՎ ՁԵՌՔԻ ՎՐԱ — սա Հոմերոսի (տես՝ «Իլիական», երգ վեցերորդ, 437-րդ տող)՝ «Գրկեց որդուն և գուրգուրեց, և ճոճելով ձեռքի վրա» հայտնի տողի ազդեցության հեռավոր արձագանքն է:
224. ՇԱՐԺԱՌՄ ԵՐ ԲԱՑ ԾՈՎՈՎ, ՎԱԽԵՆԱԼՈՎ, ՈՐ ՆՈՐԻՑ ԿԱՐՈՂ Ե ԵՆԹԱՐԿՎԵԼ ԴՃԱՆ ԱՍՏՈՒ ՀԱՐՎԱԾԻՆ — մեծ, լավ կառուցված նավերի համար բաց ծովն ավելի անվտանգ էր, քան ափամերձ նավարկումը, որտեղ ստորջրյա ժայռերն ու խութերը փոթորկի ժամանակ նավերի կործանման պատճառ էին դառնում:
225. ՊԱՐԶ ՈՒ ԱՆԶԱՄԻ ԵՂԱՆԱԿ ԵՐ — այդպիսի եղանակը հունարեն կոչվում է հալենե: Հին աշխարհի ռազմանավերի համար այդպիսի եղանակը ամենացանկալին էր հատկապես մարտի ժամանակ:
226. ՈՐ ՈՒՆԵՐ ԱՏՏԻԿՅԱՆ ԾՈՎԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ — այսինքն մ.թ.ա. 413 թվականի սիրակուզցիների ճակատամարտից հետո, երբ Հերմոկրատեսը փայլուն հաղթանակ էր տարել:
227. ԷՖԵՐՈՍ — տես 34-րդ ծանոթագրությունը:
228. ԾՈՎԱՅԻՆ ՋՐԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԵՎԱԾ ԱՖՐՈԴԻՏԵ — ըստ դիցաբանության, Աֆրոդիտեն ծնվել է ծովի փրփուրներից: Հունական արվեստը սիրում էր այդ աստվածուհուն պատկերել մերկ, ալեքսիության ժամանակ ծովի ալիքներից դուրս գալու պահին, այսպես կոչված անադիոմեն (բառացի՝ ջրի տակից դուրս եկող) Աֆրոդիտեն:
229. ԹԱՏՐՈՆԸ ԼՅՎԵՑ — հունական աշխարհում ժողովրդական ժողովների սիրած վայրը քաղաքային թատրոնն էր:

230. ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ՀԱՄԱՐ — խոսքը մ.թ.ա. 413 թվականի հաղթանակի մասին է: Վեպի հեղինակը այլևայլ առիթներով բազմիցս կրկնում է այդ մասին: